Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1913
1914

1915
1916

24-9-12

84
7-60

2011

84
Դ-60

Ա. ՏԻՄԱ

ՊՐԺԱԼՕՆ ԴԵՐԿՈՄՍ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՏԻՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՏԻԳՐԱՆ ՑԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

ԶՄԻՒՌՆԻԱ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆՑ
— 1875 —

437
4

ՊՐԱԺԼՕՆ ԴԵՐԿՈՄՍ

Ա.

ՍՊԻՏԱԿ ՁԻՆ ԵՒ ՍԵՒ ՁԻՆ

— Ճշմարիան այս զարմանալի է — ըսաւ Հրամանատարը — ինչպէս Կուրվիլ ուրախ զուարթ է և փողոցները կ՚շրջի, երբ գրեթէ ստոյգ է որ Պ. Գուքէ վտանգի մէջ է։ Երբ գրեթէ Կուրվիլ՝ քիչ մ՚առաջ գրկած տոմսակովը Պ. Գուքէին իմաց տուաւ գործը, այն տոմսակը զոր բիւրաւոր կտոր ընելով դարաստափին վրայէն Պ. Գուքէ դուրս նետեց։ Կուրվիլ ձեռները կը շփէ, վասն զի Ճարպիկ գործ մ՚ըրած է։ Կուրվիլ ուստի՞ կ՚գար։ Կուրվիլ Հերպ փողոցէն կ՚գառնայ։ Ո՞ւր կ՚երթայ Հերպ փողոցը։

Եւ ո՞Արդանեան՝ Նանդի տուներուն կատարին վրայ նայելով բարձր գրեկէն փողոցներու գծած գիծը գիտելով՝ որպէս տեղեկագրական տախտակի մը վրայ։ Միայն, փոխանակ պարապ, տափակ և ամայի տախտակ մը գիտելու, կենդանի տախտակը՝ իր առջև կ՚կանգնէր իր շարժումներով, մարդերու և իրերու աղաղակներով և ստուերներով։

Քաղքին շրջապատէն անդին՝ դալարաւէտ ընդարձակ դաշտավայրները Լուար գետն եզրելով կ՚տարածուէին, և կարծես թէ ծիրանեգոյն հորիզոնի կողմը կ՚վազէին, զոր ջրերու կապոյտն և ճահիճներու սևորակ կանաչը կ՚ակօսէին։

Նանդի դռնէն անմիջապէս կ՚երևէին երկու սպիտակ արահետներ որ վեր կ՚ելնէին իբրև հսկայական ձեռքի մ՚երկու մատունքներ իրարմէ շեղելով։

Ս՚Արդանեան՝ որ մէկ նայուածքով այս տեսարանս դիտեր էր

դարատափէն անցնելու ատեն, Հերպ փողոցին գլիծը բռնելով հասաւ այն արահետները ծայրն որ Դանդի գունէն կ'սկսէին։

Եւ եթէ քայլ մ'ևս առնէր՝ դարատափին սանդղէն վար բերդը պիտի իջնէր վանդակապատ կառքն առնելու և գէպ 'ի Փուքէ տունն երթալու համար։

Բայց գիսլուածն այնպէս բերաւ որ, սանդղէն վար իջնելու մէջտեղին, շարժուն կէտ մը տեսնելով կայ տաւ, և այս կէտը նոյն արահետին վրայ սրընթաց կ'վազէր։

— Ի՞նչ է այս — հարցո ց 'ի բովի հրացանակիրը։ — Ձի մ'որ կ'վազէ, անտարակոյս խո սափած ձի մը. ինչպէս կ'արշաւէ։

Շարժուն կէտն արահետն գուրս ելաւ և առուոյտներու մէջ մնաւ։

— Սպիտակ ձի մը — շարունակեց հրացանակիրը, որ այնքան սկսեր էր տեսնել մութ ետնին վրայ լուսաւոր գունով կէտը — և ձիոն վրայ մարդ կայ. տղայ մ'է որու ձին ծարաւի է, և առաջնը կ'տանի անկիւնապիծ կարելով։

Այս խորհրդաւոր թիւները՝ որ փայլակի պէս արագ և աչքի տեսութեան պէս շուտ անցան, ա՛Արդանեան արդէն մոռցեր էր՝ երբ սանդղին առաջին աստիճաններէն կ'անցնէր։

— Հէ, հէ — ըսաւ հրամանատարը — աւասիկ Պ. Փուքէի պատուած տոմսակին մէկ քանի կտորները։ Խե՛ղճ մարդ, իր գաղտնիքը հովին տուեր էր, հովը չուզեր զայն և թագաւորին կ'դարձնէ։ Ճշմարիտը, Պ. Փուքէ, բաղդը քեզ կ'հալածէ, պայքարը հա ասար չէ. Լուի ԺԴի աստղը քո կդ կ'նսեմացնէ, օձն աւելի ուժեղ և ճարտար է քան թէ սկիւրը։

Ց'Արդանեան վար իջնելով թղթի կտորներէն մէկ քանին ժողովեց։

— Կուրվիլի նուրբ ձեռագիրն է — գոչեց նա թղթին կտորներէն մին քննելով — չէի սխալած։

Եւ յի բառը կարդաց։

— Զարմանք — ըսաւ նա։

Եւ ուրիշ կտոր մը քննեց, որու վրայ գիր չկար բնաւ։

Եբրարդի մը վրայ ապէրակ բառը կարդաց։

— Սպէրակ յի — կրկնեց նա հեգող տղու մը պէս։

— Ա՛հ, Աստուած իմ — գոչեց կասկածոտ միտքը — սպիտակ ձի։

Եւ աւազի այն հատին նման՝ որ սրբելով՝ հարիւրապատիկ քանակութեամբ կ'ստուարանայ, ա՛Արդանեան դաղափարներով և կասկածներով ուռած՝ շտապաւ վազեց դարատափին վրայ։

Սպիտակ ձին կ'վազէր՝ միշտ կ'վազէր Լուարի ուղղութեամբ, որու ծայրը՝ ջրին մնայլին մէջ իրը ընկղմած կ'երևէր փոքրիկ առագաստ մ'որ հիւլէի պէս կ'օրօրէր։

— Հօ, հօ — գոչեց հրացանակիրը — մինակ խոյս տուող մարդ մ'այսպէս մշակեալ հողերու մէջէն կ'ընթանայ։ Մինակ Փուքէ մը, դրամագէտ մը կրնայ այսպէս ցերեկ ատեն սպիտակ ձիով վազել։ Մինակ Պէլ-Իսլի իշխանն այսպէս ծովու կողմը կ'վազէ, ինչդեռ այնչափ թանձր անտառներ կան երկրին վրայ . . . : Եւ ա՛Արդանեան մը կայ միայն աշխարհիս վրայ որ կարող լինի Պ. Փուքէն բռնել՝ որ կէս ժամ իրմէ առաջ ելած է, և որ իր նաւակին պիտի կարենայ հանդիպ ժամէ մը։

Այս ըսելով՝ հրացանակիրը հրաման տուաւ որ վանդակապատ կառքն իսկոյն քաղքէն դուրս դանուող անտառակին մօտ տանին։ Իր լաւագոյն ձին ընտրեց, կոնակը ցատկեց և Հերպ փողոցէն վազեց, չէ թէ Փուքէի բռնած ճամբան բռնելով՝ այլ նոյն իսկ Լուարի ափունքը՝ ստոյգ լինելով որ բոլոր ճամբուն երկայնութեան վրայ տաւն վայրկեան պիտի շահէր և երկու դծերու կտրուած վայրը փախստականին պիտի միանար, որ քնաւ չէր կրնար կասկածիլ որ այն կողմէն կ'հալածուէր։

Այս արագ արշաւին մէջ, և հալածողի մ'անհամբերութեամբ՝ որ որսորդութեան, պատերազմի համար կ'վառի, ա՛Արդանեան որ այնչափ անուշ, այնչափ բարի էր Փուքէ ի համար, տեսաւ քանկարծ որ վայրագ և գրեթէ արիւնարբու կ'դառնար։

Երկար ատեն վազեց ատանց սպիտակ ձին տեսնելու. իր կատղութիւնը մոլեգնութեան կ'դառնար, ինչն իր դիմին վրայ կ'կասկածէր, կ'նթադրէր որ Փուքէ ստորերկրեայ ճամբու մը մէջ դահավիժեր էր, կամ թէ սպիտակ ձին այնպիսի սև ձիու մը հետ

միոխած է, որ հովն ալ սրարշաւ կ'լինի, և որու կորովի թեթեւութեան վրայ շատ անդամ տ'Արդանեան սքանչացեր էր 'ի Սէն–Մանտէ։

Այն միջոցներուն երբ հովն աչքին կ'զարնէր, և անկիւ արաւուք կ'հոսեցնէր, երբ թամբը կ'այրէր, երբ ձին՝ որ միսն արդէն ցաւեր էր, ցաւէն կ'մունչէր և իր եռեւ ոտքով բարակ աւազի և խճի անձրև մը կ'ժայթքեցնէր, տ'Արդանեան ասպատանին վրայ բարձրանալով և ջրին վրայ բան մը չտեսնելով, ոչ ինչ ծառերուն վրայ, օդին մէջ կ'նայէր կ'փնտուէր ապուշի մը պէս։ Իր վրայ խելապարութիւն կ'գար։ Իր բուռն մտերմութեան մէջ օդային ճամբաներ կ'երազէր, որոնք հեռեւալ դարու գիւտերն էին։ Տէտալոսը, և իր ընդարձակ թեերը կ'յիշէր, որով Կրէտէի բանտերէն ազատեր էր։

Խուզոտ հառաչ մ'իր շրթերէն կ'ելնէր։ Կ'կրկնէր նա ծաղր ու ծանակ լինելու վախէն մաշելով.

— Ե՛ս, ե՛ս, ե՛ս խաբուիմ Կուրվիլէ մը, ե՛ս . . . ։ Պիտի ըսեն թէ ծերացայ, պիտի ըսեն թէ Գուքէի կողմէ մէկ միլիոն աւի որպէս ղի թողում՝ որ խոյս տայ։

Եւ իր երկու մտրակները ձիուն փորը կ'մղէր. երկու վայրկենի մէջ մղոն մը ճամբայ առեր էր։ Յանկարծ արօտի մը ծայրը՝ ցանկապատներուն ետին, սպիտակ կերպարան մը նշմարեց որ ելեւան եկաւ, անհետ եղաւ և 'ի վերջէ աւելի բարձր հողի վրայ աչքին զարկաւ։

Տ'Արդանեան խնդութենէ թռաւ. իր միտքն իսկոյն իր զուարթութիւնն ընդունեց։ Ճակատն հոսող քրտինքը սրբեց, ծնկերը թուլցուց և այսպէս ձին ազատութիւն դանելով աւելի դիւրաշունչ առնուլ սկսաւ. յետոյ սանձը քաշելով՝ կորովի ձիուն վազքը մեղմեց, որ իր դաւակիցն էր այս մարդորսութեան մէջ։ Այն ատեն կարող եղաւ ճամբուն ձեռը դնել նոյնպէս Գուքէի նկատմամբ իր վիճակը։

Ալերատեսուչը կակուղ հողերէ անցնելով իր սպիտակ ձին սաստիկ յոգնեցուցեր էր։ Աւելի կարծր հողի մը հասնելու պէտքը ն'գլար և դէպ 'ի արահետը կ'ուղղուէր կարճագոյն հասիչ գծով մը։

Իսկ տ'Արդանեան՝ բաւական էր որ ծովեզրեայ ասպառաժի մը զառ 'ի թափի մը տակէն շիտակ քալէր, որ ղինքն իր թշնամիին աչքէն ծածկէր, այնպէս որ պիտի կարենար անոր ճամբան կտրել արահետը հասնելուն։ Անդ պիտի սկսէր ճշմարիտ արշաւը, անդ պիտի սկսէր պայքարը։

Տ'Արդանեան թոյլ տուաւ որ իր ձին լիամտոք շունչ առնու։ Գիտեց որ վերատեսուչն ընդոստ քալելու կ'սկսէր, այսինքն իր ձիուն ժամանակ կ'տար որ քիչ մը յոգնութիւն առնու։

Բայց երկու կողմէն մեծ շտապ կար, և 'ի հարկէ չէին կարող ընդ երկար նոյն ընթացքը շարունակել։ Սպիտակ ձին նետի պէս սրացաւ երբ աւելի տոկուն հող մը կոխեց։

Տ'Արդանեան ձեռքը խոնարհեցուց, և իր սև ձին արշաւակի վազելու սկսաւ։ Երկուքնին ալ նոյն արահետը կ'ընթանային. արշաւին քառասատիկ արձագանքն իրարու հետ կ'շփոթէր. Գուքէ դեռ ևս տ'Արդանեանը չէր տեսած։

Բայց երբ ասպառաժէն դուրս ելաւ, արձագանք մը միայն օդը թնտացուց, և այս է՝ տ'Արդանեանի քայլերուն արձագանքը՝ որ որոտման պէս կ'թնդար։

Գուքէ գլուխը դարձուց. իր ետին՝ հարիւր քայլ հեռու տեսաւ իր թշնամին՝ որ իր նժոյգին վզին վրայ ծռեր էր։ Այլ ևս կասկած չկար. շողշողուն կամարը, կարմիր բաճկոնակը, բաւական էին յայտնելու որ հալածողը հրայանակիր մ'էր. Գուքէ ևս ձեռքը խոնարհեցուց, և իր սպիտակ ձին քսան ոտք աւելի հեռու անցաւ իր հակառակորդէն։

— Ո՛հ, բայց — մտածեց տ'Արդանեան մտայոյզ — Գուքէի հեծած ձին սովորական ձի մը չերևիր. ուշադրութիւն։

Եւ՝ ուշադիր՝ իր անվրէպ աչօք քննեց՝ այս երիվարին ձևերն ու վազքը։

Կլոր գաւակ, բարակ և ձիգ ոտք, վտիտ և չոր սրունք պողպատի թելերու պէս, սմբակ՝ մարմարէ աւելի կարծր։

Իր երիվարը մտրակեց բայց երկուքին մէջ հեռաւորութիւնը նոյնը մնաց։

Տ'Արդանեան ականջ դրաւ մտադիր. բայց ձիուն թեթևագոյն շունչն անդամ իրեն չէր հասներ, և սակայն օդը կ'պատռէք։

Ընդ հակառակն՝ սև ձին սկսեր էր հունչել որպէս թէ հաղ ունէր։

— Պէտք է ճանաչենք ձիս, բայց հասնիլ — մտածեց տ՝Արդանեան։

Եւ սկսաւ խելք ձիուն բերանը սղոցել, մինչդեռ իր մտրակ-ներով անոր արի նաթաթաւ կաշին կ՝պեղէր։

Ձին՝ յուսահատ՝ քսան կանգուն ևս առաջ անցաւ և հրացա-նի հեռաւորութեամբ Փուքէի մօտեցաւ։

— Արիութիւն — ըսաւ իւրովի հրացանակիրը — արիութիւն, կարելի է սպիտակ ձին պիտի տկարանայ, և եթէ՝ ձին վար չընկ-նի, 'ի վերջ ձիաւորը դեռին պիտի կործանի։

Բայց ձի և մարդ շիտակ կեցան փոքր առ փոքր յառաջ անց-նելով։

Տ՝Արդանեան վայրագ աղաղակ մ՝արձակեց որ Փուքէի գլուխն իրեն դարձուց, Փուքէ՝ որու ձին աւելի ևս կ՝վառէր։

— Երևելի՛ ձի, կատաղի՛ ձիաւոր — գոռաց հրամանատարը։

— Էհէ՛, Տէր վկայ, Պ. Փուքէ, էհէ՛, յանուն թագաւորին։

Փուքէ պատասխան չտուաւ։

— Կ՝լսէք ձայնս — ոռնաց տ՝Արդանեան։

Ձին այն ինչ գայթ մ՝ըրաւ։

— Տէր վկայ — պատասխանեց Փուքէ լակոնական ոճով։

Եւ յառաջ վազեց։

Տ՝Արդանեան քիչ մնաց որ խելքը սպիտի թռցնէր, արիւնն իր քունքին և աչքին եկաւ։

— Յանուն թագաւորին — գոչեց նա վերստին — կեցիք, թէ ոչ հրացանակի մը հարուածով ձեզ պիտի սպաննեմ։

— Սպաննէ՛ — պատասխանեց Պ. Փուքէ մշտ թ..ելով։

Տ՝Արդանեան իր հրացանակին մէկն առաւ և պնեց, յուսա-լով որ երկաթին ձայնն իր թշնամին պիտի կեցնէ։

— Դու ալ հրացանակներ ունիս, պաշտպանէ ինքզինքդ։

Իրօք այս աղմուկը լսելով Փուքէ գլուխը դարձուց, և տ՝Ար-դանեանի երեսը լաւ մը նայելով, իր աջ ձեռօք բացաւ մարմինք սեղմող դեսպը, իր հրացանակի խորշերուն չդպաւ։

Երկուքին մէջ քսան քայլ կար։

— Տէր վկայ — ըսաւ տ՝Արդանեան — ես քեզ սպիտի չսպան-նեմ. եթէ չես ուզեր քաշել, ուրեմն անձնատուր եղիր։ Ի՞նչ է բանտը։

— Աւելի լաւ ունիմ մեռնիլ — պատասխանեց Փուքէ — նուազ սպիտի տառապիմ։

Տ՝Արդանեան՝ յուսահատութեամբ սրբշիւ՝ իր հրացանակն ա-ջահեսին վրայ նետեց։

— Ես քեզ կենդանի պիտի բռնեմ — ըսաւ նա։

Եւ այնպիսի հրաշալի վազքով մ՝որու այս անունն ձիաւորը հմուտ էր, իր ձին տասն քայլ հեռու բերաւ սպիտակ ձիուն, որպէսզի իր որսը բռնելու համար իր ձեռքը կ՝երկնցնէր։

— Նայինք, սպաննէ զիս, այդ աւելի մարդասիրական գործ է — ըսաւ Փուքէ։

— Ո՛չ, կենդանի՛, կենդանի՛ — մրմռաց հրացանակիրը։

Երկրորդ անգամ իր ձին գայթեց, Փուքէին առաջ անցաւ։

Անլուր տեսարան մ՝էր այս երկու ձիերու մէջ եղած արշաւը, որոնք իրենց ձիաւորներու կամքը միայն կ՝ապրէին։

Կատաղի քառարշաւին (galop) մեծ ընդոստ մը (trot) ապա պարզ ընդոստը յաջորդեր էր։

Եւ այս երկու վաստակաբեկ ըմբիշներու բուռն կ՝երեէր այս ընթացքը։ Տ՝Արդանեանի ճարը հատած՝ երկրորդ հրացանակն առաւ և սպիտակ ձիուն նշանեց։

— Ձիուդ, ոչ քեզի — գոչեց նա Փուքէի։

Եւ հրացանակը պարպեց։ Գնտակը ձիուն գաւակին զարկաւ. կենդանին կատաղի ոստում մ՝ըրաւ և երկաւ ոտիցը վրայ կանգ-նեցաւ։

Տ՝Արդանեանի երիվարն ալ տապաստ գետինն ընկաւ։

— Անպատուեցայ — մտածեց հրացանակիրը — ապիրատ մ՝եմ։ Պ՝աղաչեմ, գթա՛ ինձ, Պ. Փուքէ, հրացանակներէդ մէկը նետէ ինձ որ գլուխս այրեմ։

Փուքէ իր վազքը շարունակեց։

— Շնորհ, շնորհ ըրէ — գոչեց տ՝Արդանեան — ինչ որ այս

միջոցիս չես կամիր, ժամէ մը պիտի կատարեմ, բայց ասա, այս Ճամբուն վրայ՝ արիապէս կ'մեռնիմ, յարգեալ կ'մեռնիմ, այդ ծառայութիւնն ըրէ ինձ, Պ. Գուբէ :

Գուբէ պատասխան չտուաւ և իր ընդոստ վազելը շարունակեց :

Տ'Արգանեան իր թշնամւոյն ետևէն վազելու սկսաւ :

Հետզհետէ վար նետեց իր գլխարկը, իր գլեստը, որ իրեն ծանր էին, ապա իր սրին պատեանը, որ իր ծունկերուն կ'զարնէր :

Ձեռքին մէջ սուրն ալ ծանր եկաւ իրեն, և զայն ևս պատեանին պէս նետեց :

Սպիտակ ձին կ'խորդար, տ'Արգանեան անոր կ'մօտենար :

Ընդոստ վազքը դադրեցնելով յոգնարեկ կենդանին սկսաւ ծանրաքայլ երթալ թալկահար այնպէս որ գլուխը կ'ցնցէր. փրփուրին հետ բերանէն արիւն կ'վազէր :

Տ'Արգանեան յուսահատական Ճիգ մ'ըրաւ, Գուբէի վրայ ցատկեց և անոր ոտքէն բռնեց, և կտրուկ, շնչասպառ ձայնով մը ըսաւ,

— Յանուն թագաւորին քեզ կ'ձերբակալեմ, խորտակէ գլուխս. երկուքնիս ալ մեր պարտքն ըրած պիտի լինինք :

Գուբէ իրմէ հեռու՝ գետին մէջ նետեց՝ երկու հրացանակները զոր տ'Արգանեան կրնար առնուլ, և վար իջնելով,

— Ես գերիդ եմ, պարոն — ըսաւ նա — կ'ուզես թեւս մտնել, վասն զի պիտի մարիս :

— Շնորհակալ եմ — մրմռաց տ'Արգանեան, որ իրօք զգաց որ գետինն իր ոտից ներքև կ'խուսէր և երկին իր գլխուն վրայ կ'իջնէր :

Եւ աւազին վրայ գլորեցաւ շնչասպառ և ուժաթափ :

Գուբէ գետին զառ 'ի թափէն վար իջաւ, իր գլխարկին մէջ ջուր դրաւ, հրացանակրին քունքը թրջեց և քանի մը կաթիլ անոր շրթերուն մէջ սահեցուց :

Տ'Արգանեան ոտք ելաւ՝ իր բոլորտիքը նայելով մոլորագին աչքով մը :

Տեսաւ նա Գուբէն որ ծունր իրկնած էր, և իր տամուկ գլխարկը ձեռքը բռնած՝ անպատում անուշութեամբ մը կ'ժպտէր :

— Միթէ չփախար — գոչեց նա : — Ո՛Հ, պարոն, հաւատարմութեամբ, սրտով, հոգւով Ճշմարիտ թագաւորը Լուվրի Լուին չէ, և ոչ Սէն–Մարկրաի Գիլիպը, այլ դու ես, դու տարագիր և դատապարտ :

— Ես որ մէկ յանցանքի մը համար այսօր կ'կորսուիմ, Պ. տ'Արգանեան :

— Ի՞նչ է այդ, Տէր Աստուած :

— Պարտաւոր էի քեզ բարեկամ ունենալ : Բայց ինչպէս պիտի ընենք նանդ գառնալու համար : Անկից շատ հեռու ենք :

— Իրաւ է — ըսաւ տ'Արգանեան մտախոհ և տխրագին :

— Կարելի է որ սպիտակ ձին վրայ դայ, ինչ լաւ ձի էր : Վրան հեծիր, Պ. տ'Արգանեան, ես, հետիոտն պիտի գնամ մինչև որ հանդիպած գտնես :

— Խե՛ղճ վիրաւոր ձի — ըսաւ հրացանակիրը :

— Պիտի տանի քեզ, կ'ըսեմ, կ'Ճանչեմ զայն. աւելի աղէկը կ'ուզես, երկուքնիս ալ հեծնենք :

— Փորձենք — ըսաւ հրացանակիրը :

Բայց հաղիւ թէ այս կրկնակի բեռը կենդանին կրեց՝ որ երեբայ, ապա ոյժ առաւ և քանի մը վայրկեան քալեց, ապա նորէն երերայ և սև ձիւն մօտ ընկաւ, անոր հանելով :

— Ոտքով պիտի երթանք, Ճակատագիրն այսպէս կ'հրամայէ. պատուական պիտի լինի մեր Ճեմելիքը — վրայ բերաւ Գուբէ իր թեր տ'Արգանեանի թեւէն անցընելուք :

— Անօրէ՛ն — գոչեց հրացանակիրն անթարթ աչքք, պուսուռալ յօնիւք, յուզեալ սրտով — վատ օր մ'է այս :

Ծանր ծանր քալեցին չորս մղոն, որ գիրենք անտառէն կ'զատէր, և այս անտառին եռանը կ'սպասէր կառքը պահնորդ գնդով մը :

Երբ Գուբէ այս չարագուշակ մեքենան տեսաւ տ'Արգանեանի ըսաւ, որ աչքը կ'խոնարհէր՝ որպէս թէ Լուի ԺԴի համար ամօթասպարտ կ'երևէր.

— Ահա դաղափար մ'որ վեհանձն մարդու մը մտքի ծնունդը չէ, հրամանատարդ տ'Արգանեան, քու հնարքդ չէ անշուշտ : Ինչո՞ւ համար այս վանդակն ըրեր են — ըսաւ նա :

— Որպէս զի դուրսը տումնակներ չնետես։

— Ճարտար բան։

— Բայց կարող ես խօսիլ եթէ չես կարող դրել — ըսաւ Արդանեան։

— Քեզի խօսիմ։

— Այո՛ . . . եթէ կամիս։

Գուքէ պահ մը մտմտաց. ապա հրացանակրին երեսը նայելով.

— Բաւ մը միայն ունիմ, պիտի պահեմ միտդ . . . :

— Պիտի պահեմ։

— Որու որ ուզեմ պիտի ըսեմ։

— Պիտի ըսեմ։

— Սէն-Մանտէ — ձայնեց Գուքէ մեղմիկ։

— Լաւ, որո՞ւ պիտի ըսեմ։

— Տիկին Պէլի՛ի կամ Ռէլիսօնի։

— Շատ աղէկ։

Դուռը նանդէն անցաւ և Անժէի ճամբան բռնեց.

Բ

ՍԿԻԻՐԸ Կ'ԸՆԿՆԻ, ՕՁԸ Կ'ԹՌԻ

Կէսօր երկու ժամ անցեր էր։ Թագաւորն անհամբեր՝ դահլիճն զարատափը կ'երթար և երբեմն նրբապատին դուռը կ'բանար որպէս զի տեսնէ թէ ինչ կ'ընէին իր քարտուղարները։

Պ. Գոլպէր, առաջ Սէնդ-Էնյանի ընդ երկար նստած տեղը բռնած՝ Պ. Պրիէնի հետ մեղմաձայն կ'խօսէր։

Թագաւորը յանկարծ դուռը բացաւ և անոնց ուղղելով խօսքը.

— Ի՞նչ կ'ըսէք — հարցուց անոնց։

— Ժողովին առաջին նիստին վրայ կ'խօսինք — ըսաւ Պ. Պրիէն ոտք ելնելով։

— Շատ լաւ — պատասխանեց Թագաւորը։

Եւ վերադարձաւ։

Հինգ վայրկեան ետք՝ զանգակին ձայնը Ռօզը կոչեց, որու ժամանակն էր։

— Ընդօրինակութիւններդ աւարտեցէ՞ր — հարցուց Թագաւորը.

— Դեռ չէմ՝ յուցի, Վեհափառ։

— Նայէ ուրեմն թէ արդեօք Պ. տ'Արդանեան վերադարձա՞ւ։

— Ո՛չ տակաւին, Վեհափառ։

— Տարօրինակ բան — մրմնայ Թագաւորը։ — Պ. Գոլպէրը կոչէ։

Գոլպէր ներս մտաւ. առաւօտէն 'ի վեր այս ժամուն կ'սպասէր։

— Պ. Գոլպէր — ըսաւ Թագաւորն աշխուժիւ — սակայն պէտք էր իմանալ թէ ինչ եղաւ Պ. տ'Արդանեան։

Գոլպէր իր հանդարտ ձայնովն ըսաւ.

— Վեհափառ, որ կողմը փնտուել տամ։

— Է՛հ, պարոն, միթէ չգիտեմ թէ որ կողմը ղրկեր էի — պատասխանեց Լուի յաստմամբ։

— Ձեր Վեհափառութիւնն այս մասին բան մը չըսաւ ինձ։

— Պարոն, կան բաներ որ կ'դուշակուին, և մանաւանդ՝ դուռ կ'դուշակես։

— Վեհափառ, ենթադրութիւն մ'ըրի, բայց բոլորովին դուշակելու չէի կրնար համարձակիլ։

Հաղիւ թէ Գոլպէր այս խօսքը կ'ասէր՝ որ Թագաւորին ձայնէն աւելի խիստ ձայն մը խօսակցութիւնն ընդմիջեց որ միապետին և իր գործակալին մէջ սկսած էր։

— Տ'Արլանեան — պոռաց Թագաւորը խնդալով։

Տ'Արլանեան որ դռնեստ էր և զայրացած, Թագաւորին ըսաւ.

— Վեհափառ, արդեօք ո՞ւր հրամաններ տուիք իմ հրացանակիրներուս։

— Ի՞նչ հրամաններ — ըսաւ Թագաւորը։

— Պ. Գուքէի տան համար։

— Ամենևին հրաման մը չտուի — պատասխանեց Լուի։

— Հա՛, հա՛ — ըսաւ տ'Արլանեան իր պեխը խածնելով — չէի՞ սխալած, այս պարոնն է։

Եւ Գօլպէրը կ'ցուցնէր։

— Ի՞նչ հրաման է այդ, նայինք խօսէ — ըսաւ Թագաւորը։

— Հրաման մը տուն մը տակնուվրայ ընելու, Պ. Փուքէի սպասաւորներն ու սպաները ծեծելու, դղրոցները կոտրելու, հանդարտ բնակարան մը թալանելու, անօրէն, վայրենի հրաման մը։

— Պարոն — ըսաւ Գօլպէրը բոլորովին դունատ։

— Պարոն — ընդմիջեց տ'Արդանեան — միայն Թագաւորը, կը լսե՞ս, Թագաւորը միայն իրաւունք ունի իմ հրացանակիրներուս հրամայելու. բայց դու, դու իրաւունք չունիս, և կ'արգիլեմ, այս բանս Նորին Վեհափառութեան առջեւը կ'ըսեմ. սուր կրող աղատանիներ դրիչն ականջի վրայ դրած գատարկապորտներ չեն։

— Տ'Արդանեան, տ'Արդանեան — մրմնաց Թագաւորը։

— Այո նուաստացուցիչ է — շարունակեց հրացանակիրը — իմ զինուորներուս անպատուութիւն եղած է։ Ես դեղջուկ ձիաւորներու չեմ հրամայեր, ես, կամ վերատեսչութեան գործակալներու, թշուառական։

— Բայց նայինք, ի՞նչ կայ, նայինք — ըսաւ Թագաւորն իշխանութեամբ։

— Սա կայ, որ այս պարոնը, այս պարոնն որ Ձեր Վեհափառութեան հրամանները չկրցաւ դուշակել, և հետեւապէս չդիտցաւ որ Պ. Փուքէն կ'ձերբակալէի, պարոնը՝ որ երկուան մեծաւորին համար վանդակապատ կառքը շինել տուաւ՝ Պ. Ռօնշրան զրկեց Պ. Փուքէի բնակարանը, և թէ վերատեսչին թղթերն տեսնելու համար, բոլոր կարասիքն ալ առին։ Իմ հրացանակիրներս առաւօտէն 'ի վեր տան բոլորտիքն էին։ Աւասիկ իմ հրամաններս։ Ինչո՞ւ համար զանոնք ներս մտցնելու համարձակեցան, ինչո՞ւ համար այս կողոպուտին հանդիսատես լինելու կ'ստիպէին զանոնք, որով գործին գաւակից եղան։ Անօրէն, մենք Թագաւորին կ'ծառայենք, բայց Պ. Գօլպէրին չենք ծառայեր։

— Պ. տ'Արդանեան — ըսաւ Թագաւորը խստութեամբ — զգոյշ եղիր, չեմ ներեր որ իմ ներկայութեանս այդ կերպով բացատրութիւններ խնդրուին։

— Ես Թագաւորին օգտին համար այստէս շարժեցայ — ըսաւ

Գօլպէրը այլայլած ձայնով մը — ծանր է ինձ այս շարժումը Նորին Վեհափառութեան մէկ սպային կողմէ տեսնելու ինձի դէմ, և այս ալ առանց վրէժխնդրութեան, Թագաւորին ունեցած յարգանացս պատճառաւ։

— Ու Թագաւորն ունեցած յարգանքդ — գոչեց տ'Արդանեան որու աչերը շողշողացին — նախ անոր իշխանութիւնը յարգել տալու և անձը սիրել տալու ջանից մէջ կ'կայանայ։ Ամէն լիազօր գործակատար այս իշխանութիւնը կ'ներկայացնէ, և երբ ժողովուրդները զիրենք հարկանող ձեռքը կ'անիծեն, արքայական ձեռքը միայն Աստուծոյ կողմէ կ'դատապարտուի, մինչ կ'հասկընամ։ Քառասուն տարիէ 'ի վեր վիրաց և արեան սովորած զինուոր մը մինչ պիտի տամ քեզի այս դասը։ Պարոն, պէտք էր որ դիմադրութիւնն իմ և վայրագութիւնը քու կողմէ տեսնուէր։ Անմեղնե՛ր ձերբակալել, կաշկանդել և բանտարկել տուիր։

— Կարելի է Պ. Փուքէի գաւակիցները — ըսաւ Գօլպէրը։

— Ուստի՞ գիտես որ Պ. Փուքէ գաւակիցներ ունենայ, և նոյն ինք յանցաւոր լինի։ Թագաւորը միայն գիտէ այդ բանը, իր արդարութիւնը կոյր չէ։ Երբոր ըսէ. «Ձերբակալ ըրէք, բանտարկեցէք այս ինչ մարդիկը», այն ատեն իր հրամանը կ'կատարուի։ Ուստի մի՛ խօսիր այլ ևս ինձի Թագաւորին ունեցած յարգանքդ, և քու խօսքերդ կշռէ, եթէ երբեք սպառնալեայ նշոյլ մը ցուցընեն, վասն զի Թագաւորը թոյլ չտար որ սպառնան անոնց որ իրեն կ'ծառայեն զինքն անծառայողներուն ձեռքը, և եթէ երբեք ապերախտ տէր մ'ունենամ, և այս բանս Աստուած չընէ, այն ատեն ես ինքզինքս յարգել պիտի տամ։

Այս ըսելով՝ տ'Արդանեան հպարտութեամբ Թագաւորին դահլիճին մէջ կանգուն մնաց՝ բոցավառ աչքը՝ ձեռքը սրին վրայ, դողդոջուն շրթով, և զգացածէն աւելի բարկութիւն կեղծելով։

Գօլպէրը նուաստացած, կատղութեամբ համակուած՝ Թագաւորին ողջոյն տուաւ, քաշուելու թոյտութիւն խնդրելու կերպով։

Թագաւորը՝ որու դառողութիւնն ու հետաքրքրութիւնը մեծ հարուած մը կրեր էին, ինչ ընելիքը չգիտեր։ Տ'Արդանեան տեսաւ որ նա կ'վարանէր։ Եթէ աւելի ևս մնար սխալմունք մը գոր-

ծած պիտի լինէր. պէտք էր Գօլպէրի վրայ յալթանակ մը տանիլ, և ասոր միակ միջոցն էր այնպէս ուժգին կծել Թագաւորն որ ուրիշ ելք մը չգտնէ այլ միայն այս երկու հակառակորդաց մին ընտրել։

Ուստի տ՝Արդանեան Գօլպէրի պէս խոնարհութիւն ըրաւ, բայց Թագաւորը՝ որու մեծագոյն փափաքն էր սաստիկ, մանրամասն տեղեկութիւններ ստանալ գանձուց վերատեսչին, այն անձին վրայ որ քիչ մ՝առաջ իրեն դող ազդեր էր, Թագաւորը հասկընալով որ տ՝Արդանեանի գժտութիւնը դէթ քառորդ ժամու չափ պիտի յապաղէր իր իմանալու փափաքած լուրերը, Լուի, ըսինք, Գօլպէրը մոռցաւ, որ նոր բան մը չունէր ըսելու, և հրացանակիրներու հրամանատարը վերակոչեց։

— Նայինք, պարոն — ըսաւ — նախ յանձնարարութիւնդ կատարէ, և ապա գնա հանդչելու։

Տ՝Արդանեան՝ որ դունէն դուրս ելնելու վրայ էր, Թագաւորին ձայնին կայ առաւ, ետ դարձաւ և Գօլպէր մեկնելու ստիպուեցաւ։ Իր դէմքը ծիրանի դոյն առաւ, իր սև և սպառնալից աչերն իրենց Թանձր յօնից ներքև մթին կրակով մը փայլեցան. ուրն առաջ նետեց, Թագաւորին առջև խոնարհութիւն ըրաւ, կէս մը բարձրացաւ տ՝Արդանեանի առջևէն անցնելու ատեն, և մահ՝ի սիրտ սենեկէն դուրս ելաւ։

Տ՝Արդանեան՝ Թագաւորին հետ մենակ մնալով՝ կակղեցաւ անմիջապէս, և իր դէմքը պարզելով,

— Վեհափառ — ըսաւ — դուք նորատի Թագաւոր մ՝էք։ Մարդ արշալոյսէն կ՝դուշակէ Թէ օրը գեղեցիկ Թէ սխուր պիտի լինի։ Վեհափառ, ինչ դուշակութիւններ պիտի ընեն Աստուածուստ ձեր օրինաց ներքև գտնուող ժողովուրդները, երբ ձեր և անոնց մէջ բարկութեան և վրէժխնդրութեան պաշտօններու Թոյլ կ՝տաք որ գործեն։ Բայց, Վեհափառ, իմ վրայ խօսինք, Թողունք վիճաբանութիւն մ՝որ ձեզի մնասի կ՝երևի, և Թերևս գժպատեհ։ Խօսինք իմ վրայ։ Պ. Փուքէն ձերբակալ ըրի։

— Շատ ժամանակ անցայիր — ըսաւ Թագաւորը խստութեամբ։

Տ՝Արդանեան Թագաւորին երեսը նայեցաւ։

— Կ՝նայիմ որ լաւ չբայատրեցի միտքս — ըսաւ նա։ — Ձեր Վեհափառութեան իմացուցի Թէ Պ. Փուքէն ձերբակալ ըրի։

— Այո՛, ի՞նչ կայ։

— Լաւ, պարտաւոր էի ըսել Ձեր Վեհափառութեան Թէ Պ. Փուքէն զիս ձերբակալեց, այս աւելի ճշմարիտ կ՝լինէր։ Ուրեմն ճշմարտութիւնը պիտի ըսեմ. ես Պ. Փուքէի կողմէ ձերբակալ եղայ։

Կարգը Լուի ԺԴի եկաւ զարմանալու։ Նորին Վեհափառութիւնն ըստ կարգի ապուշ մնաց։ Տ՝Արդանեան իր արագ նայուածքով իր տիրոջը մտքին մէջ անցած գարձածը հասկըցաւ։ Անոր ժամանակ չտուաւ որ հարցուփորձ ընէ։ Իրեն յատուկ բանահիւսական, գեղանկար ոճով պատմեց անոր Պ. Փուքէի փախուստը, հետաքննութիւնը, մոլեգին արշաւը, վերջապէս վերատեսչին անհման վեհանձնութիւնը, վերատեսուչն որ կարող էր տան անդամ. խոյս տալ, որ կարող էր քան անգամ զինքն հալածող հակառակորդը սպաննել, և որ նախագաս համարեր էր բանտը, և Թերևս աւելի յոռի վիճակ մը, քան Թէ այն անձին նուաստութիւնն որ իր աղատութիւնը յափշտակել կ՝ուզէր։

Քանի հրացանակրաց հրամանատարը կ՝խօսէր, Թագաւորը կը վրդովէր, իր խօսքերը կ՝լափէր և իր ըղձանքին ծայրերն իրարու դէմ կ՝զարնէր։

— Վեհափառ, ասկից կ՝հետևի՝ գէթ իմ կարծեօքս, որ այսպէս վարուող մարդ մը վեհանձն մարդ մ՝է և չկրնար Թագաւորին Թշնամին լինիլ։ Այս է ահա իմ կարծիքս, և զայն Ձեր Վեհափառութեան կ՝կրկնեմ։ Գիտեմ որ Թագաւորն ինձ պիտի ըսէ, և կ՝խոնարհիմ. «Պետութեան հարկը»։ Թո՛ղ այդպէս լինի, այդ յարգելի պատճառ մ՝է։ Բայց ես զինուոր մ՝եմ, ինձ տրուած հրամանն ընդունեցայ, հրամանը կատարեցի, Թէև ակամայ, իրաւ, բայց վերջապէս կատարուած է, և ինձ խօսք չմնար։

— Հիմակ Պ. Փուքէն ո՞ւր է — հարցուց Լուի պահ մը լուռ կենալէն ետև։

— Պ. Փուքէ, Վեհափառ — պատասխանեց տ՝Արդանեան —

Պ. Գօլպէրի պատրաստել տուած վանդակին մէջն է, և այժմ Անժէի Ճամբուն վրայ չորս ուժեղ ձիերու զօրութեամբ կ'ղլորի կ'երթայ։

— Ինչո՞ւ համար Ճամբուն վրայ թողուցիր։

— Վասն զի Ձեր Վեհափառութիւնը չէր ըսած ինձ Անժէ դնալու։ Այս ըսածիս ապացոյցը, լաւագոյն ապացոյցն աս է որ Թագաւորդ քիչ մ'առաջ ինս կ'փնտռէր...։ Ասկէ զատ՝ ուրիշ պատճառ մ'ևս ունէի։

— Ի՞նչ պատճառ։

— Ես անոր քով դտնուելով՝ խեղճ Գուքէն երբէք խոյս տալու փորձ մը չպիտի փորձէր։

— Լաւ ուրեմն — գոչեց Թագաւորն ապշութեամբ։

— Ձեր Վեհափառութիւնը պարտի իմանալ, և անշուշտ կ'իմանայ որ իմ մեծ փափաքս է Պ. Գուքէի ազատութեան լուրն առնուլ։ Իմ տասնապետներէս մէկուն յանձնեցի զանի, իմ հրաշանակիրներուս մէջ այս գործոյ ամենէն անձարակը, որպէս զի բանտաւորը խոյս տայ։

— Մի թէ յիմա՞ր ես, Պ. տ'Արդանեան — գոչեց Թագաւորն իր կուրծքին վրայ ծալլելով թևերը — մի թէ այդպիսի անհեթեթ բաներ կարելի՞ է ըսել երբ զանոնք մտածելու դժբաղդութիւնն ունի մարդ։

— Ա՛հ, Վեհափառ, չէք յուսար անշուշտ որ Պ. Գուքէի թշնամին լինիմ ես, ինձի և ձեզի համար ըրածը տեսնելէն ետև։ Ո՛չ. երբէք ինձի մի՛ յանձնէք որ զանի պահեմ՝ եթէ կ'ուզէք որ բանտին մէջ մնայ. վանդակն որչափ ամուր լինի, թուչունը վերջապէս թռելու հնարը պիտի դտնէ։

— Կ'զարմանամ — ըսաւ Թագաւորը տխուր ձայնով մը — թէ ինչո՞ւ համար չհետևեցար այն անձին զոր Պ. Գուքէ իմ ամրոցս վրայ բազմեցնել կ'ուզէր։ Ամէն փափաքածդ պիտի ունենայիր. սէր և երախտագիտութիւն։ Իսկ իմ ծառայութեանս մէջ, տէր մ'ունիս դլխուդ վրայ։

— Եթէ Պ. Գուքէն ձեզ Պաստիլլէն հանելու համար չդար, Վեհափառ — պատասխանեց տ'Արդանեան աղդու ձայնով մը — մարդ մը պիտի դար ձեզ դտնելու, և այս մարդն ես եմ. Վեհափառ, արդէն քաջ դիտէք այս բանս։

Թագաւորը լռեց։ Հրացանակրին այս անկեղծ, ճշմարիտ խօսքին դէմ ըսելիք մը չկար։ Թագաւորը մոռիկ ընելով տ'Արդանեանի ըսածը, հին տ'Արդանեանը յիշեց, այն տ'Արդանեանը, որ՝ 'ի Բալէ–Բուայալ՝ իր անկողնոյն վարագոյրներուն ետևը պահուած կ'կենար, երբոր Բարիզի ժողովուրդը՝ Ռէց կարտինալին առաջնորդութեամբը՝ Թագաւորին ներկայութիւնը ստուդելու համար եկեր էր. այն տ'Արդանեանն որու իր կառքին դռնակէն ձեռք կ'բարևէր երբ Նօդր–Տամ կ'երթար Բարիզ մտնելու ատեն, այն ղինուորը զոր Պլուա Թողեր էր, այն տեղակալը զոր իր քովը կոչեր էր՝ երբ Մազարէնի մահուամբն իշխանութիւնը ձեռք կը ձգէր, այն մարդը զոր միշտ հաւատարիմ, արիասիրտ և անձնուէր դտեր էր։

Լուսի դրան կողմը դնաց և Գօլպէրը կոչեց։

Գօլպէր չէր հեռացած նրբաղատեն ուր քարտուղարները կ'աշխատէին։ Ուստի Գօլպէր երևցաւ։

— Գօլպէր, Պ. Գուքէի տան մէջ խուզարկել տուողը դուն էիր։

— Այո՛, Վեհափառ։

— Ի՞նչ արդիւնք ստացար։

— Պ. Ռօնշրա, Ձեր Վեհափառութեան հրացանակիրներուն հետ ղրկուած լինելով, ինձի թղթեր յանձնեց — պատասխանեց Գօլպէր։

— Պիտի տեսնեմ այդ թղթերը...։ Հիմակ ինձի ձեռքդ պիտի տաս։

— Իմ ձեռքս, Վեհափառ։

— Այո՛, որպէս զի Պ. տ'Արդանեանի ձեռքին մէջ դնեմ։ Արդարև, տ'Արդանեան — յարեց նա ժպտելով և ղինուորին կողմը դառնալով, որ գործակալին երեսը տեսնելով՝ դարձեալ իր ամբարտաւան կերպարանքն առեր էր — այս մարդը դու չես ճանչեր, իրարու հետ ծանօթութիւն ըրէք։

Եւ Թագաւորը Գօլպէրը կ'ցուցնէր։

— Միջին ծառայ մ'է երկրորդական պաշտօններու մէջ, բայց մեծ մարդ մը պիտի լինի եթէ առաջին աստիճանի հասցնեմ։

— Վերափառ — կմկմաց Գօլպէր խնդութեամբ և երկիւղով շուարած։

— Հասկըցայ պատճառը — մրմռաց տ'Արղանեան թագաւորին ականջին — նախանձոտ էր . . . ։

— Ճիշտ այդպէս. և իր նախանձը թեերը կ'կապէր։

— Այսուհետև թեաւոր օձ մը պիտի լինի — քրթմնջեց հրայանակիրը դոյզն ինչ ատելութեամբ իր նախորդ հակառակորդին դէմ։

Բայց Գօլպէր՝ անոր մօտենալով՝ իր աչաց այնպիսի տարբեր կերպարան մը ներկայացուց քան ինչ որ սովոր էր ընծայելու. այնչափ բարի, անուշ, գիւրամատոյց երևցաւ, իր աչունքն այնպիսի ազնիւ խնայականութեան երևոյթ մ'առին, որ տ'Արղանեան, որ մարդու կերպարան քաջ կ'ճանչէր, շարժեցաւ, գրեթէ իր համոզումը փոխեց։

Գօլպէր անոր ձեռքը կ'սեղմէր։

— Պարոն, թագաւորին քեզի ըսածը կ'ապացուցանէ թէ նորին Վերափառութիւնն որչափ կ'ճանչէ մարդիկը։ Մինչև յայսօր ցոյց տուած կատաղի ընդդիմութիւնս զեղծումներու դէմ, և ոչ թէ մարդոց, կ'ապացուցանէ որ փառաւոր թագաւորութիւն մը յարդարելու միտք ունէի իմ թագաւորիս, և իմ հայրենեացս ալ թերևս մեծ բարիք մը։ Պ. տ'Արղանեան, շատ խորհուրդներ ունիմ. հասարակաց խաղաղութեան արևուն՝ անոնց ծաղիկը պիտի տեսնես, և եթէ պարկեշտ մարդոց բարեկամութիւնը շահելու ստուգութիւնն ու երջանկութիւնը չունիմ, դէթ ստոյգ եմ, պարոն, որ իրենց յարգը պիտի ստանամ։ Իսկ եթէ իրենց սքանչացման արժանի լինիմ, պարոն, իմ կեանքս պիտի տամ։

Այս փոփոխութիւնը, այս յանկարծական բարձրութիւնը, թագաւորին այս համր հաւանութիւնը հրայանակրին մտածութեան նիւթ եղան։ Շատ մարդավարութեամբ բարևեց Գօլպէրը, որ իր աչքն չէր հեռացներ։

Թագաւորը տեսնելով որ հաշտուեցան, զանոնք ձամբեց. միապին դուրս ելան։

Երբ նոր պաշտօնեայն մի անգամ դահլճէն դուրս ելաւ, հրամանատարը կեցնելով ըսաւ անոր.

— Միթէ կարելի՞ է, պ. տ'Արղանեան, որ այդ քու սուր աչքդ առաջին նայուածքով չկրցար հասկընալ թէ ես ոմ եմ։

— Պ. Գօլպէր — վրայ բերաւ հրայանակիրը — աչաց մէջ մարդուս ունեցած արևուն ճառագայթը կ'արգիլէ հրաշէկ խարոյկները նշմարելու։ Իշխանութեան գլուխը գտնուող մարդը կը փայլատակի, գիտես, և քանի որ դու ալ այդ տեղ հասեր ես, ինչու համար կ'շարունակես հալածանքդ այն մարդուն դէմ որ ընկած է, և այնքան բարձրէն ընկած։

— Ե՞ն, պարոն — ըսաւ Գօլպէր։ — Ո՛հ, պարոն, ես զանի չպիտի հալածեմ երբէք։ Կ'ուզէի դանձային գործերը վարել և առանձին վարել, վասն զի փառասէր եմ, և մանաւանդ իմ արժանեաց վրայ կատարեալ վստահութիւն ունիմ, վասն զի գիտեմ որ այս երկրին բոլոր ոսկին իմ աչաց առջև պիտի երևի, և կը փափաքիմ տեսնել թագաւորին ոսկին, վասն զի՝ եթէ երսուն տարի ապրիմ, երսուն տարուան մէջ, թանկ մը չպիտի մնայ ձեռքս. վասն զի այս ոսկիով, ես, համբարանոցներ, շէնքեր, քաղաքներ պիտի կառուցանեմ, նաւահանգիստներ պիտի բանամ, վասն զի նաւատորմիղ մը պիտի ստեղծեմ, նաւեր պիտի կազմեմ որ Ֆրանսայի անունը հեռաւոր երկիրներ պիտի տանին, վասն զի մատենադարաններ, Ճեմարաններ պիտի հաստատեմ, վասն զի Ֆրանսան աշխարհիս առաջին և ամենէն հարուստ երկիրը պիտի դարձնեմ։ Ահա ասոնք են Պ. Ֆուքէի դէմ ունեցած հակառակութեանս պատճառները, Պ. Ֆուքէ որ գործելու կ'արգիլէր զիս։ Եւ ապա երբ մեծնամ և զօրանամ, երբ Ֆրանսա մեծ և ուժեղ դառնայ, ես ալ ըստ կարգի պիտի աղաղակեմ. «Գթասիրութիւն»։

— Գթասիրութիւն ըսիր։ Ուրեմն թագաւորէն խնդրենք անոր ազատութիւնը։ Թագաւորը քու պատճառաւդ զանի կ'հարուածէ։

Գօլպէր իր գլուխը վեր վերցուց վերստին։

— Պարոն — ըսաւ — քաջ գիտես որ այդպէս չէ գործը, և թէ թագաւորն անձնական ատելութիւն ունի Պ. Ֆուքէի դէմ.

Հարկ չկայ որ քեզի խմայնեմ խնդիրը, արդէն տեղեկացած ես։

— Թագաւորը պիտի տաղտկանայ, պիտի մոռնայ։

— Թագաւորն երբէք չմոռնար, Պ. տ'Արդանեան . . . : Աւասիկ, Թագաւորը կ'կոչէ և այժմ հրաման մը պիտի տայ, ես անոր բան մը չթելադրեցի, այնպէս չէ՞։ Մտիկ ըրէ։

Արդարև Թագաւորն իր քարտուղարները կ'կոչէր։

— Պարո՛ն տ'Արդանեան — ըսաւ նա։

— Աւասիկ եմ, Վեհափառ։

— Բու հրացանակիրներէդ քսան հատ տուր Պ. Սէնդ-Էնյանի որպէս զի Պ. Փուքէի պահպանութիւն ընեն։

Տ'Արդանեան ու Գօլպէր իրարու աչք մը նետեցին։

— Եւ Անժէէն — շարունակեց Թագաւորը — բանտաւորը Պաստիլ պիտի տանին 'ի Բարիզ։

— Իրաւունք ունէիր — ըսաւ հրամանատարը պաշտօնէին։

— Սէնդ-Էնյան — շարունակեց Թագաւորը — ո՞վ որ Պ. Փուքէի գաղտնի խօսքի ճամբուն վրայ հրացանի պիտի բռնես։

— Հասկա՛ ենք, Վեհափառ — վրայ բերաւ դուքսը։

— Դու, պարոն, հրացանակիրներուն ներկայութեան պիտի խօսիս։

Դուքսը խոնարհութիւն ըրաւ և հրամանը կատարելու համար դուրս ելաւ։

Տ'Արդանեան ալ քաշուելու վրայ էր երբ Թագաւորը զանի կեցուց։

— Պարոն — ըսաւ նա — դնա՛ անմիջապէս Պէլ-Իսլի կղզոյն և աւատին տիրացիր։

— Այո՛, Վեհափառ, ես մնանիս։

— Պէտք եղածին չափ զօրք առ՝ որպէս զի ձախորդութիւն մը չկրես՝ եթէ կղզին դիմադրութիւն ցուցնէ։

Պալատական խմբին մէջ շողոմարար թերահաւատութեան մըրմունջ մը լսելի եղաւ։

— Ադոր օրինակը կայ — ըսաւ տ'Արդանեան։

— Ես իմ մանկութեանս ատեն տեսայ — վրայ բերաւ Թագաւորը — և չեմ ուզեր որ վերստին տեսնեմ։ Իմացար միտքս։

Գնա՛, Պ. տ'Արդանեան, և տեղւոյն բանալիներովը դարձիր իմ քովս։

Գօլպէր տ'Արդանեանի մօտեցաւ։

— Յանձնարարութիւն մ'է այս զոր եթէ լաւ կատարես — ըսաւ — մարաջախտի գաւազանին պիտի արժանանաս։

— Ինչո՞ւ համար կ'ըսես սա խօսքը. Եղի՞ լա՞ կոպրէ՞։

— Վասն զի դժուարին է գործը։

— Ա՛հ, ինչ կերպով։

— Պէլ-Իսլի մէջ բարեկամներ ունիս, Պ. տ'Արդանեան, և քեզի պէս մարդկան համար դիւրին բան չէ բարեկամ մը մարմնոյն վրայէն քալել անցնիլ բարձրանալու համար։

Տ'Արդանեան գլուխը ծռեց, մինչդեռ Գօլպէր Թագաւորին մօտ կ'վերադառնար։

Քառորդ մ'ետք՝ հրամանատարը դրաւոր հրաման մ'ընդունեց Պէլ-Իսլը օդը հանել եթէ դիմադրէ, և բոլոր բնակիչներու կամ ֆոխոդոկանէրու վրայ մահու և կենաց իրաւասութիւն մը, այս պատուէրով որ մէկը չթողու որ խոյս տայ։

— Գօլպէր իրաւունք ունէր — մտածեց տ'Արդանեան — իմ մարաջախտի գաւազանս իմ երկու բարեկամներուս կենաց կորստեամբը պիտի ստանամ։ Մինչ կ'մոռնան որ իմ բարեկամներս թուչուններէն աւելի ապուշ չեն և հաւորսին ձեռաց չեն սպասեր որ թև առնուն թռին։ Այս ձեռքն այնպէս պիտի ցոյց տամ անոնց որ տեսնելու ժամանակ պիտի ունենան։ Խե՛ղճ Բորթոս, խե՛ղճ Արամիս։ Ո՛չ. իմ բաղդս շինելու համար ձեր թևին մէկ փետուրն անգամ չպիտի փետեմ։

Այսպէս եզրակացնելով՝ տ'Արդանեան արքունի զօրքը ժողովեց, 'ի Բէնպէօֆ նաւ մոյցուց և առանց ժամանակ անցընելու ճամբայ ելաւ։

Գ.

ՊԷԼ—ԻՍԼ—ԱՆ—ՄԻՐ

Թումբին ծայրը, այն շրջապատեան վայրը՝ որու կ'զարնէ Երեկոյեան կատաղի հոսանքը, երկու մարդիկ իրարու թեւը բռնած՝ վաւաւուն ու թրթռակ լեզուաւ մը կ'խօսակցէին. մարդկային էակ մը չէր կարող լսել անոնց խօսքը, վասն զի ուժգին հովը զանոնք կ'ցրուէր, ինչպէս որ կ'ցրուէր ալեաց կատարները։ Արեւն այն ինչ մարը մտեր և անհետ եղեր էր Ովկիանոսի ահագին երեսին վրայ՝ որ իրրև հսկայական բով հրաշէկ կ'երևէր։

Այն ատեն՝ այս երկու մարդոց մին դէպ 'ի Արևելք կ'դառնար՝ մթին մտատանջութեամբ մը ծովը դիտելով։

Միւսը՝ իր ընկերին կերպարանքը դիտելով՝ կարծես թէ անոր հայուածքէն այլ և այլ բաներ դուշակելու կ'ջանար։ Ապա՝ երկուքնին ևս անձայն, երկուքնին ալ տխուր մտմտուքով յուզեալ, իրենց շրջապատութիւնը կ'շարունակէին։

Այս երկու մարդիկը, ինչպէս որ արդէն մարդ ճանչցած է, մեր տարաբիրներն էին՝ Բորթոս և Արամիս, որ Պէլ—Իսլ ապաստաներ էին ամէն յոյս 'ի վերև, Պ. Հէրպլէյի ընդարձակ յատակագիծն անյաջող ելնելէն 'ի վեր։

— Սիրելի իմ Արամիս, ինչ որ կ'ուզես ըսէ — կ'կրկնէր Բորթոս ուժգին շնչելով աղի օդն որով իր հուժկու կուրծքը կը լնար — ինչ որ կ'ուզես ըսէ, Արամիս, երկու օրէ 'ի վեր՝ մեկնող բոլոր ձկնորսի նաւերուն աներևոյթ լինիլը սովորական բան մը չէ։ Ծովու վրայ փոթորիկ չկայ։ Օդը շարունակ հանդարտ է, բնաւ ամենաթեթև ալեկոծութիւն մը չեղաւ, և եթէ փոթորիկ պատահէր, մեր բոլոր նաւակները չպիտի խորասուզէին։ Վերոյին կ'ըսեմ, տարօրինակ բան մ'է այս, և այս աներևումը զարմանք կ'պատճառէ ինձ, կ'ըսեմ քեզի,

— Իրաւ է — մրմնաց Արամիս — իրաւունք ունիս, Բորթոս քարեկամ։ Իրաւ է, ասոր մէջ տարօրինակ բան մը կայ։

— Ասկից զատ — յարեց Բորթոս, որ գաղափարները կարծես թէ կ'ընդարձակէին Վանի եպիսկոպոսին ցոյց տուած հաւանութեամբը — դու ևս դիտեցիր անշուշտ որ եթէ նաւակները կորսուած էին, ծովեզերքը բնաւ բեկոր մը չհասաւ։

— Ես ալ քեզի պէս դիտեցի։

— Դարձեալ, կ'դիտեմ որ կղզին մեացած միայն երկու հատ նաւակները զոր միւսները փնտռելու զրկեր էիր...։

Արամիս այս տեղ իր ընկերին խօսքն ընդմիջեց այնպիսի յանկարծական շարժումով և աղաղակով մը, որ Բորթոս կայ առաւ որպէս ապուշ կրթած։

— Ի՞նչ կ'ըսես, Բորթոս։ Ի՜նչ. միթէ երկու նաւակները զրկեցիր...։

— Միւսները փնտռելու համար, այո՛, զրկեցի — պատասխանեց Բորթոս պարզապէս։

— Թշուառական, ինչ ըրիր։ Ուրեմն կորսուեցանք — զոչեց եպիսկոպոսը։

— Կորսուեցա՞նք... ի՞նչ հրամեցիր — ըսաւ Բորթոս շփոթած։

— Ինչո՞ւ կորսուած ենք, Արամիս, ինչո՞ւ համար կորսուեցանք։

Արամիս շրթերը խածաւ։

— Ո՛չ ինչ, ո՛չ ինչ։ Ներէ՛, կ'ուզէի ըսել...։

— Ի՞նչ։

— Այսինքն եթէ կամենանք, եթէ մեր խելքին փչէ ծովու վրայ պտոյտ մ'ընել, պիտի չկարենանք։

— Լաւ, միթէ այդ է հնհնուքդ։ Աղո՛ր զուարճութիւն, արդարև։ Իսկ ես, բնաւ հոգ չեմ ըներ։ Իմ ցաւս, ճշմարիտը Պէլ—Իսլի մէջ քիչ շատ զուարճանալու վրայ չէ, իմ կարօտութիւնս, Արամիս, Բիւերֆօնն է, Պրասիէօն է, Վալլօնն է, իմ գեղեցիկ Ֆրանսաս է։ Այս տեղ Ֆրանսա չենք, սիրելի բարեկամդ իմ. չգիտեմ ո՞ւր եմ։ Ո՛հ, կարող եմ ըսել իմ հոգւոյս բոլոր անկեղծութեամբը, և քու սէրդ պիտի ներէ իմ համարձակութեանս անշուշտ, բայց ահա կ'յայտնեմ որ երջանիկ չեմ 'ի Պէլ—Իսլ, ո՛չ, արդարև, երջանիկ չեմ, ես։

Արամիս մեղմիկ հառաչեց։

— Սիրելի բարեկամ — պատասխանեց նա — ահա ինչու համար ցաւ յայտնեցի որ միւս կորսուած նաւակները փնտռելու համար մնացած երկու նաւակները ղրկեցիր։ Եթէ այս խուզարկութեան համար նաւակները ղրկած չլինէիր, հիմակ մեկնած պիտի լինէինք։

— Մեկնած. հապա հրամանը, Արամիս։

— Ի՞նչ հրաման։

— Տէ՛ր ողորմա. այն հրամանը զոր միշտ և ամէն առթիւ կը կրկնէիր. այսինքն թէ Պէլ-Իսլը կ'պահպանէինք բնակալին դէմ. միթէ մոռցա՞ր։

— Իրաւ է — մրմնաց վերստին Արամիս։

— Ուրեմն կ'նայիս որ չեմ կրնար մեկնիլ, սիրելիդ իմ, և թէ նաւակները խուզարկելու ղրկելովս փաս մը չունի։

Արամիս լուեց. և իր անորոշ ակնարկը՝ ծովու որորի մ'աչքին պէս լուսաւոր՝ երկար ատեն ջրերուն վրայ սաւառնեցաւ, անջրպետին հարցուփորձ ընելով՝ և հորիզոնէն անդին անցընելու ջանալով։

— Սակայն, Արամիս — շարունակեց Բորթոս՝ որ իր դաղափարին կ'դառնար և այնքան անոր կ'յարէր որչափ որ եպիսկոպոսը զայն ճշդիւտ գտեր էր — և սակայն դարձեալ դժբաղդ նաւակներուն ինչ կրնայ հասած լինիլ չես ուղեր ինձ բացատրել։ Ո՛ւսկից որ անցնիմ ողբ և կոծ կ'լսեմ, տղաք կ'լան տեսնելով կանանց վիշտը, որպէս թէ բացակայ հայրերն ու ամուսինները կրնամ ետ դարձնել։ Ի՞նչ ենթադրութիւն կ'ընես, բարեկամ, և ինչ պարտիմ պատասխանել։

— Սիրելիդ իմ Բորթոս, ամէն բան ենթադրենք, և բան մը չըսենք։

Այս պատասխանը Բորթոսը գոհ չըրաւ։ Ետ դարձաւ սրտնեղութեամբ քանի մը բառ կմկմալով։

Արամիս արիասիրտ դինուորը կեցուց։

— Միթէ կ'յիշէս — ըսաւ նա մելամաղձութեամբ, մտերմական սիրով հսկային երկու ձեռքն իրեն ձեռաց մէջ սեղմելով —

բարեկամ, կ'յիշէ՞ս, որ մեր երիտասարդութեան աղբոր օրերը, երբ ուժով և արի էինք, միս երկուքն ու մենք, կ'յիշէ՞ս, Բորթոս, եթէ փափաք ունենայինք Ֆրանսա դառնալու, այս աղի ջրէ ծածկոյթը մեզի արգելք չպիտի լինէր։

— Ո՛հ — ըսաւ Բորթոս — վեց մղո՞ն։

— Եթէ տեսնէիր որ ես տախտակի մը վրայ կ'հեծնեմ, միթէ ցամաքը պիտի մնայիր, Բորթոս։

— Ո՛չ, Աստուած պիտի, ո՛չ, Արամիս։ Բայց այսօր մեզի ինչ տախտակ պէտք պիտի լինի, սիրելի բարեկամ, մանաւանդ ինձի համար։

Եւ Պրասլէօի իշխանը գոհութեամբ ծիծաղելով՝ իր հսկայական մարմնոյն վրայ ակնարկ մը ձգեց։

— Միթէ իրաք Պէլ-Իսլի մէջ քիչ մը չե՞ն ձանձրանար, և միթէ քու բնակարանիդ, Վանի եպիսկոպոսական ապարանիդ ասուշութիւնները նախադաս չե՞ն համարիր։ Ճշմարիտը խոստովանէ, խնդրեմ։

— Ո՛չ — պատասխանեց Արամիս, առանց Բորթոսին երեսը նայիլ համարձակելու։

— Ուրեմն, մնանք ասա — ըսաւ իր բարեկամը հառաչելով՝ որ, թէև շատ ճիգ ըրաւ զայն ցսպելու, իր կուրծքէն աղմկալի դուրս ելաւ։ — Մնանք, մնանք։ Եւ սակայն — յարեց նա — և սակայն եթէ կամք ունենար մարդ, հաստատ խորհուրդ մ'ունենար Ֆրանսա դառնալու, և նաւակներ չպտտուէին . . .։

— Միթէ ուրիշ բան մ'ալ դիտեցիր, բարեկամդ իմ, այսինքն, մեր նաւակներուն անհրաժեշտ լինելէն 'ի վեր, երկու օրէ 'ի վեր որ մեր ձկնորսները չեն եկած, կղզոյն եղերքը մակոյկ մը անցամ չմօտեցաւ։

— Այո՛, անտարակոյս, իրաւունք ունիս։ Ես ալ այդ բանը դիտեցի, ես ալ, և այդ բանը դիտել դիւրին էր. վասն զի այս երկու աղէտաբեր օրերէն առաջ, բազմաթիւ նաւակներ այս կողմերը կ'երթևեկէին, ինչպէս որ դիտես։

— Պէտք է տեղեկանալ — ըսաւ յանկարծ Արամիս յուզմամբ։

— Եթէ լաստ մը շինել տալու լինիմ. . .։

— Բայց մակոյկներ կան, սիրելի բարեկամ, կ'ուզես որ մէկ հատ պատրաստեմ։

— Մակոյկ մը . . . մակոյկ մը . . . : Կարելի՞ բան է, Բորթոս։ Մակոյկ մ'որ կրնայ շրջիլ։ Ո՛չ, ո՛չ— պատասխանեց եպիսկոպոսը — մեր արուեստը չէ ալեայ վրայ թափառիլ։ Սպասենք, սպասենք։

Եւ Արամիս իր պտոյտը կ'շարունակէր իր վրդովմունքը հետզհետէ աւելնալով։

Բորթոս որ իր բարեկամին բոլոր տենդային շարժումներուն հետեւելէն կ'տաղտկանար, Բորթոս՝ որ իր հանդարտութեամբ և դիւրահաւանութեամբ Արամիսի այս զայրացմանէ՝ որ յարատև ընդոստումներով երեւան կ'ելնէր, բան մը չէր հասկընար, Բորթոս զանի կեցուց։

— Նստինք սա ժայռին վրայ — ըսաւ անոր — սա տեղ իմ քովս նստիր, Արամիս, և վերջին անգամ մ'ևս կ'պաղատիմ քեզ, բացատրէ ինձ, բայց լաւ մը հասկըցընելու կերպով բացատրէ ինձ թէ այս տեղ ինչ կ'ընենք։

— Բորթոս . . . — ըսաւ Արամիս շփոթած։

— Գիտեմ որ սուտ թաղաւորը դահէն վար նետել ուզեց Ֆշմարիա թաղաւորը։ Այս գիտենք, այս հասկըցանք։ Լաւ ուրեմն . . . :

— Այո՛ — ըսաւ Արամիս։

— Գիտեմ որ սուտ թաղաւորը Պէլ-Իսլն անկլեսցուց ծախելու միտք ըրաւ, այս ալ հասկըցայ։

— Այո՛։

— Գիտեմ որ, մենք իբրև Ֆարտարասէտ և Հրամանատար եկանք Պէլ-Իսլ ընկանք որպէս զի Պ. Ֆուքէի հնազանդ՝ և անոր հրամանաւ ժողովուած և թոշակ ընդունող տասն դումարտակներու հրամանատարութիւնը ստանձնենք, այս ամենը գիտեմ և կը հասկընամ։

Արամիս անհամբեր ոտք ելաւ։ Կարծես թէ Ֆանֆ մը կ'նեղէր առիւծը։

Բորթոս անոր թեւէն բռնեց։

— Բայց ինչ որ չեմ հասկընար, որչափ որ խելք կ'թափեմ, ինչ որ չեմ կարող հասկընալ և երբէք չպիտի հասկընամ, այս է որ փոխանակ մեզի զօրք զրկելու, փոխանակ մեզի պատերազմի մթերք և պաշար ուղարկելու, մեզ առանց նաւակի կ'թողուն, Պէլ-Իսլի հետ ամէն յարաբերութիւն կ'ընդմիջեն, փոխանակ մեզի հետ թղթակցութիւն մը հաստատելու, թէ նշաններով, թէ ուրիշ գրաւոր կամ բերանացի հաղորդակցութեամբ, ամէն տեսակ յարաբերութիւն կ'արգիլեն։ Նայինք, Արամիս, պատասխան տուր ինձ, կամ լաւ ևս, ինձ պատասխան տալէն առաջ, կ'ուզես ըսեմ թէ ի՞նչ մտածեցի, ես. կ'ուզես իմանալ թէ ի՞նչ խորհեցայ և ի՞նչ երևակայեցի։

Եպիսկոպոսը գլուխը վերցուց։

— Լաւ ուրեմն, Արամիս — շարունակեց Բորթոս — մտածեցի, երևակայեցի որ Ֆրանսա դէպք մը պատահած է։ Բոլոր դիշեր Պ. Ֆուքէի վրայ երազեցի, մեռած ձուկեր, կոտրած հաւկիթներ, անշուք և անկայուն սենեակներ երազս տեսայ։ Անշա՛հ երազներ են ասոնք, սիրելիդ իմ Հերպլէյ, չարագուշակ երազներ են։

— Բորթոս, ի՞նչ կայ վարը — ընդմիջեց Արամիս յանկարծ ոտք ելնելով և իր բարեկամին ցոյց տալով ջրին ծիրանեգոյն գծին վրայ սև կէտ մը։

— Նաւակ մը — ըսաւ Բորթոս — այո՛, իրօք նաւակ մ'է։ Ա՛հ, վերջապէս լուրեր պիտի ստանանք։

— Երկո՛ւ հատ — գոչեց եպիսկոպոսն ուրիշ կայմ մ'ալ նշմարելով — երկո՛ւ, երեք, չո՛ր։

— Հինգ — ըսաւ Բորթոս ըստ կարգի։ — Վեց, եօթ։ Ա՛հ, Աստուած իմ. նաւատորմիղ մ'է, Աստուած իմ, Աստուած իմ։

— Մեր նաւակները պիտի լենին որ կ'վերադառնան — ըսաւ Արամիս մտատանջ, թէև հանդարտութիւն կ'կեղծէր։

— Շատ խոշոր են և ձկնորսի նաւեր չեն երևիր — գիտել տուաւ Բորթոս. — ասկէ զատ՝ միթէ չե՞ս նայիր, սիրելի բարեկամ, որ Լուարի կողմէն կ'գան։

— Այո՛ . . . Լուարի կողմէն կ'գան։

— Եւ ահա, ամէն մարդ ինձի պէս տեսաւ զանոնք, ահա կիներ և տղաք թումբին վրայ կ'ելնեն։

Ծերը ձկնորս մը կ'անցնէր։

— Միթէ մեր նաւակներն են — հարցուց անոր Արամիս։

Ծերունին հորիզոնին խորը թափանցեց իր աչքը։

— Ո՛չ, տէր իմ — պատասխանեց նա — արքունի տափարակ նաւեր են։

— Արքունի՞ նաւեր — պատասխանեց — Արամիս զողզողալով։

— Ի՞նչպէս հասկըցար այդ բանը։

— Դրօշակէն։

— Բայց — ըսաւ Բորթոս — նաւակը հաղիւ կ'տեսնուի. ինչպէս, թշուառական, կարող ես դրօշակը զանազանել։

— Կ'նայիմ որ հատ մը կայ — պատասխանեց ծերունին — մեր նաւակներէն, և վաճառաց տափարակ նաւերը դրօշակ չունին։ Այս տեսակ պատերազմիկ նաւերը, պարոն, ընդհանրապէս զօրք փոխադրելու կ'ծառայեն։

— Ա՛հ — ըրաւ Արամիս։

— Կեցցե՛ն — զոչեց Բորթոս — մեզի օգնական զօրք կ'ղրկեն, այնպէս չէ՞, Արամիս։

— Հաւանական է։

— Միայն թէ անկլեայցիք չլինին եկողները։

— Լուարի՞ կողմէ։ Բորթոս, այդ դժբաղդութիւն մը պիտի լինէր. ուրեմն Բարիզէն անցած պիտի լինին։

— Իրաւունք ունիս. Ճշմարիտը, օգնական զօրք կամ պաշար են։

Ապա, յանկարծ.

— Բորթոս — ըսաւ — հնչել տուր պատերազմի զանգակը։

— Պատերազմի՞. . . միթէ ստոյգ կ'ըսես։

— Այո՛, և թող թնդանօթաձիգ զօրքն ամրոցներն երթան, զինուորներն իրենց տեղը բռնեն, մանաւանդ ծովեզրեայ մարտկոցներուն վրայ հսկել պէտք է։

Բորթոս աչերը խոշոր խոշոր բացաւ և ուշադիր նայեցաւ իր բարեկամին երեսը, որպէս զի համոզուի թէ իրօք խելքը գլուխ է։

— Ահա ես պիտի երթամ, իմ բարի Բորթոս — շարունակեց Արամիս իր ամենէն քաղցր ձայնովը — երթամ պիտի այս հրամանները կատարել տալու, եթէ դու չերթաս, սիրելի բարեկամդ իմ։

— Բայց անմիջապէս պիտի երթամ — ըսաւ Բորթոս, որ դնաց այս հրամանը կատարել տալու, շարունակ աչքն ետևը ձգելով տեսնելու համար թէ արդեօք Վանի եպիսկոպոսը չէր սխալեր, և թէ արդեօք զդաստանալով զինքը թերևս վերակոչէր։

Պատերազմի զանգակը հնչեցին, փողերն ու թմբուկները սկսան թնդալ։

Անմիջապէս ծովեզրեայ թումբերը հետաքրքիրներով և զինուորներով լցան. թնդանօթաձիգ զօրականաց ձեռքը պատրոյգները վառեցան, որոնք խոշոր թնդանօթներու ետևը կեցած և թնդանօթներն ալ քարէ սայլակներու վրայ դրուած էին։ Երբ ամէն մարդ իր տեղը բռնեց, երբ պաշտպանութեան համար ամէն պատրաստութիւններն եղան,

— Ներէ՛ ինձ, Արամիս, որ խնդիրը հասկընամ — մրմնաց Բորթոս երկչոտութեամբ եպիսկոպոսին ականջին։

— Ճշմարիտը, սիրելի, հիմակ շատ լաւ պիտի հասկընաս — մրմնաց Պ. Հերպլէյ իր տեղակալին հարցման։

— Այս նաւատորմն որ ահա վարէն կ'գայ, նաւատորմն որ առագաստները պարզած՝ գլուխը Պէլ-Իսլի նաւահանգստին կողմը դարձուցած է, թագաւորական նաւատորմ մ'է, այնպէս չէ։

— Բայց քանի որ Ֆրանսայի մէջ երկու թագաւոր կայ, Բորթոս, այս երկու թագաւորներէն ո՞ր մէկունն է այս նաւատորմը։

— Ո՛հ, աչքս կ'բանաս — պատասխանեց հսկան այս փաստին ներքև ընկճելով։

Եւ Բորթոս՝ որ բարեկամին այս պատասխանէն այն ինչ աչքը բացեր էր, կամ թէ իր աչքը պատող կապն աւելի թանձր դարձեր էր, շուտ մը մարտկոցները գնաց որպէս զի իր մարդոց վրայ հսկէ և ամէն զինուորի յորդոր կարդայ իր պարտաւորութիւնը կատարելու։

Սակայն Արամիս՝ աչքը միշտ հորիզոնին վրայ սևեռած՝ կ'դէ-

տէր որ նաւերը կ'մօտենային։ Ամբոխն ու զինուորները ժայռերուն սայրերն ու խորտուբորտ տեղերը կեցած, կարող էին կայմերը նշմարել, ապա ստորին առագաստները, վերջապէս նաւերուն խումբը. որոց ծայրը կ'ծածանէր Ֆրանսայի արքայական դրօշը։

Արդէն մութը կոխեր էր երբ այս պատերազմիկ նաւերէն մին՝ որոց ներկայութիւնն այնչափ ահուդող ազդեր էր Պէլ-Իսլի ժողովրդեան, եկաւ և թնդանօթի հեռաւորութեամբ կեցաւ կղզւոյն առջև։

Թէև մութ էր, բայց կ'տեսնուէր որ այս նաւուն մէջ տեսակ մը վրդովմունք կ'տիրէր, որու կողէն մակոյկ մը հեռացաւ, և երեք թիավարներ, թիակներու վրայ ծռած՝ նաւահանգստին կողմը բռնեցին, և քանի մը վայրկենէն բերդին պատերուն ներքև դտնուեցան։

Այս մակոյկին պետը թմբին վրայ ցատկեց։ Ձեռքը նամակ մը ունէր, օդին մէջ զայն կ'շարժէր և կարծես թէ մէկը կ'փնտռէր որ հետը բանակցի։

Այս մարդը քիչ ատենէն շատ մը զինուորներ ճանչցան և հասկըցան որ կղզւոյն մէկ նաւուղին է։ Արամիսի վար դրած նաւակներէն մէկուն դլխաւորն էր և ղոր Բորթոս երկու օրէ 'ի վեր անբևեռյթ եղող ձկնորսներու վրայ անհանդիստ լինելուն, կորսուած նաւակները փնտռել տալու ղրկեր էր։

Այս մարդը խնդրեց որ զինքը Պ. Հէրպլէյի մօտ տանին։

Երկու զինուոր՝ յիսնապետին մէկ նշմայրին վրայ ղանի իրենց մէջ առին և առաջնորդեցին։

Արամիս քարափին վրայ էր։ Պատդամաւորը Վանի եպիսկոպոսին առջև ներկայացաւ։ Բոլորովին մութ էր, թէև Արամիսի հետ շրջող զինուորներ բաւական հեռաւորութեամբ կեցած ջահեր բռներ էին։

— Է՛հ, նայինք, Յովնաթան, որ կողմէն կ'դաս։

— Տէր իմ, զիս բռնողներուն կողմէն։

— Ո՞վ բռնեց քեզ։

— Տէր իմ, զիտէք որ մեր ընկերները փնտռելու համար մեկներ էինք։

— Այո՛, ապա։

— Լաւ, տէր իմ. մղոն մը հեռու գտնուելով մեզ դրաւեցին թագաւորին մէկ քանի ձկնորսի նաւեր։

— Ո՞ր թագաւորին — հարցուց Բորթոս։

Յովնաթան աչերը խոշոր խոշոր բացաւ։

— Խօսէ — շարունակեց եպիսկոպոսը։

— Տէր իմ, այսպէս բռնուելով տարին մեզ մայրաքաղաքն երէկ առտու բռնուողներուն հետ։

— Ի՞նչ կ'նշանակէ այսպէս ամենքնիդ ալ բռնելին — ընդմիջեց Բորթոս։

— Պարոն, որպէս զի պատճառը ձեզի ըսելու արդիլեն — պատասխանեց Յովնաթան։

Բորթոս դարձեալ չկրցաւ հասկընալ։

— Եւ այսօր ձեզ աղմտ կ'թողուն — հարցուց նա։

— Որպէս զի ձեզի ըսեմ, պարոն, որ մեզ բռնած են։

— Երթալով դործը կ'պղտորի — մտածեց Բորթոս։

Նոյն պահուն Արամիս կ'մտմտար։

— Հիմակ նայինք, միթէ արքունի նաւատորմիղ մը ծովեզերքը կ'պաշարէ։

— Այո՛, տէր իմ։

— Ո՞վ է հրամանատարը։

— Թագաւորին հրացանակիրներուն հրամանատարը։

— Տ'Արդանեա՞ն։

— Տ'Արդանեա՞ն — ըսաւ Բորթոս։

— Կարծեմ թէ այս անունն է։

— Միթէ այն է այս գիրը տուողը։

— Այո՛, տէր իմ։

— Մօտեցուցէք սա ջահերը։

— Այս իր ձեռագիրն է — ըսաւ Բորթոս։

Արամիս աշխուժիւ կարդաց հետևեալ տողերը։

«Հրաման թագաւորի Պէլ-Իսլն առնելու։

«Հրաման սրէ անցընելու պահապան զօրքն եթէ դիմադրէ։

«Հրաման դերեալ բոլոր պահապան զօրայ դունդը։

«Ստորագրեալ, Տ՚ԱՐԴԱՆԵԱՆ, որ առջի օր Պ. Փուքէն ձեր-բակալեց Պասդիէլ ղրկելու համար»։

Արամիսի գոյնը նետեց և ձեռաց մէջ թուղթը ճմլրեց։

— Ի՞նչ կայ — հարցուց Բորթոս։

— Ո՛չ ինչ, բարեկամ, ո՛չ ինչ։

— Ըսէ՛ ինձ, Յովնաթան։

— Տէր իմ։

— Միթէ Պ. տ՚Արդանեանի խօսեցաթը։

— Այո՛, տէր իմ։

— Ի՞նչ ըսաւ քեզի։

— Թէ աւելի ընդարձակ տեղեկութիւններ տալու համար Ձեր Բարձրութեան հետ պիտի խօսի։

— Ո՞ւր տեղ։

— Իր նաւուն մէջ։

— Ի՞ր նաւուն մէջ։

Բորթոս կրկնեց.

— Ի՞ր նաւուն մէջ։

— Պարոն հրամանատարը — շարունակեց Յովնաթան — ըսաւ ինձ որ երկուքնիդ ալ առնում, ձեզ և պարոն Ճարտարապետը, իմ մակոյկս և իրեն տանիմ։

— Երթանք — ըսաւ Բորթոս։ — Մեր սիրական տ՚Արդանեանը։

Արամիս զանի կեցուց։

— Միթէ խե՞նթ ես — գոչեց նա։ — Ո՞վ կ՚ըսէ թէ այս ծուղակ մը չէ։

— Մի՛ւս թաղաւորին — պատասխանեց Բորթոս խորհրդաւոր դէմքով մը։

— Վերջապէս, ծուղակ մը։ Ասով ամէն բան կ՚իմանաս, բարեկամ։

— Կարելի է. ուրեմն ի՞նչ ընենք։ Սակայն քանի որ տ՚Արդանեան մեզ կ՚կոչէ...։

— Ո՞վ ըսաւ քեզի որ տ՚Արդանեանն է։

— Ա՛հ, իրաւ է... բայց ձեռագիրը...։

— Ձեռագիրը կարելի է կեղծել....։ Այս գիրը կեղծեալ է, դողդոջուն է։

— Միշտ իրաւունք ունիս. բայց առ այժմ, բան մը չգիտենք։

Արամիս լուռ կեցաւ։

— Իրաւ է — ըսաւ բարի Բորթոսը — որ բան մ՚իմանալու պէտք չունինք։

— Ի՞նչ պիտի ընեմ ես — հարցուց Յովնաթան։

— Այն հրամանատարին մօտ պիտի դառնաս։

— Շատ աղէկ, տէր իմ։

— Եւ անոր պիտի ըսես որ կ՚աղաչենք զինքը մեր կղզին դալու։

— Կ՚իմանամ — ըսաւ Բորթոս։

— Այո՛, տէր իմ — պատասխանեց Յովնաթան — բայց եթէ այն հրամանատարը Պէլ-Իսլ դալու մերժէ....։

— Եթէ մերժէ, քանի որ թնդանօթներ ունինք, պիտի դործածենք։

— Տ՚Արդանեանի դէմ։

— Բորթոս, եթէ տ՚Արդանեանն է պիտի դայ մեզի։ Գնա՛, Յովնաթան, գնա՛....։

— Ճշմարիտը, դարձեալ բան մը չեմ հասկընար — մրմռաց Բորթոս։

— Հիմակ ամէն բան պիտի հասկցընեմ քեզի, սիրելի բարեկամ, ժամը հասաւ։ Նստիր սա թնդանօթի սայլակին վրայ, ականջներդ բաց և լաւ մտիկ ըրէ։

— Ո՛հ, մտիկ կ՚ընեմ, հաւատի եղիր։

— Կրնամ մեկնիլ, տէր իմ — պոռաց Յովնաթան։

— Գնա՛ և պատասխանով մը դարձիր։ Թողէք որ մակոյկն անցնի, դուք ղինուորներ։

Մակոյկը գնաց որ նաւուն միանայ։

Արամիս Բորթոսի ձեռքը բռնեց և բացատրութիւնները սկսաւ։

Դ

ՇՐԱՄԱՅԻՍ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

— Բորթոս բարեկամ, հաւանական է որ ըսելիքս քեզ պիտի զարմացնէ, բայց միանգամայն պէտք եղած տեղեկութիւնները պիտի տայ։

— Կ'սիրեմ զարմանալ — ըսաւ Բորթոս բարեսրտութեամբ — ուստի՝ կ'աղաչեմ, զիս մի՛ խնայեր, բան մը մի՛ ծածկեր. այլապէս անզգայ եմ, ուստի բանէ մը մի՛ վախնար, խօսէ։

— Բորթոս, դժուարին է . . . դժուարին է, վասն զի, երկրորդ անգամ իմայ կ'տամ քեզի, տարօրինակ, կարգէ դուրս բաներ ունիմ քեզի յայտնելու։

— Ո՛հ, այնքան լաւ կ'խօսիս, սիրելի բարեկամ, որ ամբողջ օրեր քեզի մտիկ պիտի ընեմ։ Ուստի, խօսէ, կ'աղաչեմ, բայց կեցցէ՛ր, միաքս բան մը կ'դայ. գործդ դիւրացնելու համար, քեզի պիտի օգնեմ այդ բաներն ըսելու, հարցուփորձ ընելու։

— Շատ աղէկ, այդպէս ըրէ։

— Սիրելի Արամիս, ինչո՞ւ համար պիտի պատերազմինք։

— Եթէ այս տեսակ հարցումներ ընես ինձ, եթէ այդ կերպով գործս դիւրացնելու կ'միտիս, իմ յայտնութեան պիտոյքս, այդ կերպ հարցաքննութեամբ, ոչ ինչ չպիտի դիւրացնէ ինձ, Բորթոս։ Ընդհակառակն, կորդեան հանդոյցն ասոր մէջն է, թէ քեզի և թէ ինձի համար, խոստովանութիւնն արիապէս սկսիլ։ Քեզ խաբեցի, իմ արժանի բարեկամս։

— Զիս խաբեցի՞ր։

— Ասուած իմ, այո՛, խաբեցի։

— Արամի՛ս, իմ օգտիս համար էր։

— Բորթոս, այդպէս կարծեցի, անկեղծօրէն կարծեցի, բարեկամդ իմ։

— Ուրեմն — ըսաւ Պրասիէօի բարեկիր կալուածատէրը — ինձ ծառայութիւն մատուցիր, և քեզի շնորհակալ եմ. վասն զի՝ թէ որ զիս խաբած չլինէիր, կարելի է որ ես խաբուէի։ Հիմակ ըսէ, ի՞նչ բանի մէջ խաբեցիր զիս։

— Այս է թէ բռնակալին կ'ծառայէի, որու դէմ Լուի ԺԴ իր բոլոր ճիգը կ'թափէ։

— Բռնակա՞լը — ըսաւ Բորթոս ճակատը քերելով. — այսինքն . . . բայց շատ լաւ չեմ հասկընար խնդիրը։

— Երկու թաղաւորներէն մին է որոնք Ֆրանսայի թագին համար կ'մրցին։

— Շա՛տ լաւ . . . ուրեմն կ'ծառայէիր անոր որ Լուի ԺԴը չէ։

— Իսկոյն, բուն խնդրոյն խորը մտար։

— Ասկից կ'հետևի որ . . .։

— Ասկից կ'հետևի որ ապստամբներ ենք, իմ խեղճ բարեկամս։

— Սատանայ, սատանայ . . . — գոչեց Բորթոս վհատեալ։

— Ո՛հ, սիրելի Բորթոս, բայց հանդարտէ, դարձեալ հնարք պիտի գտնենք աղատելու, հաւատա՛ ինձի։

— Այդ բանը չէ ինձ մտատանջութիւն ազդողը — պատասխանեց Բորթոս — այլ զիս ամենէն աւելի վրդովողն այդ ապստամբ աղտոտ անունն է։

— Ա՛հ, ճիշտ է . . .։

— Եւ այսպէս, ինձ խոստացուած դքսութիւնը . . .։

— Բռնակալն էր տուողը . . .։

— Այդ մի և նոյն բանը չէ, Արամիս — ըսաւ Բորթոս վեհափառօրէն։

— Բարեկամ, եթէ կամքէս կախում ունենար գործը, հիմակ իշխան պիտի լինէիր։

Բորթոս սկսաւ իր ըղձանքը կրծել տխրագին։

— Ահա այդ մասին անիրաւ դանուեցար զիս խաբելով — շարունակեց նա — վասն զի այդ խոստացեալ դքսութեան վրայ յոյս ունէի։ Ո՛հ, սրտի մռաք կ'յուսայի, քեզ խօսքի և պատուոյ տէր մարդ-գիտնալով, սիրելիդ իմ Արամիս։

— Խե՛ղճ Բորթոս, կ'աղաչեմ ներէ՛ ինձ։

— Այսպէս ուրեմն — պնդեց Բորթոս, առանց Վանի եպիսկոպոսին աղաչանքին պատասխան տալու — այսպէս ուրեմն Լուի ԺԴի հետ անհաշտ թշնամի դարձայ։

— Այդ կարգի պիտի դնեմ, իմ բարեսիրտ բարեկամս, այդ կարգի պիտի դնեմ։ Ամէն բան իմ վրաս պիտի առնում։

— Արամի՛ս։

— Ո՛չ, ո՛չ, Բորթոս, կ'պաղատիմ քեզ, թո՛ղ որ գիտցածս ընեմ։ Սուտ վեհանձնութիւն պէտք չէ։ Դու իմ խորհուրդներս չգիտէիր բնաւ. դու ինքնին բան մը չբրիր. իսկ իմ մասիս, խնդիրը կ'փոխուի։ Ես եմ միայն դատապրութեան հեղինակը։ Իմ անբաժանելի ընկերիս պէտք ունէի, քեզ կոչեցի և դու ալ ինձի միացար, մեր հին նշանաբանը յիշելով. «Ամենքը միոյն, մին ամենուն համար»։ Իմ մեղքս, Բորթոս, միայն եսասէր լինիլս է։

— Աւասիկ խօսք մ'որմէ կ'ախորժիմ — ըսաւ Բորթոս — և քանի որ մի միայն քեզի համար գործեցիր, ինձ անկարելի պիտի լինի քեզ մեղադրել։ Քանի՛ բնական է այդ։

Եւ այս վսեմ խօսքն ըսելով, Բորթոս իր բարեկամին ձեռքը սեղմեց սրտովին։

Արամիս, հոգւոյ այս անմեղ մեծութեան առջև՝ շատ փոքրցաւ։ Երկրորդ անգամն էր որ կ'ստիպուէր սրտի ճշմարիտ գերազանցութեան առջև խոնարհիլ, որ մտքի պայծառութենէ աւելի գօրաւոր է։

Իր բարեկամին վեհանձն զղուանաց պատասխանեց անձայն և աղդու սեղմելով անոր ձեռքը։

— Հիմակ — ըսաւ Բորթոս — որ բացէ՛ի բաց իրարու միտք հասկըցանք, հիմակ որ քաջ ըմբռնեցի թէ ինչ դիրքի մէջ ենք Լուի թագաւորին առջև, կարծեմ թէ, սիրելի բարեկամ, ժամ է ինձ բացատրելու թէ ի՞նչ քաղաքական դաւի մէջ զոհ ընկած ենք, վասն զի կ'գիտեմ որ այս գործին մէջ քաղաքական դաւ մը կայ։

— Բարեմիտ Բորթոս, տ'Արդանեան հիմակ պիտի գայ, և մանր պիտի պատմէ քեզ բոլոր պարագաները. բայց ներէ՛ ինձ, սիրելի

վշտաբեկ է, պէտք է որ իմ բոլոր ուշմտութիւնս, իմ բոլոր խելքս ժողովեմ որպէս զի այդ վտանգալի վիճակէն քեզ ազատեմ. բայց այս խնդիրը շատ պարզ է, իմ վիճակս չափազանց որոշ է։ Այժմ Լուի ԺԴ թագաւորը լոկ թշնամի մ'ունի, այդ թշնամին ես եմ, ես միայն։ Ես քեզ բանտաւոր ըրի, ինձի հետեւեցար, քեզ այսօր կ'արձակեմ, քու իշխանիդ ծոցը պիտի թռիս։ Կ'նայիս, Բորթոս, այս բանիս մէջ բնաւ դժուարութիւն չկայ։

— Այդպէ՞ս կարծես — ըսաւ Բորթոս։

— Բոլորովին ստոյգ եմ։

— Ուրեմն ինչո՞ւ համար — ըսաւ Բորթոս իր ուղղղ դատողութեամբը — ինչո՞ւ համար ուրեմն, եթէ այդպիսի դիւրին կացութեան մէջ ենք, ինչո՞ւ համար, իմ բարի բարեկամս, թնդանօթներ, հրացաններ, և ամէն տեսակ գործիներ կ'պատրաստենք։ Աւելի պարզ կերպն այս է, պէտք է պատասխանել տ'Արդանեան հրամանատարին. «Սիրելի բարեկամ, խարուեցանք, պէտք է վերաշինիլ, դուռը մեզի բաց, թոյլ տուր որ անցնինք, և բարի լոյս»։

— Ա՛հ, այդ է խնդիրը — ըսաւ Արամիս գլուխը ցնցելով։

— Ի՞նչպէս այդ է։ Մի՞թէ այս խորհուրդս լաւ չե՞ս դտներ, սիրելի բարեկամ։

— Դժուարութիւն մը կ'տեսնեմ անոր մէջ։

— Ո՞րն է։

— Ենթադրութիւնը թէ տ'Արդանեանի այնպիսի հրամաններ տրուած լինի որ ինքզինքնիս պաշտպանելու բռնադատուինք։

— Օ՛ն, անդր, մի՞թէ տ'Արդանեանի՞ դէմ պիտի պահպանենք ինքզինքնիս. յիմարութի՛ւն, այն բարի տ'Արդանեա՞նը . . . ։

Արամիս նորէն իր գլուխը ցնցեց։

— Բորթոս — ըսաւ նա — եթէ պատրոյգները վառել և թնդանօթներն ուղղել տուի, եթէ մարտի փողը հնչել տուի, եթէ ամէն զինուորները պարիսպը հանեցի, այս Պէլ-Իսլի աղտոր պարիսպը զոր այնքան լաւ ամրացուցիր, անշուշտ նպատակի մը համար էր։ Սպասէ որ դատես, կամ լաւ ևս, մի՛ սպասեր . . . ։

— Ի՞նչ ընենք։

— Եթէ գիտնայի մեր ընելիքը, տարակոյս չկայ որ կ'ըսէի։

— Բայց պաշտպանուելէն աւելի պարզ բան մը կայ, նաւակ մը, և շիտակ Ֆրանսա Ճամբայ ելնելն է, ուր . . .։

— Սիրելի բարեկամ — ըսաւ Արամիս տեսակ մը տրտմութեամբ ժպտելով — երախաներու պէս չդատենք, մարդ լինինք թէ խորհրդով և թէ գործադրութեամբ։ Տէս, ահա նաւահանգստէն կ'գոչեն, նաւակ մը կ'երևի։ Ուշադրութիւն, Բորթոս, ծանր ուշադրութիւն։

— Անտարակոյս, տ'Արդանեանն է — ըսաւ Բորթոս որոտընդոստ ձայնով մը քիւին մօտենալով։

— Այո՛, ես եմ — պատասխանեց հրացանակրաց հրամանատարը՝ թմբին աստիճաններուն վրայ ցատկելով թեթևակի։

Շուտ մ'ելաւ մինչև փոքրիկ բացատին վրայ ուր իր երկու բարեկամները կ'սպասէին իրեն։

— Երբ մի անդամ Ճամբայ ելաւ, Բորթոս և Արամիս սպայ մը տեսան որ տ'Արդանեանի կ'հետևէր քայլ առ քայլ։

Հրամանատարը թմբին աստիճաններուն վրայ կայ առաւ՝ կէս Ճամբուն վրայ։ Իր ընկերն իրեն պէս ըրաւ։

— Ձեր մարդիկը հեռացուցէք — պոռաց տ'Արդանեան՝ Բորթոսի և Արամիսի — հեռացուցէք այնչափ որ ձայն չլսեն։

Բորթոսի կողմէ տրուած հրամանն իսկոյն կատարուեցաւ։

Այն ատեն տ'Արդանեան դարձնալով անոր կողմն որ իրեն կը հետևէր,

— Պարոն — ըսաւ անոր — այս տեղ թագաւորին նպաստարարիներն վրայ չենք, ուր քեզի տրուած հրամաններուն ուժովը, ինձի այնչափ զորութեամբ կ'խօսէիր քիչ մ'առաջ։

— Պարոն — պատասխանեց սպայն — ես ձեզի զորոզաբար չէի խօսեր, այլ պարզօրէն, բայց անաչառապէս կ'հնազանդէի ինձ տրուած հրամանին։ Ինձ ըսին որ միշտ ձեզի հետևիմ, ահա կը հետևիմ։ Ըսին ինձ որ մարդու մը հետ չթողում որ հաղորդակցիք առանց իմ գիտութեանս, ուստի ձեր հաղորդակցութեանց միջամուտ պիտի լինիմ։

Տ'Արդանեան բարկութենէ դող եկաւ, և Բորթոս ու Արամիս, որ այս տրամախօսութիւնը մտիկ կ'ընէին, նոյնպէս դող եկան, բայց մատանջութեան և երկիւղի դող մ'էր այս։

Տ'Արդանեան, իր պէսը ծամելով այնպիսի աշխուժութեամբ որմէ կ'իմացուէր թէ անըսպելի զայրացման մը հասած է, սպային մօտեցաւ։

— Պարոն — ըսաւ ցած այլ ազդու ձայնով մ'որ թէև խորին հանդարտութիւն կ'կեղծէր բայց փոթորկալի էր — պարոն, երբ մակոյկ մը դրկեցի այս տեղ, ուզեցիր իմանալ թէ ի՞նչ կ'գրեմ Պէլ-Իսլը պաշտպանողներուն, դու ինձ հրամանագիր մը ցոյց տուիր, անմիջապէս ես ալ գրած տոմսակս քեզի ցոյց տուի։ Երբ նաւատէրը վերադարձաւ, երբ այս երկու պարոններուն պատասխանը ստացայ (և ձեռքը կ'ցուցնէր Արամիսն ու Բորթոսը) մինչև վերջը լսեցիր բանբերին խօսքը։ Այս ամենը քեզի տրուած հրամանին համեմատ կատարուեցաւ, ամենայն ճշդութեամբ, այնպէս չէ՞։

— Այո՛, պարոն — կմկմաց սպայն — այո՛, անտարակոյս, պարոն . . . բայց . . .։

— Պարոն — շարունակեց տ'Արդանեան սաքնալով — պարոն, երբ իմ նաւէս ելնելով Պէլ-Իսլ գալու դիտաւորութիւնս յայտնեցի, բնաւ չվարանեցայ. քեզ միասին բերի։ Հիմակ Պէլ-Իսլն ես, այնպէս չէ՞։

— Այո՛, պարոն, բայց . . .։

— Բայց . . . այլ ես խնդիրը Պ. Դօլպէրի վրայ չէ, որ քեզի այդ հրամանը տուաւ, և ոչ որ և է մէկու մը վրայ, որու հրահանգներուն համեմատ կ'շարժիս. խնդիրը մարդու մը վրայ է որ Պ. տ'Արդանեանի նեղութիւն կ'պատճառէ, և որ Պ. տ'Արդանեանի հետ կ'գտնուի միայնակ սանդղի մ'ոտից վրայ, որ երուն ոտք աղի ջրով կ'ողողուին. դէշ կացութիւն մ'այս մարդուն համար, դէշ կացութիւն մ'է, պարոն, ահաւ կանխաւ իմաց կ'տամ քեզի։

— Բայց, պարոն, եթէ ես ձեզի կ'նեղեմ — ըսաւ սպայն վեհերոտութեամբ և գրեթէ երկիւղով — իմ պաշտօնս է որ . . .։

— Պարոն, ղժբաղդութիւն ունեցար, դու կամ քեզ ղրկողները՝ ինձ նախատինք մ՚ընելով։ Այդ նախատինքն եղած է։ Կըրնամ մեղապարտ սեպել անոնք որ քեզ կ՚պաշտպանեն, անծանօթ են ինձ կամ շատ հեռու են։ Բայց դու իմ ձեռքիս ներքև կը գտնուիս, և կ՚երդնում Աստուծոյ վրայ որ եթէ իմ ետևէս քայլ մ՚առնուս, երբ ոտքս բառնալով վեր պիտի ելնեմ այս պարոններուն մօտ գնալու . . . . իմ անուան վրայ կ՚երդնում, որ սրի հարուածով մը գլուխդ պիտի ձեղքեմ և քեզ ջուրը պիտի նետեմ։ Ո՛հ, այնուհետև ինչ որ պիտի պատահի թող պատահի։ Կենացս մէջ վեց անգամ մեռնելու բարկութեան ըրդած եմ, պարոն, և ասկից առաջ հինգ անգամ բարկացած ժամանակս, հակառակորդս սպաննած եմ։

Սպայն տեղէն չշարժեցաւ. այս սոսկալի սպառնալիքը լսելով գոյնը նետեց, և պարզութեամբ պատասխանեց.

— Պարոն, իրաւունք չունիք ինձ արուած հրամանին դէմ գնելու։

Բորթոս ու Արամիս անձայն և դողդողալով պարսպին վրայ, հրացանակրին պոռացին.

— Սիրելի տ՚Արդանեան, զղուշացիր։

Տ՚Արդանեան շարժում մ՚ընելով գանոնք լռեցուց, ահռելի հանդարտութեամբ մ՚իր քայլը վերցուց աստիճանէ մը վեր ելնելու համար, և սուր՚ի ձեռին գլուխը պարձուց որ նայի թէ սպայն իրեն պիտի հետևէր թէ ոչ։

Սպայն երեսը խաչ հանեց ու քալեց։

Բորթոս ու Արամիս, որ իրենց տ՚Արդանեանը կ՚ճանչէին, աղաղակ մը ձգեցին և վազեցին որ հարուածին առաջն առնուն, զոր կարծէին արդէն լսել։

Բայց տ՚Արդանեան իր սուրը ձախ ձեռքը տանելով.

— Պարոն — ըսաւ սպային այլայլեալ ձայնով մը — դու ազիսիրա մարդ մ՚ես. հիմակ աւելի լաւ պիտի հասկընաս ըսելիքս քան ինչ որ ըսի ասկից առաջ։

— Խօսեցէք, Պ. տ՚Արդանեան, խօսեցէք — պատասխանեց ազիսիրա սպայն։

— Այս պարոնները զոր այժմ տեսանք և որոց դէմ հրամաններ ունիս, իմ բարեկամներս են։

— Գիտեմ, պարոն։

— Կրնաս հասկընալ եթէ պարտաւոր եմ քեզի տրուած հրահանգաց համեմատ վարուիլ անոնց հետ։

— Կ՚ըմբռնեմ զգուշութիւններդ։

— Լաւ ուրեմն, թոյլ տուր ինձ որ առանց վ՚ոյի խօսիմ անոնց հետ։

— Պ. տ՚Արդանեան, եթէ ձեր խնդրոյն հաւանէի, եթէ աղաչանքդ կատարէի, իմ խոստմանս դէմ պիտի գործէի. բայց եթէ այսպէս վարուիմ, ձեզի անհաճոյ պիտի երևիմ։ Լաւ ևս ունիմ այն քան այս։ Խօսեցէք բարեկամացդ հետ, և զիս մի՛ արհամարհէք, պարոն, եթէ ձեր սիրոյն համար, ձեզի համար միայն, վասն զի ձեզ կ՚յարգեմ ու կ՚պատուեմ, վատ գործ մը պիտի ընեմ։

Տ՚Արդանեան այլայլելով այս երիտասարդին փաթթուեցաւ, և ապա իր բարեկամաց քովն եկաւ։

Սպայն՝ իր վերարկուին մէջ փաթթուած, աստիճաններուն վրայ նստաւ, որ ծովային մամուռ ծածկուած էր։

— Լաւ ուրեմն — ըսաւ տ՚Արդանեան իր բարեկամաց — ասասիկ մեր վիճակը, կ՚թողում ձեզ որ դատէք։

Եւ երեքնին ալ զիրար գրկեցին։ Երեքնին ալ իրարու գիրկն ընկան՝ ինչպէս որ կ՚ընէին իրենց երիտասարդութեան գեղեցիկ օրերը։

— Ի՞նչ կ՚նշանակեն բոլոր այս խսաութիւնները — հարցուց Բորթոս։

— Պէտք է որ քիչ մը բան հասկըցած լինէիր, սիրելի բարեկամ — պատասխանեց տ՚Արդանեան։

— Շատ բան չհասկըցայ, կ՚հաւատամ քեզ, իմ սիրելի հրամանատարս, վասն զի, ո՛չ Արամիս և ո՛չ ես բան մը չըրինք — փութով յարեց պատուական մարդը։

Տ՚Արդանեան յանդիմանութեան ակնարկ մը նետեց եպիսկոպոսին, որ այս կարծրացած սիրտը թափանցեց։

— Սիրելի Բորթոս — գոչեց Վանի եպիսկոպոսը։

— Կ'տեսնէք անշուշտ թէ ինչ ըրին — ըսաւ տ'Արդանեան — Պէլ-Իսլէն եկած և Պէլ-Իսլ դարձող ամէն բան կ'արգիլեն։ Ձեր բոլոր նաւակներն առնուած են։ Եթէ խոյս տալու փորձ ընէք ծովը շրջող և ձեզ դիտող լրտես նաւերուն ձանկը պիտի ընկնիք. թագաւորը ձեզ կ'ուզէ և ձեզ պիտի բռնէ։

Եւ տ'Արդանեան իր աղէբեկ պեխէն քանի մը թել փետեց։

Արամիս տրտում և Բորթոս ցասկոտ երես մը ցցուց։

— Իմ միտքս այս է — շարունակեց տ'Արդանեան — այսինքն ձեզ իմ քովս պահել, և ապա աղատ թողուլ։ Բայց այժմ, ոմ կ'ապահովէ զիս, որ նաւս գառնալուս մնծաւոր մը չպիտի գրաւեմ, որ գաղտնի հրամաններ չպիտի գտնեմ, որ իմ հրամանատարութիւնս ձեռքէս առնլով թերևս ուրիշ մէկու մը տան, և որ զիս և ձեզ պիտի արգիլեն առանց օդնականութեան յուսոյ։

— Պէտք է Պէլ-Իսլ մնալ — ըսաւ Արամիս հաստատամտութեամբ — և ես ահա կ'յայտարարեմ որ շուտով անձնատուր չպիտի լինիմ։

Բորթոս բան մը չըսաւ։ Տ'Արդանեան իր բարեկամին լռութիւնը դիտեց։

— Նորէն այս սպայն, այս իմ ընկերակից քաջս փորձելու միտք ունիմ, և որու արիական ընդդիմութենէ շատ գոհ եմ. վասն զի ցոյց կ'տայ ասով որ պարկեշտ մարդ մ'է, և թէև մեր թշնամին, կամակատար վատէ մը հաղարապատիկ աւելի արժէք ունի։ Փորձենք, և նայինք թէ ուրիշ ինչ արտօնութիւն ունի ընելու, իրեն տրուած հրամանն ինչ ընելու կամ չընելու կ'պատուիրէ իրեն։

— Փորձենք — ըսաւ Արամիս։

Տ'Արդանեան քիւին վրայ եկաւ, և թումբին աստիճաններէն վար ծռելով սպայն կոչեց. սպայն ալ շուտ մը վեր եկաւ։

— Պարոն — ըսաւ անոր տ'Արդանեան, խիստ մտերմական, և ղնրաբ յարգող ու դնհատող աղատանիի մէջ եղած բնական քաղաքավարութիւններէ ետև — պարոն, եթէ այս պարոններն ասկից առնում տանիմ, ինչ պիտի ընես։

— Դէմ չպիտի կենամ, պարոն. բայց ուղղակի հրաման մը, վճռական հրաման մ'ունենալով իմ հսկողութեանս ներքև զանոնք առնլու, ես ալ պիտի առնում պահպանեմ զանոնք։

— Ա՛հ — ըսաւ տ'Արդանեան։

— Լմնցա՛ւ — ըսաւ Արամիս մեղմաձայն։

Բորթոս անշարժ մնաց։

— Բայց Բորթոսը կրնաս տանիլ — ըսաւ Վանի եպիսկոպոսը — պիտի կարող լինի թագաւորին ապացոյցանել, և ես ալ ատոր պիտի օգնեմ այս մասին, նոյնպէս դու, Պ. տ'Արդանեան, թէ այս գործին մէջ բնաւ մատ չունի։

— Հրմ — ըսաւ տ'Արդանեան։

— Կ'ուզես գալ, կ'ուզես ինձ հետևիլ, Բորթոս։ Թագաւորը գթասիրտ է։

— Խորհելու ժամանակ կ'ուզեմ — ըսաւ Բորթոս ազնուաբար։

— Ուրեմն մատ պիտի մնաք։

— Մինչև ցնոր սնօրէնութիւն — գոչեց Աբամիս աշխուժութեամբ։

— Մինչև որ խորհուրդ մ'ունենանք — վրայ բերաւ տ'Արդանեան — և կարծեմ թէ այս խորհուրդը չպիտի ուշանայ գալու, վասն զի արդէն գլխիս մէջ մէկ հատ ունիմ։

— Ուրեմն իրարմէ հրաժեշտ տանք — վրայ բերաւ Արամիս — քայց, իրաւի, սիրելի Բորթոս, պէտք էր որ դու ալ մեկնէիր։

— Ո՛չ — ըսաւ Բորթոս լակոնական ոճով։

— Ինչպէս որ կամիս — վրայ բերաւ Արամիս, որու ջղային դիւրագրգռութիւնը փոքր ինչ վիրաւորուեցաւ իր ընկերին տխրային ընթացքէն։ — Միայն տ'Արդանեանի խօսք տուած խորհրդէն ապահովութիւն կ'ընդունիմ, խորհուրդ մը զոր կարծեմ թէ ես ալ դուշակեցի։

— Նայինք ըսէ — պատասխանեց տ'Արդանեան իր ականջն Արամիսի բերանին մօտեցնելով։

Արամիս արագ արագ շատ մը խօսքեր ըսաւ Հրացանակրին, և այս ալ անոնց պատասխանեց.

— Ճիշտ այդ է։

— Ուրեմն անվրիպելի է — գոչեց Արամիս խնդալին։

— Այս որոշման պատճառած այլայլութեան միջոցին, գործը կարգադրէ դու, Արամիս։

— Ա՛հ, անհոգ եղիր։

— Հիմակ, պարոն — ըսաւ տ՝Արգանեան սպային — հազար անգամ շնորհակալ եմ քեզի։ Երեք բարեկամ շահեցար որ քեզի նուիրուած պիտի մնան ցմահ։

— Այո՛ — պատասխանեց Արամիս։

Բոլորս միայն բան մը չըսաւ և գլխովը հաւանութիւն ցցուց։

Տ՝Արգանեան իր երկու վաղեմի բարեկամները գորովանօք գրկեցէն ետև, Պէլ-Իսլէն հեռացաւ, այն անբաժանելի ընկերին հետ զոր Պ. Գօլպէր իրեն տուեր էր։

Ուստի՝ բայց 'ի այն տեսակ մը բացատրութենէ որով արժանի Բորթոս գոհ լինելու հաճեր էր, ոչ ինչ էր փոխուած երկու կողմէն ալ։

— Միայն — ըսաւ Արամիս — տ՝Արգանեանի խորհուրդը կայ։

Տ՝Արգանեան իր նաւը դառնալու ատեն երկարօրէն որոճայ իր խորհուրդը։

Արդ՝ գիտենք որ երբ տ՝Արգանեան կ՝որոճար, սովորաբար յաջող ելք մը կ՝ունենար։

Իսկ սպայն՝ վերսային համր դառնալով տ՝Արգանեան թոյլ տուաւ յարգանօք որ խորհի։

Այսպէս հրայանակրայ հրամանատարն իր նաւուն մէջ ոտք կոխելով, արդէն իր յարձակողական և պաշտպանողական միջոցները հաւաքեր էր։

Անմիջապէս պատերազմական խորհուրդը դումարեց։

Այս խորհուրդը կ՝բաղկանար իր հրամանին ներքև գտնուող սպաներէն։

Իր սպաներն էին ութ հոգի։

Նաւային զօրայ զօրապետ մը,

Թնդանօթաձիգ զօրայ հաղարապետ մը,

Ճարտարապետ մը,

Մեր արդէն ճանչցած սպայն,

Եւ չորս տեղակալ։

Ուստի այս զօրականներն իր նաւուն խելայ կողմը դումարելով տ՝Արգանեան ոտք ելաւ, իր թաղեայ գլխարկը հանեց, և այսպէս սկսաւ խօսքը.

— Պարոններ, Պէլ-Իսլը քննելու գայի, և անդ ընտիր և զօրաւոր պահապաններ տեսայ, ասկէ զատ՝ ամէն պէտք եղած պատրաստութիւններն որ կրնան մեզ նեղել։ Ուստի միտք ունիմ բերդին երկու գլխաւոր սպաներն այս տեղ բերել տալ որպէս զի անոնց հետ խօսինք։ Երբ մի անգամ զանոնք գատենք իրենց թնդանօթին և զօրքին, աւելի դիւրաւ կրնանք յաղթել, մանաւանդ լաւ պատճառաբանութեամբ։ Միթէ ձեր կարծիքն ալ այս չէ՞, պարոններ։

Թնդանօթաձիգ զօրայ հաղարապետն ելաւ և յարգանօք, բայց հաստատամտութեամբ ըսաւ.

— Պարոն, ըսիք թէ բերդը կ՝պատրաստուի կռուելու և կրնայ մեզ նեղել։ Ուրեմն բերդակալներն ապստամբութեան մէջ մնալու որոշած են։

Տ՝Արգանեան այս պատասխանին յայտնապէս վիրաւորեցաւ. բայց այսչափ փոքր բանով վհատելու մարդ չէր, ուստի վերսային խօսեցաւ այսպէս.

— Պարոն, պատասխանդ արդարայի է։ Բայց քաջ գիտես որ Պէլ-Իսլ Պ. Գուքէի մէկ աւատն է, և հին թագաւորները Պէլ-Իսլի աւատապետներուն իրաւունք տուած են իրենց հողին վրայ գինուելու։

Հաղարապետը շարժում մ՝ըրաւ։

— Ա՛հ, մի ընդմիջեր բնաւ խօսքս — շարունակեց տ՝Արգանեան։ — Հիմակ պիտի ըսես թէ անկլեայցոց դէմ գինուելու իրաւունքն իր թագաւորին դէմ գինուելու իրաւունք մը չէ. բայց կարծեմ թէ այս միջոցին Պ. Գուքէն չէ Պէլ-Իսլը պաշտպանողը, քանի որ անցածն օր Պ. Գուքէն ձերբակալ ըրի։ Արդ՝ Պէլ-Իսլի բնակիչներն ու պաշտպաններն այս ձերբակալութեան բնաւ տեղեակ չեն։ Ի զուր պիտի խնայենք անոնց այս բանս։ Այնպիսի անլուր, անակնկալ և կարգէ դուրս բան մ՝է այս որ

ձեղի չպիտի հատան։ Պրըգօն մ'իր տիրոջ կ'ծառայէ և չէ թէ իր տէրանց. իր տիրոջ կ'ծառայէ մինչև որ անոր մեռնիլը տեսնէ աչքովը։ Արդ՝ յայտնի է որ Պրըգօնները չտեսան Պ. Գուքէի դիակը։ Ուրեմն զարմանք չեն եթէ Պ. Գուքէի կամ իր ստրպրութեամբ չեղած որ և է բանի դէմ կ'մաքառին։

Հաղարապետն իբրև հաւանութեան նշան ծռեցաւ։

— Ահա այս պատճառաւ — շարունակեց տ'Արդանեան — ահա այս պատճառաւ, կ'մտադրեմ իմ նաւս բերել տալու պահականոցին երկու դլխաւոր սպաները։ Ձեզ պիտի տեսնեն՝ պարոններ՝ պիտի տեսնեն մեր ձեռքն եղած զօրութիւնը։ Հետևապէս պիտի հասկրնան թէ ինչ վիճակի մէջ կրնան ընկնիլ եթէ ապստամբութեան դիմեն։ Մեր պատոյն վրայ պիտի հաւաստենք թէ Պ. Գուքէ բանտաւոր է՝ և եթէ ընդդիմութիւն ընեն անոր շատ պիտի վնասեն։ Անոնց պիտի ըսենք որ եթէ առաջին թնդանօթն արձակուի թագաւորին կողմէ դլխատրութիւն չեն կրնար յուսալ։ Այն ատեն յուսամ որ չպիտի դիմակալեն։ Առանց կռուելու անձնատուր պիտի լլնին՝ և այսպէս հաշտարար կերպով պիտի ձեռք ձգենք բերդ մ'որու տիրանալը կրնայ մեղի սուղի նստիլ։

Տ'Արդանեանի հետ Պէլ-Իսլ դացող սպայն խօսելու կ'պատրաստուէր՝ բայց տ'Արդանեան անոր խօսքն ընդմիջեց.

— Ո՛հ՝ դիտեմ ինչ պիտի ըսես՝ պարոն՝ դիտեմ՝ պիտի ըսես որ թագաւորը հրաման չունի որ և է դաղտնի յարաբերութիւն հաստատենք Պէլ-Իսլի պաշտպանոլներուն հետ՝ և ահա այս պատճառաւ կ'առաջարկեմ որ հաղորդակցինք բոլոր իմ տաղասպայիս ներկայութեան։

Եւ տ'Արդանեան դլխի նշմայր մ'ըրաւ որու նպատակն էր այս առաջարկութեան անմոց հաճութիւնը դրաւել։

Սպաներն իրարու երես նայեցան որպէս թէ իրենց կարծիքն իրարու աչաց մէջ կարդան՝ յայտնի դիտմամբ որ իրարու հետ համաձայնելէն ետև տ'Արդանեանի փափաքին համեմատ կատարեն գործը։ Եւ արդէն տ'Արդանեան ուրախութեամբ կ'նայէր որ իրենց հաւանութեան արդիւնքը պիտի լլնէր Բորթոսի և Արամիսի նաւակ մը ղրկել՝ երբ թագաւորին սպան իր ծոցէն կնքուած թուղթ մը հանեց և ղայն տ'Արդանեանի յանձնեց։

Այս թուղթն իր վրայ 1 թուանշան ունէր։

— Դարձեալ ինչ է այս — մրմնաց հրամանատարը զարմանալով։

— Կարդացէք՝ պարոն — ըսաւ սպայն մարդավարութեամբ մ'որ տրտմութենէ անխառն չէր։

Տ'Արդանեան բոլորովին անվստահ՝ թուղթը բացաւ և սա խօսքը կարդայ.

« Կ'արդիլեմ Պ. տ'Արդանեանի որ և է խորհուրդ կազմելու՝ կամ որ և է կերպով խորհրդակցելու՝ Պէլ-Իսլ անձնատուր չեղած դերիները հրաժանի չառնուած։

« Սատրազրեալ՝ ԼՈՒԻ »

Տ'Արդանեան անհամբերութեան շարժում մ'որով բոլոր մարմինը կ'սարսռէր՝ դլսպեց՝ և շնորհալի ժպիտով մը.

— Շատ լաւ՝ պարոն — ըսաւ նա — թագաւորին հրամանները պիտի համակերպինք։

Ե

ԹԱԳԱՒՈՐԻՆ ԵՒ Տ'ԱՐԴԱՆԵԱՆԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐՈՒ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Այս հարուածն ուղղակի՝ ծանր և մահաբեր էր։ Տ'Արդանեան՝ թագաւորին մէկ կարծիքովն իր խորհուրդը ջնջուած տեսնելով՝ կատղեցաւ՝ բայց չվհատեցաւ՝ և յուշ ածելով այն խորհուրդը զոր ինք Պէլ-Իսլէն հետը բերեր էր՝ նոր միջոց մը գործածելու ելաւ իր բարեկամաց փրկութեանը համար։

— Պարոններ — ըսաւ նա շրջապատ ընդ փոյթ՝ քանի որ թագաւորն ուրիշի մը յանձնած է իր դաղտնի հրամանները — պատճառն այն է որ այսուհետև իր վստահութիւնը չեմ վայելեր՝ և այս վստահութեան իրաք անարժան պիտի դտնուէի եթէ այսչափ նախատաս

լն կասկածներու ենթակայ դտնուող հրամանատարութիւն մը ստանալու քաջութիւնն ունենայի։ Ուստի պիտի անմիջապէս երթամ իմ հրաժարականս թագաւորին տալու։ Ձեր ամենուն առջև զայն կ'տամ, ձեզ պատուիրելով որ Ֆրանսայի ծովեզերքը դառնաք, այնպէս որ Նորին Վեհափառութեան ինձ յանձնած զօրքը վտանգի մէջ չմնայ։ Հետևապէս ամենքնիդ ձեր տեղը դարձէք և վերադարձին համար պէտք եղած հրամանները տուէք. ժամէ մը տեղեկացուցինը պիտի սկսի։ Ձեր պաշտօնին դլուխն անցէք, պարոններ։ Կ'յուսամ — յարեց նա՝ տեսնելով որ ամէն ոք կը հնազանդէր, բայց 'ի հսկող սպայէն — կ'յուսամ որ այս անդամ հրամաններ չունիք այս առաջարկութեանս դէմ բերելու։

Եւ տ'Արդանեան դրեթէ յաղթանակը կ'տանէր այս խօսքն ըսելով։ Այս յատակագիծն իր բարեկամաց փրկութիւնն էր։ Երբ մի անդամ պաշարումը վերնար՝ Բորթոս և Արամիս կրնային նաև մտնել և Անկլիա կամ Սպանիա դիմել՝ առանց որ և է հետամտութեան երկիւղի։ Մինչդեռ անոնք պիտի խոյս տային, տ'Արդանեան թագաւորին մօտ պիտի երթար, իր վերադարձը պիտի արդարացնէր Գօլպէրի կասկածներէն զդայած սրտմտութեամբը. այն ատեն թագաւորն լիազօր իշխանութեամբ իր պաշտօնին պիտի վերադարձնէր, և Պէլ-Իսլը, այսինքն վանդակը պիտի առնուր, առանց թռած թռչունները բռնելու։

Բայց այս յատակագծին դէմ, տպայն թագաւորին մէկ երկրորդ հրամանը մէջ բերաւ։ Այս մնաց էր.

«Երբոր տ'Արդանեան իր հրաժարականը տալու փափաք յայտնէ, արշաւանին գլխաւորը չպիտի համարուի այնուհետև, և իր հրամանին ներքև դտնուող ամէն սպայ պարտաւոր չպիտի լինի անոր հնազանդելու։ Ասկէ զատ՝ յիշեալ Պ. տ'Արդանեան Պէլ-Իսլի դէմ դրկուած բանակին հրամանատարութիւնը կորուսելով՝ պէտք է որ անմիջապէս Ֆրանսա դալու ճամբայ ելնէ, այս դիրքիրեն յանձնող սպային հետ, և զանի երբև դերի պիտի պահէ պատասխանատու մնալով»։

Տ'Արդանեանի դոյնը նետեց, նա որ այնքան քաջ էր և անհոդ. ամէն ինչ այնպէս կանխաւ դուշակուած և սթօրինուած էր որ երսուն տարիէ 'ի վեր առաջին անդամ, տ'Արդանեան յիշեց մեծ կարտինալին հաստատ նախատեսութիւնն ու անողոքելի սրամտութիւնը։

Իր դլուխը ձեռքին վրայ կոթնցուց, երաղելով, հալիւ իմն շնչելով։

— Եթէ այս հրամանը դրպանս դնէի — մտածեց նա — ո՞վ պիտի խմանար կամ ո՞վ պիտի արդիլէր։ Թագաւորը տեղեկանալէն առաջ, պիտի յաջողէի այս բերդին խեղճ մարդիկն ազատել։ Օ՜ն, յանդգնութիւն։ Իմ դլուխս անհնազանդութեան պատճառաւ դահճի ձեռքը ընկնող դլուխներէ չէ։ Ուրեմն, անհնազանդինք։

Բայց այն միջոցին որ այս որոշումը պիտի գործադրէր, տեսաւ իր չորս դին դտնուող սպաներն որ նոյնպիսի հրամանագիրներ կ'կարդային, որոց տրուեր էր Գօլպէրի դժոխային գործակատարին կողմէ։

Անհնազանդութեան պարագան ուրիշ բաներու պէս կանխաւ դուշակուած էր։

— Պարոն — եկաւ ըսելու անոր սպայն — ձեր հրամանին կ'ըսպասեմ մեկնելու համար։

— Պատրաստ եմ — պատասխանեց հրամանատարն ակռաները կրճտելով։

Սպայն անմիջապէս հրամայեց որ նաւակ մը բերեն որ եկաւ տ'Արդանեանն ընդունելու։

Այս տեսնելով մաղ մնաց որ պիտի խելագարէր տ'Արդանեան կատղութենէ։

— Ի՞նչպէս պիտի ուղղեն՝ այս տեղ զանազան զօրագնդերը — կմկմաց նա։

— Երբ դուք մեկնիք — պատասխանեց նաւատորմին հրամանատարը — ես պիտի ստանձնեմ՝ թագաւորին հրամանին համեմատ, նաւերուն հրամանատարութեան հոդը։

— Ուրեմն, պարոն — պատասխանեց Գօլպէրի մարդը նոր դլխաւորին դառնալով — ձեզի համար էր այս վերջին հրամանն որ ինձ յանձնուած էր։ Տեսնենք ձեր արտօնագիրը։

— Աւասիկ — ըսաւ ծովապետը, արքայական ստորագրութիւնը պարզելով։

— Աւասիկ ձեզի տրուած հրահանգները — պատասխանեց սպայն թուղթն անոր տալով։

Եւ տ'Արգանեանի կողմը դառնալով.

— Աղէ, դնանք, պարոն — ըսաւ նա այլայլած ձայնով մը, այնքան մեծ յուսահատութիւն կ'տեսնէր այս երկաթէ մարդուն վրայ — շնորհ ըրէք ճամբայ ելնելու։

— Ա՛նմիջապէս — ձայնեց տ'Արգանեան մեղմիկ տեսնելով որ անողոքելի անհնարութեան առջև բոլորովին նկուն և անզօր մնացած է։

Եւ կամայ մը սահեցաւ մակոյկին մէջ, որ դէպ 'ի Գրանսա նաւարկեց յաջող հովով մը, մակընթացութենէ մղուելով։ Թագաւորին պահակներն անոր հետ նաւը մտեր էին։

Սակայն հրամանակիրը դեռ ևս յոյս ունէր բաւական շուտով նանդ հասնիլ, և ճարտասանութեամբ իր բարեկամաց 'ի նպաստ բարեխօսել թագաւորին ներողութիւնը դանելու մտօք։

Ծիծեռնիկի պէս կ'թռէր նաւակը։ Տ'Արգանեան յայտնապէս ի'դիտէր Գրանսայի երկիրն որ դիշերուան ստիւեակ ամպերու վրայ սեւագոյն կ'դծագրուէր։

— Ա՛հ, պարոն — ըսաւ նա ցած ձայնով սպայն, որու ժամէ մ'ի վեր չէր խօսեր — ունեցածս կ'տայի եթէ նոր հրամանատարին հրահանգները դիտնայի։ Խաղաղասիրական են, այնպէս չէ՞... և...։

Խօսքը չլմնցուց. հեռաւոր թնդանօթի մ'որոտումը լսելի եղաւ հեռուէն, ապա ուրիշ մը, և նորէն երկու երեք հատ աւելի ուժգին։

— Սկսած են կրակ թափել Պէլ-Իսլի վրայ — պատասխանեց սպայն։

Նաւակն ալ այն ինչ Գրանսայի ծովեզրը հասեր էր։

Զ

ԲՈՐԹՈՍԻ ՆԱԽՆԻՔԸ

Երբոր տ'Արգանեան՝ Արամիսն ու Բորթոսը թողլով՝ հեռացաւ, ասոնք գլխաւոր ամրոցը մնան աւելի ազատութեամբ խօսակցելու համար։

Բորթոս՝ միշտ մտահոգ, Արամիսի նեղութիւն կ'պատճառէր, որու միտքն ամէն ժամանակէ աւելի ազատ կ'երևէր։

— Սիրելի Բորթոս — ըսաւ յանկարծ Արամիս — քեզի պիտի բացատրեմ հիմակ տ'Արգանեանի խորհուրդը։

— Ի՞նչ խորհուրդ, Արամիս։

— Այն խորհուրդն որով պիտի կարող լինինք տասն երկու ժամէ տուաջ ազատիլ։

— Ա՛հ, իրաւ — պատասխանեց Բորթոս զարմանահար։ — Դայինք, խօսէ։

— Անշուշտ դիտեցիր մեր բարեկամին և միւս սպային մէջ ծագած վէճէն, որ մեր մասին կան քանի մը հրամաններ որ զինքը կ'նեղեն։

— Այո՛, դիտեցի։

— Լաւ, տ'Արգանեան իր հրաժարականը պիտի տայ թագաւորին, և իր բացակայութեան պատճառաւ ծագած շփոթութեան ժամանակ, մենք, կամ լաւ ևս ըսեմ, դու պիտի մեկնիս երթաս, Բորթոս, եթէ միայն մեզնէ մէկուն համար խոյս տալու կարելիութիւն կայ։

Այս տեղ Բորթոս գլուխը ցնցեց և պատասխան տուաւ.

— Միասին պիտի խոյս տանք, Արամիս, կամ միասին պիտի մնանք։

— Վերհանձն սիրտ մ'ունիս — ըսաւ Արամիս — միայն քու մթին մտատանջութիւնդ զիս կ'վշտացնէ։

— Ես անհանգիստ չեմ — ըսաւ Բորթոս։

— Ուրեմն ինձի դէմ գանգատ մ՚ունիս։

— Ես քեզնէ գանգատ չունիմ։

— Լաւ ուրեմն, սիրելի բարեկամ, ինչու համար այդ ողբալի դէմքն ունիս։

— Հիմակ պիտի ըսեմ քեզի. ես իմ կտակս ըրի։

Եւ այս ըսելով, բարի Բորթոսն Արամիսին նայեցաւ տխրադին։

— Կտակդ — գոչեց եպիսկոպոսը։ — Օ՚ն անդր, միթէ կարծես թէ կորսուած ես։

— Վաստակաբեկ կ՚գտնեմ ինքզինքս։ Այս առաջին անգամն է և ընտանեացս մէջ սովորութիւն մը կայ։

— Ի՞նչ սովորութիւն, բարեկամդ իմ։

— Իմ հաւս կրինապատիկ ուժով էր քան զիս։

— Հօ, հօ — ըսաւ Արամիս։ — Ուրեմն Սամսոնն էր, քու հաւդ։

— Ո՚չ, Անտոն կ՚կոչուէր։ Լաւ, իմ տարիքս ունէր՝ երբ օր մ՚որսի գնալով ծնկացը վրայ տկարութիւն մ՚զգայ, ինքն որ երբեք այդ տկարութիւնը չէր զգացած։

— Ի՞նչ կ՚նշանակէր այդ յոգնութիւնը, բարեկամ։

— Լաւ նշան մը չէր, ինչպէս որ հիմակ պիտի տեսնես. վասն զի, միշտ իր սրունքին թոյլութենէ գանգատելով Ճամբայ ելնելէն ետեւ՝ վարազի մը հանդիպեցաւ որ իր վրայ կ՚յարձակէր. հաւս հրացանը պարպեց, պարապ գնաց և կենդանին զինքը պատռեց։ Նա այսպէս իսկոյն մեռաւ։

— Այդ պատճառ մը չէ որ այդչափ երկիւղ զգաս, սիրելի Բորթոս։

— Ո՚հ, հիմակ պիտի տեսնես։ Հայրս քան զիս ուժեղ էր։ Հանրի Գի և Հանրի Դի մէկ անյողդողդ զինուորն էր, Անտոն չէր անունն այլ Գասպար, ինչպէս Պ. Գօլինի։ Միշտ ձիու վրայ գտնուելով երբէք խոնջենալ ինչ է չգիտեր։ Իրկուն մ՚որ սեղանէն կ՚ելնէր, սրունքը գայթեցան։

— Կարելի է որ շատ կերակուր կերեր էր — ըսաւ Արամիս — և ահա այդ պատճառաւ կ՚երերար։

— Բա՛, Պ. Պասօնբիէրի մէկ բարեկամը։ Օ՚ն անդր, ո՛չ կ՚ըսեմ քեզի. զարմացաւ այս խոնջէնքին վրայ, և մօրս ըսաւ, որ զինքը կ՚ծաղրէր. «Այնպէս կ՚երեի ինձ որ վարազի մը պիտի հանդիպիմ, ինչպէս իմ հանգուցեալ Վալլօն հայրս»։

— Լաւ ուրեմն — ըսաւ Արամիս։

— Լաւ ուրեմն, այս տկարութեան դիմադրաւ կենալով հայրս՝ փոխանակ անկողին մտնելու, ուզեց պարտէզն իջնել, առաջին աստիճանէն իջնելուն ոտքը սահեցաւ. սանդուղը ձիգ էր, հայրս ընկաւ քարի մ՚անկեան զարնելով որու վրայ ծխնի մը փակած էր։ Գլխին քունքը բացաւ, և նոյն տեղն անշունչ մնաց։

Արամիս իր բարեկամին վրայ դարձնելով աչքը.

— Ահա երկու արտաքոյ կարգի պարագաներ — ըսաւ նա — ասկից չհետեւցնենք թէ երրորդ մ՚ալ կրնայ պատահիլ։ Քու գլխիդ տէր մարդու մ՚անվայել է աւելորդապաշտ լինիլը, իմ քաջասիրտ Բորթոսս, ասկէ զատ՝ ո՞վ կ՚ըսէ թէ սրունքդ կ՚թուլնան ու կը գայթեն։ Երբէք այդչափ ուղղաձիգ և փառաւոր չես երևցած, կարող ես տուն մ՚ուսերուդ վրայ կրել։

— Այս պահուս — ըսաւ Բորթոս — ինքզինքս շատ հաստատուն կ՚զգամեմ. բայց պահ մ՚առաջ կ՚երերայի, կ՚թուլնայի, և քանի մ՚ատենէ 'ի վեր այս երևոյթն, ինչպէս որ կ՚ըսես, չորս անգամ պատահեցաւ։ Զպիտի ըսեմ թէ այս բանս ինձ երկիւղ ազդեց, այլ միայն զիս կ՚նեղացնէր. կեանքն ախորժելի բան մ՚է։ Ստակ ունիմ, դեղեցիկ հողեր ունիմ, ձիեր ունիմ զոր կ՚սիրեմ, նոյնպէս ունիմ բարեկամներ զոր կ՚սիրեմ, այսինքն տ՚Արդանեան, Ատոս, Ռաուլ և քեզ։

Սքանչելին Բորթոս և ոչ իսկ կեղծելու կ՚ջանար իր բարեկամութեանց մէջ անոր տուած կարգը։

Արամիս անոր ձեռքը սեղմեց։

— Տակաւին շատ տարիներ պիտի ապրինք — ըսաւ — հաղուագիւտ մարդկան օրինակներ պահելու։ Սիրելի բարեկամ, ինձի վստահ եղիր. տ՚Արդանեանէ դեռ պատասխան մը չառինք, լաւ նշան մ՚է. հրամաններ տուած պիտի լինի նաւատորմիղը դուսանքելու և մեր ջուրէն հեռանալու համար։ Ես ալ հրաման ուզի

քիչ մ՚առաջ՝ որ նաւակ մը ղլորեն ղլաններու վրայէ մինչև Լոկմարիա քարայրին ելքը, այն քարայրը՝ ուր, ինչպէս դիտես, ստէպ դարանամուտ կ՚մնայինք աղուէսներու դէմ։

— Այո՛, քարայր մ՚որ փոքրիկ ծովու խորշին կ՚յանդի ցամաքի կտորով մը ղոր դտանք այն օրն երբ նշանաւոր աղուէսն անկիյ խոյս տուաւ։

— Ճիշտ է։ Եթէ ձախորդութիւն մը պատահի այն սորերը կրեայ վայրը մեզի համար նաւակ մը պիտի պահեն. արդէն նաւակն անդ պիտի լինի։ Պատեհ ժամուն պիտի սպասենք և դիշերայն՝ շուտ մը ծովը պիտի ելնենք։

— Աւասիկ լաւ դաղափար մը։ Ի՞նչ պիտի շահինք այդ կերպով։

— Սա պիտի շահինք որ ոչ ոք դիտէ այն քարանձաւը, կամ լաւ ևս անոր ելքը, մեզնէ կամ կղզւոյն երկու երեք որսորդներէն զատ, այս կ՚շահինք՝ որ եթէ կղզին առնուի, ռահահորդները ծովափը նաւակ չտեսնելով, պիտի չկասկածին որ մարդ մը խոյս տալու պիտի կարողանայ և հսկելէն պիտի դադրին։

— Կ՚իմանամ։

— Լաւ ուրեմն, սրունքդ։

— Ո՛հ, այս պահուս պատուական են։

— Ուրեմն քաջ կ՚տեսնես հիմակ՝ որ ամէն ինչ մեզի յոյս, հանդիստ տալու կ՚նկրտի։ Ց՚Արդանեան ծովը բաց կ՚թողու և մեզ ազատ։ Այլ ևս ոչ արքայական նաւատորմիղ և ոչ արշաւան կայ։ Օրհնեալ է Աստուած, Բորթոս, դեռ կէս դարու նորօրինակ արկածներ ունինք տեսնելու, և երբ Սպանիոյ հողը կոխեմ, կ՚երդնում՝—յարեց եպիսկոպոսը սոսկալի ուժգնութեամբ մը — որ քուդքսութեան արտօնագիրդ այնքան կասկածելի չէ որչափ որ կը կարծուի։

— Ցուսանք — ըսաւ Բորթոս դոյն ինչ զուարթանալով իր ընկերին այս ջերմագին խօսքերէն։

Յանկարծ աղաղակ մը լսելի եղաւ։

— Ի զէն։

Այս աղաղակը՝ ղոր հարիւրաւոր ձայներ կրկնեցին՝ էկաւ երկու բարեկամներու ցանուած սենեկին մէջ զարմանք պատճառելց միոյն և անհանդստութիւն միւսին։

Արամիս պատուհանը բացաւ, շատ մը մարդիկ տեսաւ որ ջահերով կ՚վազվզէին։ Կանայք խոյս կ՚տային, զինեալ մարդիկ իրենց տեղը կ՚դառնային։

— Նաւատո՛րմը, նաւատո՛րմը — դոչեց զինուոր մ՚որ Արամիսը ճանչեց։

— Նաւատո՛րմը — կրկնեց Արամիս։

— Թնդանօթի կէս հեռաւորութեամբ— շարունակեց զինուորը։

— Ի զէն — պոռաց Արամիս։

— Ի զէն — կրկնեց Բորթոս ահեղագոչ։

Եւ երկուքնին ալ պատնէշին կողմը վազեցին որպէս զի մարտիկներուն ետևը պատսպարին։

Զինուորներով լի նաւակներ տեսնուեցան, երեք ուղղութիւն առին որպէս զի երեք տեղ միանգամայն իջնեն։

— Ի՞նչ պէտք է ընել— հարցուց պահնորդ սպայ մը։

— Կեցուցէք զանոնք, և եթէ շարունակեն իրենց ընթացքը, կրակ ըրէք — ըսաւ Արամիս։

Հինգ վայրկեան ետք՝ ռմբակոծութիւնն սկսաւ։

Ահա այս պայթումներն էին ղոր ս՚Արդանեան լսեց Ֆրանսայի մօտենալու ատեն։

Բայց նաւակները պատնէշին շատ մօտ դտնուելով՝ թնդանօթները ճիշտ նշան չէին կրնար առնուլ. ուստի ցամաքն ելան և կռիւն սկսաւ առ ճակատ։

— Ի՞նչ ունիս, Բորթոս — ըսաւ Արամիս իր բարեկամին։

— Ո՛չ ինչ... սրունքս... ճշմարիտն անիմանալի է.... կրակ ընելու ատենս թերևս զօրանամ։

Արդարև՝ Բորթոս ու Արամիս այնպէս ուժգնութեամբ սկսան հրացանները պարպել, այնպէս լաւ բորբոքեցին իրենց մարդիկը, որ արքայականք արտօրնօք նաւերը մտան վերստին մինակ վիրաւորներ ունենալով ղոր միասին տարին։

— Ի՛հ, բայց, Բորթոս — պոռաց Արամիս — մեզի դերի մը պէտք է, շո՛ւտ, շո՛ւտ։

Բորթոս թմբին սանդղին վրայ ծռեցաւ, արքայական զօրայ մէկ գլխաւոր մ'որ ուրիշներուն նաւը մնալուն կ'սպասէր, ծոծրակէն բռնեց։ Հսկային թեն այս որսը վերցուց, և իրեն իրրև վահան ծառայեց վեր ելնելու առանց իր վրայ հրացան մը պարպուելու։

— Աւասիկ բանտաւոր մը — ըսաւ Բորթոս Արամիսին։

— Լաւ ուրեմն — կոչեց այս վերջինը ծիծաղելով — հիմակ զբսպարակէ սրունքդ։

— Իմ սրունքովս չբռնեցի այս գլխաւորը — ըսաւ Բորթոս սրբամաքին — այլ թեւովս։

Է

ՊԻՍԿԱՐԱՑԻ ՈՐԴԻՆ

Աղջոյն Պրըգօն ընկերներն այս յաղթութեան վրայ շատ կը զարմանային. Արամիս զանոնք չբաջալերեց։

— Պատահելիքն այս է — ըսաւ Արամիս Բորթոսին՝ երբ ամենքն իրենց տեղը վերադարձան. — թագաւորին բարկութիւնը պիտի դրդուի այս գիմակալութեան լուրն առնելով, և այս արիաստիրտ մարդիկ պիտի կոտորին կամ հրոյ Ճարակ պիտի լինին, երբ կղզին առնուի, այս ալ անտարակոյս տեղի պիտի ունենայ։

— Ուրեմն ասկէ կ'հետևի — ըսաւ Բորթոս — որ օգտակար բան մ'ըրած չեղանք։

— Առ այժմ ըրինք անշուշտ — պատասխանեց եպիսկոպոսը — վասն զի դերի մ'ունինք որմէ պիտի իմանանք թէ թշնամիք մեզի համար ի՞նչ կ'պատրաստեն։

— Այո՛, հարցուփորձ ընենք այս դերին — ըսաւ Բորթոս — և զանի խօսել տալու միջոցը շատ պարզ է. Ճաշ պիտի ընենք, զանի կ'հրաւիրենք, խմելով պիտի խօսի։

Այսպէս ըրին։ Սպայն որ փոքր ինչ անհանգիստ էր 'ի սկզբան, հանդարտեցաւ երբոր տեսաւ թէ գործն ինչ տեսակ մարդոյ հետ է։

Վասնզի երկիւղ չունենալով՝ ամէն կարելի պարագաները պատմեց ա'Արգանեանի հրաժարականին և չուին վրայ։

Բացատրեց թէ ինչպէս այս չուէն ետք՝ արշաւանին նոր հրամանատարը հրամայեր էր Պէլ-Իսլը կոխել յանկարծակի։ Իր բոլոր տեղեկութիւններն այսչափով կ'լմննային։

Արամիս ու Բորթոս իրարու ակնարկ մը նետեցին որ իրենց յուսահատութիւնը կ'բացատրէր։

Տ'Արգանեանի արդիւնաւոր երևակայութեան վրայ յոյս դնելու կարելի չէր, ուստի Ճար Ճարակ չկար ալ, եթէ պարտուէին։

Արամիս իր հարցաքննութիւնը շարունակելով դերին հարցուց թէ արքայական բանակին հրամանատարները Պէլ-Իսլի գլխաւորներուն ի՞նչ ընելու կ'մտադրէին։

— Արքայական հրամանն է — պատասխանեց սպայն — պայքարի ժամանակ սպաննել և ապա կախել։

Արամիս և Բորթոս դարձեալ իրարու նայեցան։

Երկուքին երեսն ալ կարմրցաւ։

— Ես կախաղանի համար շատ թեթև եմ — պատասխանեց Արամիս. — ինձի պէս մարդիկ չեն կախուիր։

— Իսկ ես շատ ծանր եմ — ըսաւ Բորթոս — ինձի պէս մարդիկ չուանը կ'կոտրեն։

— Հաւատի եմ — ըսաւ վեհանձնաբար դերին — որ ձեզի պիտի թողունք ընտրել ձեր ուզած մահը։

— Հազար շնորհակալութիւն — ըսաւ Արամիս ծանրաբար։

Բորթոս գլուխը ծռեց։

— Այս բաժակն ալ քու կենացդ պիտի խմեմ — ըսաւ նա ինքն ըմպելով։

Խօսքն ուրիշ խօսք բանալով ընթրիքն երկարեցաւ. սպայն՝ որ մտայի պատանի մ'էր փոքր առ փոքր հրապուրուեցաւ Արամիսի շնորհալի մտքէն և Բորթոսի մտերմական բարեսրտութենէ։

— Ներեցէք ինձ — ըսաւ — եթէ ձեզի հարցում մ'ուղղեմ. բայց վեցերորդ շիշը պարպող մարդիկ փոքր ինչ ինքզինքնին մոռնալու իրաւունք ունին։

— Ըրէ հարցումդ — ըսաւ Բորթոս — հարցո՛ւր։

— Խօսէ՛ — ըսաւ Արամիս։

— Պարոններ, դուք երկուքնիդ հանգուցեալ Թագաւորին հրայանակրաց մէջ չէք՞ք։

— Այո՛, պարոն, և լաւագոյններէն էինք — պատասխանեց Բորթոս։

— Իրաւ է, պիտի ըսէի նաև որ ամէն զինուորներէն լաւագոյնը, պարոններ, եթէ իմ հօրս յիշատակին թշնամանք մը չլինէր այս քսածս։

— Հօրդ — գոչեց Արամիս։

— Գիտէք արդեօք թէ ինչ է անունս։

— Ճշմարիտը, չգիտեմ, պարոն, բայց պիտի ըսես ինձ, և . . .։

— Անունս Ժօրժ Պիսկարա է։

— Ո՛հ — գոչեց Բորթոս ըստ կարգի — Պիսկարա՛։ Մինթէ այս անունը կ՚յիշեն, Արամիս։

— Պիսկարա՛, . . — մռմռաց եպիսկոպոսը։ — Կ՚երևի ինձ . . .։

— Լաւ յիշէ, պարոն — ըսաւ սպայն։

— Անօրէն, երկայն չպիտի յիշեմ — ըսաւ Բորթոս — Պիսկարա, կարտինալ անուանեալը . . . այն չորսերէն մին որ եկան մեզ վրդովելու՝ երբ սուր 'ի ձեռին՝ ա՛Արդանեանի հետ նոր բարեկամութիւն կ՚ընէինք։

— Ճիշտ այդպէս, պարոններ։

— Մինակ այն էր զոր չկրցանք վերաւորել — ըսաւ Արամիս աշխուժիւ։

— Հետևապէս քաջ սուր մ՚էր — ըսաւ դերին։

— Իրաւ է, ո՛հ, իրաւ է — ըսին երկու բարեկամներն 'ի միասին։ — Ճշմարիտը, Պ. Պիսկարա, շատ ուրախ եմ քեզի պէս քաջասիրտ մարդու մը հետ ծանօթանալուս։

Պիսկարա՝ սեղմեց երկու ձեռքը զոր երկու հին հրայանակիրները կ՚կարկառէին։

Արամիս Բորթոսին նայեցաւ այնպէս որ կ՚ուզէր ըսել. «Աւանիկ մարդ մ՚որ մեզի պիտի օգնէ»։ Եւ անմիջապէս յարեց.

— Պարոն, խոստովանէ որ լաւ բան է բարի մարդ եղած լինիլը։

— Իմ հայրս միշտ ինձի այդպէս ըսած է, պարոն։

— Նոյնպէս խոստովանէ որ գանուած վիճակդ տխուր է քանի որ հրայանի բռնուելու կամ կախան ելնելու սահմանուած մարդոյ կ՚հանդիպիս, և քանի կ՚տեսնես որ այս մարդիկ վաղեմի, հին ժառանգական բարեկամներդ են։

— Ո՛հ, այդ սոսկալի բաղդին սահմանուած չէք, պարոններ և բարեկամներ — ըսաւ պատանին աշխուժիւ։

— Բա՛, դու ինքնին ըսիր։

— Քիչ մ՚առաջ այդպէս ըսի երբ ձեզի չէի ճանչեր, բայց այժմ որ ձեզ կ՚ճանչեմ, կ՚ըսեմ. եթէ կամենաք, այդ դժնդակ վախճանէն կրնաք ազատիլ։

— Ի՞նչ ըսել է, եթէ կամենանք — գոչեց Արամիս, որու աչքերն իմացականութեամբ փայլեցան հետզհետէ իր դերին և Բորթոսին նայելով։

— Բաւական է — շարունակեց Բորթոս ըստ կարգի նայելով՝ աղնիւ անվեհերութեամբ մը Պ. Պիսկարայի և եպիսկոպոսին — բաւական է որ մեզնէ վատութեան գործեր չպահանջեն։

— Ձեզնէ բան մը չպիտի պահանջեն, պարոններ — վրայ բերաւ արքայական բանակին ազատորդին — ինչ կ՚ուզէք որ պահանջեն ձեզնէ։ Եթէ ձեզ գանեն պիտի սպաննեն, այդ արդէն որոշուած է. ուստի ջան 'ի գործ դրէք որ ձեզ չգանեն։

— Կարծեմ թէ չեմ սխալիր — ըսաւ Բորթոս արժանապատուութեամբ — բայց կ՚երևի ինձ որ մեզ գանելու համար պէտք է որ գան այս տեղ փնտռեն մեզ։

— Այդ մասին, կատարելապէս իրաւունք ունիս, իմ արժանի բարեկամս — վրայ բերաւ Արամիս միշտ աչքով հարցափորձ ընելով Պիսկարայի կերպարանքը, որ լուսակայ էր և բռնազբօսիկ։ Պ. Պիսկարա, մեզի բան մ՚ըսել կ՚ուզես, խօսք մը բանալու միտք ունիս, բայց չես համարձակիր, այնպէս չէ՞։

— Ա՛հ, պարոններ և բարեկամներ, եթէ խօսիմ զինուորական պարտաւորութեանս դէմ պիտի գործեմ։ Բայց, ահա, ձայն մը կ՚լսեմ որ իմն ազատ կ՚թողու խափանելովը։

— Թնդանօ՛թը — ըսաւ Բորթոս։

— Թնդանօթն ու հրայանո՛ւրը — պոչեց եպիսկոպոսը։

Հեռուէն՝ ժայռերուն մէջէն որոտումներ կ՚լսուէին, քիչ տևող պայքարի մը չարաղուշակ պղծիւնը։

— Ի՞նչ է այս — հարցուց Բորթոս։

— Է՛հ, Տէր վկայ — պոչեց Արամիս — ահա իմ մտքէս կ՚անցնէր այդ բանը։

— Ի՞նչ բան։

— Ձեր կողմէ եղած յարձակումը կեղծիք մ՚էր, միթէ այդպէս չէ՞, պարոն. և մինչդեռ ձեր գունդերը կամովին կ՚յաղթուէին, ստոյգ էիք կղզւոյն մէկ ուրիշ կողմն ելնել և մեր վրայ քալել։

— Ո՛հ, շատ կողմեր, պարոն։

— Ուրեմն կորսուեցանք — ըսաւ Վանի եպիսկոպոսը հանդարտօրէն։

— Կորսուա՞ծ, այդ կարելի է — պատասխանեց Բիէրֆօնի սենեշուհը. — բայց դեռ ո՛չ բռնուած և ոչ կախուած ենք։

Եւ այս խօսքն ըսելով՝ սեղանէն ելաւ, պատին մօտեցաւ, և անկից վար առաւ պաղարիւնութեամբ իր սուրն ու հրայանակները, զոր պատերազմի պատրաստուող հին զինուորի մը խնամօք քննեց, այնպէս որ կ՚ղղայ թէ իր կեանքը մեծաւ մասամբ իր զինուց մաքրութենէ կախումն ունի։

Թնդանօթին ձայնը, թագաւորական զօրայ կղզին յանկարծակի առնելու լուրը լսելով՝ շուարած ամբոխը բերդին մէջ վազեց։ Իր գլխաւորներէն օգնութիւն և խորհուրդ խնդրելու կ՚գար։

Արամիս՝ դունատ և նկուն՝ պատուհանն ելաւ երկու ջահերու մէջ. այս պատուհանը մեծ բակին վրայ կ՚նայէր, որ զինուորներով լի էր, հրամանի սպասող և ահաբեկ բնիկներով՝ օգնութիւն հայցող։

— Իմ բարեկամներս — ըսաւ Հէրպլէյ ծանր և հնչող ձայնով մը — ձեր պաշտպանը, ձեր բարեկամը, ձեր հայրը, Պ. Ֆուքէն թագաւորին հրամանաւ ձերբակալ եղեր և Պաստիլ նետուեր է։

Դատաղութեան և սպառնալից աղաղակ մ՚եպիսկոպոսին գտնուած պատուհանը հասաւ և զանի քաջահնչիւն օդով մը ծածկեց։

— Պ. Ֆուքէի վրէժը լուծենք — պոչեցին ամենէն կրակոտ մարդիկ։ — Ի մա՛հ արքայականք։

— Ո՛չ, բարեկամներս — պատասխանեց Արամիս հանդիսաւոր կերպով — ո՛չ, բարեկամներս. ընդդիմութիւն պէտք չէ։ Թագաւորն իր թագաւորութեան մէջ տէր է։ Թագաւորն Աստուծոյ փոխանորդն է։ Թագաւորն ու Աստուած Պ. Ֆուքէի զարկին։ Խոնարհեցէք Աստուծոյ ձեռաց առջև։ Սիրեցէք զԱստուած և թագաւորն որ Պ. Ֆուքէն զարկին. բայց մի՛ առնէք ձեր տիրոջ վրէժը, մի՛ աշխատիք վրէժը լուծելու։ Ընդունայն պիտի զոհէք ձեզ, ձեր կանայքն և ձեր զաւակները, ձեր ինչքն ու ձեր ազատութիւնը։ Վա՛ր դրէք զէնքը, բարեկամներ, վա՛ր դրէք զէնքը. քանի որ թագաւորն այսպէս կ՚հրամայէ, և հանդարտօրէն ձեր տունները դարձիք։ Այս կ՚խնդրեմ ես ձեզմէ, այս կ՚աղաչեմ, ես, 'ի հարկին, յանուն Պ. Ֆուքէի՝ կ՚խնդրեմ որ այսպէս վարուիք։

Ամբոխը՝ որ պատուհանին ներքև դումարուած էր, բարկութեան և զարհուրանաց աղաղակ մ՚արձակեց։

— Լո՛ի ԺԳ թագաւորին զինուորները կղզին մտան — շարունակեց Արամիս։ — Այսուհետև անոնց և ձեր մէջ պատահելիքը կռիւ մը չպիտի լինի, այլ սոսկալի ջարդ մը։ Գացէք, գացէք և մոռցէք. այս անգամ յանուն Աստուծոյ ձեզի կ՚հրամայեմ։

Խուռներարները ծանր ծանր քաշուեցան՝ հնազանդութեամբ և անմունջ։

— Է՛հ, ինձ նայէ, ինչ ըսիր այդ մարդոց, բարեկամ — ըսաւ Բորթոս։

— Պարոն — ըսաւ Պիսկարա եպիսկոպոսին — այդ բոլոր քնաքիչները կ՚ազատէք. բայց չէք ազատեր ո՛չ ձեր բարեկամն և ոչ ձեզ։

— Պ. Պիսկարա — ըսաւ Վանի եպիսկոպոսն աղնութեան և մարդավարութեան եղական ձայնով մը — Պ. Պիսկարա, շնորհ ըրէ քու ազատութիւնդ ստանալու։

— Յօժարակամ կ'ընդունիմ, պարոն, բայց . . . :

— Բայց այդ աղատութեամբդ մեղի պիտի ծառայես. վասն զի կղզեցւոց հնազանդութիւնը թագաւորին տեղեկալին յայտնելով, կարելի է մեզի համար շնորհ ստանալու յաջողիս, իմաց տալով այս հպատակութեան կերպը :

— Շնո՛րհ — պատասխանեց Բորթոս կայծակնացայտ աչօք — շնո՛րհ, ի՞նչ կ'նշանակէ այդ բառը :

Արամիս իր բարեկամին արմկին զարկաւ ուժգին, ինչպէս որ իրենց երիտասարդութեան աղօր օրերը կ'ընէր, երբ Բորթոսին աղդ առնել կ'ուզէր թէ ծուռ բան մ'ըրած էր կամ պիտի ընէր : Բորթոս հասկրցաւ և շուտ մը լռեց :

— Պարոններ, պիտի երթամ — պատասխանեց Պիսկարա, այս շնորհ բառէն ինքն ալ փոքր ինչ զարմանալով, բաւ մը զոր վէս հրայանակիրն արտասաներ էր, որու գիւցազնական արարքը քիչ մ'առաջ խանդագին կ'պատմէր նա :

— Ուրեմն գնա, Պ. Պիսկարա — ըսաւ Արամիս անոր բարև տալով — և ընդունէ մեր բոլոր երախտագիտութեան հաւաստիքը :

— Բայց դո՛ք, պարոններ, դուք զոր իմ բարեկամներս կոչելու պատիւ կ'սեպեմ, քանի որ այս տիտղոսն ընդունելու հաճեցաք, ի՞նչ պիտի լինիք նոյն միջոցին — վրայ բերաւ սպայն այլայլած, և իր հօրն երկու վաղեմի հակառակորդներուն հրաժեշտ տալով :

— Մենք այս տեղ պիտի սպասենք :

— Բայց, Աստուա՛ծ իմ. . . հրամանը վճռական է :

— Վանի եպիսկոպոս եմ, Պ. Պիսկարա, և ինչպէս որ աղատորդի մը չեն կախեր, նոյնպէս հրայանի չեն բռներ եպիսկոպոս մը :

— Ա՛հ, այո՛, պարոն, այո՛, տէր իմ — վրայ բերաւ Պիսկարա — այո՛, տէր իմ, իրաւունք ունիք, դեռ ես այդ բաղդը կայ ձեզի համար : Ուրեմն, ահա կ'մեկնիմ, արշաւանին հրամանատարին մօտ պիտի երթամ : Ուրեմն մնաք բարեաւ, պարոններ ; կամ լաւ ես ըսեմ, 'ի կրկին տեսութիւն :

Արդարև՝ արժանի սպայն՝ Արամիսի պատրաստել տուած ձիու մը վրայ ցատկելով, թնդանօթ պարպուած կողմը վազեց :

Արամիս անոր մեկնելը դիտեց, և երբ Բորթոսի հետ առանձին մնաց.

— Լաւ ուրեմն, կ'հասկընամ — ըսաւ նա :

— Ճշմարիտը, բան մը չհասկրցայ :

— Միթէ Պիսկարա քեզ չէր նեղեր այս տեղ :

— Ո՛չ, բարեսիրտ տղայ մ'է :

— Այո՛, բայց Լոկմարիայի քարանձաւը, պէտք է որ ամէն մարդ դիտնայ :

— Ա՛հ, իրաւ է, իրաւ է, կ'հասկընամ : Ստորերկրեայ ճամբէն պիտի խոյս տանք :

— Անտարակոյս — պատասխանեց Արամիս խնդագին : — ճամբայ ելնենք, Բորթոս բարեկամ : Մեր նաւակը մեզի կ'սպասէ, և տակաւին թագաւորին ճանկին ներքև չենք :

Ը

ԼՈԿՄԱՐԻԱՅԻ ՔԱՐԱՅՐԸ

Լոկմարիայի քարայրը բաւական հեռու էր Թմբէն և երկու բարեկամները պարտաւոր էին հասնելէն առաջ իրենց ոյժը խնայելու :

Աստիճանները դիշերը կ'յառաջանար, ամրոցին ժամացոյցը կէս դիշեր զարկեր էր, Բորթոս ու Արամիս սակով և զէնքով բեռնաւորեալ էին :

Ուստի թումբը քարայրէն զատող տնոյն գաշտավայրին մէջ սկսան քալել, ամէն շշուկ մտիկ ընելով և ամէն ծուղակէ խորշելով :

Այն ատեն՝ իրենց ձախ գլին զգուշութեամբ ձգած ճամբուն վրայ, փախստականներ կ'անցնէին որ կղզւոյն ներքին կողմէն կը գային, արքայական զօրաց արշաւանին լուրն առնելով :

Արամիս և Բորթոս՝ ժայռին մէկ քանի անհարթ տեղերու հետքը

պահուած, զողզոջուն վախստականներուն ըսած խօսքերը կ'լսէին ուշի ուշով, որոնք՝ իրենց ամենէն թանկագին բաները կ'կրէին, և անոնց արտունջները մոխիկ ընելով՝ կ'ջանային օդուտ քաղել։

Վերջապէս արագապէս ընթանալէն, և ստէպ խոհեմութեամբ կայան առնլէն ետև, հասան այն խորունկ քարայրները, որոց մէջ Վանի հեռատես եպիսկոպոսը կանխաւ մտածեր էր գլաններու վրայ սահեցնելով՝ նաւակ մը գլորել, որ կարող էր այն աղօր եղանակին ծովու վրայ նաւարկել։

— Իմ բարի բարեկամս — ըսաւ Բորթոս լիաշունչ օդ առնելէն ետև — ըստ երևոյթին՝ ահա հասանք. բայց կարծեմ թէ երեք մարդու, երեք սպասաւորի խօսքն ըրիր լինիս, որ մեզի ուղեկից պիտի գտնուէին։ Զանոնք չեմ տեսներ. ուրեմն ո՞ւր են։

— Ինչո՞ւ համար տեսնել կ'ուզես, սիրելի Բորթոս — պատասխանեց Արամիս. — անտարակոյս քարանձաւին մէջ մեզի կ'սպասեն, և անշուշտ պահ մը կ'հանդչին այս ծանր ու դժուարին գործը կատարելէն ետև։

Արամիս Բորթոսը կեցուց, որ քարայրը մտնելու կ'պատրաստուէր։

— Մի՛թէ կ'ուզես, իմ բարի բարեկամս — ըսաւ հսկայն — ներել լինիս որ առաջ ես անցնիմ։ Մեր մարդոց տուած նշանս գիտեմ, և մեր մարդիկը՝ եթէ չեմանան, թերևս հրացան պարպելն վրադ կամ իրենց դանակը նետեն քեզ մութին։

— Մտի՛ր, սիրելի Արամիս, մտի՛ր ամենէն առաջ. բոլորովին խմաստութեան և խոհականութեան պատկեր մ'ես, մտի՛ր։ Նայէ անգամ մ'որ քեզի խօսած յոդնութիւնս նորէն իմ վրայ կ'գայ։

Արամիս թողուց որ Բորթոս քարանձաւին մուտքը նստի, և գլուխը ծռելով՝ քարանձաւին ներքնակողմը մտաւ բուին ճիչին նման ձայնելով։

Թեթև մրմունջ մը, գրեթէ անորոշ ճիկ մը ստորերկրեայ վայրին ներսէն պատասխանեց։

Արամիս զգուշութեամբ իր ընթացքը շարունակեց, և քիչ առնէն իր հանած ձայնին նման ձայն մ'ականջին զարնելով կայ առաւ, և այս ճիկն իրմէ տասն քայլ հեռուէն կ'եղնէր։

— Այդ տեղ ես, Իվ — ըսաւ եպիսկոպոսը։

— Այո՛, տէր իմ։ Նոյնպէս կոյէնեկ ասա է։ Իր որդին մեզի հետ է։

— Լաւ, ամէն բան պատրաստ է։

— Այո՛, տէր իմ։

— Քարայրին մոխիր կոզմը գացէք, իմ բարի Իվս, անդ պիտի գտնէք Ռիբիֆոնի սեղուհը, որ կ'հանդչի, ըրած արշաւանէն յոգնելով։ Եւ եթէ՝ գիսուածով, չէ կարող քայլել, վերցուցէք և զանի իմ քովս բերէք։

Երեք Պրը|օնները հնազանդեցան։ Բայց Արամիսի յանձնարարութիւնն աւելորդ էր։ Բորթոս՝ արդէն կաղդուրելով, ինքնին սկսեր էր վար իջնել և իր ծանր քայլը կայծքարէ և հատաքարէ սինեբէ շինուած խառուչներու մէջ կ'թեղար։

Երբոր Պրասիէօի սեղուհն եպիսկոպոսին քովն եկաւ, Պրը-օնները լապտեր մը վառեցին զոր իրենց հետը բերեր էին, և Բորթոս ապահովցուց իր բարեկամն որ դարձեալ ըստ սովորականին իր ոյժը գտեր էր։

— Երթանք նայինք մակոյկը — ըսաւ Արամիս — և նախ ստուգենք թէ լինչ կ'պարունակէ։

— Շատ մի՛ մտահոգուիք լոյսը — ըսաւ Իվ նաւատերը — վասն զի լինչպէս որ լինձ հրամայեր էիք, տէր իմ, խելայ նստարանին ներքև՝ լինչպէս որ գիտէք, սնտուկին մէջ տակառիկ մը վառօդ և հրացանի փամփուշտները դրի՝ զոր ամրոյին զրկեր էիք։

— Շատ աղէկ ըսաւ Արամիս։

Եւ լինք անձամբ լապտերն առնլով՝ մտեր քննեց մակոյկին բոլոր կողմերն այնպիսի մարդու մը զգուշութիւններով որ վատնելու ոչ երկիւղած է և ոչ ապէս։

Մակոյկն երկայն, թեթև էր, քիչ ջուր կ'քաշէր, նստրբ յատակ ունէր. վերջապէս այն նաւակներէն էր զոր այնչափ լաւ կը շինեն 'ի Պէլ-Իսլ, եղերքը փոքր լինչ բարձր, ջրին վրայ ամրապինդ, շատ գլուխպարծանելի, այնպիսի տախտակներով որ անսասոյզ ժամանակաց մէջ, տեսակ մը կամուրջ կ'յօրինեն որու վրայէն կոհակները կ'սահին, և որ թիավարները կարող են պահպանել։

Լաւ զոցուած երկու արկղերու մէջ, որ խելայ և առաջքին նստարաններուն ներքև դրուած էին, Արամիս՝ հայ, պաքսիմատ, չոր պտուղ, կտոր մը խողէնի, և տիկերով բաւական ջրի պաշար դուս. այս ամէնը՝ ծովեղբեայ կողմերը շրջող մարդոց համար բաւական ուտեստ էին, այնպէս որ եթէ հարկը պահանջէր, կարող էին նոքէն պաշար առնուլ։

Զէնքը, որք էին ութ հրացան և նոյնչափ ձիաւորի հրացանակներ՝ լաւ վիճակի մէջ էին և բոլորովին լեցուն։ Փոխնորդ թիակներ կային, եթէ դիպուած պատահէր, նոյնպէս փոքրիկ առագաստն որ յառաջաթև (trinquette) կ'կոչուի, որ նաւակին ընթացքին կ'օգնէ, մինչդեռ թիավարները կ'շարժին, որ այնչափ օգտակար է երբ քամին սկսի փչել, և որ նաւակին բեռը կ'թեթևցնէ։

Երբ Արամիս այս ամէն բաները ճանչցաւ, և իր հսկողութեան արդեանց վրայ գոհ երևցաւ.

— Հիմակ խորհուրդ ընենք, սիրելի Բորթոս — ըսաւ նա — և որոշենք թէ արդեօք նաւակը քարայրին անծանօթ մէկ անկիւնէն հանել պէտք է՝ անոր զառիթափն ու ստուերը բռնելով, թէ ոչ աւելի աղէկ է, բայց օդին՝ գլաններու վրայ գլորել՝ հաւամրզերէն, ծովեղբեայ փոքր ապառաժուտ վայրը հարթելով՝ որ քսան ոտք բարձրութիւն չունի, և որու ստորոտը մակընթացութեան ժամանակ հաղիւ երեք չորս դրկաչափ ջուր կ'զտնուի անխութ։

— Ձեր կամքը կատարելու պատրաստ ենք, տէր իմ — պատասխանեց Իվ նաւատէրը յարգանօք — բայց ես չեմ կարծեր թէ քարանձաւին դար 'ի վարէն և մութին նաւակն իջեցնելն աւելի դիւրին լինի քան թէ բայց օդին։ Ես քաջ կ'ճանչեմ ապառաժուտ վայրը, և կարող եմ ապահովել ձեզ որ պարտիզի դալարին պէս հարթ է։ Ընդ հակառակին՝ քարայրին ներքնակողմը՝ քարուտ է. առանց նկատելու, տէր իմ, որ ծայրը պիտի գըտնենք ցամաքի կտորն որ ծովը կ'հանէ, և թերևս նաւակն անկից կրնայ անցնիլ։

— Ես իմ հաշիւս ըրի — պատասխանեց եպիսկոպոսը — և ստոյգ եմ որ պիտի անցնի։

— Թող այդպէս լինի, տէր իմ, ըսենք որ կ'անցնի — պնդեց նաւատէրը — բայց դուք քաջ գիտէք՝ որ ցամաքի լեզուին ծայրը հասցնելու համար, պէտք է ահագին քար մը բառնալ, որ գրան պէս նոյն շաւիղը կ'գոցէ։

— Այդ քարը կ'վերցուի — ըսաւ Բորթոս — բան մը չէ։

— Ո՛հ, գիտեմ, տէր իմ, որ տան մարդու ոյժ ունիք — պատասխանեց Իվ — միայն շատ նեղութիւն պիտի կրէք։

— Կարծեմ թէ նաւատէրը կրնայ իրաւունք ունենալ — ըսաւ Արամիս — ուստի բայց երկնից տակ գործելու փորձն ընենք։

— Տէր իմ, այնքան իրաւացի է ըսածս որ արշալուսէն առաջ չպիտի կարենանք նաւ մտնել — շարունակեց ձկնորսը — վասն զի շատ գործ ունինք. և երբ արշալոյսն երևի, քարայրին վերին կողմը լաւ դէտ մը կարդելը խիստ կարևոր, անհրաժեշտ պիտի լինի, որպէս զի մեզ գիտող պատերազմիկ նաւերու վրայ հսկէ։

— Այո՛, Իվ, այո՛, խօսքդ իրաւացի է. ապառաժուտ ծովափունքէն պէտք է անցնիլ։

Եւ երեք ուժեղ Պրըգօնները պիտի սկսէին նաւակը շարժել, անոր ներքև գլաններ դնելով, երբ հեռուն արտորէից մէջ շուներու հաչումը լսուեցաւ։ Արամիս քարանձաւէն դուրս վազեց, Բորթոս անոր ետևէն գնաց։

Արշալոյսը ծիրանի գոյն կ'ներկէր կոհակներն ու դաշտավայրը. աղօտ լուսով փոքրիկ սխրագին եղևիններ կ'տեսնուէին քարերու գալարուած, և ագռաւներու խուռն երամ մ'որ իրենց սևաթոյր թևերով ցորեանի սև դաշտերու վրայ կ'սուրային։

Քառորդ մ'ևս և արևը պիտի ամբողջ երևէր. արթնցած թըռչունները՝ բոլոր ընութեան կ'յայտնէին զայն խնդալն իրենց երգերով։

Արդէն լսուած հաչումներն՝ որ նաւը շարժելու պատրաստ եղող երեք Պրըգօնները կեցուցեր և Բորթոսն ու Արամիսը դուրս ելնելու հարկադրեր էին, ընդարձակ կրճի մը մէջ՝ քարանձաւէն դրեթէ մղոն մը հեռու կ'լսուէին։

— Որսական ջոկ մ'է — ըսաւ Բորթոս — շուներն որսի մը հետքը փնտռելու վրայ են։

— Ի՞նչ կ'նշանակէ այդ. այսպիսի ժամ մը ովքեր կ'ելնէ՞— մտածեց Արամիս։

— Եւ մանաւանդ այս կողմէն — շարունակեց Բորթոս — այս կողմէն ուր թագաւորականաց դալուստը տեսնելու վախ կայ։

— Աղմուկը կ'մօտենայ։ Այո՛, իրաւունք ունիս, Բորթոս, շուները հետք մը կ'փնտռեն։

— Բայց ինչ է այս — գոչեց յանկարծ Արամիս. — Ի՛վ, Ի՛վ, եկուր նայիմ։

Իվ վազեց նաւակին տակը գնելիք ձեռքի գլանը թողլով, երբ եպիսկոպոսին այս բացագանչական ձայնն իր գործն ընդմիջեց։

— Ի՞նչ կ'նշանակէ այս որսորդութիւնը, նաւատէր — ըսաւ Բորթոս։

— Է՛հ, տէր իմ — պատասխանեց Պրըդօն — բան մը չեմ հասկընար։ Լոկմարիայի նաւատէրն այսպիսի ատեն մը ինչ որսի չելներ, ո՛չ, և սակայն շուները . . .։

— Կարելի է որ շնչարկէն խոյս տուած են։

— Ո՛չ — ըսաւ Կոյէնէկ — ասոնք Լոկմարիայի աւատատիրոջ շուները չեն։

— Աւ խոհեմութեան քարանձաւը մտնենք — վրայ բերաւ Արամիս — անտարակոյս ձայները կ'մօտենան, և քիչ ատենէն պիտի հասկընանք գործին էութիւնը։

Վերջապէս ներս մտան. բայց ստուերին մէջ հարիւր քայլ առած չէին տակաւին, որ հառաչ մը, ահաբեկ արարածի մը խուսպուտ ձայնին նման, քարայրին մէջ հնչեց. և աղուէս մը շնչատպաւ, արագ և ահաբեկ, փայլակի մը պէս անցաւ փախստականներու առջև, նաւակին վրայէն ցատկեց և անհրաժեշտ եղաւ, իր ետևէն թողլով բարկ հոտ մ'որ քանի մ'երկվայրկեան քարայրին ցած կամարներուն ներքև մնաց։

— Գայլը — պոռացին Պրըդօններն որսորդի խնդագին զարմացումով։

— Անէ՛ծք մեր գլխուն — պոռաց եպիսկոպոսը — մեր ապաստանն երևան ելաւ։

— Ի՞նչպէս — ըսաւ Բորթոս — միթէ գայլէ՞ մը պիտի վախնանք։

— Է՛հ, բարեկամդ իմ, ինչ կ'ըսես ուրեմն, և ինչու հասմար գայլը հոգ կ'ընես։ Խնդիրը գայլին վրայ չէ, ցէր վկայ։ Բայց միթէ չգիտես, Բորթոս, որ գայլին ետք՝ շունները կ'գան, և շուներէն ետք մարդիկ կ'գան։

Բորթոս գլուխը ծռեց։

Որպէս թէ Արամիսի ըսածին հաստատութիւն տալու համար ժանչող որսական ջոկը սոսկալի արագութեամբ կենդանիին հետոց վրայ սրանալով հասաւ։

Վեց սրընթաց շուներ նոյն պահուն փոքրիկ դաշտավայրը մտան՝ այնպէս աղմուկ հանելով որ յաղթութեան աղաղակի մը կ'նմանէր։

— Ահա ձեզի շատ մը շուներ — ըսաւ Արամիս, երկու ժայռերու մէջ գտնուած լուսամուտի մ'ետևը դարանամուտ կեցած — հիմակ նայինք թէ ո՞ք են որսորդները։

— Եթէ Լոկմարիայի աւատատէրն է — պատասխանեց նաւատէրը — պիտի թողու որ շունները քարայրը մտնեն հետազօտեն. վասն զի զանոնք կ'ճանչէ, և ինք անձամբ ներս չպիտի մտնէ, ստոյգ լինելով որ գայլը միւս կողմէ պիտի դուրս ելնէ, և ինք նոյն կողմը պիտի երթայ գայլին սպասելու։

— Լոկմարիայի աւատատէրը չէ որսի ելնողը — պատասխանեց եպիսկոպոսն ակամայ դունատելով։

— Ո՞վ է ուրեմն — ըսաւ Բորթոս։

— Նայէ՛ մի անգամ։

Բորթոս աչքը լուսամուտին տարաւ և հողաբլրին կատարը տեսաւ սատն երկուքի չափ ձիաւորներ որ շուներու հետքը բռնելով իրենց ձիերը կ'քշէին, պոռալով. Թայդ։

— Պահակնե՞րը — ըսաւ նա։

— Այո՛, բարեկամդ իմ, թագաւորին պահակները։

— Ի՞նչ, թագաւորին պահակները, կ'ըսէք, տէր իմ — գոչեցին Պրըդօններն ըստ կարգի դոյն նետելով։

— Եւ Պիսկարա ամենց գլուխը, իմ սպիտակ ձիուս վրայ հեծած — շարունակեց Արամիս։

Նոյն պահուն՝ հիւսի պէս քարանձաւը թափեցան շուները, և քարայրին խորերն իրենց խլացուցիչ աղաղակներով լցան։

— Ա՛Հ, կրո՛ղ — ըսաւ Արամիս այս սայդ, անխուսելի վտանգին առջև իր սառն կերպարանքը դասելով։ — Քաջ պիտեմ որ մեր բանը բուսաւ, բայց, գոնէ, մէկ հնար մը կայ մեզի. եթէ պահակները՝ որ շուներուն ետևէն պիտի գան անշուշտ, տեսնեն թէ ելք մը կայ քարանձաւին մէջ, այլ ևս յոյս չմնար մեզի. վասն զի այս տեղ մնալով, նաւակն և մեզ պիտի տեսնեն։ Ուստի պէտք չէ որ շունները դուրս ելնեն քարայրէն, պէտք չէ որ որսորդները ներս մտնեն։

— Ճշմարիտ է — ըսաւ Բորթոս։

— Կ'իմանամ միտքս — յարեց Արամիս հրամանատարի մ'արագ դատողութեամբ. — այդ տեղ վեց շուն կայ, որ պիտի ստիպուին կանգ առնլու խոշոր քարին մօտ, որտեղ տակէն աղուէսը սահեցաւ, բայց շուներն անոր խիստ նեղ բացուածքէն չպիտի կրնան անցնիլ և պիտի սպաննուին։

Պրըգօնները սրացան դանակ 'ի ձեռին։

Քանի մը վայրկեան ետքը, սղբալի աղաղակներ, մահագոյժ հաջումներ լսուեցան, և ապա ոչ ինչ։

— Քաջ է — ըսաւ Արամիս պաղութեամբ։ — Հիմակ դառնանք որսորդներուն։

— Ի՞նչ ընել պէտք է — ըսաւ Բորթոս։

— Սպասել անոնց դալստեան, թաղչիլ և սպաննել։

— Սպաննե՞լ — կրկնեց Բորթոս։

— Տասն վեց հոգի են — ըսաւ Արամիս — զէթ առ այժմ։

— Եւ աղէկ զինուած են — յարեց Բորթոս մխիթարութեան ժպիտով մը։

— Գործը տասն վայրկեան պիտի տևէ — ըսաւ Արամիս։ — Սկսի՛նք։

Եւ անյողդողդ կերպով մը, հրացան մ'առաւ և իր որսի դանակն ակռաներով սեղմեց։

— Իմ, Պոյէնէկ և իր որդին մեզի հրացանները պիտի անցնեն — շարունակեց Արամիս։ — Դու Բորթոս՝ հուպ ընդ հուպ հրացանդ կ'պարպես։ Ութ հոգի զեռինը տապատ ձգելէն ետև՝ մնացեալները հաղիւ ուրեմն պիտի սթափին, այս այսպէս է, ապա՝

ամենքնիս, որ հինգ հոգի ենք, միւս ութ որսորդները դանակով պիտի սպաննենք։

— Հապա այն խեղճ Պիսկարան — յարեց Բորթոս։

Արամիս պահ մը մտածեց։

— Ամենէն առաջ Պիսկարան սպաննել պէտք է — ըսաւ նա պաղութեամբ — վասն զի նա մեզ կ'ճանչէ։

Թ

ՔԱՐԱՅՐ

Արամիսի բնաւորութեան նշանաւոր մէկ հանգամանքը տեսակ մը նախագուշակութիւն էր, սակայն այս նախագուշակութեան հակառակ, գործը՝ գիպուածի ենթակայ պտնուող բաներուն պէս՝ Վանի եպիսկոպոսին գուշակածին պէս վախճան չունեցաւ։

Պիսկարա՝ որ իր ընկերներէն լաւագոյն ձի մ'ունէր, քարայրին բերանն ամենէն առաջ հասաւ, և գուշակեց որ աղուէս և շուներ միասին անոր մէջ խորասուղեր էին։ Սիայն՝ ամէն ստորերկրեայ և մութ ճամբուն՝ մարդուս մտքին բնասէս ազդած աւելորդասպաշտական սարսափով պաշարուելով՝ քարայրէն դուրս կայ առաւ, և սպասեց որ իր ընկերներն իր բոլորակը հասնին։

— Լաւ ուրեմն, ի՞նչ կայ — հարցուցին անոր երիտասարդները բոլորովին շնչասպառ, և անոր անդործութեան վրայ զարմանալով։

— Լա՛ւ, շուներուն ձայնը չլսուիր. կ'երևի թէ աղուէս և որսական ջոկն այս քարայրին մէջ թաղուեցան։

— Շատ աղէկ քշեցին — ըսաւ պահակներէն մին — ուստի անհաւատալի կ'երևի որ իրենց շաւիղը յանկարծ կորուսած լինին։ Ասկէ զատ՝ այս կամ այն կողմը վազվզելնին պիտի լսէ մեզ։ Պէտք է որ, ինչպէս կ'ըսէ Պիսկարա, այս քարայրին մէջը լինին։

— Ուրեմն — ըսաւ երիտասարդներէն մին — ինչո՞ւ համար ձայն չեն հաներ։

— Տարօրինակ բան մ՚է այս — ըսաւ ուրիշ մը։

— Լաւ ուրեմն — ըսաւ չորրորդ մը — մանենք այս քարայրը։ Արդեօք ներս մտնելու արդելք մը կայ։

— Ո՛չ — պատասխանեց Պիսկարա։ — Միայն վտանգ պէս մուտ է ներսը, և մարդ կրնայ ոսկրները խորտակել անոր մէջ։

— Վկայ են մեր շունները որ ըստ երևոյթին խորտակած են — ըսաւ պահակ մը։

— Ի՞նչ եղան, կրո՛ղ — հարցուցին միաբերան բոլոր երիտասարդները։

Եւ մէն մի որսորդ՝ իր շունը կոչեց անունը տալով, բնական սրինգով կոչեց, բայց ոչ մէկ շուն պատասխան չտուաւ ոչ այս կոչման և ոչ սուլիչին։

— Կարելի է կախարդեալ քարայր մ՚է — ըսաւ Պիսկարա — նայինք։

Եւ ձիէն վար իջնելով՝ քարայրն ոտք կոխեց։

— Սպասէ՛, սպասէ՛, քեզի ուղեկից պիտի լինիմ — ըսաւ պահակներէն մին՝ տեսնելով որ Պիսկարա կիսատուերին մէջ անհետ լինելու մօտ է։

— Ո՛չ — պատասխանեց Պիսկարա — անշուշտ կարդէ դուրս բան մը կայ այս տեղ. ամենքնիս միասին վտանգի մէջ մտնելէն զգուշանանք։ Եթէ տասն վայրկենէն չդառնամ՝, այն տասն ամենքնիդ մէկէն ներս մտէք։

— Թո՛ղ այդպէս լինի — ըսին երիտասարդները՝ որ Պիսկարայի համար վտանգաւոր բան մը չէին սեպեր այս ձեռնարկութիւնը — քեզի պիտի սպասենք։

Եւ առանց ձիէ վար իջնելու, քարայրին բոլորտիքը շրջան մը ըրին։

Ուստի Պիսկարա միայնակ ներս մտաւ, և մինչև Բորթոսի հրացանին ներքև յառաջացաւ մութին։

Այն դիմակալութիւնն որու իր կուրծքը կ՚հանդիպէր, զինքը զարմացուց. ձեռքը կարկառեց և հրացանին տաք փողը բռնեց։

Նոյն պահուն Իվ երիտասարդին վրայ դանակ մը կ՚վերցնէր, որ իր վրայ պիտի ընկնէր Պրըղօնի մը թիւին բոլոր ուժգնութեամբը, երբ Բորթոսի երկաթէ դաստակը կէս ճամբան զանի կեցուց։

Ապա՝ իրրև խուլ որոտում մ՚այս ձայնը լսելի եղաւ՝ի մթան.

— Ե՛ս, ես չեմ ուզեր որ այս աղան սպաննուի։

Պիսկարա պաշտպանութեան և սպառնալիքի մէջ բռնուած էր, որ իրարմէ այնչափ ահելի էին։

Երիտասարդը՝ թէև արիասիրտ, աղաղակ մ՚արձակեց ակամայ, Արամիս աղաղակը խափանեց իսկոյն, անոր բերնին վրայ թաշկինակ մը դնելով։

— Պ. Պիսկարա — ըսաւ անոր ցած ձայնով մը — քեզի դեշութիւն ընել չենք ուզեր, և այս բանս պարտիս պիտանալ եթէ մեզ ճանչցիր. բայց եթէ բաւ մը, հաւաչ մը, շունչ մը հանես, քեզ սպաննելու պիտի ստիպուինք ինչպէս որ ձեր շունները սատակեցինք։

— Այո՛, ձեզ կ՚ճանչեմ՝, պարոններ — ըսաւ մեղմիկ երիտասարդը։ — Բայց ինչո՞ւ համար այս տեղն էք, ինչ կ՚ընէք։ Ե՞ղուկ, եղուկ, կարծէի թէ ամրոցն էք։

— Հապա դո՞ւ, պարո՛ն, պարտաւոր էիր մեզի համար պայմաններ առաջարկել՝, կարծեմ։

— Կրցածս ըրի, պարոններ. բայց . . . ։

— Բա՞յց . . . ։

— Բայց վճռական են հրամանները։

— Մեզ սպաննելո՞ւ։

Պիսկարա բան մը չպատասխանեց։ Իրեն ծանր կ՚երևէր աղատարարներու կախաղանին վրայ խօսիլ։

Արամիս իր դերին լուութեան խմաստը հասկըցաւ։

— Պ. Պիսկարա — ըսաւ նա — արդէն մեռած էիր եթէ երիտասարդութեանդ չդթայինք և հօրդ հետ մեր ունեցած վաղեմի յարաբերութեան ակնածութիւն չունենայինք, բայց ասկից կրնաս դարձեալ խոյս տալ երդում ընելով որ տեսածդ քու զինակիցներուդ չպիտի ըսես քնաւ։

— Ո՛չ միայն կ՚երդնում որ չպիտի խօսիմ՝ — ըսաւ Պիսկարա — այլ կ՚երդնում նաև որ ձեռքէս եկածը պիտի ընեմ՝ որ իմ ընկերներս այս քարանձաւին մէջ ոտք չկոխեն։

— Պիսկարա՛, Պիսկարա՛ — պոռային դրսէն շատ մը ձայներ որ փոթորկի պէս սառերկրեայ վայրը թափանցեցան։

— Պատասխանէ՛ — ըսաւ Արամիս։

— Ասասիկ եմ՛ — պոռաց Պիսկարա։

— Գնա՛, քու անկեղծութեանդ վրայ կ՚վստահինք։

Եւ երիտասարդն արձակեց։

Պիսկարա լուսին ելաւ։

— Պիսկարա՛, Պիսկարա՛ — պոռային ձայներն տեղի մնացին։

Եւ շատ մը մարդերու սառերը քարանձաւին ներքին կողմը շարժեցան։

Պիսկարա իր բարեկամներուն առջեւը վազեց որպէս զի զանոնք դիմէ, և անոնց միացաւ երբ քարայրին մէջ մտնելու սկսեր էին։

Արամիս ու Բորթոս ակամէ դրին այնպիսի մարդոց ուշադրութեամբ որ իրենց կեանքը շնչէ մը կախում ունի։

Պիսկարա քարայրին դուռը հասեր էր արդէն՝ իր բարեկամներն եւեւը ձգելով։

— Հօ՛, հօ՛ — ըսաւ անոնցմէ մին լուսին ելնելով — ո՞ւրչափ դունատ ես։

— Դունա՛ա — գոչեց ուրիշ մը — կապտագոյն ըսել կ՚ուզես։

— Ե՞ս — ըսաւ երիտասարդն իր բոլոր ոյժն ամփոփելու ջանալով։

— Բայց, յանուն երկնից, ի՞նչ պատահեցաւ քեզ — հարցին անոր բոլոր ձայները։

— Երակներուդ մէջ արեան կաթիլ մ՚անգամ չէ մնացեր, իմ խեղճ բարեկամս — ըսաւ ուրիշ մը ծիծաղելով։

— Պարոններ, այդ ծանրակշիռ բան է — ըսաւ ուրիշ մը — հիմակ պիտի նուազն նա. միթէ աղ ունիք։

Եւ ամենքը սկսան քահ քահ ծիծաղիլ։

Բոլոր այս հարցումները, բոլոր այս կատակները Պիսկարայի քոլորակն իբարու կ՚զարնէին, ինչպէս որ կուռի մէջ դնտակներն իրարու կ՚զարնեն։

Պիսկարա իր ոյժն առաւ այս հեղեղի պէս հարցուփորձերու ներքեւ։

— Ի՞նչ կ՚ուզէք որ տեսած լինիմ — հարցուց նա։ — Շատ տարբեր էի, երբ այս քարայրը մտայ, սատանիկ մտեցայ, ահա այս է խնդիրը։

— Բայց շունները, շունները միթէ տեսար, միթէ ձայն մ՚առին, միթէ լուր մ՚ունին անոնց վրայ։

— Կ՚երեւի թէ ուրիշ ճամբայ մը բռնեցին — ըսաւ Պիսկարա։

— Պարոններ — ըսաւ երիտասարդներէն մին — այս անցած պարձած բաներուն մէջ, մեր բարեկամին դունատութեան և լուութեան մէջ պաղանիք մը կ՚տեսնեմ զոր Պիսկարա չուզեր կամ չկրնար անշուշտ յայտնել։ Միայն, և այս ատոյգ է, Պիսկարա քարայրին մէջ բան մը տեսաւ։ Լաւ, հետաքրքիր եմ իր տեսածը տեսնելու, եթէ նոյն իսկ սատանան լինի։ Քարայրն երթանք, պարոնայք, քարայրը։

— Քարայրը — կրկնեցին բոլոր ձայները։

Եւ քարանձաւին արձագանքն Արամիսին ու Բորթոսին իբրեւ սպառնալիք տարաւ այս խօսքն. «Ի քարայրն, քարայրն»։

Պիսկարա իր ընկերներուն առաջն առնելու վազեց։

— Պարոններ, պարոններ — գոչեց նա — յանուն Աստուծոյ, մի՛ մտնէք ներս։

— Բայց քարայրին մէջ ի՞նչ ահռելի բան կայ — հարցուցին շատ մը ձայներ։

— Նայինք, խօսէ՛, Պիսկարա։

— Ճշմարիտը, սատանան է տեսածը — կրկնեց այն որ արդէն այս ենթադրութիւնն ըրեր էր։

— Լաւ ուրեմն, բայց եթէ տեսաւ զանի — գոչեց ուրիշ մը — թող այդչափ ինքնասէր չլինի, և ձգէ որ մենք ալ տեսնենք։

— Պարոնե՛ր, պարոնե՛ր, կ՚աղաչեմ — պնդեց Պիսկարա։

— Նայինք, թո՛ղ որ անցնինք։

— Պարոնե՛ր, կ՚պաղատիմ ձեզ, մի՛ մտնէք։

— Բայց դու ինչո՞ւ մտար, դո՛ւ։

Այն ատեն, սոպայից մին որ միտներէն աւելի տարուօք էր, և մինչև այն ատեն եւեւը կենալով բան մը չէր ըսած, յառաջացաւ.

— Պարոններ — ըսաւ նա հանդարտ ձայնով մ՚որ երիտասարդաց եւանդին հետ հակապատկեր կ՚ընծայէր — այդ քարայրին մէջ մարդ մը կամ բան մը կայ որ սատանայ չէ, բայց ինչ որ է, բաւական զօրութիւն ունեցաւ մեր շունները լռեցնելու։ Պէտք է գիտնալ թէ ո՞վ է այն մարդը կամ բանը։

Պիսկարա վերջին ճիգ մ՚ըրաւ իր բարեկամները կեցնելու, բայց անօգուտ ճիգ մ՚ըրաւ։ Ընդունայն ամենէն յանդուգն ընկերացն առաջն ընկաւ, ընդունայն ժայռերը պլլուեցաւ որ անցքը գոցէ, երիտասարդները խմբովին քարայրն արշաւեցին, ամենէն վերջը խօսող սպային եռեւէն քալելով, բայց որ ամենէն առաջ սուր՝ի ձեռին սրայեր էր վառնդին գիմադրաւ։

Պիսկարա՝ իր բարեկամներէն վանտուելով, չէր կարող անոնց ոչ մէկից գանուիլ՝ վախնալով որ Բոբիոսի և Արամիսի աչքին մատնիչ մը, երդմնազանց մը չերեւի, ուստի ականջն ու աղերսագին ձեռքը կարկառելով գնաց ժայռի մ՚անհարթ կողմին կը-թնեցաւ, և կարծէր թէ հրացանակիրներուն կրակին տակն էր։

Իսկ պահակները սակաւ առ սակաւ ներս կ՚թափանցէին աղաղակներով որ կ՚տարարանային քանի սառբերկրեայ քարայրին մէջ ընդ առաջ կ՚երթային։

Յանկարծ հրացաններու արձակում մը՝ որոտման պէս գուռալով կամարներու ներքև պայթեցաւ։

Երկու երեք գնդակներ Պիսկարայի կոթնած ժայռին վրայ եկան տափակցան։

Նոյն պահուն հաւաչներ, ոռնալներ և սնէծք բարձրացան քարայրին մէջ՝ և ապատորդներու այս փոքրիկ խումբն երեւցաւ, ոմանք դունատ, ոմանք արիւնաթաթաւ, ամենքը շրջապատեալ մթային ամպով մը զոր արտաքին օդը կարծես թէ քարայրին մէջէն դուրս կ՚քաշէր։

— Պիսկարա՛, Պիսկարա՛ — կ՚պոռային վախստականները — դու գիտէիր որ այս քարայրին մէջ որոգայթ մը կար, և դու մեզի կանխաւ չմատնցիր։

— Պիսկարա՛, դու ես պատճառն որ մեզմէ չորս հոգի մեռան։ Վա՛յ քեզի, Պիսկարա։

— Դո՛ւ ես պատճառ որ մահու չափ վիրաւորուած եմ — ըսաւ երիտասարդներէն մին իր ձեռաց մէջ հաւաքելով արիւնն և Պիսկարայի երեսին նետելով — թո՛ղ իմ արիւնս գլուխդ թափի։

Եւ հոլեսպաւ ընկաւ երիտասարդին ոտից առջև։

— Բայց գոնէ, ըսէ մեզի թէ ո՞վ կայ անդ — գոչեցին կատաղութեամբ քանի մը ձայներ։

Պիսկարա լռեցաւ։

— Ըսէ թէ ոչ մեռիր — գոչեց վիրաւորը ծունկի մը վրայ ելնելով, և իր ընկերին վրայ վերցնելով թեն՝ անօգուտ սրով մը զինեալ։

Պիսկարա դէպ անոր վազեց՝ կուրծքը հարուածին բանալով, բայց վիրաւոր զինուորը վար ընկաւ վերստին չկանգնելու կերպով, և հաւաչ մը, վերջին հաւաչն արձակեց։

Պիսկարա՝ քամեալ մազերով, վայրենի աչօք, բոլորովին ցնորեալ՝ քարայրին ներքնակողմը գիմաց ելնելով.

— Իրաւունք ունիք, ես որ իմ ընկերներս թողուցի որ սպանուին, ես մահու արժանի եմ, ես վատ մ՚եմ։

Եւ իրմէ հեռու նետելով իր սուրը, վասն զի առանց ինքզինքը պաշտպանելու մեռնիլ կ՚ուզէր, գլխիկոր քարայրը սրացաւ։

Միւս երիտասարդներն իրեն հետեւեցան։

Տասն վեց հոլիէ մնացած տասն մէկ զօրականներն անդունդը մտան անոր հետ։

Բայց մութներէն ետքի հետու չգացին. երկրորդ անգամ հրացանները պարպուելով հինգ հոգի ևս սաստ տաղին վրայ տասպատ ընկան, և որովհետև անկարելի էր տեսնել թէ այս մահարեր կայծակն ուսկից կ՚գար, մութները զարհուրելով ետ քաշուեցան, զարհուրանք մը զոր տեսքի դիւրին է երևակայել քան նկարագրել։

Բայց մութներուն պէս խոյս տալու տեղ, Պիսկարա, ողջ առողջ մնալով՝ քարաժայռի մը կատարին վրայ նստաւ և սպասեց։

Մնացեալ վեց զօրական մնացեր էին։

— Ճշմարիտը, միթէ սատանա՞ն է — ըսաւ ապրողներէն մին։

— Տէր վկայ, քան զսատանայ սոսկալի է այս — ըսաւ ուրիշ մը։

— Պիսկարային հարցնենք, գիտէ նա, գիտէ։

— Ո՞ւր է Պիսկարա։

Երիտասարդներն իրենց չորս կողմը նայեցան, և տեսան որ Պիսկարա իրենց կոչման չէր պատասխաներ։

— Մեռած է — ըսին երկու երեք ձայն։

— Ո՛չ ամենևին — պատասխանեց ուրիշ մը — ես զանի տեսայ մութին մէջ, հանդարտօրէն նստաւ ժայռի մը վրայ, քարայրն է, մեզի կ'սպասէ։

— Անշուշտ ներսը գանձերը կ'ճանչէ։

— Եւ ի՞նչպէս պիտի ճանչէր։

— Ապստամբներուն ձեռքը գերի ընկեր էր։

— Իրաւ է։ Լաւ ուրեմն, կոչենք զանի, և անոր հարցուփորձ ընելով գոնէ հասկընանք թէ որո՞ւ հետ է մեր գործը։

Եւ բոլոր ձայները պոռացին.

— Պիսկարա՛, Պիսկարա՛։

Բայց Պիսկարա չպատասխանեց։

— Լաւ — ըսաւ սպայն որ այնքան սառնութիւն ցոյց տուեր էր այս գործին մէջ — անօրմէ այլ ևս պէտք չունինք, ահա մեզի օգնական զօրք կ'գայ։

Իրօք՝ պահակաց գումարտակ մը, որոնք յետոյս ձգուած էին իրենց սպայից կողմէ, երբ ասոնք որսորդութեան Լուանդով ընդառաջ քալեր էին, ամենքը գրեթէ եօթանասուն հինգ, ութսուն հոգի կարդաւ կ'գային, հարիւրապետին և առաջին տեղակալին առաջնորդութեամբը։ Հինգ սպայք իրենց զինուորներուն առաջքն առին, և լեզուով մ'որու ճարտասանութիւնը գիւրին է ըմբռնել, պատահած արկածը պատմեցին։

Հարիւրապետն անոնց խօսքն ընդմիջեց։

— Ո՞ւր են ձեր զինակիցները — հարցուց անոնց։

— Մեռան։

— Բայց տասն վե՛ց հոգի էիք։

— Տասն մեռան, Պիսկարա քարայրն է, և ահա այս տեղ հինգ հոգի ենք։

— Ուրեմն Պիսկարա գերի ընկած է։

— Այդպէս կ'երևի։

— Ո՛չ, վասն զի ահա կ'գայ. տեսէք։

Արդարև՝ Պիսկարա՝ քարայրին բերանը կ'երևէր։

— Նշան կ'ընէ մեզ քովն երթալու — ըսին սպայք։ — Ուրեմն երթանք։

— Երթանք — գոչեց բոլոր խումբը։

Եւ Պիսկարան գիմաւորելու գացին։

— Պարոն — ըսաւ հարիւրապետը Պիսկարայի դառնալով — կ'հաւատան ինձ որ քարայրը գանուող և այս յուսահատական պայքարը մղող մարդիկն ոչ ոք են գիտես։ Յանուն թագաւորին կը հրամայեմ՝ քեզ որ գիտցածդ յայտնես։

— Հարիւրապետս — ըսաւ Պիսկարա — այլ ևս պէտք չունիմ համայնելու ինձ, այս պահուս խոստումս լուծուեցաւ, և այն մարդոց կողմէն կ'գամ։

— Արդեօք ըսելու համար թէ անձնատուր կ'լինին։

— Ձեզի ըսելու որ ցմահ պիտի պաշտպանեն ինքզինքնին, եւ թէ պատուաւոր պայմաններ չառաջարկուին։

— Ուրեմն քանի՞ հոգի են։

— Երկու հոգի են — ըսաւ Պիսկարա։

— Երկու՞ հոգի են, և մեր վրայ պայմաններ դնելու կ'ելնեն։

— Երկու հոգի են, և արդէն տասն հոգի սպաննեցին — ըսաւ Պիսկարա։

— Ուրեմն ի՞նչ մարդիկ են ասոնք. հս՛ան՝ նը,

— Հսկայք դեր 'ի վեր։ Արդեօք կ'յիշես, հարիւրապետս, Սէն-Ժերվէի մարտկոցին պատմութիւնը։

— Այո՛, երբ թագաւորին չորս հրաձգակիրներն ամբողջ գանակի մը դէմ դրին։

— Լաւ, այս երկու մարդիկ այն հրաձգակիրներէն էին։

— Ի՞նչպէս կ'անուանին...։

— Այն ատեն Թորթոս և Արամիս կ'ըսուէին, այսօր Պ. Հէրպլէյ և Պ. Վալլոն կ'անուանին։

— Եւ ի՞նչ շահ ունին այս բանիս մէջ։

— Անոնք էին որ Պ. Ֆուքէի համար Պէլ-Իսլը կ'պահպանէին։

Մրմունջ մը լսելի եղաւ զինուորներուն մէջ երբ այս երկու անունն իմացան. « Բորթոս և Արամիս »։

— Հրացանակիրնե՛ր, հրացանակիրնե՛ր — կ՚կրկնէին անոնք։

Եւ այս քաջասիրտ զինուորները քանի կը մտածէին որ բանակին երկու ամենէն հին և փառաւոր շահատակներուն դէմ մաքառելու պիտի ելնէին՝ կէս մը խանդէ, կէս մը սարսափէ սարսուռ մը կ՚զգային։

Վասն զի՝ իրօք այս չորս անունները, ա՛Արդանեան, Ամոս, Բորթոս և Արամիս յարգելի էին ամէն անոնց որ սուր մը կ՚կրէին, ինչպէս որ հին ատեն ակնածելի էին Հերակլէսի, Թէսէոսի, Կաստորի և Պոլլուքսի անունները։

— Երկու մարդիկ — գոչեց հարիւրապետը — և երկու անդամ հրացան արձակելով մեղնէ տասն հոգի սպաննեցին։ Այս անկարելի է, Պիսկարա։

— Է՛հ, հրամնատարս — պատասխանեց Պիսկարա — չեմ ըսեր թէ իրենց հետ երկու երեք հոգի չունին, ինչպէս որ Սէն-Ժերվէի մարտկոցին հրացանակիրներն երեք չորս սպասաւորներ ունէին. բայց, հաւատա՛ ինձ, հարիւրապետ, տեսայ ես այս մարդիկը, անոնց ձեռքը զերի ընկայ, քաջ կը ճանչեմ։ Առանձին բաւական են ամբողջ զօրաբանակ մը ջարդելու համար։

— Հիմակ պիտի նայինք — ըսաւ հարիւրապետը — և անմիջապէս։ Մտադրութի՛ւն, պարոններ։

Այս պատասխանին վրայ ոչ ոք տեղէն շարժեցաւ, և իւրաքանչիւր ոք հնազանդելու պատրաստեցաւ։

Միայն Պիսկարա յետին փորձ մ՚ըրաւ։

— Պարոններ — ըսաւ ցած ձայնով մը — եկէք մեր ճամբան շարունակենք. այս երկու մարդիկ, այս երկու առիւծներն որոց դէմ պիտի յարձակինք ցմահ պիտի մաքառին։ Արդէն մեր տասն մարդիկը սպաննեցին, նորէն կրկնապատիկը պիտի սպաննեն և՝ ի վերջէ ինքզինքնին ալ պիտի սպաննեն քան թէ անձնատուր լինին։ Ի՛նչ պիտի շահինք անոնց դէմ պատերազմելով։

— Պարոն, մեր շահը պիտի լինի մեր պարտաւորութիւնը կատարելն և թագաւորին ուղարկուն զինուորներն երկու ապստամբնե-

ին առջև ընկրկիլ չտալը։ Պարոն, եթէ քու խորհրդոյդ անսայլ անպատուեալ մարդ մը պիտի լինէի, և ինքզինքս անպատուելով բանակը պիտի անպատուէի։ Ընդ առաջ, դուք զինուորնե՛ր։

Եւ ամենէն առաջ ինք քալեց մինչև քարանձաւին բացուածքը։

Անդ հասնելով, դադար առաւ։

Այս դադարման նպատակն էր Պիսկարայի և իր ընկերներուն ժամանակ տալ որ քարայրին ներքին կողմն իրեն նկարագրեն։ Ապա երբ հարիւրապետը կարծեց թէ տեղւոյն վրայ բաւական տեղեկութիւններ ստացած է, գումարտակն երեք մաս բաժնեց, որ հետզհետէ պիտի ներս մտնէին ամէն ուղղութեամբ շարունակ հրացան պարպելով։ Անտարակոյս այս յարձակմամբ հինգ, թերևս տասն հոգի ևս պիտի կորուսէին. բայց՝ ի վերջէ պիտի յաջողէին ապստամբները բռնելու, քանի որ քարանձաւն ուրիշ ելք չունէր, և ամէն բան կշռելով՝ յայտնի էր որ երկու մարդ ութսուն հոգի չէր կարող սպաննել։

— Իմ հարիւրապետս — ըսաւ Պիսկարա — կ՚խնդրեմ որ նեղես ինձ առաջին վաշտակին դլուխն անցած ամենէն առաջ քալեմ։

— Շատ լաւ — պատասխանեց հարիւրապետը։ — Այս պատիւը քեզի կ՚տամ. ըրածս ընծայ մ՚է քեզի։

— Շնորհակալ եմ — պատասխանեց երիտասարդն իր տոհմական անվեհերութեամբը։

— Ուրեմն, սուրդ հա՛ր։

— Հարիւրապետդ իմ, այսպէս պիտի դնամ — ըսաւ Պիսկարա — վասն զի սպաննելու մտօք չեմ երթար, այլ սպաննուելու համար։

Եւ առաջին վաշտակին դլուխն անցնելով՝ ճակատը բաց և թեւերը ծալլած,

— Քալե՛նք, պարոններ — ըսաւ նա։

Ժ.

ՀՈՄԵՐԻ ՄԻ ԵՐԳԸ

Ժամ է անցնիլ միւս բանակատեղին և նկարագրել մարտիկներն ու միանգամայն պատերազմի դաշտը։

Արամիս ու Բորթոս Լոկմարիայի քարայրը մտեր էին նաւակը պատրաստ դտնելու յուսով, նոյնպէս և երեք օդնական Պրըդօնները, և կ'յուսային նախ քարայրին փոքրիկ ելքէն նաւակն անցընել, այս կերպով թէ իրենց գործողութիւնն և թէ փախուստն անտես կատարել։ Սակայն աղուէսին և շուներուն դալուստը թագուն մնալու ղիրենք ստիպեր էին։

Քարայրը գրեթէ հարիւր կանգուն տարածութիւն ունէր մինչև որմի մը զառիթափին որ ծովածոյի մը վրայ կը նայէր։ Երբ երբեմն Պէլ-Իսլ դեռ ևս Կալոնէլ կ'կոչուէր և հեթանոսական տաճար մը կ'պարունակէր՝ իր խորհրդաւոր խուցերու մէջ բազմաթիւ մարգկային զոհեր եղած էին։

Այս քարայրին առաջին փապարին մէջ կ'մնուէր թեթև դարձ՝ ինչպարէ մը, որու դէղադէղ ժայռեր ցած կամար մը կ'յօրինէին. ներքին մասը, թէև դերբուկ, թէև գմբէթին ժայռուտ անհարթութիւններուն պատճառաւ վտանգաւոր էր, շատ մը խորշերու կ'բաժնուէր, որ իրարու կից էին, և քանի մը ծամածուռ, բեկոտ, և աջէն ու ահեկէն ահագին ընական մարգակներէ կըցուած աստիճաններով իրարու հետ կ'հաղորդակցէին։

Երրորդ խորշին մէջ՝ գմբէթն այնքան ցած էր, և անցքը նեղ, որ երկու պատերուն դպելով՝ նաւակը հազիւ պիտի անցնէր. այլ սակայն յուսահատական վայրկենի մը մէջ փայտը կ'կակղի, քարը տեղի կ'տայ մարգկային կամաց շնչովը։

Այս էր Արամիսի դաղափարը՝ երբ մարտն սկսել տալէն ետև՝ փախուստ տալու որոշումն ըրեր էր. արդարև վտանգաւոր փախուստ մը, քանի որ բոլոր մարտիկները չէին մնած, և ենթադրելով իսկ որ նաւակը ծովն իջեցնել հնարին լինէր, բայց լուսին՝ յաղթեալներուն առջև պիտի խոյս տային, երբ ասոնք գործին մէջ շահ ունենալով՝ պիտի տեսնէին՝ որ յաղթողները քիչւոր են և անոնց ետևէն պիտի պնդէին։

Երբոր հրայանները տասն զինուոր սպաննեցին, Արամիս՝ քարայրին ծակուծուկ տեղերուն վարժ լինելով, գնաց զանոնք՝ մի առ մի համրել, վասն զի մուխը չէր թողուր որ դուրսը տեսնէ, և անմիջապէս հրամայեց որ նաւակը մինչև խոշոր քարը գլորեն, որ աղատարար մոյց ցանկն էր։

Բորթոս իր բոլոր ոյժը ժողվեց, նաւակը թևերովը վերցուց, մինչդեռ Պրըդօններն արագութեամբ գլանները կ'գլորէին։

Երրորդ խորշն իջեր էին, հասեր էին այն քարին որ ծակը կ'որմէր։

Բորթոս այս յաղթ քարը հիմէն բռնեց, անոր վրայ կռթընցուց իր կորովի ուսը, և հարուած մը տալով այն պատը դղրդեց։ Փոշիի ամպ մ'ընկաւ գմբէթէն ծովային թռչուններու տասն հազար սերնդոց մոխիրներով, թռչուններ՝ որոց բոյները՝ շաղախի պէս սոյն ժայռին կպեր էին։

Երրորդ հարուածին՝ քարը շարժ ելաւ, վայրկեան մ'երերայ։ Բորթոս մնտաւոր ժայռերուն կռնակը տալով՝ ուսովը կամարակալ մը շինեց, և այսպէս քարէ հատորն իրեն իբրև ծխնի և ծեփ ծառայող կրային կարկառները դուրս մղեց։

Երբ քարն ընկաւ՝ սեսաւ փայլուն, շողշողուն լոյսն որ քարայրը թափանցեց ելից շրջանակէն, և կապոյտ ծովը հիացած Պրըդօններուն երևցաւ։

Ահա այն ատեն նաւակը սոյն պատնէշին վրայ հանելու ջանայինն։ Քսան կանգուն ևս և պիտի կարենար նաւակն Ովկիանու մէջ սահիլ։

Այս միջոցին էր որ դումարտակը միւս կողմէն վրայ հասաւ, հարիւրապետին հրամանաւ շարուելով՝ վեր ելնելու կամ յարձակելու պատրաստուելու։

Արամիս ամէն բանի վրայ կ'հսկէր որպէս զի իր բարեկամներուն գործը գիւրացնէ։

Տեսաւ այս օղնական զինուորները, համրեց զանոնք, մէկ նայուածքով համոզուեցաւ որ նոր պայքար մը զինքն անյարիր կոչտեան պիտի մատնէ։

Դէպ 'ի ծովը փախչիլ մինչդեռ քարայրն արշաւելու վրայ էին, անկարելի բան։

Արդարև լոյսն որ երկու յետին խորշերը կ'լուսաւորէր, զինուորներուն պիտի ցոյց տար դէպ 'ի ծովը գլորող նաւակը, երկու ապստամբներն ալ հրացանի հեռաւորութեամբ, և եթէ մի անգամ խմբովին հրացանները պարպէին թշնամիները՝ նաւակը պիտի մաղի պէս ծակծկէին, եթէ հինգ նաւարկուներն իսկ չսպաննէին։

Ասկէ զատ՝ ամէն ենթադրութիւն ընելով, եթէ նաւակը մէջի մարդերով խոյս տար, միթէ աղդարար աղաղակ մը չ'պիտի ելնէր, միթէ արքայական նաւատորմին ձայն չ'պիտի տրուեր հասնելու, և միթէ խեղճ նաւակը ծովէն ու ցամաքէն նեղի մէջ մնալով՝ դիշեր չեղած չ'պիտի ընկղմէր։ Արամիս իր աղէբեկ մաղերը խառնելով կատաղութեամբ՝ Աստուծոյ օղնութիւնը, ու սատանային օղնութիւնը կոչեց։

Բորթոսը կանչեց որ ինք միայնակ քան դլան և լծակով աւելի կ'աշխատէր։

— Բարեկամ — ըսաւ ցած ձայնով — մեր հակառակորդներուն օղնութեան ղօրք հասաւ այժմ։

— Ա'հ — ըրաւ Բորթոս հանդարտութեամբ — հիմակ ինչ ընել պէտք է։

— Պէտք է կռիւը վերստին սկսիլ — պատասխանեց Արամիս — թերևս յոյս մը կայ։

— Այո՛ — ըսաւ Բորթոս — վասն զի դժուարին է որ մեր երկուքին մին չսպաննեն, և անշուշտ, եթէ մեղնէ մին սպաննուի, միւսն ալ սպաննուելու պիտի ջանայ։

Բորթոս այս խօսքն այնպէս բնական դիւցաղնութեամբ ըսաւ, որ իրեն նայելով՝ աւելի կ'բարձրանար նիւթական կորովայն զօրութեամբը։

Արամիս իր սրտին մէջ երբև մարակի հարուած մը զդաց։

— Ո'չ դու և ոչ ես չպիտի սպաննուինք, Բորթոս բարեկամ, եթէ ըսելիքս ընես։

— Ըսէ՛ նայիմ։

— Այս մարդիկ հիմակ քարայրը պիտի իջնեն։

— Այո՛։

— Պիտի կարենանք տասն հինգ հոգի սպաննել, բայց ոչ առաւել։

— Քանի՞ հոգի են ամենքը — հարցուց Բորթոս։

— Եօթսուն հինգ հոգի նոր եկան իբրև թիկունք։

— Եօթսունը հինգ և հինգ, ութսուն հոգի . . . հա՛, հա՛ — ըրաւ Բորթոս։

— Եթէ միասին կրակ ընեն, մեր գլխին գնդակներ պիտի տեղան։

— Անշուշտ։

— Այս ևս դիտել պէտք է — յարեց Արամիս — որ քարայրին մէջ պայթումները կրնան շատ տեղեր փլել։

— Քիչ մ'առաջ — ըսաւ Բորթոս — իրաւ է որ քարաժայռի մը կտորը փոքր ինչ ուսս սկրդեց։

— Կ'տեսնես։

— Բայց այս բան մը չէ։

— Շուտ որոշում մ'ընենք։ Մեր Պրըդօնները թող նաւակը ծովը գլորելու աշխատին։

— Շատ լաւ։

— Իսկ մենք վառօղը, գնդակներն ու հրացաններն այս տեղ կ'պահենք։

— Բայց մենք երկուքնիս երբէք միասին երեք անդամ հրացան չպիտի կարենանք պարպել — ըսաւ Բորթոս միամտութեամբ — հրացանները մեծ գործ չպիտի տեսնեն։

— Ուրեմն ուրիշ միջոց մը գտիր։

— Ցատայ զայն — ըսաւ յանկարծ հսկայն։ — Այս երկաթէ ձողով մարդակին ետեւը դարանամուտ երթամ պիտի սպասեմ, և անդ անտեսանելի, անշնչելի, երբոր ներս խուժեն թշնամիները, իմ ձողս մի վայրկենի մէջ քսան անդամ վար կ'իջեցը-

նեմ։ Հէյ, այս խորհուրդս ինչպէս կ'երևի քեզի, միթէ յաջող չեն գտներ։

— Պատուական է, սիրելի բարեկամ, կատարեալ է։ Շատ կ'հաւանիմ. միայն անոնց տահ ու դող պիտի տղղես, և կէսը դուրս պիտի մնայ սովամահ ընելով մեզ բռնելու համար։ Մեզի պէտք եղածը, իմ բարի բարեկամս, ամբողջ գնդին խորտակումն է. եթէ մարդ մը միայն անվնաս մնայ, կարող է մեզ 'ի կորուստ մատնել։

— Իրաւունք ունիս, բարեկամդ իմ, ուրեմն ինչպէս դարանը ձգենք զանոնք, ըսէ կ'աղաչեմ։

— Անշարժ մնալով, սիրելիդ իմ Բորթոս։

— Ուրեմն անշարժ մնանք. բայց երբ ամենքը մի վայր հաւաքուին . . . ։

— Այն ատեն, թոզ ինձի որ գործեմ, դաղափար մ'ունիմ։

— Եթէ այդպէս է, և քու դաղափարդ լաւ է . . . և պէտք է որ լաւ լինի, այդ դաղափարդ . . . ես ալ հանդիստ եմ։

— Դարանամուտ մնալու գնա, Բորթոս, և ներս մտնողները համրէ։

— Հապա դու, դու ի՞նչ պիտի ընես։

— Իմ մասիս անհոգ եղիր, ես իմ գործս ունիմ։

— Ձայներ կը լսուին, կարծեմ։

— Անոնք են։ Գնա տեղդ . . . իմ ձայնս լսելու և ձեռքիս գպչելու չափ հեռայիր միայն։

Բորթոս երկրորդ խորշին մէջ մտաւ, որ բոլորովին խաւարին էր։

Արամիս երրորդին մէջ սահեցաւ։

Հսկայն երկաթէ ձող մը բռներ էր ձեռքը յիսուն լիպրէի ծանրութեամբ։ Բորթոս հիանալի դիւրութեամբ կ'շարժէր այս լծակը, որ նաւակը գլորելու ծառայեր էր։

Նոյն պահուն՝ Պրըդոնները կ'քշէին նաւակը մինչև ժայռուտ ծովափունքը։

Լուսաւոր խորշին մէջ՝ Արամիս ծռած և պահուած՝ դաղտնի ներենայութեամբ մը զբաղած էր։

Բարձր ձայնով հրամանի սը տրուիլը լսուեցաւ։ Այս էր հրամանատար հարիւրապետին յետին հրամանը։ Քսան հինգ մարդ վերին ժայռերէն քարայրին առաջին խորշին մէջ ցատկեցին, և երբ հողը դատն, սկսան կրակ ընել։

Արձականքներն որոտացին, կամարէն սուլումներ լսուեցան, բոլոր միջոցը գիմահար մխով մը գոցուեցաւ։

— Ձախ կողմը, ձախ կողմը — գոչեց Պիսկարա, որ իր առաջին յարձակման ատեն, երկրորդ սենեկին անցքը տեսեր էր, և որ վառօդին հոտէն վառուելով կ'ուզէր որ իր զինուորներն այն կողմէն առաջնորդէ։

Արդարև խումբը ձախ դին վազեց. խուռնն երթալով կ'նեղնար. Պիսկարա՝ ձեռքը տարածած, 'ի մահ նուիրեալ, զինուորներէ ընդ առաջ կ'քալէր։

— Եկէք, եկէք — գոռաց նա — լոյս կ'տեսնեմ։

— Զարկ, Բորթոս — գոռաց Արամիսի դամբանային ձայնը։

Բորթոս հառաչ մ'արձակեց՝ բայց հնազանդեցաւ։

Երկաթէ ձողն ուղղակի Պիսկարայի գլխուն իջաւ, որ առանց գաղաղակն աւարտելու սպանուեցաւ։ Ապա ահագին լծակն ամբառնալով իջաւ տասն անգամ՝ տասն բոպէի մէջ և տասն գիակ գետինը փռեց։

Զինուորները բան մը չէին տեսներ. միայն աղաղակներ և հառաչներ կ'լսէին, մարմիններն ոտնակոխ կ'ընէին. բայց տակաւին գործին էութիւնը չէին իմացած, և իրարու վրայ դայթելով վեր կ'ելնէին։

Անողոքելի լծակը շարունակ իջնելով, առաջին վաշտակը ջախջախեց առանց աղաղակ մ'իսկ մուսին աղդարարութիւն տալու, որ հանդարտօրէն կ'յառաջանար։

Միայն այս երկրորդ խումբը՝ որու հրամանատարն էր հարիւրապետը, ծովեղերեայ ժայռուտ դեսնին վրայ բուսնող եղևին մը խորտակեր էր և իր խժային դալարուտ ոստերով՝ հարիւրապետը ջահ մը շիներ էր։

Խմբին առաջին կարգն այս խորշն հասնելով՝ ուր Բորթոս՝ սատակիչ հրեշտակին պէս՝ բոլոր զոբիածները ջնջեր էր, զար-

հուրանոք եւ քաշուեցաւ։ Պահակներուն հրացանի արձակման ուրիշ հրացանի արձակում մը պատասխան չէր տուած, և սակայն կայծ մը դիակներու վրայ կ'կոխէին, իրապէս արեան մէջ կ'քալէին։

Բորթոս միշտ մարդակին ետեւը կեցեր էր։

Հարիւրապետը՝ վառ եղէնի փայտովն այս ահռելի կոտորածը լուսաւորելով, որու պատճառն ընդունայն կ'որոնէր, ընկրկեցաւ մինչև Բորթոսին կեցած մարդակը։

Այն ատեն հսկայական ձեռք մը ստուերէն դուրս ելաւ, հրամանատարին կոկորդէն բռնեց ամրապէս, որ խուլ հռնչիւն մը արձակեց. իր թեւերն օդը ծեծելով տարածուեցան, ջահը վար ընկաւ և արեան մէջ մարեցաւ։

Երկվայրկեան մ'ետք՝ հարիւրապետին մարմինը մարած ջահին մօտ կ'ընկնէր, և նոր դիակ մը կ'աւելնար ճամբան խափանող դիակներու կոյտին։

Այս ամենը խորհրդաւոր կերպով և իբրև մոգական բան մը տեղի ունեցեր էր։ Հարիւրապետին խորդալը լսելով՝ իրեն ուղեկից գտնուող մարդիկ դարձեր էին, տեսեր էին անոր բացուած թեւերը, շրջանէն դուրս ելնող աչերը, ապա ջահն ընկնելով մութը մնացեր էին։

Առանց մտածելու, այլ բնազդումով, մեքենայօրէն տեղակալը պոռաց։

— Կրակ։

Անմիջապէս հրացանի բազմաթիւ հարուածներ ճարճատելով որոտացին, ոռնացին քարայրին մէջ կամարներէն ահագին կոտորներ կորզելով։

Այս հրացանի արձակումէն քարայրը պահ մը լուսաւորուեցաւ, յետոյ անմիջապէս մթութիւնը տիրեց որ մռայլէն աւելի թանձրացաւ։

Այն ատեն երկար լռութիւն մը յաջորդեց, զոր երրորդ վաշտակին քայլերը միայն կ'վրդովէին, երբ քարայրը կ'մտնէր։

ԺԱ.

ՏԻՏԱՆԻ ՄԷՋ ՄԱՀԸ

Այն միջոցին որ Բորթոս՝ լուսէն եկող մարդերէն աւելի վարժ լինելով մթութեան, իր բոլորտիքը կ'նայէր տեսնելու համար թէ՝ այն խաւարին մէջ, Արամիս իրեն նշան մը չ'պիտի ընէր, զպաց որ մէկը թեւին կ'դպէր, և շունչի պէս տկար ձայն մ'անոր ականջին մեղմիկ փսփսաց.

— Եկուր։

— Ո՛հ — ըրաւ Բորթոս։

— Սուս — ըսաւ Արամիս աւելի մեղմ ձայնով։

Եւ շարունակ յառաջացող երրորդ վաշտակին հանած աղմկին, տտեն, կանգուն կեցող պահակներուն թափած անէծներուն ատեն, իրենց վերջին շունչն աւանդող հոգեվարներուն հառաչներուն ատեն, Արամիս ու Բորթոս անտես սահեցան քարայրին կճեայ պատերուն երկայնքը։

Արամիս վերջընթեր խորշը տարաւ Բորթոսը՝ և պապին մէջ ծակին մէջ ցոյց տուաւ անոր տակառիկ մը վառօդ վաթսուն ութսուն լիտր կշռող, որու պատրոյգ մը կպեր էր։

— Բարեկամ — ըսաւ նա Բորթոսին — այս տակառիկը պիտի տանուս, ես անոր պատրոյգը պիտի վառեմ, և զայն մեր թշնամեաց մէջ տեղը պիտի նետես. կարո՞ղ ես։

— Անօրէ՞ն — պատասխանեց Բորթոս։

Եւ փոքրիկ տակառը մէկ ձեռքով վերցուց։

— Վառէ։

— Սպասէ — ըսաւ Արամիս — որ ամենքը 'ի մի վայր հաւաքուին. և ապա, իմ Արամաղդս՝ արձակէ կայծակդ անոնց մէջ։

— Վառէ — յարեց Բորթոս։

— Եմ — շարունակեց Արամիս — պիտի երթամ մեր Պրագոնս

ներուն միանալու և անոնց պիտի օգնեմ որ նաւակը ծովն իջեցնեն։ Քեզ ծովեզերը պիտի սպասեմ. ուժգին նետէ և մեզի վազէ։

— Վառէ — ըսաւ Բորթոս վերջին անգամ մ'ևս։

— Իմացար ըսածս — հարցուց Արամիս։

— Տէր վկայ — ըսաւ Բորթոս ծիծաղելով, ծիծաղ մը զոր մարելու անգամ փորձ չէր փորձեր — երբ ինձ բան մը բացատրեն, կ'հասկընամ. գնա, և կրակն ինձի տուր։

Արամիս վառող աբեթը Բորթոսին տուաւ, որ իր թևը կարկառեց սեղմելու ձեռքը զաղած լինելուն։

Արամիս Բորթոսին թևը սեղմեց իր երկու ձեռքը և մինչև քարայրին ելքը քաշուեցաւ, ուր երեք թիավարները կ'սպասէին։

Բորթոս մինակ մնալով արիւաբար մօտեցաւ աբեթը պատրաստող։

Աբեթը՝ տկար կայծ մը, մեծ հրդեհի մ'առաջին շարժառիթը, մութին շողաց իբրև թռչուն ասուպ մը, ապա պատրաստող կից հասաւ, զայն բռնկցուց, և Բորթոս անոր բոյն արծարծեց իր շնչովը։

Մութը փոքր ինչ ցրուեր էր, և այս շողշողուն պատրաստին նշոյլովը, մէկ կամ երկու երկվայրկենի չափ՝ կարելի եղաւ առարկաները դիտել։

Կարճատև այլ փառայեղ տեսարան մ'եղաւ այս հսկայինը, որ գունատ, արիւնալի էր և իր կերպարանքը 'ի մթան վառող պատրաստին կրակովը կ'լուսաւորէր։

Զինուորները զանի տեսան, տեսան այս տակաւիկը զոր ձեռքը բռներ էր, և հասկրցան թէ ինչ պիտի պատահէր։

Այն ատեն՝ այս մարդիկ՝ որ արդէն ահուդողով լի էին անցած դացածին վրայ, և սարսափահար կ'մնային մտածելով թէ այնուհետև ինչ բաներ պիտի պատահէին, ամենքը միաբերան հողեվարի զօրանջիւն մ'արձակեցին։

Ոմանք խոյս տալու փորձ ըրին, բայց երրորդ վաշտակին հանդիպեցան որ ճամբան կ'գոցէր. ոմանք՝ մեքենապէս նշան առին պարապ հրացանով, այլք վերջապէս ծունր դրին։

Երկու երեք սպայք Բորթոսին պռատցին և խստացան զինքն աղատ թողուլ եթէ իրենց կեանքը բաշխէր։

Երրորդ վաշտակին տեղակալը կ'պոռաց որ հրացանները պարպեն, բայց պահակներն իրենց առաջն ունէին շուարեալ զինակիցներ որ Բորթոսի իբրև կենդանի պարիսպ մը կ'ծառայէին։

Ինչպէս ըսինք՝ Բորթոսի շունչէն աբեթին և պատրաստին վրայ տեսնուած լոյսն երկու երկվայրկեան տևեց միայն. բայց այս երկու երկվայրկենի մէջ՝ ահաւասիկ լուսաւորուած առարկաները. նախ՝ հսկայն որ խաւարին մէջ կ'մեծնար, ապա՝ իրմէ տասն քայլ հեռի, կոյտ մ'արիւնալի մարմիններ ճզմուած, փշրուած, որոց վրայ դեռ եւ կ'երևէր հողեվարի յետին սարսուռ մ'որ այդ ստուար կոյտը կ'սարսէր, ինչպէս որ յետին շնչառութիւն մը դիշերային մեռնող տձև հրէշի մը կողերը կ'բարձրացնէ։ Բորթոսի մէն մի շունչը՝ պատրաստը հրահրելով՝ այս դիակներու կոյտին կ'առաքէր ծծմբային հոտ մը՝ ծիրանեգոյն լայն շերտերով կարուած։

Այս գլխաւոր խմբէն զատ՝ որ ցիրուցան էին քարայրին մէջ՝ մահուան դիպուածէն կամ յանկարծահաս հարուածէ մը տապաստ ընկած, քանի մ'առանձին դիակներ, կարծես թէ իրենց բացուած վէրքով կ'սպառնային։

Արեան դիրտով քարացած այս հողին միջը՝ ախտը և շողուն կ'բարձրանային քարայրին մոյթերը, որոց նշոյլները՝ աւելի վառ՝ լուսաւոր մասերն ընդ առաջ կ'քշէին։

Եւ այս ամենը կ'երևէր պատրաստի մը զողզոջուն նշոյլով՝ որ տակաւիկ մը վառօղի հետ կ'հաղորդակցէր, այսինքն ջահի մը, որ անցեալ մահը լուսաւորելով՝ դալիք մահը կ'ցուցնէր։

Ինչպէս ըսինք՝ այս տեսարանս միայն մի քանի երկվայրկեան տևեց։ Այս կարճատև միջոցին՝ երրորդ վաշտակին մէկ սպան՝ հրացաններով զինեալ ութ զինուոր զումարեց, և անոնց հրամայեց որ մեծ բացուածքէ մը զանոնք պարպեն Բորթոսին դէմ։

Բայց այս հրամանն ընդունողներն այնքան կ'դողզողային որ այս արձակման վրայ երեք մարդ ընկան, և միւս հինգ գնդակները դացին կամարը գծելու սուլելով, երկիրն ակօսելու կամ քարայրին պատերը պեղելու։

Ահագին քրքիջ մը պատասխանեց այս որոտման, ապա հսկային ձեռքն երերայ, և ապա՝ թռչուն ասաղի մը պէս տեսնուեցաւ օդին մէջ կրակին հետը։

Տակառիկը՝ երսուն քայլ հեռու նետուելով՝ դիակներուն ալանջնէշէն անցաւ, և ուռնացող զինուորներու խմբի մը մէջ ընկաւ, որոնք փորի վրայ գետին ընկան։

Սպայն դիտեր էր օդին մէջ փալփլուն նշոյլը, ուզեց տակառին վրայ վազել և պատրոյդը կորզել վառօդին հասնելէն առաջ։

Անօգուտ անձնուիրութիւն. օդը հաղորդիչին վրայ գտնուող քոյը հրահրեր էր, պատրոյդը՝ որ՝ եթէ հանգարտ մնար՝ հինգ վայրկեան թերեւս վառէր, երսուն երկվայրկենի մէջ սպառեցաւ, և դժոխային կրակը պայթեցաւ։

Կառաղի մրրիկ, ծծմրի և քարակի սուլումներ, լափող կրակի աւերումները, պայթման ահեղ որոտումը, ահա ասոնք պատահեցան սոյն քարայրին մէջ՝ նոյն երկվայրկենին մէջ, քարայր մ՝որ սատաններու քարայրին կ՝նմանէր սոսկալի աղէտից կողմէ։

Ծայրերը կ՝ձեղքէին իրրև տապարին ներքև կտրուող եղևինեներու տախտակներ։ Քարայրին մէջէն կրակի, մոխի, բեկորներու արձակում մը սրայաւ, որ քանի բարձրանար կ՝ընդլայնէր։ Կայծքարէ պատեր կ՝ծուէին աւազին մէջ տապալելու, և նոյն իսկ աւազը, ցաւերու դործիք մ՝որ իր կարծր խաւերէն կ՝ժայթքէր և իր բիւրաւոր վիրաւորիչ հատերով մարդու երեսը կ՝ծակծկէր։

Ճիչ, դոռ, անէծք և ամէն կեանք ահագին Ճարճատման մէջ անհետ եղան. քարայրին առաջին երեք հատուածները փոս մը դարձան որ մի առ մի ընկան՝ իր ծանրութեան համեմատ՝ ամէն բուսական, հանքային կամ մարդկային բեկոր։

Ապա աւազն ու մոխիրը՝ աւելի թեթև լինելով, սկսան վար թափիլ ըստ կարգի, իրրև մոխրապոյն պատանք տարածուելով, և այս ողբալի թաղման վրայ ծխելով։

Եւ այժմ՝ փնտռէ այս կիզիչ դերեզմանին մէջ, այս ստորերկրեայ հրաբուխին մէջ, փնտռէ թագաւորին զինուորներն արծաթաՃամուկ կապոյտ զգեստներով։

Փնտռէ ոսկիով փալփլող սպաները, փնտռէ այն զէնքերն որով կ՝յուսային մաքառիլ, փնտռէ զիրենք նպաստող քարերը։ Փնտռէ զիրենք կրող հողը։

Մարդ մը միայն այս ամէն այնպիսի շփոթ, տպեղ քաոս մը դարձուց, աւելի սոսկալի քան քաոսն որ գոյութիւն ունէր Աստուած աշխարհն ստեղծելու խորհուրդը յղանալէն ժամ մ՝առաջ։

Երեք խորշերէն ոչ ինչ չմնաց, ոչ ինչ որ Աստուած իսկ կարող լինէր Ճանչել իր յատուկ գործը։

Իսկ Բորթոս այս վառօդի տակառիկը թշնամաց մէջ տեղ նետելէն ետև՝ Արամիսի խորհրդին համաձայն խոյս տուեր և յեսին խորշը հասեր էր, ուր բացուածքէն ներս կ՝մտնէին օդ, լոյս և արևը։

Ուստի հաղիւ թէ երրորդ խորշը չորրորդէն զատող անկիւնը դարձեր էր Բորթոս՝ որ իրմէ հարիւր քայլ հեռու դիտեց նաւակն որ ալեաց վրայ կ՝տատանէր։ անդ էին իր բարեկամները, անդ էր ազատութիւնը, անդ կեանքը յաղթանակէն ետք։

Եթէ իր վեց մեծ քայլերէն առնուր կամարէն դուրս պիտի գտնէր ինքզինքը։ Եթէ կամարէն դուրս նետուելով՝ երկու երեք ուժգին վազք ընէր նաւակին պիտի հասնէր։

Ցանկարծ զգաց որ իր ծունկերը կ՝կթոտին։ իր ծունկերը պարապ կ՝երևէին։ իր սրունքը կ՝թուլնային։

— Հօ, հօ — մրմնաց նա զարմանքով — ահա խոնջէնքս գիս կ՝պաշարէ, ահա չեմ կարող աւելի քալել։ Այս ինչ կ՝նշանակէ։

Բացուածքին մէջէն Արամիս զանի կ՝տեսնէր և չէր կարող հասկընալ թէ ինչու այնպէս կանգ առեր էր Բորթոս։

— Եկուր, Բորթոս — կ՝գոռար Արամիս — եկուր, շուտ եկուր։

— Ո՛հ — պատասխանեց հսկայն ձիգ մ՝ընելով որով իր մարմնոյն բոլոր ջիլերը լարեց — չեմ կարող քալել։

Այս խօսքն ըսելով՝ իր ծնկաց վրայ ընկաւ, բայց իր ուժեղ ձեռօք՝ ժայռերուն կռուեցաւ և ոտք ելաւ։

— Շուտ, շուտ — կրկնեց Արամիս դէպ 'ի ծովեղերը ծռելով, որպէս թէ իր թևերով Բորթոսը քաշել կ՝ուզէր։

— Ասասիկ եմ — մրմնաց Բորթոս իր բոլոր ոյժը ժողվելով որ քայլ մ՝ևս առնու։

— Ցանուն երկնից, Բորթոս, հասէր, հասէր, տակառն այժմ պիտի պայթի։

— Եկէք, տէր իմ — պոռացին Պրըգօնները Բորթոսին, որ կարծես թէ երազին մէջ կ'տարուբերէր։

Բայց ժամանակն անցեր էր. պայթիւնը հնչեց, երկիրը պատռեցաւ. մութն որ լայն ծերպերէն՝ օդը մթացուց, ծովը տեղն տուաւ այնպէս որ կարծես թէ կ'վանուէր քարայրէն ժայթքող կրակին շնչովը, իբր հսկայական հրեշի մը կոկորդէն. այն տեղատուութիւնը քսան կանգուն հեռու քշեց նաւակը, բոլոր ժայռերը հիմնէն ժայթքեցան՝ և իրրև երկաթի հարուածներուն ներքև՝ հատ ու կոտոր զատուեցան. գմբեթին մէկ մասն երկին թռաւ իրրև արագաշարժ լարերով. ծծմբին վարդագոյն և կանաչ հոտը, կաւային հալումներուն սև լաւան, իրարու ընդհարելով և մաքառելով մթային փառաւոր կամարի մը ներքև պահ մը մնացին. նոյնպէս տեսնուեցան ժայռի երկայն ողնայարներն որ առաջ երերացին, ապա ծռեցան և ապա ընկան հետզհետէ, ժայռը զոր պայթման բռնութիւնն անկարող եղեր էր իրենց դարաւոր խարխսէն սարսել ու խլել, զիրար կ'բարևէին ծանր ու դանդաղ ծերունիներու պէս, ապա կ'երկրպագէին իրենց աւաղուած ղերեզմանին մէջ 'ի սպառ դլորելով։

Այս ահագին ընդհարումը կարծես թէ Բորթոսի կորուսած ոյժը վրան բերաւ. ոտք ելաւ, այս ճշմարիտ հսկայն հսկաներու մէջ։ Բայց այն միջոցին որ ուրուականներու պէս շարժող այս կրկնացանկ հատաքարերէն խոյս կ'տար, ասոնք որ համակիչ օդահներով զիրար չէին բռնած՝ սկսան շառաչմամբ դլորիլ այս Տիտանին բոլորտիքը՝ որ կարծես թէ երկնքէն գահավիժեր էր այս ժայռերուն մէջ զոր իրեն դէմ արձակեր էին երկնուստ։

Բորթոս՝ այս երկայն պատառուածքէն զգաց որ ոտիցը ներքև հողը կ'շարժէր։ Իր լայն ձեռքն աջ ու ահեակ տարածեց դլորող ժայռերը հրելու։ Ահագին քարի հատորներ երկու կողմէն եկան իր ափերուն կոթնեցան. Բորթոս դլուխը ծռեց, և երբորդ քարի կոյտ մ'իր կռնակին վրայ ընկաւ։

Պահ մը Բորթոսի թևերը ծռեր էին. բայց Հերակլէսն իր բոլոր ոյժն ամփոփեց, և այն բանտին երկու պատերը՝ որու մէջ փակուեր էր, քիչ քիչ իրարմէ հեռացան և տեղի տուին։ Պահ մ'այս ժայռից շրջանակին մէջ քառսին հին հրեշտակին պէս ելեցաւ. բայց կողմնակի ժայռերն իրարմէ հեռացնելով՝ իր տոկուն ուսերուն վրայ ծանրացող քարին յենակէտը հեռացուց, և այս քարը բոլոր ծանրութեամբն ընկճելով՝ հսկայն ծնկացը վրայ կործանեց։ Կողմնակի ժայռերն որ պահ մը մեկուսացեր էին, իրարու մօտեցան և իրենց ծանրութիւնը յաւելին նախկին ծանրութեան, որ բաւական էր տասն մարդ ճղմել։

Հսկայն վար ընկաւ առանց օդնութեան կոչելու. վար ընկաւ Արամիսի քաջալերութեան և յուսադրութեան խօսքեր ընելով. վասն զի պահ մը, իր ձեռաց հզօր կամարակալին շնորհիւ, կարծեց թէ՝ Անկելատի նման, այս եռապատիկ բեռը պիտի կարենայ դղրդել։ Բայց փոքր առ փոքր, Արամիս տեսաւ որ քարանոյ դղրդել։ Բայց փոքր առ փոքր, Արամիս տեսաւ որ քարանոյ կոյտը կ'իջնէր. պահ մը Բորթոսի կարկամ ձեռքը, վերջին ճգամբ ձկտած թևերը՝ ծռեցան, ձիգ ուսերն 'ի վերջէ պատռելով ընկճեցան, և ժայռն ամենաբար սկսաւ վար իջնել։

— Բորթո՛ս, Բորթո՛ս — կ'գոչէր Արամիս մաղերը փետելով — Բորթո՛ս, ուր ես, խօսէ։

— Ա՛ստ, ա՛ստ — կ'մրմնար Բորթոս ձայնով մ'որ կ'նուաղէր — Համբերութի՛ւն, համբերութի՛ւն։

Հաղիւ այս վերջին խօսքն ասարտեց. Բորթոսի անկումն յառաջ եկած մղմամբ ծանրութիւնն աւելցաւ, ահագին ժայռը տապալ ընկաւ, միւս երկու քարերէն մղուելով որ միասին տապալեցան, և Բորթոսն ընկղմեց բեկեալ քարերու ղերեզմանի մը ներքև։

Արամիս իր բարեկամին շնչասպառ ձայնը լսելով, Արամիս ցատքը ցատկեր էր։ Պրըգօններէն երկուքն անոր հետևեցան լծակ 'ի ձեռին, մին բաւական էր նաւակը պահելու։ Արիասիրտ ասխյենին յեսին հնչունները փլատակներու մէջ զիրենք առաջնորդեցին։

Արամիս՝ իրրև քսան տարու երիտասարդ՝ շողշողուն, վեհապանծ, սրացաւ դէպ 'ի եռապատիկ կոյտը, և իր կնային ձեռաց պէս քնքուշ ձեռօք հրաշալի ուժգնութեամբ մը հաղիւ կարող եղաւ կճեայ ահագին տապանաքարին մէկ ծայրը բառնալ։

Այն ատեն՝ այս փոսին մթութեան մէջ ընդնշմարեց իր բարեկամին դեռ ևս փայլուն աչքը, և պահ մ՚այն քարակոյտը վերցընելովը Բորթոս շունչ առեր էր։ Իսկոյն երկու մարդիկ վազեցին և երկաթէ լծակին կառնեցան, իրենց եռապատիկ ոյժն ամբոխելով, չէ թէ զայն վեր բառնալու, այլ զայն բռնելու։ Ամէն ինչ անօգուտ եղաւ. երեք մարդիկ վշտագին աղաղակներ արձակելով խնարհեցան ծանրօրէն, և Բորթոսի հաստ ձայնը, տեսնելով որ ընդունայն կ՚Ճգնին գինքն ազատելու, հեգնական կերպով մ՚այս ծայրագոյն բառերը մրմնջեց որ մինչև շրթունքը հասան յետին շնչառութեամբը.

— Զափազանց ծանր։

Այնուհետև աչքը մթացաւ և գոցուեցաւ, երեսը գունատեցաւ, ձեռքը Ճերմկցաւ, և Տիտանը՝ յետին հառաչ մ՚արձակելով պառկեցաւ։

Իրեն հետ կ՚քնցաւ ժայռը զոր՝ մինչև անդամ իր հոգեվարքին ատեն՝ տակաւին վերցուցեր էր։

Երեք մարդկան ձեռքէն լծակը փախաւ, որ գնաց դերեզմանաքարին վրայ գլորեցաւ։

Յետոյ՝ Արամիս՝ հեալով, գունատ և Ճակատը քրտնաթոր, մտիկ ըրաւ, սիրտը Ճնշեալ, և պայթելու վիճակին մէջ։

Ապա ո՛չ ինչ։ Հսկայն յաւիտենական քուն կ՚քնանար դերեզմանին մէջ զոր Աստուած իր հասակին համեմատ յօրիներ էր։

ԺԲ

ԲՈՐԹՈՍԻ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ

Արամիս՝ լռին, սառնահար, երկչոտ տղու մը պէս գողդոջուն՝ այն քարին վրայէն ելաւ սարսռելով։

Քրիստոնեայ մը դերեզմաններու վրայ չքալեր։

Բայց թէև Արամիս կարող էր ոտքի վրայ կենալ, անկարող էր քայլել։ Կարծես թէ մեռած Բորթոսէն բան մ՚իր մէջը մեռած էր։

Իր Պրըգոնները գինքը շրջապատեցին. Արամիս թոյլ տուաւ որ գինքը գրկեն, և երեք նաւաստիները՝ զանի վեր վերցնելով՝ նաւակը փոխադրեցին։

Ապա նստարանին վրայ գնելով զանի, ղեկին մօտ՝ թիակները ձեռք առին՝ լաւ ևս համարելով առագաստները նաւարկելու ատեն բանալ, որոնք կարող էին գիրենք մատնել։

Լոկմարիայի այս հին քարայրին փլածոյ երեսին վրայ, այս տափակցած ծովեզրին վրայ՝ քարակոյտ մը միայն աչքի կ՚զարնէր։ Արամիս չկրցաւ իր ակնարկն անկից հեռացնել, և ծովու վրայ՝ հեռուէն՝ քանի բայը կ՚ելնէին, կարծես թէ սպառնալից և ամբարտաւան ժայռը կ՚կանգնէր, ինչպէս երբեմն կ՚կանգնէր Բորթոս, և դէպ երկին կ՚ամբառնար գեղաձիգաղ և անպարտելի գլուխ մը, բարեկիր և արիասիրտ բարեկամին նման, չորս հրացանակիրներուն մէջ ամենէն զօրաւորը, և սակայն ամենէն առաջ մեռնողը։

Տարօրինակ Ճակատագիր մ՚էր այս անվկանդ մարդոցը։ Ամենէն պարզասիրտն ամենէն նենգամտին հետ միացած, մարմնոյ ոյժը մտքի նրբութեամբ առաջնորդեալ, և այն վճռական ժամուն, երբ կորովութիւնը միայն կարող էր միտ ու մարմին ազատել, քար մը, ժայռ մը, անարդ և նիւթական բեռ մը կորովութեան վրայ յաղթանակ կ՚տանէր, և մարմնոյ վրայ գլորելով՝ անկից միտքը կ՚վանէր։

Արժանի՛ Բորթոս, ծնած էիր ուրիշ մարդկան օգնելու, միշտ պատրաստ էիր տկարներուն փրկութեան ոգի ընկնելու, որպէս թէ Աստուած այս բանին համար միայն ոյժ տուեր էր անոր, մեռնելու ատեն՝ կարծեր էր թէ Արամիսի հետ գրած գաշանոյ պայմանները կ՚կատարէ, բայց գաշինք մը զոր Արամիս ինքնավին խմբագրեր էր, և Բորթոս երբ տեղեկացաւ՝ անոր սոսկալի հնամեայ շարքութեան մասնակից լինելու համար էր միայն։

Աղնի՛ւ Բորթոս։ Ի՞նչ օգուտ ունեցան կամ կարասեօք լեցուն դղեակները, երէսով լեցուն անտառները, ձիերով գեղուն լճակ-

ները, և հարստութեամբ լի շտեմարանները. ինչ բանի կ'ծառայեն պէնաղարդ սպասաւորները, և անոնց միջև, Մուսքդոն, որ կ'պարծի քու կողմդ փոխանորդաբար իշխանութիւն վարելու համար։ Ո՛ աղնիւ Բորթոս, հոդածու կուտակիչ դանձերու. պէտք էր այդչափ աշխատիլ կեանքդ ճոխ ու պերճ դործելու համար, որպէս զի՝ ամայի ծովեղերքի մը վրայ, Ովկիանու թուչնոյ աղաղակներուն՝ դաս տարածուիս, խորտակեալ ոսկորներով պաղ քարի մը ներքև. պէտք էր վերջապէս, աղնիւ Բորթոս, այդչափ ոսկի դիզել որպէս զի մահարձանիդ վրայ խեղճ քերթողի մը կողմէ դրուած տապանագիր մը չունենաս։

Արիասի՛ւտ Բորթոս։ Անտարակոյս տակաւին կ'ապրի մոռցուած, կորուսեալ այն ժայռին ներքև զոր ամայի դաշտավայրին հովիւները յաղթ դամբանական կոթող մը (dolmen) կ'համարին։

Եւ այնքան զովագին հաւամրցիներ, Ովկիանոսի լեղի հովէն դդուեալ այնքան մամուռներ, այնքան երկայնատև լօտեր հողին կցեցին գերեզմանն որ անցորդն երբէք չէ կարող երևակայել թէ այնպիսի քարաժայռի հատոր մը կարող եղած է մահկանացուի մ'ուսը բառնալ։

Արամիս միշտ դունատ, միշտ սառնահար, հոգին 'ի բերան, Արամիս նայեցաւ արևուն մինչև յետին ճառագայթին մարիլը, հորիզոնին վրայ երևցող ծովեղերը։

Աւելորդապաշտ Պրըդօնները դողդողալով անոր նայեցան։ Այս լռութիւնը մարդկային չէր, այլ արձանային։

Սակայն երբ երկինքը սկսաւ մթնալ՝ նաւակն սկսեր էր արդէն իր փոքրիկ առագաստը պարզելով՝ որ քամիին շնչէն կ'ուռէր, և ծովեղերէն կ'հեռանար, Կասքօնիայի ծովածոյն ուղղուիլ, որ այնքան սոսկալի էր փոթորիկներովը։

Բայց առագաստը պարզելէն ղրեթէ կէս ժամ ետքը՝ թիավարները՝ թողլով իրենց դործը, իրենց նստարաններուն վրայ ծռեցան, և իրենց ձեռօք ակնապահ մ'ընելով՝ սկսան իրարու ցոյց տալ՝ սպիտակ կէտ մ'որ հորիզոնին վրայ կ'երևէր, այնպէս անշարժ որպէս է ըստ երևոյթին որոր մ'որ ալեաց աննշմարելի տատանումն կ'որորի։

Սակայն անվարժ աչաց անշարժ երևցած կէտը նաւորդին վարժ աչաց արագընթաց կ'թուէր. կոհակին վրայ մնայուն երևցածն ալեաց վրայ կ'սահէր։

Նաւաստիք՝ բաւական ատեն դիտելով որ ինչ խորին թմրութեան մէջ ընկղմեր էր մեծաւորը, չհամարձակեցան զանի արթնցընել, և բաւական համարեցին ցած և անհանգիստ ձայնով իրենց ենթադրութիւններն իրարու հաղորդել։

Արդարև Արամիս՝ որ այնքան արթուն, այնքան գործունեայ էր սովորաբար, Արամիս՝ որու լուսանի նման աչքը՝ անդուլ կ'հսկէր և գիշերայն լաւ ևս կ'տեսնէր քան թէ ցորեկը, Արամիս իր հոգւոյ յուսահատութեամբը կ'ննջէր։

Այսպէս անցաւ ժամ մը, երբ փոքր առ փոքր մութը կոխեց. բայց նոյն միջոցին հեռուն երևցող նաւն այնչափ մօտեցաւ նաւակին, որ երեք նաւաստիներէն մին՝ Կոյէնէկ փութաց ըսելու բաւական բարձր ձայնով.

— Տէր իմ, մեզ կ'հալածեն։

Արամիս բան մը չպատասխանեց. նաւը միշտ կ'յառաջանար։

Այն ատեն՝ երկու նաւաստիները՝ Իվ նաւատիրոջ հրամանին վրայ, առագաստն իրենց գլխուն վար առին, որպէս զի այս կէտը միայն՝ որ ալեաց երեսը կ'երևէր, հալածող թշնամւոյն աչքին զարնելով իր շաւիղը չուղղէ։

Իսկ վրայ հասնող նաւը՝ ընդ հակառակն՝ երկու ուրիշ փոքրիկ առագաստներ աւելցնելով կայմերուն ծայրը՝ իր ընթացքն աւելի ևս փութացուց։

Դժբաղդաբար՝ տարւոյն ամենէն գեղեցիկ և ամենէն երկայն օրերն էին, և լուսինը՝ իր բոլոր պայծառութեամբը, սոյն չաբաշուք օրուան կ'յաջորդէր։ Նաւը՝ որ նաւակը կ'հալածէր, հովը յետուստ ընդունելով, դեռ ևս կէս ժամու վերջալոյս ունէր, և ընդ աղօտ գիշեր մը։

— Տէ՛ր իմ, տէ՛ր իմ, կորանք — ըսաւ նաւատէրը — նայեցէք, մեզ կ'տեսնեն թէև մեր առագաստները վար առինք։

— Այդ զարմանք չեն — մրմռաց նաւաստիներէն մին — քանի որ կ'ըսեն թէ՝ սատանային օգնութեամբը, քաղաքներու մարդիկ

այնպիսի գործիներ հնարած են որ մեռէն նոյնչափ հեռուէն, յեր-
բեկն ինչպէս նաև գիշերը շատ լաւ կ'տեսնեն։

Արամիս նաւակին մէկ անկիւնէն խոշորացոյց մ'առաւ, լռելեայն
նաւուն ուղղութեամբ շտկեց, և նաւաստիին անցընելով ըսաւ.

— Ահա — ըսաւ — հիմակ նայէ։

Նաւաստին վարանեցաւ։

— Հանդարտէ — ըսաւ եպիսկոպոսը — բնաւ մեղք չկայ. և
եթէ մեղք կայ, ես իմ վրայ կ'առնում։

Նաւաստին խոշորացոյցն իր աչքին տարաւ, և աղաղակ մ'արձակեց։

Կարծեր էր թէ նաւը՝ որ իրեն գնդրնկեցի չափ հեռու կ'երևէր՝ հրաշքով մը և ոստում մ'ընելով՝ յանկարծ ահագին ճամբայ մ'առեր էր։

Բայց երբ գործին աչքին հեռացուց՝ տեսաւ որ նոյն պահուն նաւուն ըրած ճամբէն զատ՝ ճիշտ նոյն հեռաւորութեան մէջ կը գտնուի։

— Այսպէս — մրմռաց նաւաստին — կ'տեսնենք զանոնք ինչպէս որ անոնք մեզ կ'տեսնեն։

— Մեզ կ'տեսնեն — ըսաւ Արամիս։

Եւ մի և նոյն անդրդուելի վիճակին ընկաւ։

— Ի՞նչպէս, մեզ կ'տեսնե՞ն — ըսաւ Իվ նաւաստիը։ — Անկարելի՛ բան։

— Ահա, վարպետ, դուք ալ նայեցէք — ըսաւ նաւաստին։

Եւ անոր անցուց խոշորացոյցը։

— Գերապատիւ Եպիսկոպոսը կ'հաւատա՞ — հարցուց նաւաստիրը — որ այս բանին մէջ սատանային մասը չկայ։

Արամիս ուսերը բարձրացուց։

Նաւաստիրն իր աչքին տարաւ խոշորացոյցը։

— Ո՛հ, տէր իմ — ըսաւ — հրաշք կայ բանին մէջ. ահա քովս են. կ'երևի ինձ որ անոնց պիտի դպիմ։ Գէթ քսան հինգ հոգի են։ Ա՛հ, յառաջակողմը կ'տեսնեմ նաւապետը։ Ասոր պէս խոշորացոյց մ'ունի ձեռքն և մեզի կ'նայի. . . . : Ա՛հ, կ'գառնայ, հրաման մը կ'տայ. ընդ առաջ կ'մղէ թնդանօթ մը. զայն կ'լե-

ցընեն, մեր վրայ կ'շտկեն. . . . : Գո՛ւթ, մեր վրայ կ'քալեն։

Եւ մեքենական շարժմամբ՝ նաւաստիրը խոշորացոյցը հեռացուց աչքէն, և առարկաները՝ հորիզոնին վրայ դառնալով՝ իրենց ճշմարիտ գրից մէջ երևցան աչքին։

Տակաւին նաւը գրեթէ մէկ մղոնի չափ հեռու էր, բայց նաւաստիրոջ յայտնած հրամանը նոյնպէս ճշմարիտ էր։

Առագաստներուն ստորև թեթև մոյին ամպ մ'երևցաւ, իրենցմէ աւելի կապոյտ՝ և նորածիլ ծաղկան մը պէս բացուելով, ապա փոքրիկ նաւակէն գրեթէ մղոն մը հեռու՝ տեսնուեցաւ ռումբն որ քանի մը կոհակներու վրայ սահելով՝ ծովին մէջ ակոս մը փորեց և սոյն ակոսին ծայրն անհերևոյթ եղաւ, բոլորովին անձնաս մնալով՝ ինչպէս անվնաս կ'մնայ քար մ'որ աշակերտի մը ձեռքէ դեպին վրայ կ'սահի ոստոստելով։

Այս ոչ միայն սպառնալիք այլ և աղղարարութիւն մ'էր։

— Ի՞նչ ընելու է — հարցուց նաւաստիրը։

— Մեզ հիմակ պիտի ընկղմին — ըսաւ Կոյենէկ — մեր մեղայ թողութիւն տուէք, գերապատիւ տէր։

Եւ նաւաղն եպիսկոպոսին առջև ծունր դրաւ։

— Կ'մռնաք որ ձեզ կ'տեսնեն — ըսաւ եպիսկոպոսը։

— Իրաւ է — ըսին նաւորդներն իրենց տկարութեան վրայ ամենթապարտ մնալով։ — Հրաման տուէք, տուէք, տէր իմ, պատրաստ ենք ձեզի համար մեռնելու։

— Սպասեցէք — ըսաւ Արամիս։

— Ի՞նչպէս, սպասե՞նք։

— Այո՛, միթէ չէք տեսներ, ինչպէս որ քիչ մ'առաջ կ'ըսէիք, որ՝ եթէ խոյս տալու փորձ փորձենք, մեզ պիտի ընկղմեն։

— Բայց կարելի է — ըսաւ նաւաստիրը համարձակութեամբ — կարելի է որ մթութեան շնորհիւ՝ պիտի կարենանք անոնց ձեռքէն պրծիլ։

— Ո՛հ — ըսաւ Արամիս — անտարակոյս յունական հաւ պիտի ունենան մեր և իրենց ճամբան լուսաւորելու համար։

Եւ նոյն պահուն՝ որպէս թէ փոքրիկ նաւն Արամիսի կոչմանն պատասխանել կ'ուզէր, ուրիշ մոյին ամպ մը ծանրօրէն երկին

եղաւ, և այս ամպին ծոցէն բոցավառ նետ մը ժայթքեց որ բոլորակ մը ղծելով ծիածանի նման, ծուխ ընկաւ, և անոր մէջ շարունակեց այրել քառորդի չափ տրամագիծ ունեցող հեռաւորութիւն մը լուսաւորելով։

Պրըգօններն իրարու նայեցան զարհուրելով։

— Կ'նայիք — ըսաւ Արամիս — որ լաւագոյն է անոնց սպասել։

Թիակները նաւաստիներուն ձեռքէն սահեցան՝ և փոքրիկ նաւակը՝ յառաջանալէ դադրելով՝ կոհակներուն վրայ որորելով անշարժ մնաց։

Գիշերը կ'հասնէր, բայց նաւն ալ անդադար կ'յառաջանար։

Կարծես թէ մթութեան հետ իր ընթացքը կ'կրկնապատկէր։ Այն ատեն՝ ինչպէս արիւնաներով վզով անդղ մ'իր բոյնէն դուրս կ'հանէ, նոյնպէս յունական սոսկալի հուրն իր կողերէն կ'սլանար և Ովկիանոսի մէջ հրավառ ձիւնի պէս իր բոցերը կը թափէր։

Վերջապէս հրացանընկեցի չափ մօտեցաւ։

Նաւուն բոլոր մարդիկը կամրջին վրայ էին՝ զէն 'ի թև, թնդանօթաձիգները թնդանօթներուն մօտ, պատրոյզները կ'այրէին։

Այնպէս իմն կ'երևէր թէ պատերազմիկ ֆրէգատի պիտի մօտենային և աւելի շատոր նաւազի մը դէմ պիտի մաքառէին, և չէ թէ չորս հոգիով ուղեալ մակոյկի մը։

— Անձնատուր եղէք — գոչեց նաւուն հրամանատարն՝ իր փողովը։

Նաւաստիներն Արամիսի նայեցան։

Արամիս գլխի նշմայր մ'ըրաւ։

Իվ նաւատէրն ակիշի մը ծայրը սպիտակ ձորձ մը ծածանեց։

Այս ալ դրօշակ պարզելու ձև մ'էր։

Նաւն իբրև արաղընթաց ձի կ'յառաջանար։

Վերստին յունական փամփուշտ մ'արձակեց, որ փոքրիկ նաւակէն քսան քայլ հեռու եկաւ ընկաւ, և այնպէս լուսաւորեց ղայն որ հրատապ արևու մը ճառագայթն իսկ չպիտի կարենար լուսաւորել։

— Եթէ ամենաթեթև ընդդիմութեան նշան մը տեսնէք, կրակ ըրէք — գոչեց հրամանատարը։

Զինուորները վար իջեցուցին իրենց հրացանները։

— Բայց արդէն ըսինք որ անձնատուր պիտի լինինք — գոչեց Իվ նաւատէրը։

— Կենդանի՛, կենդանի՛, նաւապետ — գոչեցին քանի մը տաք գլուխ նաւաստիներ — պէտք է կենդանի բռնել զանոնք։

— Լաւ, կենդանի՛ բռնենք — ըսաւ նաւապետը։

Ապա Պրըգօններու կողմը դառնալով.

— Ձեր կեանքն անվնաս պիտի մնայ, բարեկամներ — գոչեց նա — Պ. Հէրպլէյ ասպետին կեանքէն զատ։

Արամիս անհնարելի կերպով դող եկաւ։

Պահ մ'իր աչքն Ովկիանոս խորերը սևեռեց, որու երեսը յունական կրակին յետին նշոյլներով դեռ ևս կ'լուսաւորուէր, նշոյլներ որ կոհակներու կողերէն կ'սահին, ցոյնքի պէս կատաբներու վրայ կ'ոստոստէին, և աւելի մութ, աւելի խորհրդաւոր և աւելի սոսկալի կ'դարձնէին իրենց ծածկած անդունդները։

— Կ'լսէք, տէր իմ — ըսին նաւաստիները։

— Այո՛։

— Ի՞նչ հրաման ունիք։

— Ընդունեցէք։

— Հապա դո՞ւք, տէր իմ։

Արամիս աւելի առաջ ծռեցաւ, և իր սպիտակ ու նուրբ մատներուն ծայրով խաղաց ծովուն կանաչկեկ ջրովը, որու՝ իբրև բարեկամի մը կ'ժպտէր։

— Ընդունեցէք — կրկնեց նա։

— Կ'ընդունինք — կրկնեցին նաւաստիները — բայց ի՞նչ գրաւական պիտի ունենանք։

— Աղատորդւոյ մը խօսքը — ըսաւ սպայն։ — Իմ աստիճանիս և անունս վրայ կ'երդնում որ Պ. Հէրպլէյէն զատ ամենքն անվնաս պիտի արձակուին։ Ես Պոմն ֆրէկաթին տեղական եմ և անունս է Լուի Կոստանդ աը Բէլսինի։

Արամիս՝ որ արդէն գէպ 'ի ծով ծռած էր, որ արդէն նաւակն կիսովին դուրս ընկած էր, Արամիս արագ շարժումով մը գլուխը վերցուց, ոտք եկաւ կանգուն, և հրալիր աչքը, և ժպիտ 'ի շուրթ՝

— Նեռանցէք ելնարանը, պարոններ — ըսաւ նա որպէս թէ ինք լինէր նաւուն հրամանատարը։

Շուտ մը հնազանդեցան։

Այն ատեն Արամիս՝ չուանէ բաղրիքը բռնելով՝ ամենէն առաջ վեր ելաւ. բայց՝ ինչպէս որ կ'յուսային՝ Արամիս փոխանակ իր գլխոյ վրայ ահ ու սարսափ յայտնելու, նաւաղին զարմանքը մեծ եղաւ երբ տեսան որ Արամիս անյողդողդ քայլով հրամանատարին կողմը կ'գնէր, անոր ակնապիշ կ'նայէր, և անոր խորհրդաւոր ու անյայտ նշան մը կ'ընէր, այնպէս որ սպայն այս նշանը տեսնելուն գոյնը նետեց, գողաց և ճակատը խոնարհեցուց։

Այն ատեն Արամիս առանց բառ մ'ըսելու ձեռքը մինչև հրամանատարին աչաց առջև վերցուց և անոր ցոյց տուաւ մատանի մը խորշն որ ձախ ձեռքին մատանւոյ մատը գրեր էր։

Եւ այս նշանն ընելով՝ Արամիս՝ պաղ վեհափառութեան կերպարան ցոյց տալով՝ լոյն և ամբարտաւան ընթացք մը բռներ էր և կարծես թէ կայսր մ'էր որ իր ձեռքը համբուրելու համար կ'կարկառէր։

Հրամանատարը՝ որ պահ մ'իր գլուխը վեր բարձրացուցեր էր, երկրորդ անգամ խոնարհութիւն ըրաւ խորին յարգանաց նշանները ցոյց տալով։

Յետոյ ինքն ալ իր ձեռքը դէպ 'ի նաւուն տնեակն երկարելով մէկդի կեցաւ որպէս զի թողու որ Արամիս առջևէն անցնի։

Երեք Պրըգոնտերն որ իրենց եպիսկոպոսին ետևէն վեր ելեր էին, ապշած իրարու դէմք կ'նայէին։

Բոլոր նաւաղը լուռ ու մունջ կ'դիտէր։

Հինգ վայրկեան ետքը՝ հրամանատարը՝ փոխ-տեղակալը կոչեց, որ իսկոյն վեր ելաւ, և անոր հրամայեց որ նաւը դէպ 'ի Քօրսնը ուղղէ։

Մինչդեռ այս հրամանը կատարելու վրայ էին՝ Արամիս կամրջին վրայ երեցաւ և եկաւ առագաստակալին վրայ նստաւ։

Գիշերը հասեր էր, լուսինը դեռ երևցած չէր. և սակայն Արամիս ակնապիշ կ'նայեր Պէլ-Իսլի կողմը։ Այն ատեն Իվ հրահրամանատարին մօտեցաւ, որ իր պաշտօնավայրը դարձեր էր նաւուն ետևը, և մեղմ ու շատ հեղիկ ձայնով մը հարցուց,

— Նաւապետ, ինչ ճամբայ կ'հետեւինք։

— Նորին Գերազանցութեան հաճելի եղած ճամբան կ'հետեւինք — պատասխանեց պաշտօնաւորը։

Արամիս նաւուն շրջանակին վրայ յենած անցուց նոյն գիշերը։

Իվ անոր մօտենալով՝ հետեւեալ օրը գիտեց որ այն գիշեր շատ տամուկ եղած պիտի լինէր. վասն զի եպիսկոպոսին կռթնած փայտն իրրև ցօղէ թրջուած կ'երևէր։

Ո՛ գիտէ, կարելի է որ այս ցօղը, Արամիսին աչքերէն առաջին անգամ հոսած արտասուքն էր։

Բարի՛ Թորթոս, քան այս տապանագիրն ուրիշ ինչ մեծ տապանագիր կարող էիր ունենալ։

ԺԳ

Պ. ԿԻՎՐԻ ՊԱՀՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Տ'Արգանեան վարժած չէր բնաւ իր կրած ընդդիմութեանց։ Սաստիկ զայրացած դարձաւ 'ի Նանդ։

Այս կորովամիտ մարդուն զայրոյթն ուժգին յարձակման կը փոխուէր, որու մինչև այն ատեն շատ քիչ մարդիկ, թէ թագաւորներ լինէին, և թէ հսկաներ, անկարող էին դիմակալելու։

Տ'Արգանեան՝ զայրագին՝ գղեակը գիմաց շիտակ և խնդրեց որ թագաւորին խօսի։ Առաւօտեան ժամը եօթ կրնար լինիլ, և թագաւորը՝ Նանդ գալէն 'ի վեր, վաղայարոյց էր։

Բայց մեղմ արդէն ծանօթ փոքրիկ ներքսպատիթը հատնելով՝ տ'Արգանեան Պ. Կեվրը գտաւ, որ զինքը մեծ քաղաքավարութեամբ կեցուց, խնդրելով որ բարձրաձայն չխօսի, որպէս զի թագաւորին քունը չվրդովէ։

— Թագաւորը կ'քնանայ — ըսաւ տ'Արգանեան։ — Ուրեմն պիտի թողում որ քնանայ։ Ժամը քանիին կ'յուսաս որ արթննայ։

— Ո՛հ, գրեթէ երկու ժամէն. թագաւորը բոլոր գիշերը հսկեց։

Տ՝Արդանեան իր գլխարկն առաւ, Պ. Կէվլին ողջունեց և իր բնակարանը դարձաւ։

Ժամն լինն ու կէսին վերստին դղեակն եկաւ. անոր ըսին որ Թագաւորը նախաճաշիկ կ՝ընէր։

— Այդ իմ ուզած բանս է — պատասխանեց նա — Թագաւորին պիտի խօսիմ կերակուր ուտելու ժամանակ։

Պ. Պրիէն տ՝Արդանեանի հասկըցուց որ Թագաւորն իր ճաշին ժամանակ չէր ուզեր մարդ ընդունիլ։

— Բայց — ըսաւ տ՝Արդանեան ծուռ ծուռ Պրիէնի նայելով — կարելի է չգիտես, պարոն քարտուղար, որ ազատ եմ ամենուրեք ամէն ժամու մուտ ունենալ։

Պրիէն հրամանատարին ձեռքը բռնեց մեղմիկ և անոր ըսաւ.

— Զէ թէ՝ի Նանդ, սիրելիդ իմ Պ. տ՝Արդանեան. Թագաւորը՝ այս ուղևորութեանը մէջ՝ իր անձնական կարգը բոլորովին փոխեց։

Տ՝Արդանեան հանդարտելով՝ հարցուց թէ Թագաւորն իր նախաճաշին երբ կ՝ելնէր։

— Զգիտցուիր — ըսաւ Պրիէն։

— Ի՞նչպէս չգիտցուիր։ Ի՞նչ ըսել կ՝ուզես։ Մի՞թէ չգիտես թէ Թագաւորը քանի ժամ կ՝անցընէ իր կերակուրին համար։ Սովորաբար ժամ մը կ՝անցընէ, և՝ եթէ այնպէս համարինք թէ Լուարի օդն ախորժակ կ՝բանայ, ժամ ու կէս պէտք է որ տանք. կարծեմ թէ այս բաւական է, ուստի այս տեղ պիտի սպասեմ։

— Ո՛հ, Պ. տ՝Արդանեան, հրաման ունինք որ այս նրբաղաքին մէջ մարդ մ՝անգամ չթողունք. այս հրամանը կատարել տալու համար կ՝պահեմ։

Տ՝Արդանեանի գլուխն երկրորդ անգամ տարցաւ։ Շուտ մը դուրս ելաւ, որպէս զի սրամտութեամբ ծուռ քայլ մ՝ընելով գործն աւելի չպզտորէ։

Երբ դուրս ելաւ՝ սկսաւ մտածել։

— Թագաւորը — ըսաւ — չուզեր զիս ընդունիլ, այս բացայայտ է. այս երիտասարդը բարկացած պիտի լինի. ըսելիք խօսքերէս կ՝երկնչի։ Այո՛, բայց այս պահուս Պէլ-Իսլը կ՝պաշարեն և կարելի է կ՝բռնեն և երկու բարեկամներս կ՝սպաննեն... : Խե՛ղճ Բորթոս։ Իսկ վարպետ Արամիսին գալով, չափազանց հնարագէտ մարդ է, և իր մասին հանդարտ եմ... բայց, ո՛չ, ո՛չ, Բորթոս տակաւին ապիկար չէ, և Արամիս ալ զառամեալ անմիտ ծերունի մը չէ։ Մին իր թեւերովն ու միւսն իր երևակայութեամբ Նորին Վեհափառութեան զինուորներուն բաւական նեղութիւն պիտի տան անշուշտ։ Ո՞վ գիտէ, թէ այս երկու քաջերը՝ Նորին Ամենաբրիստոնեայ Վեհափառութեան 'ի խրատ՝ Սէն-Ժերվէի պէս փոքրիկ ամրոց մը շինեն... զէշ չլինիր... չեմ յուսահատիր։ Թնդանօթ և պահապան զօրք ունին։

« Սակայն — շարունակեց տ՝Արդանեան գլուխը ցնցելով — լաւ ևս կ՝լինէր այս կուիւը դադրեցնել։ Իմ մասիս միայն՝ անտարակոյս Թագաւորին կողմէ ոչ ծանր ընթացք և ոչ մատնութիւն պիտի կրէի. բայց բարեկամներուս սիրոյն՝ կշտամբանք, նախատինք ամէն բան տանելու մտադիր եմ։ Արդեօք Պ. Գօլպէրին տունն երթամ — վրայ բերաւ նա։ — Ահա մարդ մ՝որու վախ ազդելու սովորութիւնս ձեռք առնլու պիտի պարտաւորիմ։ Երթանք՝ Պ. Գօլպէրի տունը։

Եւ տ՝Արդանեան ճամբայ ելաւ արիաբար։ Անդ իմացաւ որ Պ. Գօլպէր Նանդի դղեակն է և Թագաւորին հետ կ՝աշխատի։

— Զարմանք — գոչեց նա — ահա Նորին դարձան այն ժամանակներն երբ ճամբաները կ՝չափէի, Պ. Դրէվիլի տունէն պարոն կարտինալին բնակարանէն՝ Թագուհւոյն պալատը, և Թագուհւոյն պալատէն՝ Լուի ԺԳի բնակարանը դնալով։ Իրաւունք ունին մարդիկ ըսելու որ ծերանալով երախայ կ՝դառնանք։ Ուրեմն դղեակն երթանք։

Եւ իրօք դղեակը վերադարձաւ։ Պ. Լիօն դուրս կ՝ելնէր։ Իր երկու ձեռքը տ՝Արդանեանի ձեռքը թոթվեց և անոր իմացուց թէ Թագաւորը բոլոր իրկուն, բոլոր գիշերն իսկ պիտի աշխատի, և թէ հրաման տուած է որ մարդ մը ներս չընդունին։

— Եւ ոչ իսկ հրամանատարն որ հրաման կ՝ընդունի — գոչեց տ՝Արդանեան։ — Այդ չափը կ՝անցնի։

— Եւ ոչ իսկ հրամանատարը — ըսաւ Պ. Լիօն։

— Քանի որ այդպէս է — պատասխանեց տ՚Արդանեան մինչեւ սրան խօսը վերաւորուելով — քանի որ հրացանակրաց հրամանատարը՝ որ միշտ Թագաւորին ենջարանը մտած է, չէ կարող այսուհետեւ դահլիճը կամ սենեակաունը մտնել, ասել է թէ Թագաւորը մեռած կամ իր հրամանատարն երեսէ ձգած է: Այս երկու պարագային մէջ ալ իրմէ պէտք չունի: Շնորհ ըրէ ուրեմն ներս մտնելու, Պ. Լիօն, որ այժմ շնորհ ունիս արքային մօտ, և պարզապէս անոր ասելու որ իմ հրաժարականս կ՚ներկայացնեմ:

— Տ՚Արդանեան, զգոյշ այլիր — գոչեց Լիօն:

— Գնա, յանուն մեր բարեկամութեան:

Եւ զանի դէպ՝ ի դահլիճը մղեց:

— Ահա կ՚երթամ — ասաւ Պ. Լիօն:

Տ՚Արդանեան ներքագաւթին մէջ երթեւեկելով կ՚սպասէր:

Լիօն դարձաւ:

— Լաւ ուրեմն, ինչ ասաւ Թագաւորը — հարցուց տ՚Արդանեան:

— Թագաւորը շատ աղէկ ասաւ — պատասխանեց Լիօն:

— Շատ աղէկ ասաւ մի — գոչեց տ՚Արդանեան անհնարին զայրոյթով — այսինքն կ՚ընդունի հրաժարականս: Լաւ, ահա այժմ ազատ եմ: Քաղաքաւոր եմ, Պ. Լիօն, ՝ի կրկին տէստութիւն: Մնաք բարեաւ դղեակ, ներքագաւթի, նախասենեակ. քաղաքաւոր մ՚եմ որ վերջապէս ազատ շունչ պիտի առնում, մնաք բարեաւ:

Եւ աւելի ևս չսպասելով՝ հրամանատարը պատշգամէն դուրս ցատկեց այն սանդղին վրայ ուր Կուրվիլի նամակին կտորները դտեր էր: Հինգ վայրկեան ետք՝ կ՚մտնէր պանդոկը՝ ուր դղեակը բնակարան ունեցող ամէն մեծ սպաներուն սովորութեան համեմատ, քաղաքը սենեակ մը բռներ էր:

Բայց անդ՝ իր սուրն ու վերարկուն թողլու տեղ, հրացանակներ առաւ, իր դրամը կաշիէ մեծ քսակի մը մէջ դրաւ, դղեկին ախոռը մարդ ղրկելով իր ձիերը բերել տուաւ և հրաման տուաւ որ Վան հասնին պիշերայն:

Ամէն ինչ իր փափաքին համեմատ կատարուեցաւ: Երեկոյեան ժամն ութին՝ ձին կ՚աշտանակէր, երբ Պ. Կէվը տասն երկու պահակաց ղլուխն անցած երեցաւ պանդոկին առջեւ:

Տ՚Արդանեան աչքին ծայրովն ամէն բան կ՚տեսնէր. ՝ի հարկէ տեսաւ այս տասն երեք մարդիկն ու տասն երեք ձիերը, բայց բան մը չտեսնելու զարկաւ և իր ձին մարակելը շարունակեց: Կէվրն անոր վրայ քալեց:

— Պ. տ՚Արդանեան — ասաւ նա բարձրաձայն:

— Է՛հ, Պ. Կէվը, բարի իրիկուն:

— Կ՚երևի թէ ձի կ՚հեծնես:

— Զէ թէ կ՚հեծնամ, այլ հեծած եմ, ինչպէս որ կ՚տեսնես:

— Քեզ հանդիպելուս ուրախ եմ:

— Մի՞թէ ինձ կ՚փնտռէիր:

— Իրաւի, կ՚փնտռէի:

— Գրաւ կ՚դնեմ որ Թագաւորին կողմէ կ՚փնտռես ինձ:

— Անտարակոյս:

— Ինձի պէս, երբ երկու երեք օր առաջ Պ. Գուրգէն կ՚փնտռէր:

— Ո՛հ:

— Օ՛ն, ինձի նաղմանը մի ըներ խնդրեմ. պարապ բան է. բայէ ՝ի բաց ասէ, շուտ ասէ ինձ որ ինձ ներքակալելու համար է:

— Քե՛զ ներքակալեմ. լաւ, լաւ, ոչ:

— Լաւ ուրեմն, ինչու համար տասն երկու ձիաւորով վրաս կ՚դաս:

— Պահնորդութիւն կ՚ընեմ:

— Գէշ չէ: Եւ այս պահնորդութեան ատեն ինձ կ՚բռնես, այնպէս չէ՞:

— Քեզ չեմ բռներ, քեզ կ՚պտնեմ և կ՚աղաչեմ որ ինձի հետ դաս:

— Ո՞ր:

— Թագաւորին պալատը:

— Լաւ — պատասխանեց տ՚Արդանեան խեղկատակ ձայնով մը: — Ուրեմն Թագաւորն ուրիշ գործ չունի՞:

— Կ՚աղաչեմ, հրամանատար — ասաւ Պ. Կէվը հրացանակրին մեղմիկ — վրադ խօսք մի բերեր. այս մարդիկ քեզ մահի կ՚ընեն:

Տ՚Արդանեան սկսաւ ծիծաղիլ և պատասխան տուաւ:

— Քալեցէք: Ձերքակալեալ մարդիկ առաջին վեց և յետին վեց պահակաց մէջ կ՚գտնուին:

— Բայց որովհետև քեզ չեմ ձերբակալեր — ըսաւ Պ. Կէվը — իմ եաւէս պիտի քալես, ինչրեմ։

— Լաւ ուրեմն — ըսաւ տ՝Արդանեան — այդ աղջոր ընթացքմ՝է, դուքս, և իրաւունք ունիս, վասն զի եթէ երբէք ես ալ պահնորդութիւն ընէի քաղքի սենեկիդ բոլորտիքը, մարդավարութեամբ պիտի վարուէի հետդ, ազատորդի խօսքս վկայ։ Այժմ ուրիշ շնորհ մը պիտի հայցեմ։ Թագաւորն ինչ կ՝ուզէ։

— Ո՛հ, Թագաւորը կասաղած է։

— Լաւ, Թագաւորն որ կասաղելու նեղութիւնն առեր է, հանդարտելու նեղութիւնն ալ պիտի առնու։ Միայն, կ՝երդնում որ այդ կասաղութեան պատճառաւ չպիտի մեռնիմ։

— Ո՛չ, բայց . . . ։

— Բայց այն խեղճ Գուքէին քովը պիտի ղրկեն զիս Թերեսս։ Անօրէն, վեհանձն մարդ մ՝է նա։ Ընկերութեամբ պիտի ապրինք, և շատ հանդարտ, հաւատի եղիր։

— Աւասիկ՝ հասանք — ըսաւ դուքսը։ — Հրամանատար, կ՝աղաչեմ, Թագաւորին հետ հանդարտ խօսէ։

— Ա՛հ, ճշմարիտը, ո՛րքան քաջասիրտ ես ինձի հետ, դուքս — ըսաւ տ՝Արդանեան Պ. Կէվրին նայելով։ — Ըսեր էին ինձ որ պահակներդ հրացանակիրներուս միայնելու փառասիրութիւնն ունիս. կարծեմ թէ այդ նշանաւոր առիթ մ՝է, այո՛։

— Այդ առիթը պէտք չէ ինձ. Աստուած չընէ այդպիսի բան մը, հրամանատար։

— Եւ ինչո՞ւ համար։

— Նախ շատ մը պատճառներ ունիմ, ասա՛ սա պատճառը որ՝ եթէ քեզ ձերբակալէլէ ետև՝ յաջորդէի քեզ . . . ։

— Ա՛հ, կ՝խոստովանիս ուրեմն որ զիս կ՝ձերբակալես։

— Ո՛չ, ո՛չ։

— Ուրեմն, հանդիսպելէս ետև ըսէ։ Եթէ, ըսիր, զիս հանդիսպելէն ետև՝ յաջորդէիր ինձ . . . ։

— Քու հրացանակիրներդ առաջին հրային կրթութեան առեն՝ անզգուշութեամբ իմ կողմն կրակ պիտի ընէին։

— Ա՛հ, այդ մասին, հակառակը չեմ պնդեր։ Այդ թշուառականները զիս շատ կ՝սիրեն։

Կէվը ամենէն առաջ տ՝Արդանեանն անցուց, շնորհակ Թագաւորին դահլիճը տարաւ զանի, ուր Թագաւորն իր հրացանակրաց հրամանատարին կ՝սպասէր, և նախատենեակը՝ իր պաշտօնակցին ետևը կեցաւ։ Թագաւորը Պ. Գօլպէրի հետ կ՝խօսէր, ինչպէս որ իրենց ձայնը բացորոշ կ՝լսուէր, նոյն պահլիճին մէջ ուր Գօլպէր՝ քանի մ՝օր առաջ, Թագաւորին և Պ. տ՝Արդանեանի բարձրաձայն խօսակցութիւնը լսեր էր։

Պահակները՝ 'ի ձի կաղմ կեցեր էին՝ գլխաւոր դրան առջև, և քաղքին մէջ փոքր առ փոքր ձայն տարածուեցաւ թէ հրացանակրաց հրամանատարը ձերբակալ եղեր է Թագաւորին հրամանաւ։

Այն առեն՝ ամէն մարդիկ շարժելու սկսան, Լուի ԺԳ-ի և Պ. Դրեվիլի ժամանակուան պէս. խումբեր կ՝կազմուէին, սանդուղները կ՝լեցուէին, գաղթներէն հասնող՝ անորոշ մրմունջներ գալով մինչև վերին դասիկոնները կ՝հասնէին, մակընթացութեան ալեաց խուզուս հեծեծումներուն պէս։

Պ. Կէվը անհանգիստ էր։ Իր պահակներուն կ՝նայէր, որոնք՝ նախ հարցուփորձ լինելով հրացանակրաց կողմէ որ եկեր էին իրենց գունդին մնանալու, սկսեր էին անոնցմէ հեռանալ իրենք ալ փոքր ինչ մտատանջութիւն յայտնելով։

Արդարև տ՝Արդանեան՝ Պ. Կէվրէն ընդհատ անհանգիստ էր։ Ներս մտնելուն պէս պատուհանի մը շրջանակին վրայ նստաւ, իր արծուի նայուածքով ամէն բան կ՝դիտէր, և բնաւ երկիւղ մը չէր յայտներ։

Տ՝Արդանեան քաջ լսեր էր ամենաթեթև շշուկներն որ իր ձերբակալութեան առթիւ յայտնուեր էին։ Կ՝գուշակէր այն վայրկեանն որ մեծ փոթորիկ մը տեղի պիտի ունենար. և գիտէնք որ իր գուշակութիւնները ճշմարիտ էին։

— Խիստ այլանդակ բան մը պիտի լինէր — կ՝մտածէր նա — եթէ այս իրիկուն իմ զօրականներս զիս Գրանսայի Թագաւոր ընեն։ Ո՛րչափ պիտի ծիծաղի։

Բայց ամենէն գեղեցիկ ժամուն ամէն բան կայ առաւ։ Պահակ, հրացանակիր, սպայ, զինուոր, տրտունջներ, անհանգստութիւններ ցրուեցան, փարատեցան. չկար այլ փոթորիկ, չկար այլ սպառնալիք, չկար այլ ապստամբութիւն։

Բառ մը միայն այս յուզմունքը խաղաղցուցեր էր։

Թագաւորը Պրիէնի միջոցաւ զոչեր էր։

— Լուռ՛ եւն, պարոններ, Թագաւորը կ՚նեղէ։

Տ՚Արգանեան հառաչեց։

— Ամէն բան բուսաւ — մտածեց նա — այսօրուան հրայանակիրները Նորին Վեհափառութեան Լուի ԺԴի հրայանակիրները չեն։ Ամէն ինչ լմնցաւ։

— Պ. տ՚Արգանեան, Թագաւորին ներկայացէք — պոռաց պահանորդ մը։

ԺԴ

ԼՈՒԻ ԺԴ. ԹԱԳԱՒՈՐԸ

Թագաւորը՝ կոնակը դրան կողմը դարձած՝ իր դահլիճին մէջ նստած էր։ Իր դիմացը հայելի մը կար որու մէջ, իր թղթերը խառնելու ատեն՝ բաւական էր իրեն ակնարկ մը նետել իր սենեակը մտնողները տեսնելու համար։

Տ՚Արգանեան ներս մտնելուն Թագաւորն իր դիրքը չփոխեց, և իր նամակներուն ու յատակագծերուն վրայ ծածկեց կանաչ մոտաքսեայ մեծ ծածկոյթ մ՚որով իր դաղտնիքը հետաքնին աչերէ պահելու սովոր էր։

Տ՚Արգանեան այս խաղը հասկըցաւ և ետեր կեցաւ. այնպէս որ քիչ ատենէն Թագաւորն որ բան մը չէր լսեր և միայն աչքին ծայրովը կ՚նայէր, ստիպուեցաւ պոռալու.

— Մի՞թէ Պ. տ՚Արգանեան անդ չէ՞։

— Ասասիկ եմ — պատասխանեց հրայանակիրը յառաջանցնելով։

— Լաւ ուրեմն, պարոն — ըսաւ Թագաւորն իր աչքը տ՚Արգանեանի վրայ սևեռելով — ի՞նչ ունիս ինձ ըսելու։

— Ե՞ս, Վեհափառ տէր — պատասխանեց հրայանակիրը, որ հակառակորդին առաջի հարուածին կ՚սպասէր որպէս զի յարմար պատասխան մը տայ — ես, չունիմ բան մ՚ըսելու Ձեր Վեհ-

հափառութեան, եթէ ոչ զիս ձերբակալ ընել տուաւ, և ասասիկ եկայ։

Թագաւորը պիտի պատասխանէր թէ ինք տ՚Արգանեանը ձերբակալ ընել տուած չէ, բայց այս խօսքն իրեն արդարացում մ՚երևցաւ և լռեց։

Տ՚Արգանեան յամառ լռութիւն մը պահեց։

— Պարոն — ըսաւ Թագաւորը — ի՞նչ հրաման տուի քեզ Պէլ-Իսլի մասին, խնդրեմ, ըսէ նայիմ։

Թագաւորն այս խօսքն արտասանելու ատեն ակնապիշ կ՚նայէր հրամանատարին երեսը։

Այս պարագայիս մէջ տ՚Արգանեան շատ երջանիկ էր, Թագաւորն իրեն աղուոր առիթ մը կ՚ընծայէր բացուելու։

— Կարծեմ թէ Ձեր Վեհափառութիւնը պատիւ կ՚ընէ ինձ հարցնելու թէ Պէլ-Իսլն ի՞նչ բանի համար գացի։

— Այո՛, պարոն։

— Լա՛ւ, Վեհափառ, ճիշտը չգիտեմ. այդ հարցումը պէտք չէ ինձ ընել, այլ այն անթիւ անհամար սպաներուն, որոց անբաւ հրամաններ տրուած էին, մինչդեռ՝ ես, որ արշաւանքին հրամանատարն էի, ես ճշդիւ հրաման մը չունէի։

Թագաւորը վիրաւորուեցաւ, և իր պատասխանովը ցցուց որ վիրաւորուած է։

— Պարոն — պատասխանեց նա — հաւատարիմ կարծուած մարդոց միայն հրամաններ տրուեցան։

— Ուստի ես ալ զարմացայ, Վեհափառ — պատասխանեց հրայանակիրը — որ ինձի պէս հրամանատար մը, ես որ Գրանսայի մարաջախտի համասպատիւ կ՚սեպուիմ, հինգ վեց տեղակալէ կամ գնդապետի, թերևս լրտեսներ լինելու այլ երբէք պատերազմ մղելու յարմար մարդոց հրամանին ներքև գտնուիմ։ Ահա այս մասին Ձեր Վեհափառութենէ բացատրութիւններ խնդրելու եկեր էի, երբ որ ձեր քովը գալու արգիլեցին զիս, և այս ալ որ ուղիղ մարդու մ՚եղած յեսին նախատինք մ՚էր, պարտաւորեց զիս Ձեր Վեհափառութեան ծառայութենէ հրաժեշտ տալու։

— Պարոն — պատասխանեց Թագաւորը — դու միշտ կարծեա

թէ կ'ապրիս այն դարերն երբ թագաւորներ՝ ինչպէս որ կ'գանդատիս որ եղած լինին, իրենց ստորակարգելոց հրամանին և իշխանութեան ներքև կ'գտնուէին. կ'երևի թէ միշտ կ'մոռնաս որ թագաւոր մը միայն Աստուծոյ պատասխանատու է իր գործոց համար։

— Բնաւ բան մը չեմ մոռնար, Վեհափառ — ըսաւ հրացանակիրը, ըստ կարգի ինքն ալ այս գասէն վիրաւորուելով։ — Սակայն չեմ հասկընար թէ ինչ բանի մէջ ուղիղ մարդ մը, երբ թագաւորին կ'հարցնէ թէ ինչ կերպով դէշ ծառայեր է իրեն, զինքը թշնամանած լինի։

— Դէշ ծառայեցիր ինձ, պարոն, իմ թշնամեայս կողմը բռնելով ինձի դէմ։

— Ո՞յք են ձեր թշնամիները, Վեհափառ։

— Անոնք որոց դէմ քեզ կ'զրկէի պատերազմելու համար։

— Երկո՛ւ մարդիկ, Ձեր Վեհափառութեան բանակին թշնամի, Վեհափառ, հաւատալի չէ այս։

— Բնաւ իրաւունք չունիս իմ հրամաններս դատելու։

— Իմ բարեկամներս դատելու իրաւունք ունիմ, Վեհափառ։

— Ո՛վ որ իր բարեկամներուն կ'ծառայէ, չծառայեր իր տիրոջ։

— Այդ այնպէս լաւ հասկըցայ, Վեհափառ, որ իմ հրաժարականս Ձեր Վեհափառութեան մատուցի յարգանօք։

— Եւ ես ալ զայն ընդունեցայ, պարոն — ըսաւ թագաւորը։ — Քեզնէ բաժնուելէ առաջ՝ ուզեցի քեզի ցոյց տալ որ իմ խօսքս պահել գիտեմ։

— Ձեր Վեհափառութիւնն իր խօսքը միայն չպահեց, այլ և զիս ձերբակալ ընել տուաւ — պատասխանեց տ'Արգանեան իր պաղ հեգնութեան կերպով — այդ բանը չէր խոստացած ինձ։

Թագաւորն արհամարհեց այս կատակն ու էական խնդրոյն դառնալով.

— Տես մի անգամ, պարոն, թէ քու անհնազանդութիւնդ ինչ բան ընելու դրդեց զիս։

— Իմ անհնազանդութիւնս — գոչեց տ'Արգանեան բարկութենէ կարմրելով։

— Ամենէն մեղմ այդ բառը գտայ — շարունակեց թագաւորը։

— Իմ նպատակս էր ապստամբներ բռնել ու պատժել. միթէ փոյթս պիտի ընէի եթէ ապստամբները քու բարեկամներդ էին։

— Բայց ես հոգ ընելու պատճառ ունէի — պատասխանեց տ'Արգանեան։ — Անկեղծութիւն մ'էր Ձեր Վեհափառութեան կողմէ զիս որ բարեկամներս բռնեմ և ձեր կախաղանին բերեմ յանձնեմ։

— Պարոն, փորձ մ'էր ըրածս իմ կարծեցեալ ծառաներուս վրայ որ իմ հացս կ'ուտեն և իմ անձս պաշտպանելու պարտաւոր են։ Այս փորձս անյաջող գնաց, պ. տ'Արգանեան։

— Անշահ ծառայի մը համար որ Ձեր Վեհափառութեան կողմէ կ'կորսուի — ըսաւ հրացանակիրը դառնութեամբ — տասն հատ ուրիշ ծառաներ կան որ այսօր իսկ իրենց փորձն ըրին։ Մաիկ ըրէք զիս, Վեհափառ. ես, ես այդ ծառայութեան վարժած չեմ։ Ըմբոստ սուր մ'է իմս երբ կ'հրամայուի չարիք գործելու։ Անվայելուչ էր ինձ ցմահ հալածել երկու մարդ՝ որոց կեանքը ձեզնէ խնդրեց պ. Ֆուքէ, Ձեր Վեհափառութեան աղատարարը։ Ձեր Վեհափառութիւնը չէին հարուածեր անոնք, այլ կոյր բարկութեան մը ներքև կ'ընկճէին։ Բայց գարձեալ, ինչո՞ւ չէին թողուր որ խոյս տան։ Ի՞նչ յանցանք գործեր էին։ Կ'ընդունիմ որ անոնց վարմունքը դատելու իրաւունքն ինձ կ'մերժէիք։ Բայց գործէն առաջ ինչո՞ւ համար իմ վրայ կ'կասկածիք, ինչո՞ւ համար բոլորտիքս լրտեսներ կ'դնէք, ինչո՞ւ համար բանակին առջև զիս կ'անպատուէք, ինչո՞ւ համար, ես, որու վրայ կատարեալ վստահութիւն կ'յայտնէիք մինչև ցայսօր, ես որ, երսուն տարիէ 'ի վեր, ձեր անձին կ'ծառայեմ և անձնուիրութեան հաղար ապացոյցներ տուած եմ, վասն զի պէտք է այս ըսել, քանի որ այսօր զիս կ'ամբաստանեն, ինչո՞ւ համար ստիպուիմ տեսնելու թագաւորին երեք հաղար հոգիէ բաղկացեալ բանակի մը երեք մարդոց դէմ քալելը։

— Այնպէս կ'երևի թէ այս մարդոց ինձ ըրածները կ'մոռնաս — ըսաւ թագաւորը խուլ ձայնով մը — և թէ քիչ մնաց որ անոնց ձեռքն 'ի կորուստ պիտի գիմէի։

— Վեհափառ, կ'երևի թէ կ'մոռնաք որ ես անդ էի։

— Բաւական է, Պ. տ'Արդանեան, բաւական է խօսիլ այդ տիրական շահերու վրայ որ իմ շահուցս արևը մարելու կ'նկրտին։ Պետութիւն մը կ'հիմնեմ որու մէջ միապետ մը միայն պիտի դտնուի. երբեմն այս խօսքն ըրի քեզի. իմ խոստումս պահելու ժամը հասաւ։ Դու կ'ուզես որ ըստ հաճոյս և բարեկամայդ 'ի նպաստ շարժիս, իմ խորհուրդներս խանդարելու և թշնամիներս աղատելու աղատութեամբ։ Քեզ կ'խորտակեմ կամ կ'թողում։ Աւելի յարմար տէր մը փնտռէ։ Քաջ գիտեմ որ ուրիշ թագաւոր մ'ինձի պէս չպիտի վարուէր, և պիտի յանձն առնուր ազդեցութիւնդ կրելու, քեզ օր մը Պ. Ֆուքէի և այլոց մօտ ղրկելու պայմանաւ, բայց ես մոռայկոտ չեմ, և ինձի համար՝ երախտագիտութեան, անպատժութեան նուիրական իրաւունքն են ծառայութիւնները։ Պ. տ'Արդանեան, այս դասը միայն պիտի ունենաս կանոնաղանցութիւնդ պատժելու, և իմ նախորդներուս բարկութիւնն իբրև օրինակ չպիտի բռնեմ, ինչպէս որ անոնց շնորհն իբրև օրինակ չառի։ Ասկէ զատ՝ ուրիշ պատճառներ ունիմ քեզի հետ մտերմօրէն վարուելու, այս է որ նախ՝ ուղիղ բանի տէր մարդ մ'ես, բանիմաստ մարդ մ'ես, արիասիրտ մարդ և լաւ ծառայ մը կարող ես լինիլ քեզ ընկնել գիտցողին. ասկէ զատ՝ անհպատակութեան առիթներ այլ ևս չպիտի ունենաս։ Բարեկամներդ իմ ձեռօքս կործանած կամ ջնջուած են։ Այս յենակէտներն որոց վրայ բնաղդումով կ'հանդչէր քմահաճ միտքդ, անհետ ըրի։ Այս պահուս, իմ զինուորներս բռնած կամ սպանած են Պէլ-Իսլի ապստամբները։

Տ'Արդանեանի դոյնը նետեց։

— Բռնած կամ սպաննած — գոչեց հրայանակիրը։ — Ո՛հ, Վեհափառ, եթէ գիտնայիք թէ ինչ կ'ըսէք ինձ, և եթէ իրօք ինձ ճշմարտութիւնը յայտնէիք՝ պիտի մոռնայի ձեր խօսքերուն մէջ եղած ամէն արդար և վեհանձն զգայումները, որպէս զի ձեզ բարբարոս թագաւոր մը, անսիրտ մարդ մ'անուանեմ։ Բայց կը ներեմ ես ձեր այդ խօսքերուն — ըսաւ նա գոռոզութեամբ քմծիծաղելով — կ'ներեմ նորատի իշխանին որ չգիտէ, որ չէ կարող

հասկընալ թէ ինչ են Պ. Հերպլէյի պէս, Պ. Վալլօնի պէս, ինձի պէս մարդիկ։ Բռնուած կամ մեռած։ Ա՛հ, ա՛հ, Վեհափառ, ըսէք ինձ եթէ այդ լուրը ստոյգ է, թէ ո՞րչափ մարդիկ և ստակ կորուսիք։ Ցետոյ պիտի հաշուենք եթէ շահն արժեց կորուստը։

Մինչդեռ հրայանակիրը դեռ ևս կ'խօսէր, թագաւորը բարկութեամբ անոր մօտեցաւ և ըսաւ.

— Պ. տ'Արդանեան, ահա այդ ըսածներդ ապստամբի պատասխաններ են։ Բարեհաճէ ուրեմն ինձ ըսելու, թէ ո՞վ է Ֆրանսայի թագաւորը։ Միթէ ուրիշ մը կ'ճանչես։

— Վեհափառ — պատասխանեց պաղութեամբ հրայանակրաց հրամանատարը — կ'յիշեմ որ առտու մ'այդ հարցումն ըրիք՝ 'ի Վ. շատ մարդոց որ չկրցան պատասխանել, մինչդեռ ես ձեզի պատասխանը տուի։ Երբ այն օրը ճանչցայ թագաւորը, թէև խնդիրը դժուարին էր, կարծեմ թէ անօգուտ է նոյնը հարցնել ինձ այսօր որ Ձեր Վեհափառութիւնն ինձի հետ է առանձին։

Այս խօսքին վրայ Լուի ԺԴ աչերը վար առաւ։ Իրեն այնպէս երևցաւ որ տարաբաղդ Ֆիլիպին ստուերն իր և Պ. տ'Արդանեանի մէջ տեղէն անցաւ, այն սոսկալի արկածին յիշատակը զրգռելու համար։

Գրեթէ նոյն պահուն՝ սպայ մը ներս մտաւ, գիր մը յանձնեց թագաւորին, որ՝ ըստ կարգի՝ գոյնը նետեց զայն կարդալով։

Տ'Արդանեան այս բանս դիտեց։ Թագաւորն անշարժ և լուռ մնաց՝ երկրորդ անգամ զայն կարդալէն ետև։ Ցետոյ յանկարծ որոշումն ընելով.

— Պարոն — ըսաւ նա — վերջէն պիտի իմանայիր ինչ որ ինձ այժմ կ'իմացնեն. լաւ ևս է որ ես ինքս ըսեմ և թագաւորին բերնէն իմանաս։ Պէլ-Իսլի մէջ կռիւ մը տեղի ունեցեր է։

— Հա՛, հա՛ — ըրաւ տ'Արդանեան հանդարտ դէմքով մը, մինչդեռ իր սիրտը կ'բախէր կուրծքը պայթելու չափ։ — Լաւ ուրեմն, Վեհափառ։

— Լաւ ուրեմն, պարոն, հարիւր վեց հոգի կորուսի։

Տ'Արդանեանի աչաց մէջ ուրախութեան և գոռոզութեան փայլակ մ'անցաւ։

— Հասպա ապստամբները — ըսաւ նա։

— Ապստամբները խոյս տուեր են — ըսաւ թագաւորը։

Տ՝Արդանեան յաղթութեան աղաղակ մ՝արձակեց։

— Միայն — յարեց թագաւորը — նաւատորմ մ՝ունիմ որ Պէլ-Իսլը մօտէն պաշարած է, և ստոյգ եմ որ նաւակ մ՝անդամ չպիտի փախչի։

— Այնպէս որ — ըսաւ հրայանակիրն իր մթին դաղափարները դառնալով — եթէ այն պարոնները բռնուին . . . ։

— Պիտի կախուին — ըսաւ թագաւորը հանդարտութեամբ։

— Եւ միթէ դիտէն — պատասխանեց տ՝Արդանեան, որ սարսուռ մը զսպեց։

— Եւ դիտեն, վասն զի դու ըսած պիտի լինիս, և բոլոր քնակիչները տեղեակ են։

— Ուրեմն, Վեհափառ, ձեր զինուորները չպիտի կարենան ողջ ողջ բռնել զանոնք, հաւատի եղիք։

— Ա՛հ — ըրաւ թագաւորն անհոգութեամբ և դիրն առնլով։ — Լաւ ուրեմն, մեռած պիտի բռնուին, Պ. տ՝Արդանեան, և մի և նոյն բանն ըսել է, քանի որ զանոնք կախելու համար պիտի բռնէի։

Տ՝Արդանեան ձակատն հոսած քրտինքը սրբեց։

— Արդէն քեզի ըսի — շարունակեց Լուի ԺԳ — որ օրին մէկը քու սիրական, վեհանձն ու հաստատամիտ տէրդ պիտի լինիմ։ Այսօր դու հին ժամանակի միայնակ մարդ մ՝ես որ կամ բարեկամութեան կամ բարկութեան արժանի կ՝լինիս։ Բռնելիք ընթացքիդ համեմատ ոչ մին և ոչ միւսը չպիտի զլանամ քեզի։ Պ. տ՝Արդանեան, կարող ես ըմբռնել որ տէրութեանս մէջ թագաւորի մը ծառայես որ ուրիշ իրեն համաղօր հարիւր թագաւորի ներքև գտնուէր։ Զրուցէ ինձ՝ կարող պիտի լինիմ այդ տակաւ դիրքով իմ խորհած մեծ մեծ բաներս՝ի կատար հանել։ Միթէ տեսած ես երբէք որ ըմբոստ գործիքով մը արուեստագէտը հաստատուն գործեր ընէ։ Պարոն, ՝ի բաց թողուցինք ատամական զեղծումներու խմորը։ Պարսատիկը՝ որ միապետութիւնը կ՝ուզէր կործանել, աղատագրեց զայն։ Իմ երկրիս մէջ տէր

ու միապետ եմ, տ՝Արդանեան հրամանատար, և պիտի ունենամ սպասարկուներ որ, թերևս քու ունեցած հանճարէդ զուրկ, անձնուիրութիւնն և հնազանդութիւնը մինչև դիւցազնութեան պիտի հասցնեն։ Ի՞նչ փոյթ, կ՝հարցնեմ քեզի, ի՞նչ փոյթ եթէ Աստուած թևերու և սրունքի հանճար չէ տուած։ Աստուած զլխուն կ՝տայ հանճարը, և ինչպէս դիտես, զլխուն է որ միւս անդամները կ՝հնազանդին։ Ե՛ս, ես զլուխն եմ։

Տ՝Արդանեան զոզ եղաւ։ Լուի շարունակեց խօսքն որպէս թէ ոչ ինչ տեսած չլինէր, թէև այս զոզն անոր աչքէն չվրիպեցաւ։

— Հիմակ, մեր մէջ հաստատենք այն դաշինքը զոր քեզի խոստացայ՝ այն օրն որ՝ի Պլուա, զիս շատ փոքր կ՝դտնէիր։ Պարոն, պէտք է շնորհակալ լինիս որ այն ատեն առ ամօթոյ թափած արտասուքս այժմ և ոչ մէկու մը առ վրիժու թափել չտուի։ Զորս կողմդ նայէ, մեծ զլուխները խոնարհած են, խոնարհէ ասոնց պէս կամ քեզի ամենէն յարմար երևցած աքսորդ ընտրէ։ Պարեալ է որ՝ եթէ լաւ մտածես, պիտի տեսնես որ այս թագաւորը վեհանձն սիրտ մ՝ունի որ քու հաւատարմութեանդ վրայ բաւական վստահ լինելուն համար կ՝թողու քեզ՝ պիտանալով իսկ որ գժգոհ ես, կ՝թողու քեզ ազատ՝ թէև Պետութեան դաղտնիքը գիտես։ Գիտեմ որ դու մեծանձն մարդ մ՝ես։ Ինչու համար ժամանակէն առաջ դատեցիր զիս։ Տ՝Արդանեան՝ այս օրէն սկսեալ դատէ զիս, և որչափ որ կ՝ուզես անաչառ եղիր։

Տ՝Արդանեան շուարեալ, անմուունչ, տատամնոտ կ՝մնար առաջին անդամ իր կենաց մէջ։ Իրեն արժանի հակառակորդ մը նոր դտեր էր։ Այլ ևս խորամանկութիւն չէր այս տեսածը, այլ հաշիւ. այլ ևս բռնութիւն չէր այս, այլ դոյժ. այլ ևս բարկութիւն չէր այս, այլ կամք. այլ ևս մեծախաւութիւն չէր այս, այլ խորհուրդ։ Այս երիտասարդն որ Գուքէն տապալեր էր, և որ կը-նար տ՝Արդանեանէ անցնիլ, հրայանակիրն փոքր ինչ յամառեալ հաշիւները կ՝խանդարէր։

— Նայինք, ինչ բան քեզ վարանման մէջ կ՝թողու — ըսաւ նոր թագաւորը քաղցրութեամբ։ — Հրաժարականդ տուիր, կ՝ուզես որ ընդունելու մերժեմ։ Կ՝խոստովանիմ որ ծանր պիտի դայ

հին հրամանատարի մ՚իրեն սրտնեղութեան ժամանակ ըրած մէկ սխալմունքն ուղղելու։

— Ո՛հ — պատասխանեց ա՚Արղանեան տրտմութեամբ — այդ չէ իմ մեծագոյն հոգս։ Հրաժարականս ետ առնլու կ՚վարանիմ, վասն զի ձեր առջև ծեր եմ, և այնպիսի սովորութիւններ ունիմ զորս ուղղելն ինձի համար դժուարին է։ Այսուհետև ձեզի պատասխանատուներ պէտք են որ ձեզ զուարճացնելու կերպը գիտենան, յիմարներ՝ որ գիտենան իրենց կեանքը զոհել ձեր մեծ գործեր անուանած բաներուն համար։ Մեծ գործեր պիտի ընէք, կ՚գուշակեմ, բայց եթէ դիպուածով այդ գործերը մեծ չգտնէք։ Ես պատերազմ տեսայ, Վեհափառ, տեսայ խաղաղութիւնը. Ռիշլիէօի և Մազարէնի ծառայեցի. ձեր հօր հետ Լա Ռոշէլի կրակէն կարմրեցայ, գնդակներէ մարմինս մաղի պէս ծակոտեցաւ, օձերու պէս տասն անգամ մորթ փոխեցի։ Նախատինք և անիրաւութիւն կրեցէն ետև՝ ունիմ այժմ հրամանատարութեան պաշտօն մ՚որ երբեմն բան մ՚էր, վասն զի իրաւունք կ՚տար ըստ հաճոյս թագաւորին խօսելու։ Բայց այսուհետև՝ հրայանակրացդ հրամանատարը ստորին գոները պահպանող սպայ մը պիտի լինի։ Ճըշմարիտը, Վեհափառ, եթէ այս պիտի լինի այսուհետև իմ պաշտօնս, այս հաշտարար ժամէն օգուտ քաղելով առէք իմ վրայէ այդ պաշտօնը։ Մի՛ կարծէք բնաւ որ ոխ կ՚պահեմ, ո՛չ, զիս նուաճեցիք, ինչպէս որ ըսիք. բայց՝ պէտք է խոստովանիլ, զիս ընկճելով՝ պղտիկցուցիք. զիս խոնարհեցնելով՝ իմ ակարութիւնս երևան հանեցիք։ Եթէ գիտնայիք թէ քանի՛ պանծալի էր բարձր՝ի գլուխս շրջիլ, և հիմակ ինչ ողորմելի դէմք պիտի ունենամ ձեր օթոյներուն փոշին թոթուելով։ Ո՛հ, Վեհափառ, կ՚ողբամ այն օրերը, և դուք ևս ինձի պէս անկեղծօրէն պիտի ողբաք այն ժամանակն երբ Ֆրանսայի թագաւորն իր սրահներուն մէջ կ՚տեսնէր բոլոր ժպիրհ, վախ, դէպ, միշտ հայհոյող, ըմբոստ աղատորդիներն որ ճակատամարտի օրեր մահատու հարուածներ կ՚ի՚ջեցնէին։ Այս մարդիկ՝ ամենընտիր պալատականներն են զիրենք սնուցանող ձեռքին համար, զայն կ՚լիզեն. բայց զայն հարկանող ձեռքին համար, ո՛հ, որչափ կ՚խածնեն։ Այս դրդլեակներուն ժապաւէնները փոքր ինչ ոսկեզօծելով, փոքր ինչ փոր ուռեցնելով, փոքր ինչ մեխբազոյն մազեր դլխու վրայ ունենալով, և այն ատեն պիտի տեսնէք գեղանի գուքսերն ու նախարարները, Ֆրանսայի վէս մարաջախտները։ Բայց ինչ հարկ կայ այս բաներն ըսել։ Թագաւորն իմ աչքս է, կ՚ուզէ որ ոտանաւորներ յօրինեմ, կ՚ուզէ որ մեղուսէ սոլերներով իր նախասենեակներուն մուսիոնը յղկեմ. անօրէն, դժուարին գործ է, բայց ասկից աւելի դժուարին ըրած եմ։ Ուստի պիտի ընեմ։ Եւ ինչո՞ւ համար պիտի ընեմ. վասն զի դրամը կ՚սիրեմ. բայց դրամ ունիմ. վասն զի փառասէր եմ. բայց իմ ասպարէզս սահմանաւոր է. վասն զի արքունիքը կ՚սիրեմ։ Ո՛չ. բայց պիտի մնամ, վասն զի երբուն տարիէ՚ի վեր սովոր եմ թագաւորէն հրամանախօսն առնուլ և լսել այս խօսքը. «Բարի լոյս, ա՚Արղանեան» ժպիտով մը զոր չէի մուրար։ Այս ժպիտը, պիտի մուրամ այժմ։ Գո՞հ էք, Վեհափառ։

Եւ ա՚Արղանեան իր արծաթափայլ գլուխը թեթև մը խոնարհեցուց, որու վրայ թագաւորը ժպտելով՝ իր սպիտակ ձեռքը դրաւ գոհութեամբ։

— Շնորհակալ եմ, իմ վաղեմի ծառաս, իմ հաւատարիմ բարեկամս — ըսաւ նա։ — Քանի որ այս օրէն սկսեալ թշնամի մը չունիմ Ֆրանսայի մէջ, կ՚մնայ ինձ օտար երկիր մ՚ուղարկել քեզ որ մարաջախտի դաւազանիդ արժանանաս։ Իմ վրայ վստահ եղիր ատիթը գտնելու։ Առ այժմ իմ լաւագոյն հայս կեր և հանգիստ ննջէ։

— Քաջ է — ըսաւ ա՚Արղանեան այլայլելով։ — Բայց Պէլ-Իսլի այն խեղճ մարդիկը. մին մանաւանդ որ այնչափ բարի և քաջասիրտ էր։

— Մինթէ անոնց շնորհը կ՚խնդրես։

— Ծնրադրեալ կ՚խնդրեմ, Վեհափառ։

— Լաւ ուրեմն, գնա՛ այդ շնորհն անոնց հաղորդելու, եթէ դեռ ևս՚ի դէպ է ժամանակն։ Բայց դու անոնց կողմէ երաշխաւոր պիտի մնաս։

— Իմ կեանքս դրաւ կ՚դնեմ։

— Գնա՛ : Վազը , Բարիզ պիտի երթամ : Շուտ դարձիր , վասն զի չեմ ուզեր որ այլ ևս իրենք հեռու գտնուիս :

— Անհոգ եղիր , Վեհափառ — ըսաւ ա՛Արդանեան Թագաւորին ձեռքը համբուրելով :

Եւ զրեկէն դուրս սրացաւ՝ ուրախութեամբ լի , և Պէլ–Իսլի Ճամբան բռնեց :

ԺԵ

Պ. ՖՈՒՔԷԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Թագաւորը Բարիզ դարձեր էր , և իրեն հետ ա՛Արդանեանն ալ , որ քսան չորս ժամու մէջ՝ Պէլ–Իսլի մէջ ամենայն զգուշութեամբ բոլոր տեղեկութիւնները ստանալէն ետև , չգիտէր թէ այն գաղտնիքը զոր այնքան լաւ կ՚պահէր Լոկմարիայի ժայռը , Բորթոսի գիւղական գերեզմանը :

Հրացանակրաց հրամանատարը գիտէր միայն ինչ որ այս երկու արիասիրտ մարդիկ , ինչ որ այս երկու բարեկամները , որոց պաշտպան կեցեր էր ամենաբար և կեանքն աղատելու փորձ փորձեր էր , ամբողջ բանակի մը դէմ կատարեր էին՝ երեք Պրըգոնեաներու օգնութեամբը : Կարող եղեր էր տեսնելու՝ մեռակայ դաշտավայրին մէջ նետուած մարդկային բեկորներն որ հատամրդեաց մէջ ցիր ու ցան կայծքարներն արեամբ թաթաւեր էին :

Գիտէր նաև որ ծովու վրայ հեռուն նաւակ մը տեսնուեր էր , և թէ՝ գիշատիչ թռչունի մը նման՝ արքայական նաւ մը հալածեր , ետևէն հասեր և լափեր էր այն փոքրիկ խեղճ թռչունն որ սրընթաց կ՚խուսէր :

Բայց ա՛Արդանեանի ասացած ասոյդ տեղեկութիւններն ասոնք էին միայն : Այնուհետև կ՚սիսէր կասկածանաց դուռը : Այժմ ինչ պէտք էր մտածել : Նաւը չէր դարձած : Ասոյդ է որ բուռն հով մը կ՚սիրէր երեք օրե՝ ի վեր , բայց նաւն արագասահ և

ամրապինդ էր , բնաւ փոթորիկ չէր վախնար . և այն նաւակն որու մէջն էր Արամիս , ա՛Արդանեանի հաշուին նայելով՝ Գրէսդէն դարձած կամ Լուարի բերանը հասած պիտի լինէր :

Ասոնք էին ա՛Արդանեանի առած այն լուրերն որ թէև երկիւղի՝ ա՛Արդանեանի համար հանգուցիչ էին . այս լուրերը ա՛Արդանեան Լուի ԺԴի կ՚բերէր , երբ Թագաւորը՝ իր պալատականաց հետ՝ Բարիզ վերադարձաւ :

Լուի՝ իր յաջողութենէ գոհ , Լուի՝ որ աւելի քաղցրաբարոյ և համբոյր կ՚երևէր քանի որ աւելի զօրաւոր կ՚զգար ինքզինքը , շարունակ օրիորդ Լա Վալիէրի գոնակին քովն ձիավարեր էր :

Ամէն մարդ փութացեր էր երկու Թագուհիները սփոփելու , որպէս զի մոռցնեն անոնց մին որդւոյ միւսն ամուսնոյ մը կողմէ սատած անտարբերութիւնը : Ամէն ինչ ապագան կ՚ենչէր , այնուհետև անցեալն ոչ ինչ էր ամենուն համար : Միայն՝ այս անցեալն իբրև վշտալի և արիւնալի վէրք մը կ՚երևէր մէկ քանի փափկասիրտ և անձնուէր անձերու : Ուստի՝ այն ինչ Թագաւորն իր պալատը հաստատուեցաւ , որ այս մեր ըսածին սրտաշարժ մէկ ապացոյցն ընդունեց :

Լուի ԺԴ այն ինչ եղեր և իր առաջին ճաշն ուտեր էր , երբ իր հրացանակրաց հրամանատարն իր առջևը ներկայացաւ : Ց՚Արդանեան փոքր ինչ գունատ էր և նեղացած կ՚երևէր :

Թագաւորն առաջին տեսքով գիտեց այս գէմքին փոփոխութիւնը , որ սովորաբար այնքան զուարթ էր :

— Բայց ինչ ունիս , ա՛Արդանեան — ըսաւ անոր :

— Վեհափառ , ինձի մեծ զժբաղդութիւն մը հասաւ :

— Տէր Ասուած , ինչ է ուրեմն :

— Վեհափառ , իմ բարեկամներէս մին , Պ. Վալլոնը կորուսի Պէլ–Իսլի գործին մէջ :

Եւ այս ըսելով ա՛Արդանեան իր բաղէի նայուածքը կ՚սևեռէր Լուի ԺԴի վրայ որպէս զի անոր արտայայտելիք առաջին զգայումը զուշակէ :

— Գիտէի — պատասխանեց Թագաւորը :

— Գիտէիք և ինձի չըսիք — ըսաւ հրացանակիրը :

— Ի՞նչ հարկ կար։ Քու ցաւդ, բարեկամդ իմ, քանի՛ յարգելի է։ Ես պարտաւոր եղայ մեղմելու զայն։ Քեզի հասնող այս գժբաղդութիւնը յայտնելով, կերպով մը յաղթանակ տարած պիտի սեպուէի քու աչքիդ, տ՚Արգանեան։ Այո՛, գիտէի որ Պ. Վալլօն Լոկմարիայի ժայռերուն ներքև թաղուեր էր, գիտէի որ Պ. Հերպլէյ իմ մէկ նաւս նաւավին հետ առնլով Պայօն դնայ, բայց ուզեցի որ դու ուղղակի իմանաս այդ բաները, որպէս զի համոզուիս որ իմ բարեկամներս յարգելի և նուիրական են ինձի համար, և թէ միշտ ինձի համար մարդ մարդոց պիտի զոհուի, քանի որ թագաւորը ստէպ ստիպուած է իր վեհափառութեան, իր զօրութեան զոհել մարդիկը։

— Բայց, Վեհափառ, ուստի՞ գիտէք . . . ։

— Դու ի՞նչպէս իմացար, տ՚Արգանեան։

— Այս նամակին միջոցաւ, Վեհափառ. այս նամակն Արամիս գրած է ինձ այժմ որ ազատ է և վտանգէ զերծ։

— Ահա՛ առ — ըսաւ թագաւորն և հանեց արկղիկ մ՚որ տ՚Արգանեանի կնքնած աթոռին մօտ եղող կարասիի մը վրայ դրուած էր, նամակ մ՚Արամիսի գրածին վրայ օրինակուած — ատասիկ մի և նոյն գիրը զոր Գօլպէր ձեռքս հասցուց քուկդ առածէդ ութ ժամ առաջ. . . ։ Յուսամ որ լաւ կ՚ծառայեն ինձ։

— Այո՛, Վեհափառ — մրմնաց հրացանակիրը — ձեր Ճակատագիրը միայն կարող եղաւ իշխելու իմ երկու բարեկամներուս Ճակատագրին և զօրութեան։ Այդ ձեր զօրութիւնն 'ի գործ դրիք, Վեհափառ, բայց չպիտի չարաչար գործածէք, այնպէս չէ՞։

— Տ՚Արգանեան — ըսաւ թագաւորը բարեսիրութեան ժպիտով մը — կարող էի Պ. Հերպլէյը Սպանիոյ թագաւորին հոդէն յափշտակել և այս տեղ բերել տալ դատաստան ընելու համար։ Տ՚Արգանեան, քաջ գիտցիր, այս առաջին, խիստ բնական զղացմանս չպիտի անսամ։ Ազատ է նա, թող նոյն ազատութեան մէջ մնայ։

— Ո՛հ, Վեհափառ, միշտ այդպէս գթառատ, ազնիւ, վեհանձն չպիտի մնաք, ինչպէս որ ինձի համար և Պ. Հերպլէյի համար երևցաք. ձեր մօտ այնպիսի խորհրդականներ պիտի ունենաք որ պիտի բուժեն ձեր այդ տկարութիւնը։

— Ո՛չ, տ՚Արգանեան, կ՚սխալիս, երբ իմ խորհուրդս կ՚ամբաստանես որպէս թէ զիս խստութեան կ՚դրդէ։ Պ. Հերպլէյի խնայելու խորհուրդը նոյն իսկ Պ. Գօլպէրի կողմէն է։

— Ա՛հ, Վեհափառ — ըրաւ տ՚Արգանեան ապշած։

— Իսկ քեզի գալով — շարունակեց թագաւորն անսովոր բարութեամբ մը — շատ մ՚աղոր լուրեր ունիմ քեզի հաղորդելու. բայց, իմ սիրելի հրամանատարս, պիտի իմանաս այդ լուրերն երբոր իմ հաշիւներս աւարտեմ։ Ըսի որ կ՚ուզեմ շինել և պիտի շինեմ բաղդդ։ Այս խօսքս քիչ ատենէն պիտի իրանայ։

— Բիւր շնորհակալութիւն, Վեհափառ, ես կարող եմ սպասել։ Կ՚աղաչեմ, երբ ես կարող եմ համբերել, Ձեր Վեհափառութիւնը շնորհ ընէ բաւական ատենէ 'ի վեր ձեր նախաս նեակը շրջապատող և ձեր ոտքն աղերսագիր մը ներկայելու եկող մարդկան ակնարկ մը դարձնել։

— Ո՞յք են։

— Ձեր Վեհափառութեան թշնամիները։

Թագաւորն իր գլուխը վերցուց։

— Պ. Ֆուքէի բարեկամները — յարեց տ՚Արգանեան։

— Իրենց անունը։

— Պ. Կուրվիլ, Պ. Բէլլիսօն և բանաստեղծ մը, Պ. Ժան դը Լա Ֆոնդէն։

Թագաւորը պահ մը լռեց մտածելու համար։

— Ի՞նչ կ՚ուզեն։

— Ազիտեմ։

— Ի՞նչպէս են։

— Սուգի մէջ։

— Ի՞նչ կ՚ըսեն։

— Ո՛չ ինչ։

— Ի՞նչ կ՚ընեն։

— Կ՚լան։

— Թող ներս գան — ըսաւ թագաւորն իր ունը պրստելով։

Տ՚Արգանեան իսկոյն դարձաւ, արքայական դուռը ծածկող վարագոյրը վերցուց և մօտակայ սրահին մէջ պոռաց.

— Նե՛րս մտցուցէք։

Քիչ ատենէն դահլիճին դրան մօտ երևցան, ուր Թագաւորն ու իր հրամանատարը կեցեր էին, ա՛Արդանեանի անուանած երեք մարդիկը։

Իրենց ճամբուն վրայ խորին լռութիւն մը կ՚տիրէր։ Պալատականները՝ դանձուց դժբաղդ վերատեսչին բարեկամներուն մօտենալը տեսնելով, պալատականներն ըսին, կ՚ընկրկէին որպէս թէ անկման և դժբաղդութեան հիւանդութենէ չճարակին։

Ֆ՚Արդանեան շատ մը վազեց և առաջնորդելու համար այս դժբաղդներուն ձեռքէն բռնեց որ արքայական սենեկին դրան առջև կ՚վարանէին և կ՚դողդողային, Թագաւորին ամբոխին առջև տարաբանելիք, և Թագաւորը պատուհանի մ՚որմնածակին մէջ մնած՝ ներկայացման ժամուն կ՚սպասէր և աղերսարկուներուն խակ և խակ դիւանագիտական ընդունելութիւն մ՚ընելու կ՚պատրաստուէր։

Ֆուքէի բարեկամներէն Բէլլիսօն ամենէն առաջ անցաւ։ Այլ ևս չէր արտասուեր։ Բայց իր արտասուքը ցամքեր էին միայն որպէս զի Թագաւորը կարող լինի լաւ ևս լսել իր ձայնն ու աղերսը։

Կուրվիլ իր շրթունքը կ՚խածնէր որպէս զի արտասուքը բռնէ առ յարգանս Թագաւորին։ Լա Ֆոնդէն իր Թաշկինակին մէջ երեսը կ՚պահէր, և տեսնողը պիտի կարծէր թէ շունչը կտրած էր եթէ հեկեկանքէն շարունակ ուսերը չշարժէր։

Թագաւորն իր վեհապանծ դիրքը պահեր էր, պահեր էր խակ իր յօնից պուստումն որ երևցեր էր երբ ա՚Արդանեան իր Թշնամեաց գալուստն խնայուցեր էր։ Շարժում մ՚ըրաւ որ կ՚նշանակէր. «Խօսեցէք» և ոտքի վրայ կեցաւ, խորին ակնարկով մ՚այս երեք յուսահատ մարդիկը դիտելով։

Բէլլիսօն մինչև դեռինը խոնարհեցաւ, և Լա Ֆոնդէն ծունր դրաւ ինչպէս որ եկեղեցին կ՚ընեն։

Այս յամառ լռութիւնը, որ միայն վշտագին հառաչներով և հեկեկանքով կ՚ընդմիջէր, Թագաւորին չէ թէ արդահատութիւնն այլ անհամբերութիւնը կ՚գրգռէր։

— Պ. Բէլլիսօն — ըսաւ նա սաղ և չոր ձայնով մը — Պ. Կուրվիլ, և դու Պ. . . .։

Եւ Լա Ֆոնդէնին անունը չտուաւ։

— Շատ մեծ ահաճութիւն պիտի զգամ եթէ արդարութեան պատժելիք ամենէն մեծ յանցաւորին համար աղաչելու եկած էք։ Թագաւոր մը միայն արտասուքէ կամ խղճի խայթէ 'ի գութ կը շարժի. անմեղութեան արտասուք, յանցաւորներու խղճի խայթ։ Զպիտի հաւատամ ոչ Պ. Ֆուքէի խղճի խայթին և ոչ իր բարեկամացն արտասուքին. վասն զի միոյն սիրտը բոլորովին խանդաղած է և միւսները մինչև իմ բնակարանս գալով զիս նախատելէն պարտին զգուշանալ։ Ուստի, Պ. Բէլլիսօն, Պ. Կուրվիլ, և դու, Պ. . . . կ՚աղաչեմ ձեզ որ իմ կամայս յարգանայ հակառակ բան մը չայտարարէք ինձ։

— Վեհափառ — պատասխանեց Բէլլիսօն այս սոսկալի խօսքերէն գողալով — Ձեր Վեհափառութեան եկած ենք ըսելու միայն ինչ որ մեր անկեղծ յարգանքն ու մեր սէրը՝ զոր Թագաւորին հպատակներն կ՚ածեն իրեն, կ՚թելադրեն մեզ։ Ձեր Վեհափառութեան արդարութիւնն ահարկու է, ամէն մարդ պարտաւոր է ձեր արտասանած վճիռներուն առջև խոնարհիլ։ Եւ մենք կ՚խոնարհինք յարգանօք անոր առջև։ Ի բաց կ՚մերժենք Ձեր Վեհափառութեան անհաճոյ լինելու դժբաղդութիւնն ունեցող մէկը պահպանելու խորհուրդը։ Ձեր գժգոհութեան ենթակայ դատուող անձը կրնայ մեզի համար բարեկամ մը լինիլ, բայց նա Պետութեան թշնամի մ՚է։ Լալով կ՚թողունք զանի Թագաւորիդ խստութեան։

— Դարձեալ — ընդմիջեց Թագաւորը, այս աղերսագին ձայնէն և համոզակեր խօսքերէն հանդարտելով — իմ խորհրդարանս պիտի դատէ։ Ձեմ զարներ յանցանքը չկշռած։ Իմ արդարութիւնս կշիռքը չդրած՝ սուրը չընդունիր։

— Ուստի և մենք կատարեալ վստահութիւն ունինք Թագաւորիդ այդ անկողմնապահութեան վրայ, և միթէ կարող ենք, Ձեր Վեհափառութեան հաւանութեամբ, յուսալ մեր տկար ձայնը լսելի ընելու, երբ ամբաստանեալ բարեկամ մը պաշտպանելու ժամը հնչէ մեզի համար։

— Ուրեմն, պարոններ, ի՞նչ կ՚ուզէք — ըսաւ Թագաւորն իր մեծասաստ ձայնով։

— Վեհափառ — շարունակեց Բէլլիսօն — ամբաստանեալը կլինի մ'ու ընտանիք մը կ'թողու։ Հազիւ թէ իր ձգած քիչ մը ստացքով պարտքը վճարուեցաւ, և տիկին Գուքէ, իր երկանը բանտարկութենէ 'ի վեր, ամենուստ երեսի վրայ լքուած է։ Ձեր Վեհափառութեան ձեռքն Աստուծոյ նման կ'զարնէ։ Երբ Տէրը բորոտութիւն կամ ժանտախտ կ'առաքէ ընտանիքի մը, ամէն ոք բորոտին կամ ժանտախտակրին բնակարանէն կ'հեռանայ։ Երբեմն, բայց շատ քիչ անգամ, վեհանձն բժիշկ մ'անիծելոյն սեմին մօտենալու կ'համարձակի, արիութեամբ կ'անցնի անկից և կեանքը կ'վտանգէ մահուան գէմ մաքառելու համար։ Այս է հոգեվարին յետին ապաւէնը, երկնային ողորմասիրութեան գործիքն է։ Վեհափառ, բաղկատարած և ծնրադիր կ'պաղատինք ձեզ, ինչպէս կ'պաղատին զԱստուած, տիկին Գուքէ այլ ևս բարեկամներ, այլ ևս օգնականներ չունի. իր անշուք և ամայի տան մէջ կ'արտասուէ նա, տուն մ'որու դուռը կ'շրջապատէին երբեմն յաջողութեան ատեն. չունի նա վարկ, չունի այլ ևս յոյս։ Գոնէ, ողորմելին՝ որու վրայ կ'ծանրանայ ձեր բարկութիւնը, թէև յանցաւոր, կ'ընդունի ձեզնէ ամէն օր իր արտասուքովը թրջած հացը։ Տիկին Գուքէ՝ որ իր ամուսնոյն չափ վշտահար է անորմէ աւելի կարօտ, տիկին Գուքէ, այն որ զՁեր Վեհափառութիւնն իր սեղանն ընդունելու պատիւն ունեցաւ, տիկին Գուքէ, Ձեր Վեհափառութեան զանձուց պաշտօնէին կողակիցը, տիկին Գուքէ աւուր հացի կարօտ է։

Նոյն միջոցին՝ Բէլլիսօնի երկու բարեկամներու շունչը կապող մահատու լռութիւնը՝ հեծկլտանօք ընդհատեցաւ, և տ'Արգանեան որու սիրտը կ'ճմլէր այս խոնարհ աղերսը մտիկ ընելով, գլուխը դէպ 'ի սենեկին պատուհանը դարձուց՝ որ աղատօրէն իր պեխը կրծէ և իր հառաչանքը զսպէ։

Թագաւորն իր անթաց աչքն և անաչառ դէմքը կ'պահէր։ Բայց արիւնն երեսին զարնելով կարմիր էր, և իր աչաց անվրդովութիւնը յայտնապէս կ'նուազէր։

— Ի՞նչ կ'փափաքիք — ըսաւ նա այլայլուն ձայնով մը։

— Ձեր Վեհափառութեան կ'գիմենք հայցելու համար — պատասխանեց Բէլլիսօն, որ փոքր առ փոքր այլայլութեամբ կ'համակուէր — առանց ձեր տհաճութեան աւելի տալու, տիկին Գուքէի հարիւր ոսկի փոխ տալու, զումար մը զոր իր ամուսնոյն վաղեմի բարեկամները հանդանակած են որպէս զի որբևարին կեանց ամենէն պիտանի եղած բաներէն չզրկուի։

Այս «ԲԷԼԼԻՍՕՆ» բառին վրայ, զոր Բէլլիսօն արտասաներ էր, մինչդեռ Գուքէ տակաւին կ'ապրէր, թագաւորը յետին ծայր զուռնատեցաւ. իր հպարտութիւնն անցաւ, գթութիւնը սրտէն շրթերուն հասաւ։ Գթալի ակնարկ մը ձգեց այն մարդոց վրայ որ իր ոտից ներքև կ'հեծեծէին։

— Քա՛ւ լիցի — պատասխանեց նա — որ անմեղն յանցաւորին հետ շփոթեմ։ Լա՛ւ չեն ճանչեր անոնք զիս որ տկարներու մասին իմ ողորմասիրութեանս վրայ կ'կասկածին։ Միայն ամբարտաւան մարդիկը պիտի հարուածեմ միշտ։ Պարոններ, տիկին Գուքէի վիշտն ամբելու համար ձեր սրտին թելադրածը կատարեցէք։ Գացէք, պարոններ, գացէք։

Երեք մարդիկ լուռ ու մունջ և ցամքած աչօք ոտք ելան։ Իրենց հրատապ այտերուն և արտևանունքին շփմամբն արտասուքնին ցամքեր էր։ Անկարող եղան թագաւորին շնորհակալութիւն մը ուղղելու, թէև թագաւորն ալ միւս կողմէ անոնց հանդիսաւոր խոնարհութենոյ վերջ տուաւ իր աթոռին ետևը քաշուելով աշխուժիւ։

Տ'Արգանեան թագաւորին հետ առանձին մնաց։

— Լա՛ւ — ըսաւ նորատի իշխանին մօտենալով, որ աչօք անոր հարցուփորձ կ'ընէր — լա՛ւ, տէր իմ։ Եթէ ձեր արևը զարդարող նշանաբանը չունենայիք, ձեզի պիտի ասի ուրիշ նշանաբան մը, Պ. Գոնբարի թողլով զայն լատիներէնի թարգմանելու գործը. «Հեզահամբոյր առ տկարն, դաժան առ զօրաւորն»։

Թագաւորը ժպտեցաւ և մօտակայ սրահը մտաւ, տ'Արգանեանի ըսելէ ետև.

— Անշուշտ արձակուրդի պէտք ունիս. այդ արձակուրդը քեզի կ'տամ որպէս զի վախճանեալ Պ. Վալլօնի, քու բարեկամիդ գործերը կարգի դնես։

ԺԶ

ԲՈՐԹՈՍԻ ԿՏԱԿԸ

Ի Բիէրֆօն՝ ամէն ինչ սուգի մէջ էր։ Գաւիթներն ամայի, ախոռները դոց, պարտէզներն երեսի վրայ մնացած։

Աւաղաններու մէջ՝ շատրուանները՝ որ երբեմն այնպէս վազուն փալփլուն էին և որոտալի, ինքնին կ'ցամքէին։

Դղեկին շուրջը՝ ճամբաներու վրայ՝ ջորիներով կամ ագարակի գրասներով քանի մը ծանրագլուխ մարդիկ կ'դային։ Ասոնք գրացի գիւղականներ, երէցներ և սահմանակից հողերու դատաւորներ էին։

Այս մարդիկ լռելեայն դղեակը կ'մտնէին, տխրադէմ ձիապանի մ'իրենց հեծանելիները կ'յանձնէին՝ և սեղանատուն որսորդի մ'առաջնորդութեամբ՝ մեծ սրահը կ'դիմէին, ուր, սեմին վրայ՝ Մուսքդօն հիւրերը կ'ընդունէր։

Մուսքդօն այնպէս նիհարցեր էր երկու օրէ 'ի վեր՝ որ իր զգեստներն իր վրայ լայնցեր էին, խիստ լայն պատեաններու նման, որոց մէջ թուրերու երկաթները կ'շարժին։

Իր դէմքը, որ՝ Վան Տիքի Տիրամօր պէս՝ կարմիր ու սպիտակ գոյնով հատեալ էր, երկու արծաթափայլ առուակներով կ'աւօսուէր, որ իրենց դաշտը կ'փորէին այտերուն վրայ, այտեր որ որչափ որ լեցուն էին ատեն մը, նոյնչափ թուլացեր էին իր սուգէն 'ի վեր։

Ամէն անգամ որ նոր այցելու մը կ'դար՝ Մուսքդօն նոր արտասուք կ'դնէր. և սիրտ ճմլող բան մ'էր տեսնել զինքն որ իր կոկորդը կ'սեղմէր իր խոշոր ձեռքով որպէս զի ողբ ու աղաղակ չարձակէ։

Այս ամէն այցելութեանց նպատակն էր Բորթոսի կտակին ընթերցումը, որ նոյն օրուան համար որոշուած էր, և որու ներկայ կ'ուզէին դանուիլ վախճանելոյն բոլոր ընչասէր կամ սրտակից բարեկամները, քանի որ ազգական մը չունէր իրեն յաջորդ։

Հանդիսականները քանի ներս մտնէին իրենց տեղը կ'բռնէին և մեծ սրահն այն ինչ գոյներ էր երբ կէսօր զարկաւ, որ ընթերցանութեան համար որոշեալ ժամն էր։

Բորթոսի փոխանորդը՝ որ բնապէս վարպետ Գօքնարի յաջորդն էր, սկսաւ ծանր ծանր բանալ ահագին մագաղաթը, որու վրայ Բորթոսի հզօր ձեռքն իր յետին կամքն արձանագրեր էր։

Սնիրը կոտրելէն ետև՝ ակնոցները դրին, յառաջաբանական հաղն հնչեց և ամէն մարդ ականջը տնկեց։ Մուսքդօն անկիւն մը սքլեր էր որ աւելի ազատ լայ, որ աւելի քիչ մտիկ ընէ։

Յանկարծ՝ մեծ սրահին երկու դռները բացուեցան իբրև հրաշքով մը, և սեմին վրայ առնական դէմք մ'երևցաւ, արևուն ամենէն կենդանի լուսով շողշողալով։

Տ'Արգանեանն էր որ մինչև դուռն եկեր էր առանձին, և մարդ մը չդտնելով որ իր ասպատանը բռնէ, իր ձին բազրիքին դնդին կապեր և ինքն իրեն ներկայացեր էր։

Սրահը յանկարծ լուսաւորող արևուն ճառագայթները հանդիսականներուն մրմունջը, և որ առաւելն է, հաւատարիմ շան բնազդումը, Մուսքդօնն իր խորին մտածութենէ սթափեցին։ Գլուխը բարձրացուց, տիրոջը հին բարեկամը ճանչց, և ցաւէն ուռնալով, վազեց անոր ծունկերուն փարեցաւ սալարկներն իր արտասուօքը թանալով։

Տ'Արգանեան վեր վերցուց խեղճ մատակարարը, իբրև եղբայր զանի համբուրեց, և ժողովին աղնութեամբ ողջոյնը տալով, որ միասին կ'խոնարհէր իր անունը փսփսալով, քանդակեալ կաղնիէ մեծ սրահին ծայրը դնաց բազմելու, միշտ Մուսքդօնի ձեռքը բռնած, որ հեղձամղձուկ կ'լինէր և աստիճանին վրայ կը նստէր։

Այն ատեն փոխանորդը՝ որ ուրիշներուն պէս այլայլած էր, սկսաւ ընթերցումը։

Բորթոս ջերմ քրիստոնէի հաւատոյ խոստովանութիւնն ընելէն ետև՝ իր թշնամիներէն ներողութիւն կ'խնդրէր թերևս ըրած վնասոց համար։

Այս տունը կարգայուելուն՝ անպատում զուարթութեան նշոյլ մը տ՝Արդանեանի աչերէն սահեցաւ։ Կ՝յիշէր նա վաղեմի ղինուորը։ Կ՝յիշէր Բորթոսի բոլոր թշնամիները՝ զոր իր արիական բազուկը տապալեր էր, և որոյ թիւը նշանակելու զանց կ՝ընէր կատարարը, և կ՝ըսէր իւրովի թէ Բորթոս՝ իր թշնամիները կամ անոնց հասուցած փորձանքն իմաստութեամբ մանր չէր նկարագրած՝ ապա թէ ոչ՝ ընթերցողին համար տաժանելի պիտի զարգործը։

Ապա այսպէս կ՝թուէր իր ինչքը։

« Աստուծոյ շնորհիւ՝ իմ ունեցած ստացուածքս են.

« Ա. Բիէրֆօնի կալուածքը, հողեր, անտառներ, մարդեր, ջրեր, լաւ պատերով շրջապատեալ.

« Բ. Պրասիէօի կալուածքը, դղեակ, անտառներ, մշակելի հողեր, որ երեք ապարակ կ՝կազմեն.

« Գ. Վալէօնի փոքրիկ հողը, այսպէս կ՝կոչուի, վասն զի ձորակին մէջն է . . . »։

Բարեսի՛րտ Բորթոս։

« Դ. Դուրէնի մէջ յիսուն ապարակ, որ հինգ հարիւր արտաւար տեղ կ՝պարունակեն.

« Ե. Շէրի վրայ երեք աղօրի, որոյ իւրաքանչիւրը վեց հարիւր ֆրանք հասոյթ կ՝բերէ.

« Զ. Պրիէնի մէջ երեք ջրակ, իւրաքանչիւրն երկու հարիւր ֆրանք հասոյթ բերող։

Իսկ շրջանաձև կալուածքս, որ այսպէս կ՝կոչուին, ըստ որում չեն կրնար շարժիլ, ինչպէս որ քաջ կ՝բացատրէ իմ պիտուն բարեկամս Վանի եպիսկոպոսը . . . »։

Տ՝Արդանեան այս սպալի անուան յիշատակին վրայ դող մը ղպայ։

Փոխանորդը անվրդով շարունակեց.

« Կ՝կայանան. Ա. Զանազան կարասիներէ զոր չեմ կարող այս տեղ մանրամասն յիշել տեղոյս անձկութեան պատճառաւ, և որոնք իմ բոլոր դղեակներս կամ տուներս կ՝զարդարեն, բայց որոյ ցուցակը շինած է իմ մատակարարս . . . »։

Ամէն ոք աչքը դարձուց Մուսքդօնի կողմը՝ որ իր վշտաց մէջ թաղուած էր։

« Բ. Քսան հատ հեծնելու և կառքի ձիերէ զոր մանաւորապէս Բիէրֆօնի դղեակս կ՝պտուին և որ կ՝կոչուին. Պայաբ, Ռօզան, Շարլմանը, Բէքէն, Տիւնոա, Լա Հէր, Օժիէ, Սամսն, Մէլան, Նէմրօդ, Ռուկանդ, Արոդ, Գալդրաբ, Դալէլա, Ռեպէկա, Էօլանդ, Գինեդ, Կրիզէդ, Լիզէդ և Մէլէդ։

« Գ. Վաթսուն շունէ, որ վեց վոհմակ կ՝կազմեն, հետևեալ կերպով բաժանեալ. առաջինն այծեմին համար, երկրորդը՝ գայլին համար, երրորդը՝ վարազին համար, չորրորդը՝ նապաստակին համար, և միս երկուքը պահպանութեան համար։

« Դ. Պատերազմի և որսորդութեան զէնքէ որ իմ զինարանիս մէջ կ՝գտնուին։

« Ե. Իմ Անժուի գինիներս, Աթոսի համար ընտրուած, վասն զի երբեմն զանոնք կ՝սիրէր, իմ Պուրգօնի, Շամբանի, Պորտոյի և Սպանիոյ գինիներս որ ութ մաւան և շտեմարան կ՝լեցընեն իմ այլ և այլ տուներուս մէջ։

« Զ. Իմ պատկերներս ու արձաններս որոյ մեծ արժէք կ՝տան, և որ բաւական բազմաթիւ են աչք յոգնեցնելու համար։

« Է. Իմ մատենադարանս՝ որ վեց հազար ամենանոր հատորներէ կ՝բաղկանայ, և զոր բնաւ բացած չեմ։

« Ը. Իմ արծաթեղէններս, որ թերևս քիչ մը մաշած են, և որ անտարակոյս հազար, հազար երկու հարիւր լիպրէ պիտի կշռեն, վասն զի հազիւ կարող էի զանոնք պարունակող սնտուկը բառնալ և զայն հրելով միայն վեց անգամ սենեկիս շրջանը կ՝ընէի։

« Թ. Բոլոր այս ինչքս, սեղանի և տան բոլոր ճերմակեղէններս ամենէն աւելի սիրած բնակարաններուս մէջ բաժնուած են . . . »։

Այս տեղ ընթերցողը լռեց որ քիչ մը շունչ առնու։ Ամէն ոք հառաչեց, հազաց և իր ուշադրութիւնը կրկնապատկեց։ Փոխանորդը շարունակեց.

« Անզաւակ ապրեցայ, և հաւանական է որ չպիտի ունենամ, և այս ինձի համար կսկծալի ցաւ մ՝է։ Սակայն կ՝սխալիմ, վասն

զի իմ միս բարեկամայս հետ զաւակ մ'ունիմ, այս է Պ. Ռաուլ–Օկիւստ–Ժիւլ տը Պրաժլօն, հարազատ որդի Պ. Լա Ֆէր կոմսին :

« Այս նորատի ազնուականն ինձ արժանի երևցաւ այն երեք ազիասիրտ ազատորդիներուն յաջորդելու որու բարեկամն ու ամենախնամարհ ծառան եմ » :

Այս տեղ սուր ձայն մը լսելի եղաւ : Տ'Արդանեանի սուրն էր այն որ կամարէն սահելով հնչուն տախտակին վրայ ընկեր էր : Ամէն մարդ աչքն այն կողմը դարձուց, և տեսաւ որ մեծ արտօսր մը տ'Արդանեանի խիստ արտևանունքէն իր արծուի քթին վրայ հոսեր էր, որու լուսաւոր ողնայարն արևուն առկայծեալ մահկին պէս կ'փայլիլէր :

« Այս պատճառաւ — շարունակեց փոխանորդը — իմ բոլոր ինչքս, շարժական և անշարժ, որ վերոյիշեալ ցուցակիս մէջ նշանակուած են, գերկոմս Ռաուլ–Օկիւստ–Ժիւլ տը Պրաժլօնի, Լա Ֆէր կոմսին որդւոյն թողուցի որպէս զի սփոփեմ զինքն իր ունեցած յաւէն, և փառաւորապէս իր անունը կրելու վիճակին մէջ դնեմ. . . » :

Բոլոր ունկնդիրներու մէջ երկայն մրմունջ մը լսելի եղաւ :

Փոխանորդը շարունակեց, տ'Արդանեանի լուսաճաճանչ նայուածքէն քաջալերեալ, որ բոլոր ժողովին վրայ ածելով ընդմիջեալ լռութիւնը վերահաստատեց :

« Պ. Պրաժլօն գերկոմսին վրայ պարտ կ'դնեմ Պ. տ'Արդանեան ասպետին տալու, ինչ որ յիշեալ ասպետն իմ ստացուածքէս պահանջէ :

« Պ. Պրաժլօնի վրայ կ'թողում իմ բարեկամ Պ. Հէրսլէյ ասպետին լաւ թոշակ մը կապելու՝ եթէ յաքսոր ապրելու ստիպուի :

« Պ. Պրաժլօն գերկոմսին կ'թողում իմ տանս մէջ տասն տարի ծառայութիւն ընող ազատաւորներս պահելու, և միւսներուն հինգ հարիւր ֆրանք պարգև տալու :

« Իմ Մուսքէտօն մատակարարիս քաղքի, պատերազմի և որսի հագուստներս, որ քառասուն եօթի կ'հասնին, կ'թողում, վստահ լինելով որ զանոնք պիտի հագնի մինչև որ իմ սիրոյս և յիշատակիս համար զանոնք հինցնէ :

« Ասկից զատ՝ Պրաժլօն գերկոմսին կ'կտակեմ՝ իմ վաղեմի սպասաւոր և հաւատարիմ բարեկամս Մուսքէտօնը, արդէն յիշատակեալ, պարտ դնելով յիշեալ Պրաժլօն գերկոմսին վրայ այնպէս վարուելու որ Մուսքէտօն մնացեալ ատեն յայտարարէ որ երբէք երջանիկ լինելէ չէ դադրած » :

Մուսքէտօն այս խօսքերը լսելով ողջունեց, գունատ և գողդոջուն, իր լայն ուսերն աւելորդէն կ'սարսռէին, իր գէմքը՝ որու վրայ սոսկալի վիշտ մը գրոշմուած էր, իր սառած ձեռքէն վեր վերցուց, և հանդիսականները տեսան որ կ'դայթէր, կ'վարանէր, որպէս թէ սրահէն դուրս ելնել ուզելով՝ ճամբայ մը կ'փնտռէր :

— Մուսքէտօն — ըսաւ տ'Արդանեան — իմ բարեկամս, դուրս ելիր, դնա պատրաստութիւններդ ըրէ : Քեզ Աթոսին տունը պիտի տանիմ, ուր Բիէրֆոնէն ելնելուս պիտի դիմեմ :

Մուսքէտօն բան մը չպատասխանեց : Հազիւ շունչ կ'առնուր, որպէս թէ այն սրահին մէջ ամէն ինչ օտար կ'երևէր : Դուռը բացաւ և ծանր ծանր անհերևոյթ եղաւ :

Փոխանորդն իր ընթերցումն աւարտեց, յորմէ հետէ Բորթոսին վերջին կամքը լսելու համար եկող բոլոր մարդիկը յուսակտուր այլ ակնածութեամբ դուրս ելան :

Իսկ տ'Արդանեան՝ մինակ մնալով՝ փոխանորդին յարգական ողջոյնն ընդունելէն ետև, կ'ղմայլէր կտակարարին այն խորին իմաստութեան վրայ, որ այնչափ արդարութեամբ իր ինչքը բաշխեր էր ամենէն արժանաւորին, չքաւորին, այնպէս փափկութեամբ որ ոչ ոք, ամենէն նրբամիտ պալատականներէն և ազնիւ սրտերէն երբէք նոյնչափ կատարեալ կերպով չպիտի բաժանէր :

Արդարև՝ Բորթոս՝ Ռաուլ Պրաժլօնի կ'պատուիրէր տ'Արդանեանի տալու ինչ որ նա պահանջէր : Այս արժանի Բորթոս քաջ գիտէր որ տ'Արդանեան բան մը չպիտի պահանջեր, և եթէ երբեք պահանջէր՝ իրմէ զատ մէկն անոր բաժինը չպիտի հանէր :

Բորթոս Արամիսի թոշակ մը կ'թողուր, և այս ալ եթէ շատ պահանջելու միտէր՝ տ'Արդանեանի օրինակէն պիտի չափաւորէր

իր պահանջումը. և այն ատոր բառը ըսր կատարարն առանց ակ-նարև գիտաւորութեան կ'գրէր, միթէ ամենէն քաղցր, ամենէն գողտրիկ գաղափարութիւնը չէր Աբամիսի նկատմամբ, որ Բորթոսի մահուան պատճառ եղեր էր:

Վերջապէս Աթոսն յիշուած չէր հրիտակին մէջ: Իրօք Բորթոս կարող չէր ենթադրել որ որդին լաւագոյն բաժինն իր հօրը չպիտի հանէր: Բորթոսի խոշոր միտքը բոլոր պատճառները դատեր, բոլոր տարբերութիւններն ըմբռներ էր քան թէ օրէնքը, քան թէ սովորութիւնը, քան թէ ճաշակը:

— Բորթոս սիրտ մ'էր — ըսաւ տ'Արդանեան իւրովի հառաչելով:

Եւ իրեն այնպէս երևցաւ թէ առաստաղին մէջ հեծեծանք մը լսեց: Իսկոյն խեղճ Մուսքդոնը միտքն ընկաւ, և պէտք էր անոր վիշտն սփոփել:

Այս նպատակաւ տ'Արդանեան արտորնօք սրահէն դուրս ելաւ, պատուական մատակարարը փնտռելու համար, քանի որ նա չէր վերադառնար:

Առաջին գտիկոնը տանող սանդղէն վեր ելաւ, և Բորթոսի սենեկին մէջ ամէն տեսակ զոյնէ և կերպասէ հանդերձներու կոյտ մը տեսաւ, որոց վրայ Մուսքդոն պառկեր էր ինքն անձամբ զանոնք գիրելէն ետև:

Այս էր հաւատարիմ ծառային բաժինը. այս զգեստներն իրն էին գլխովին, իրեն շնորհուած էին: Մուսքդոն իր ձեռքը կ'տարածէր այս մասունքին վրայ, իր շրթերովը սրտանց կ'համբուրէր, իր երեսներն անոնց կ'քսէր, իր բոլոր մարմնով զանոնք կը ծածկէր:

Տ'Արդանեան մօտեցաւ որ այս խեղճ մարդը մխիթարէ:

— Աստուած իմ — ըսաւ նա — չշարժիր նա, մարած է:

Տ'Արդանեան կ'սխալէր. Մուսքդոն մեռած էր:

Մեռած էր նման շան, որ իր տէրը կորուսելուն, անոր զգեստին վրայ կ'դար մեռնելու:

ԺԷ

ԱԹՈՍԻ ԾԵՐՈՒԹԻՒՆԸ

Երբոր այս դէպքերն 'ի սպառ կ'բաժնէին իրարմէ չորս հրամանակիրները, որոնք երբեմն անլուծանելի երևցող զօրերով կապուած էին, Աթոս, Ռաուլին մեկնելէն ետև միայնակ մնալով, սկսեր էր իր հարկը վճարել կանխագուշակ մահուան որ կ'կոչուի սիրեցեալ բարեկամներու բացակայութիւնը:

Աթոս իր Պլուայի տունը դառնալով, զուրկ մնալով նոյն իսկ Կրիմօէն եղուկ ժպիտ մը քաղելու երբոր ածուներէն կ'անցնէր, կ'զգար նա օր ըստ օրէ իր զօրեղ բնութեան այլայլիլը, թէև երկար ատենէ 'ի վեր՝ անքայքայելի կ'երևէր:

Սիրեցեալ որդւոյն ներկայութենէ իր տարիքը ժամանակ մը զօրանալէն ետև՝ այժմ կ'զառամէր յաւերու և նեղութեանց հասնելովը, որոնք կ'ստուարանան քանի ուշանան: Աթոս իր որդին չունէր իր քովն որպէս զի շիտակ քալելու, գլուխը բարձր բռնելու, բարի օրինակ տալու ջանար. չէր տեսներ ալ երիտասարդին փայլուն աչունքը, միշտ հրավառ վառարան մ'որու մէջ իր աչացը բոցը կ'կենդանանար:

Դարձեալ, պէտք է ըսել, իր բնութիւնն որ գորովոյն և աղնութեան կողմէ թէև գողտրիկ, իր թուիչքը զսպող բան մը չունենալով, գռեհիկ հոգիներու ամէն ուժգնութեամբն ինքզինքը յաւոյ անձնատուր կ'ընէր, երբ անոնք ուրախութեան անձնատուր կ'լինին:

Լա Ֆէր կոմսը, մինչև վաթսուն երկրորդ տարին դեռ ևս երիտասարդ մնալով, այս պատերազմիկ մարդն որ իր այժը պահեր էր յոգնութեանցը չնայելով, իր մտքի թարմութիւնը՝ դժբաղդութեանց չնայելով, իր հոգւոյ քաղցր պայծառութիւնը՝ Միլէտիին, Մազարէնին, Լա Վալիէրին չնայելով, Աթոս ութ օր-

ուան մէջ ծերացեր էր, քանի որ իր նախորդ երիտասարդութեան նեցուկը կորուսեր էր։

Միշտ գեղեցիկ, այլ գլխիկոր, ալնիւ, այլ տրտում, իր սպիտակացած մազերովն անուշ և երերուն՝ իր առանձնական կեանքէն 'ի վեր՝ կ'փնտռէր բայսաներն որոցմէ արևը ծառուղիներու տերևները կ'ծածկէր։

Իր ամբողջ կենաց չարքաշ սովորութիւնը մոռցաւ երբ Ռաուլ իրմէ հեռացաւ։ Սպասաւորները՝ որ սովոր էին ամէն եղանակի մէջ այդուն անկողնէն ելնելը տեսնել, զարմացան գիտելով որ ամառն իսկ ժամը եօթը հնչելուն իրենց տէրն անկողնէն վար չէր իջներ։

Աթոս պառկած կ'մնար, գիրք մը բարձին ներքև, և չէր քնանար, և չէր կարդար։ Իր մարմինը կրելու անփոյթ լինելով կը պառկէր և կ'թողուր որ հոգին ու միտքը սրանան և իր որդւոյն կամ Աստուծոյ դառնան։

Երբեմն ահ ու գող կ'զգային տեսնելով որ ամբողջ ժամեր անձայն, անզգայ մտախոհութեան մէջ ընկղմած կ'երևէր. այլ ևս չէր լսեր երկիւղալի սպասաւորին քայլափոխը, որ սենեկին սեմը կ'գար իր տիրոջ քունը կամ զարթումը լրտեսելու։ Սէպ կ'մտնար որ օրը կիսովին անցած, թէ առաջին երկու ճաշելու ժամն անցած էր։ Այն ատեն զինքը կ'արթնցնէին, նա անկողնէն կ'ելնէր, իր մութ ծառուղին կ'իջնէր, ապա քիչ մ'արևուն կը դար կ'նստէր որպէս զի պահ մ'իր տարակայ որդւոյն հետ անոր ջերմութեան մասնակից դտնուի։ Ապա սպալի, մենակերպ պտոյտը կ'սկսէր մինչև որ յոգնելով սենեակն ու անկողինը կ'քաշուէր, որ իր նախամեծար վայրն էր։

Շատ օրեր՝ կոմը բառ մը չարտասանեցաւ։ Իրեն եկող այցելուներն ընդունելու մերժեց, և գիշերը՝ իր կանթեղը վառելով երկար ժամեր անցուց գրելով և մագաղաթներ թղթատելով։

Աթոս նամակ մը գրեց 'ի Վան, ուրիշ մ'ի Ֆոնդէնպլօ. այս գիրերն անպատասխանի մնացին։ Ցայտնի է թէ ինչու համար. Արամիս Ֆրանսայէն հեռացեր էր, ա'Արդանեան Դանդէն 'ի Բասրիզ և Բարիզէն 'ի Բիէրֆօն կ'ուղևորեր։ Իր սենեկապանը գիտեց

որ իր շրջագայութեան մէկ քանի պտոյտները կ'նուազեցնէր։ Թմբիներու երկայն ուղին քիչ ատենէն շատ երկայն երևցաւ այն ոտից համար որ օրը հաղար անգամ կ'երթևեկէին։ Կոմը դժուարաւ կ'հասնէր մինչև մէջ տեղի ծառերը, կ'նստէր լօռուտ բազմոցի մը վրայ որ կողմնակի ծառուղի մը կ'կտրէր աղեղնաձև, և նոյն վայրը կ'ոպասէր որ գիժը վրան գայ կամ լաւ ևս գիշերը հասնի։

Շատ չանցաւ հաղիւ հարիւր քայլ որ առնէր ատատիկ կ'յոգնէր։ Աթոս չուզեց այլ ևս ելնել անկողնէն. սնունդ առնուլ, և իր մարդիկը զարհուրելով, թէև իրենց տէրը չէր տրտնջար, թէև միշտ ժպիտը շրթերուն վրայ էր, թէև միշտ իր անուշ ձայնովը կ'խօսէր, իր մարդիկը Պլուա դացին և հանդուցեալ արքայազնօր հին բժիշկը բերին, այնպէս որ կարող եղաւ Լա Ֆէր կոմը տեսնել ինք անտես մնալով։

Այս նպատակաւ հիւանդին սենեկին կից սենեակ մը տարին բժիշկը, և զինքն աղաչեցին որ չերևի, վախնալով որ տիրոջ անհաճոյ բան մ'ըրած կ'լինին, քանի որ բժիշկ մը խնդրած չէր։

Բժիշկը հնազանդեցաւ. Աթոս նոյն երկրին ազատորդիներուն համար տեսակ մ'օրինակ էր. Պլուայցիք կ'պարծէին որ գաղղիական փառաւոր հին գերդաստաններուն այս մասունքն իրենց մէջ ունին. Աթոս շատ մեծ ազնուական մ'էր բաղդատելով այն ազնուականներուն հետ զոր թագաւորը կ'ստեղծէր իր նոր և արդասաւոր դատաղանը զարնելով գաւառական ազնուականաց ծառերուն չորցած կոճղերուն։

Ըսինք որ Աթոսը կ'յարգէր ամէն ոք և կ'սիրէր։ Բժիշկը չդիմացաւ տեսնելով որ անոր ստատաւորները կ'ողբան և տեղւոյն աղքատները կ'գումարուին, որոց Աթոս կեանք և մխիթարութիւն կ'տար իր պատուական խօսքերով և ողորմութիւններով։ Ուստի իր թագստեան տեղէն գաղտնի հիւանդութեան նշանները քննեց, հիւանդութիւն որ օր ըստ օրէ կ'բեկանէր և կ'կրծէր կարեվէր մարդ մ'որ երբեմն դեռ ևս լի էր կենդանութեամբ և ապրելու տենչանօք։

Աթոսի այտերուն վրայ տենդի կարմրութիւնը գիտեց որ կ'վա-

ոի և կ'սնանի ծանր. անողոքմ անեդ, որ սրաի մը խորշին մէջ կ'ծնի, այս պատաարին եաև կ'ապաւինի, ծնած ցաը սասակայընելով, վանդաւոր կայութեան մը պատճառն ու միանգամայն հետևանքը։

Ըսինք որ կոմսը մարդու մը չէր խօսեր, և ոչ իսկ առանձին կ'խօսէր։ Իր միտքն աղմկէ կ'երկնչէր, այն բորբոքման ասոիճանին հասեր էր որ յափշտակութեան կ'յանդի։ Այսպէս համակեալ մարդը, եթէ տակաւին Աստուծոյ ծոցը չէ, արդէն երկրի վրայ ալ չապրիր։

Բժիշկը շատ ժամեր անցուց քննելով այս վշտալից պայքարը կամայ ղերագոյն զօրութեան մը դէմ։ Զարհուրեցաւ տեսնելով այն միշտ անթարթ աչերը, այն միշտ անտեսանելի նպատակի մը սևեռած աչերը. զարհուրեցաւ տեսնելով որ նոյն շարժմամբ կը բախէր այն սիրան որուն սովորութիւնն երբէք հատաչ մ'անդամ չէր վրդովեր. երբեմն ցաւին սրութիւնը բժշկին յոյս կ'տայ։

Օրուան կէսն այսպէս անցաւ. բժիշկն իբրև բարեսիրտ մարդ, իբրև անյողդողդ միտք իր որոշումն ըրաւ. յանկարծ իր թաղըստեան վայրէն դուրս ելաւ, և շիտակ Աթոսին մօտեցաւ. Աթոս զանի տեսաւ բնաւ զարմանք չցայտանելով որպէս թէ այս երևոյթէն ոչ ինչ չէր հասկընար։

— Պարոն կոմս, ներեցէք — ըսաւ բժիշկը բաղխատարած հիւանդին դիմելով — բայց՝ ձեզի յանդիմանութիւն մ'ունիմ ընելու. դիս պիտի մտիկ ընէք։

Եւ Աթոսին դլխուն կողմը նստաւ, և Աթոս դժուարաւ փարատեց իր մտահոգութիւնը։

— Ի՞նչ կայ, տօքդէօր — հարցուց կոմսը պահ մը լռութիւն պահելէն ետև։

— Այս կայ որ հիւանդ էք, պարոն, և ինքզինքնիդ խնամել չէք տար։

— Ե՞ս, հիւանդ — ըսաւ Աթոս ժպտելով։

— Տենդ, հալումաշ, հիւծութիւն, նիհարութիւն, կոմսդ իմ։

— Հիւծութիւն — պատասխանեց Աթոս — միթէ կարելի՞ բան է։ Անհոգնէն չեմ ելներ։

— Օ՜ն, օ՜ն, կոմս, բարուրանք պէտք չեն, դուք լաւ քրիստոնեայ մ'էք։

— Այդպէս դիտեմ — ըսաւ Աթոս։

— Միթէ կ'ուզէք սպաննել ինքզինքնիդ։

— Երբէք, տօքդէօր։

— Լաւ ուրեմն, պարոն, երթալով կ'մաշիք. այդպէս մնալ ինքնասպանութիւն է. բժշկուեցէք, պարոն կոմս, բժշկուեցէք։

— Ի՞նչ բանէ։ Նախ ցաւս գտէք։ Ես, երբէք լաւագոյն վիճակի մէջ չեմ գտնուած, երբէք երկինքն այսչափ աղոր չէր ներեցած ինձ, երբէք իմ ծաղիկներս այսչափ չեմ սիրած։

— Թագուն վիշտ մ'ունիք,

— Թագուն . . . ո՛չ, բնաւ, տօքդէօր. որդւոյս բացակայութիւնն ունիմ, ահա իմ բոլոր ցաւս այս է, չեմ ծածկեր։

— Կոմս, ձեր որդին կենդանի է, ուժեղ է, իր արժանիքն ու տոհմն ունեցող մարդոց ասպարէզն ունի իր առջև. ապրեցէք անոր համար . . .։

— Բայց կ'ապրիմ, տօքդէօր . . . ո՜հ, անհոգ եղիք — յարեց նա մելամաղձութեամբ ժպտելով — որչափ ատեն որ Ռաուլ ապրի, անշուշտ պիտի իմանանք. վասն զի որչափ ատեն որ ապրի, պիտի ապրիմ։

— Ի՞նչ կ'ըսէք։

— Շատ պարզ բան մը։ Տօքդէօր, այս պահուս կեանքն յիս առկախ կ'պահեմ. իմ կարողութենէս վեր է մուսայկոտ, անզգայ, անտարբեր կեանք մը վարել երբ Ռաուլ իմ քովս չէ։ Կանթեղը չէք պահանջեր որ վառի երբ կայծն անոր բոց չհաղորդեր. մի՛ պահանջէք որ ապրիմ աղմկի ու պայծառութեան մէջ։ Կ'բուսնիմ, կ'պատրաստուիմ, կ'սպառիմ։ Գիտէք, տօքդէօր, կ'յիշէք այն մեր ստէպ տեսած զինուորները նաւահանգիստներու մօտ՝ ուր նաւ մտնելու կ'սպասէին, պառկած, անտարբեր, կէս մը ջրի կէս մը յամաքի վրայ, ո՛չ այն տեղոյն համար էին ուր ծովը զանոնք պիտի տանէր, ոչ այն տեղոյն համար ուր երկիրը զանոնք պիտի կորուսէր, իրենց մտուկները պատրաստ, միտքը ձկտած, աչք ակնապիշ, կ'սպասէին։ Կ'կրկնեմ, այս բառն իմ

ներկայ կեանքս նկարագրող բառն է։ Այն զինուորներուն պէս պատ-
կած՝ ինձ հատած ձայնելուն ականջս դրած, կ'ուզեմ պատրաստ
գտնուիլ որ առաջին կոչման մեկնիմ։ Ո՞վ պիտի ընէ ինձ այս
կոչումը. կեանքը կամ մահը։ Ատուած կամ Ռաուլ։ Իմ ծրար-
ները պատրաստ են, հոգիս կապմ, նշանին կ'սպասեմ. . . կ'սպա-
սեմ, ասքդէօր, կ'սպասեմ։

Տօքդէօրն այս մարդուն բնաւորութիւնը քաջ կ'ճանչէր, այս
մարմնոյն սնդութիւնը կ'գնհատէր, պահ մը մտածեց, ինքնիրեն
ըսաւ որ խօսքն անօգուտ է, գեղերն անպատեհ, և մեկնեցաւ Ա-
թոսին սպասաւորները յորդորելով որ պահ մ'իրմէ չհեռանան։

Երբ բժիշկը մեկնեցաւ, Աթոս ոչ բարկութիւն յայտնեց և ոչ
նեղութիւն որ զինքը վրդովեցին. և ոչ իսկ պատուիրեց որ ի-
րեն անմիջապէս բերեն տան գալիք նամակները. քաջ գիտէր որ
ամէն սփոփում որ իրեն գրսէն կրնար հասնիլ ուրախութիւն մ'էր,
յոյս մ'էր զոր իր սպասաւորները մատակարարելու համար իրենց
կեանքն անգամ պիտի զոհէին։

Աթոս աւելի քիչ կ'քնանար. այնքան կ'մտածէր որ երբեմն
քանի մը ժամ խոր, մթին մտախոհութեան մէջ կ'ընկնէր, մտա-
խոհութիւն զոր ուրիշներ թերևս երազ անուանէին։ Այս ժամա-
նակաւոր անդորրութիւնը մարմինը կ'մոցնէր, մինչդեռ հոգին
զայն կ'սաղնապէր. վասն զի Աթոս կրկնապատիկ կեանք մը կը
վարէր իր իմացականութեան այս ուղեղնայութեան առեն։ Գի-
շեր մ'երազեց որ Ռաուլ իր վրանին ներքև կ'հաղուէր, որպէս
զի անձամբ Պ. Պօֆօրին հրամայած մէկ արշաւանքին ուղեկցի։
Երիտասարդը տխուր էր։ Իր զրահին կոճակները ծանր ծանր կը
դնէր, ծանր ծանր իր սուրը կ'կապէր։

— Ի՞նչ ունիս ուրեմն — հարցուց անոր հայրը գորովանօք։

— Ձիս վշտացնողը, Բորթոսի, մեր պատուական բարեկամին
մահն է — պատասխանեց Ռաուլ — այս տեղ կ'քաշեմ այն ցաւը
զոր դու վարը կ'զգայիր։

Եւ տեսիլն անհետացաւ եղաւ Աթոսի քունով։

Առաւօտուն կանուխ, սպասաւորներէն մին իր տիրոջը սենեակը
մտաւ, և Սպանիայէն եկած նամակ մ'անոր յանձնեց։

— Արամիսի ձեռագիրն է — մտածեց կոմսը։

Եւ գիրը կարդաց։

— Բորթոս մեռե՛ր է — գոչեց նա առաջին տողերը կարդա-
լէն ետև։ — Ո՛ Ռաուլ, Ռաուլ, շնորհակալ եմ. խոստումդ կը
պահես. դու ինձ իմաց կ'տաս։

Եւ Աթոս, մահաբեր քրտինք թափելով անկողնոյն մէջ մտ-
ցեցաւ, և ուրիշ պատճառ չունէր այլ միայն տկարութիւնը։

ԺԸ

ԱԹՈՍԻ ՏԵՍԻԼԸ

Երբ Աթոսի նուաղումը դադրեցաւ, կոմսը՝ գրեթէ ամչնալով
այս գերբնական գէպքէն տկարանալուն վրայ, հաղուեցաւ, ձի
մը խնդրեց և միտքը դրաւ Պլուա գնալ որպէս զի աւելի ստոյգ
թղթակցութիւն հաստատէ թէ Ափրիկէի հետ թէ ա՛Արդանեանի
կամ Արամիսի հետ։

Արդարև՝ Արամիսի այս նամակը Պէլ-Իսլի արշաւանին և յա-
ջողութեան վրայ լուրեր կ'հաղորդէր Աթոսին։ Բորթոսի մահուան
վրայ այնպիսի մանր տեղեկութիւններ կ'տար որ Աթոսի անձնուէր
և փափուկ սրտին խորն անգամ յուզուեցաւ։

Ուստի Աթոս իր Բորթոս բարեկամին վերջին այցելութիւն մը
ընել ուզեց։ Իր զինակից բարեկամին այս պատիւն ընելու հա-
մար միտք ունէր ա՛Արդանեանի իմաց տալ, Պէլ-Իսլի ուխտա-
գնացութիւնը միասին կատարել և հսկային գերեզմանը տեսնել,
հսկան զոր այնքան սիրեր էր, և ապա իր տունը դառնալ, որ-
պէս զի հպատակի այն գաղտնի ազդեցութեանն որ զինքը յաւի-
տենականութեան կ'տանէր այս խորհրդաւոր ճամբաներով։

Բայց հաղիւ թէ ծառաներն իրենց տերը հաղուեցուցին, ու-
րախանալով որ ճամբորդութիւն պիտի ընէր և այսպէս թախծու-
թիւնը պիտի փարատէր, հաղիւ թէ ամենէն հանդարտ ձին թամ-

բելով դրանդին առջև բերին, որ Ռաուլի հայրը դլխու պտոյտ մը ղրաց, սրունքը թուլցան, և տեսաւ որ անկարելի էր իրեն քայլ մ'ևս առնուլ։

Աթոս խնդրեց որ զինքն արևուն տանին. լուռուտ նստարանին վրայ զինքը տարածեցին, ուր ամբողջ ժամ մ'անցուց սթափելէն առաջ։

Առաջին օրերուն անշարժ անդորրութենէ ետև այս թմբրութիւնը բնական էր։ Աթոս արդանակ խմեց ոյժ առնլու համար, և իր չորաբեկ շրթունքն ամենէն աւելի սիրած Անժուի գինիով, զոր Բորթոս իր սքանչելի կտակին մէջ յիշեր էր, թրջեց։

Այն ատեն Աթոս փոքր ինչ կաղկաղելով, միտքը բացուելով ձին բերել տուաւ. բայց ծառաներուն օգնութիւնը պէտք եղաւ որպէս զի կարենայ աշտանակել։

Հաղիւ թէ հարիւր քայլ առաւ. սարնուռ մը սլաշարեց զինքն երբ Ճամբայ մը դարձաւ։

— Ահա տարօրէն բան մը — ըսաւ նա իր սենեկապանին, որ իրեն կ'ուղեկցէր։

— Կայ առնունք, պարոն, կ'պաղատիմ ձեզ — պատասխանեց հաւատարիմ ծառան։ — Ահա կ'դունատիք։

— Այդ արդելք չկրնար լինիլ իմ Ճամբաս շարունակելու, քանի որ ուղի ընկած եմ — պատասխանեց կոմսը։

Եւ ձիուն սանձը թողուց։

Բայց յանկարծ կենդանին՝ փոխանակ տիրոջը մտքին հնազանդելու, կանգ առաւ։ Շարժում մը զոր Աթոս չկրցաւ հասկընալ, սանձը սեղմեր էր։

— Բան մը կայ որ կ'արդիլէ զիս աւելի հեռուն դնալու։ Բռնեցէք զիս — յարեց նա թեւերը տարածելով — շուտ մօտեցէք, կ'զգամ որ բոլոր ջիլերս կ'թուլնան և ձիէն վար պիտի ընկնիմ։

Սպասաւորն իր տիրոջն ըրած շարժումը տեսած ժամանակ ընդուներ էր նաև հրամանը։ Շուտ մը մօտեցաւ, իր թեւերուն մէջ ընդունեց կոմսը. և որովհետև դունէն այնքան հեռացած չէին որ, ծառաները, Լա Ֆէր կոմսին չուն տեսնելու համար սեմին վրայ կեցեր էին, չտեսնեն իրենց տիրոջ սովորաբար կանոնաւոր

ընթացքին մէջ այս անկանոնութիւնը, սենեկապանն իր ընկերները կանչեց շարժումով և ձայնով. այն ատեն ամենքը վազեցին արտօրինօք։

Հաղիւ թէ Աթոս քանի մը քայլ առաւ իր տունը դառնալու, որ աւելի աղէկ դատաւ ինքզինքը։ Կարծես թէ իր կորովը վրան եկաւ, և Պլուա երթալու կամք ըրաւ վերստին։ Ձիուն շրջան մ'ընել տուաւ։ Բայց այն ինչ քիչ մը քալեց կենդանին, որ վերստին Աթոս թմբրութեամբ և անձկութեամբ համակուեցաւ։

— Օ'ն, Ճշմարիտը — մրմնաց նա — Կ'ՈՒԶԵՆ որ տունս մնամ։

Իր մարդիկը մօտեցան, ձիէն վար առին զինքը, ամենքը վազելով տունը բերին ու իր անկողնոյն մէջ տարածեցին։

— Բաջ դիտեցէք — ըսաւ անոնց քնանալու պատրաստուելով — որ այսօր իսկ Ափրիկէէն նամակներու կ'սպասեմ։

— Տէր իմ, ուրախութեամբ պիտի իմանաք անշուշտ — պատասխանեց սենեկապանը — որ Պլէզուայի որդին ձի հեծնելով Ճամբայ ելաւ որպէս զի Պլուայի սուրհանդակէն ժամ մ'առաջ հասնի։

— Շնորհակալ եմ — պատասխանեց Աթոս իր բարեմտին ժպիտովը։

Կոմսը քնացաւ. իր անձկալի քունը տառապանքի կ'նմանէր։ Իր վրայ հսկողն անոր դէմքին վրայ ստէպ դիտեց որ ներքին տանջանք մը զինքը կ'նեղէր։ Թերևս Աթոս կ'երազէր։

Նոյն օրն անցաւ. Պլէզուայի որդին դարձաւ. սուրհանդակը նամակ չէր բերած։ Կոմսը յուսահատութեամբ կ'համբէր վայրկեանները, կ'զողզողար երբ այս վայրկեանները ժամ մ'եղան։ Մտածելով որ Թերևս զինքն իր որդին մոռցեր էր, սրտին մէջ սոսկալի ցաւ մը զգաց։

Տան մէջ՝ ոչ ոք կ'յուսար որ սուրհանդակը պիտի դար, շատ ատենէ 'ի վեր որոշեալ ժամն անցեր էր։ Պլուա զրկուող մարդն իր ուղևորութիւնը չորս անգամ կրկներ էր, բայց կոմսին հաստատեալ բան մը չէր եկած։

Աթոս գիտէր որ այն սուրհանդակը շաբաթը մի անգամ կ'հասնէր։ Ուստի ութ մնացեր օրեր ունէր սպասելու։

Գիշերը սկսաւ այս վշտալից համեղմամբ։

Ինչ որ հիւանդ և առ վշտին սրտմտեալ մարդ մը կարող է արդէն ախուր հաւանականութեանց աւելցնել մթին ենթադրութիւններ, Աթոս՝ այս դժնդակ գիշերուան առաջին ժամերուն մէջ նոյն ենթադրութիւնները մտացը մէջ դիզեց։

Տենդը զինքը բռնեց. կուրծքն ելաւ, ուր կրակն արդէն սկսեր էր, Պլուայէն եկող բժշկին բացատրութեան համեմատ։

Քիչ առենէն գլուխը հասաւ։ Բժիշկն երկու անգամ արիւն առաւ, որով թէև փոքր ինչ թեթևցաւ հիւանդը, սակայն տկարացաւ և միայն գլուխը սկսաւ գործել։

Սակայն այս ահարկու տենդը դագրեր էր։ Իր վերջին գողը միայն անդամներուն ընդարմացած ծայրերը կ'գտնուէին, 'ի վերջ բոլորովին վերջացաւ երբ կէս գիշեր եղաւ։

Բժիշկն այս անկասկածելի լաւութիւնը տեսնելով՝ Պլուա դարձաւ քանի մը հրամաններ տալէն ետև, և խմացուց որ կոմսն աղատած է։

Այն առեն Աթոս տարօրինակ, անբացատրելի վիճակի մը մէջ ընկաւ։ Մտածելու աղատ գտնուելով՝ իր միտքը դէպ 'ի Ռաուլ թռաւ, այս սիրեցեալ որդւոյն կողմը։ Իր երևակայութիւնն իրեն ցոյց տուաւ Ափրիկէի դաշտերը ճիկէլլիի շրջակայքը, ուր Պ. Պօֆօր ցամաքն ելած էր իր բանակովը։

Մոխրագոյն ժայռեր էին տեղ տեղ բոլորովին կանաչցած ծովուն ջրէն, երբ փոթորկի և ալէկոծութեան ժամանակ ծովը կը դայ ափունքը բախելու։

Ծովեղերքէն անդին՝ որ գոյնզգոյն կ'երևէր այս ժայռերէն որ դերեզմաններու կ'նմանէին, ամփիթատրոնի պէս կ'բարձրանար՝ հերձիներու և հրէկեանների (cactus) մէջ մուխով, աղմկով և շփոթալի շարժումներով լի աւան մը։

Յանկարծ՝ այս մուխին մէջէն դուրս ելաւ բոց մ'որ՝ թէև սողալով՝ յաջողեցաւ սոյն աւանին մակերևոյթը ծածկելու, և որ փոքր առ փոքր տարածուելով՝ սոյն կարմիր մրրկին մէջ ամփոփեց լաց, աղաղակ, երկինք ամբարձած ձեռներ։ Պահ մը ահռելի խառնուրդ մ'եղաւ, տախտակներ վար կ'գլորէին, ոլորած երկաթներ, այրած քարեր, ներևոյթացած ծառեր։

Հիանալի՛ բան. այս քառսին մէջ ուր Աթոս բարձրացած թևեր կ'նշմարէր, ուր աղաղակներ, հեծեծանք, հաւաչանք կ'լսէր, քնաւ մարդկային դէմք մը չտեսաւ։

Հեռուն թնդանօթը կ'դուար, հրայանները կրակ կ'թափէին, ծովը կ'մռնչէր, խաշինքը խոյս կ'տային կանաչաւէտ դարերու վրայ ոստոստելով։ Բայց զինուոր մը չկար որպէս զի պատրոյզը թնդանօթի մարակոյներուն մօտեցնէ, նաւորդ մը չկար որպէս զի նաւատորմն ուղղէ, հովիւ մը չկար այս հօտերուն համար։

Գիւղին կործանումն և անոր վրայ նայող ամրոցներուն աւերումն ետև, հմայութեամբ կատարուած քանդ ու աւեր, առանց մարդու մը գործակցութեան, բոցը մարեցաւ, մուխը սկսաւ վեր ելնել, ապա թանձրութիւնը նուազեցաւ, դունատեցաւ և լիովին անհետ եղաւ։ Ապա այս տեսարանին վրայ խաւարը տիրեց, երկրի վրայ դիմահար գիշեր մը, երկնից վրայ փայլփլուն. ափրիկեան երկնից երեսը շողայուղ բոցավառ խոշոր աստղերը կ'փայլփլէին միայն ինքնին և իրենց շուրջը լուսաւորելով։

Երկար լռութիւն մը տիրեց որ պահ մը Աթոսին շփոթ երևակայութեան հանգիստ տուաւ, և որովհետև կ'զգար որ տեսնելիքը տակաւին վերջացած չէ՝ աւելի ուշադրութեամբ իր իմացականութեան նայուածքը սևեռեց իր երևակայութեան պարզելիք տարօրէն տեսարանին վրայ։

Շատ չանցաւ այս տեսարանն իրեն համար սկսաւ։

Մեղմիկ և տմոյն լուսին մը ծովեղերքն զաւ 'ի թափին ետևի կողմէն ելաւ, և նախ ծովուն դեղաձուփ կոհակները ցոլանալով՝ որ կարծես թէ հանդարտեր էին Աթոսի տեսլեան ժամանակ իրենց մռնչիւններն արձակելէն ետև, լուսինը, ըսինք, իր անդամանդներն և արևակները բլրին մայաներուն և թաւուտներուն վրայ թափեց։

Սպիտակ ժայռեր՝ լուիկ և ուշադիր ուրուականներու նման, կարծես թէ իրենց կանաչագեղ սաբերը կ'ամբառնային որ լուսնկային՝ պատերազմի դաշտը նկատեն, և Աթոս դիտեց որ այս դաշտը՝ կռուին ժամանակ բոլորովին թափուր թէև, այժմ դեռ հատարած դիակներով լեցուած էր։

Իր հողին երկիւղի և սոսկումի անպատում սասսուռ մը բրուռնեց՝ երբ Բիզարտիայի զինուորներուն սպիտակ և կապոյտ համազգեստը ճանչցաւ, տեսաւ իրենց կապոյտ ճարմանդով երկայն նիզակները, և իրենց հրացաններն որոց բունին կողմն շուշանի նշանով փորագրուած էր։

Երբոր տեսաւ այն բաց և կապուտակ վերքն որ դէպ 'ի երկին կ'նայէին, որպէս թէ անօրէն կ'խնդրէին վերասլաց հոգիները,

Երբ տեսաւ փորաթափ, սխրալի ձիերը, որոց լեզուն կողմնակի դուրս ընկած էր շրթերէն, և որ իրենց շուրջը թափուած սառ արեան մէջ թաւալած՝ իրենց սապաձակներն ու բաշերը կ'աղտոտէին,

Երբ Պ. Պօֆօրի ճերմակ ձին տեսաւ, ջախջախեալ գլխով մեռելոց դաշտին մէջ առաջին կարգին վրայ,

Ամենս իր ճակտին տարաւ սպաղ ձեռքն և զարմացաւ որ ճակատը չէր այրեր։ Այս շփմամբ համոզուեցաւ որ՝ անտենդ հանդիսատեսի պէս՝ ներկայ կ'գտնուէր ճակատամարտի մը, զոր մղած պիտի լինէր առջի օր արշաւական բանակը Ճիկէլլիի ծովափանց վրայ, բանակ մ'որուն Ֆրանսայի ծովեզրէն հեռանալ և հորիզոնին վրայ անհետանալը տեսեր էր, և գքսին հրամանաւ անոր արձակած վերջին թնդանոթին նշոյլը մութով և շարժումով բարևեր էր՝ իբրև հրաժարական նշանակ առ հայրենիս։

Ո՞վ կարող է նկարագրել թէ ինչ մահացու կսկծանօք իր հողին՝ դիակներու հեռքը զննելով արթուն աչքի պէս, հեղհեղուն զանոնք խուզարկեց որպէս զի նայի թէ արդեօք անոնց մէջ Ռաուլ կ'ննջէ՞ր։ Ո՞վ կարող է բացատրել զմայլելի, երկնային ուրախութիւնն որով Ամենս Աստուծոյ առջև խոնարհեցաւ, շնորհակալիքը յայտնելու որ մեռելոց մէջ չէր տեսեր ահաբեկ փնտռուած էակը։

Արդարև՝ այս մարդիկ իրենց կարգին մէջ մեռած, սառած ընկնելով և բոլորովին ճանաչելի, կարծես թէ կամահաճութեամբ և յարգանօք կ'գառնային Լա Ֆէր կոմսին կողմն որպէս զի լաւ ևս տեսնուին, մինչդեռ նա իր դամբանական հեռաղօսութիւնը կ'կատարէր։

Սակայն՝ բոլոր այս դիակները տեսնելով՝ կ'զարմանար որ չէր տեսներ սպրողները։

Իր պատրանքն այն աստիճանի հասեր էր, որ այս տեսիլն իրեն համար ճշմարիտ ուղևորութիւն մ'էր Ափրիկէի մէջ, որ հայրն իր որդւոյն վրայ ճշգրիտ տեղեկութիւններ ստանայ։

Ուստի այնքան ծովեր և երկիրներ շրջելէն յոգնած՝ կ'ջանար ժայռի մ'ետև պատսպարուած մէկ վրանի ներքև հանգչիլ, որու դագաթը կ'ծածանէր շուշանաղարդ սպիտակ դրօշը։ Զինուոր մը փնտռեց որ զինքը Պ. Պօֆօրի վրանն առաջնորդէ։

Այն ատեն՝ մինչդեռ իր ակնարկը դաշտավայրին վրայ կ'շրջէր, ամէն կողմը դառնալով, սպիտակ կերպարան մը նշմարեց որ ուստայիին մրտենիներու ետևէն կ'երևէր։

Այս կերպարանը սպայի զգեստ հագած էր. ձեռքը կոտրած սուր մը բռներ էր. ծանր ծանր դէպ 'ի Ամենս յառաջացաւ, որ յանկարծ կայ առնելով և անոր վրայ աչքը սևեռելով, ոչ կը խօսէր, ոչ կ'շարժէր և ոչ կ'ուզէր իր թևերը բանալ, վասն զի կ'գիտէր որ այս լուիկ և գունատ սպայն նոյն ինք Ռաուլն էր։

Կոմսն աղաղակ մ'արձակելու փորձեց, բայց կոկորդին մէջ խեղդուկ մնաց։ Ռաուլ շարժումով մը խնդրեց որ լուռ կենայ, մէկ մատը բերնին վրայ դրաւ և քիչ քիչ ընկրկեց, թէև Ամենս անոր ոտից շարժումը չէր տեսներ։

Կոմսը՝ որ Ռաուլէն աւելի գունատ և գողդոջուն էր, որդւոյն հետևեցաւ դժուարութեամբ անցնելով հատամրցներէ և մացառներէ, քարերէ և փոսերէ։ Կ'երևէր թէ Ռաուլ այլ ևս հողէ վրայ չէր կոխեր, և իր թեթև քալուածքին առջև քարոտն մը չկար։

Կոմսը՝ որ հողին դերբուկ վայրերէն կ'յոգնէր, քիչ ատենէն վատակաբեկ կայ առաւ։ Ռաուլ միշտ նշան կ'ընէր անոր որ հետևի։ Գորովալցութ հայրը՝ որու այժ կ'տար սէրը, վերջին շարժում մ'ընելու փորձեց և երիտասարդին հետևելով լեռն 'ի վեր ելաւ, քանի որ նա զինքը կ'քաշէր իր շարժումով և ժպիտով։

Վերջապէս Ամենս բլրակին կատարը հասաւ և հեռուէն տեսաւ որ սևագոյն կ'նկարուէր՝ լուսնէն սպիտակացած հորիզոնին

վրայ, Ռաուլի օդային, բանահիւսական կերպարանը։ Աթոս ձեռները կ'տարածէր իր սիրեցեալ որդւոյն մօտ հասնելու, լեռնադաշտին վրայ, և որդին ալ իր ձեռքն անոր կ'տարածէր, բայց՝ յանկարծ՝ որպէս թէ պատանին ակամայ կ'մղուէր՝ միշտ ընկրկելով, երկրէն հեռացաւ, և Աթոս տեսաւ երկնից փայլէն իր զաւակին ոտիցն ու բլբակին հողի մէջ տեղը։

Ռաուլ անզգայօրէն օդին մէջ կ'բարձրանար, միշտ ժպտելով, միշտ շարժմամբ կոչելով, և դէպ 'ի երկին կ'հեռանար։

Աթոս զորովալից և ահաբեկ ձիկ մ'արձակեց. վարը նայեցաւ։ Կոտորուած բանակ մը կ'տեսնուէր, և արքայական զօրաց սպիտակ գլխակները, քրքև անշարժ հիւլէներ։

ԺԹ

ՄԱՀՈՒԱՆ ՀՐԵՇՏԱԿԸ

Աթոս իր հրաշալի տեսլեան այս կիտին վրայ էր, երբ հմայքը յանկարծ փարատեցաւ տան արտաքին դռներէն եկած մեծ աղմկէ մը։

Մեծ ծառուղիին կարծրացած աւազին վրայ ձիու մ'արշաւը լսուեցաւ, և որոտալի ու վառվռուն խօսակցութեան մը շշուկները հասան մինչև այն սենեակն ուր կոմսը կ'երազէր։

Աթոս զանուած վայրն անշարժ կեցաւ, հաղիւ թէ իր գլուխը դարձուց գրան կողմը մինչև իրեն հասած աղմուկները մտիկ ընելու համար։

Ծանր քայլ մը գրանդին վրայ ելաւ, ձին որ երբեմն այնքան արագութեամբ կ'արշաւէր, ծանրաքայլ գիմեց ախոռին կողմը։ Բանի մը սարսուռներ կ'լսուէին այն քայլափոխներուն վրայ, որ՝ փոքր առ փոքր, Աթոսի սենեկին կ'մօտենային։

Այն ատեն դուռ մը բացուեցաւ, և Աթոս աղմկին եկած կողմը դառնալով փոքր ինչ, ակար ձայնով մը գոչեց.

— Ափրիկէէն եկող թղթարերն է, այնպէս չէ՞։

— Ո՛չ, պարոն կոմս — պատասխանեց ձայն մ'որ Ռաուլի հայրն իր անկողնին վրայ գողացուց։

— Կրիմ՛ — մրմնաց նա։

Եւ քրտինքն իր նիհարցած այտերէն սկսաւ հոսիլ։

Կրիմօ սեմին վրայ երևցաւ։ Մեր տեսած Կրիմն չէր ալ այն, որ գեռ ևս արիութեամբն ու անձնուիրութեամբը նորահասակ էր, երբ ամենէն առաջ՝ արքայական նաւատորմը տանող Ռաուլ Պրաժլօնի սահմանուած նաւակը կ'ցատկէր։

Գունատ ու խստադէմ ծերունի մ'էր, փոշիով ծածկուած զգեստներ հագեր էր, տարիներէ սպիտակացած ցանցաւ մազերով։ Դրան շրջանակին յենլով կ'դողար, և հեռուէն՝ կանթեղներու լուսով իր տիրոջ գէմքը տեսնելուն՝ քիչ մնաց որ վար սլիտի ընկնէր։

Այս երկու մարդիկ որ այնքան մտաւորական համաձայնութեամբ միասին ապրեր էին, և որոց աչքը՝ խօսքը խնայելու վարժ, լռելեայն իրարու շատ բաներ ըսել կիտէին. այս երկու վաղեմի բարեկամները, որ սրտով իրարու չափ ազնիւ էին, թէև հարստութեամբ և ծննդով իրարու անհաւասար, գլխաբաց նայելով շուարած մնային։ Մէկ ակնարկ միայն իրարու վրայ ձգելով կարող եղեր էին իրարու սրտին խորը կարդալու։

Կրիմօ իր գլխաց վրայ կ'յայտնէր սգալի սովորութեան մ'արդէն հինցած մէկ վիշտը։ Կարծես թէ իր միտքը բացատրելու կերպ մը միայն ունէր։

Առաջուան պէս՝ վարժեր էր այլ ևս չխօսիլ, այժմ այլ ևս չժպտելու կ'վարժէր։

Աթոս մէկ ակնարկով տեսաւ իր հաւատարիմ ծառային դէմքին վրայ այս զգնաղանութիւնները, և իր երազին մէջ Ռաուլի խօսելիք ձևով՝ ըսաւ.

— Կրիմօ, Ռաուլ մեռաւ, այնպէս չէ՞։

Կրիմօին ետեր կեցած միւս սպասաւորները սրտաթունդ և իրենց աչքը հիւանդին անկողնոյն վրայ սևեռած մտիկ կ'ընէին։

Սոսկալի հարցումը լսեցին, և անոր հետևեցաւ զարհուրելի լռութիւն մը։

— Այո՛ — պատասխանեց ծերունին և իր սրտէն այս բառը խուսպոտ հառաչ մը հանելով խլեց։

Այն աստեն ողբալի ձայներ, հեկեկանքներ լսելի եղան որ լացով ու աղօթքով լեցուցին սենեակն ուր այս հոգեվար հայրն իր որդւոյն կենդանապիրը կ'փնտռէր աչքովը։

Ամոսի համար այս բանս իր երաշխն տանող անցումն եղաւ։

Առանց Ճիկ մը հանելու, առանց արտասր մը թափելու, համբերատար, քաղցր և մարտիրոսներու պէս երկայնամիտ, Ամոս իր աչքը դէպ 'ի երկին վերցուց որպէս զի անդ տեսնէ, Ճիկիէլ-ի լեռնէն վեր բարձրացող՝ սիրական ստուերն որ իրմէ կ'հեռանար այն միջոցին որ Կրիմօ հասեր էր։

Անտարակոյս Ամոս՝ երկին նայելով՝ իր հրաշալի երազը շարունակելով անցաւ մի և նոյն Ճամբաներէն՝ ուր՝ տեսիլն ահռելի և միանգամայն անուշ, զինքն առաջնորդեր էր. վասն զի իր աչքը մեղմիկ գոյելէն ետև՝ վերստին բացաւ և ժպտիլ սկսաւ. Ռաուլը տեսեր էր որ ըստ կարգի իրեն կ'ժպտէր։

Ձեռքը կուրծքին վրայ կցած, դէմքը պատուհանին կողմը դարձած, գիշերային զով օդէն պաղշիկելով՝ որ իրեն անկողնոյն կը բերէր ծաղիկներու և անտառներու քաղցր բուրումը, Ամոս չէր նեղուր պայմանաւ մտաւ այն արբայութեան տեսլեան մէջ զոր կենդանիներն երբէք չեն տեսներ։

Անտարակոյս Աստուած այս ընտրելոյն առջև բանալ ուզեց յաւիտենական երանութեան դանձերը, այն ժամուն որ ուրիշ մարդիկ կ'գողգողան որ Տէրը զիրենք խստիւ չընդունի, և իրենց այս ծանօթ կենաց կ'փարին սարսափելով հանդերձեալ կեանքէն զոր մահուան մթին և ահարկու ջահերուն լուսով կ'ընդնշմարեն։

Ամոս՝ իր որդւոյն անարատ և զուարթուն հոգւով կ'առաջնորդուէր, որ հայրական հոգին կ'ծծէր։ Այս արդարին համար ամէն ինչ ներդաշնակութիւն և անուշահոտութիւն եղաւ՝ այն դժուարին Ճամբուն մէջ յորմէ հոգիներն երկնային հայրենիքը կը սլանան։

Ժամ մ'այս աքանչայման մէջ մնալէն ետև՝ Ամոս մոմի պէս սպիտակ ձեռները յուշիկ վեր վերցուց, ժպիտը շարունակ իր

շրթերուն վրայ կ'երևէր, և նա մրմնաց մեղմիկ, այնքան մեղմիկ որ հաղիւ մրմունջը լսեցին, այս երկու բառերն Աստուծոյ կամ Ռաուլին ուղղեալ,

— Ասասիկ եմ։

Եւ իր ձեռները կամայուկ վար իջան այնպէս որ կարծես թէ ինք անկողնին վրայ կ'հանդչեցնէր։

Մահը գիւր էր և գղուելի այս ազնիւ արարածին համար։ Խնայեր էր անոր խիթքն և յետին չտուին սնդալը. նպաստաւոր ձեռօք յաւիտենականութեան դուռը բացեր էր այս ամէն յարգանաց արժանի մեծ հոգւոյն։

Աստուած այսպէս անօրիներ էր անշուշտ, որպէս զի այս քաղցր մահուան բարեպաշտիկ յիշատակը ներկայ գտնուղներուն և մարդոց սրտին ու յիշողութեան մէջ անջինջ մնայ. մահ մ'որ այս կեանքէն հանդերձեալն անցնելու Ճամբան սիրելի ընէ անմոռոյց գոյութիւնն այս երկրիս վրայ չէ կարող վերջին գատաստանն ահարկու բերել։

Ամոս նոյն իսկ յաւիտենական քնոյ մէջ պահեց այն անուշ և անկեղծ ժպիտը, զարդ մ'որ դերեզմանին մէջ անգամ պիտի կրէր։ Իր գիմաց անդորրութիւնը, իր անէութեան հանգստութիւնը կասկածել տուին իր սպասաւորաց որ այս կեանքը կնքած լինի։

Կոմսին մարդիկն ուղեցին Կրիմօն հեռացնել, որ՝ հեռուէն այս դատնաստեալ դէմքը կ'լափէր և բնաւ չէր մօտենար, առ ահի որ մահուան շունչը չբերէ անոր։ Բայց Կրիմօ՝ թէև սաստիկ յոգնած, չուզեց հեռանալ։ Սեմին վրայ նստաւ, պահանորդի մը արթնութեամբ իր տէրը պահելով, և անհամբեր էր արթննալուն՝ անոր առաջին ակնարկին՝ և մեռնելուն՝ վերջին հառաչն ընդունելու։

Տան մէջ ամէն շշուկները կ'գադրէին, և ամէն ոք տան տիրոջ քունը կ'յարգէր։ Բայց Կրիմօ՝ ականջ դնելով, հասկրցաւ որ կոմսն այլ ևս չէր շնչեր։

Վեր ելաւ, ձեռները գետին յենելով, և իր տեղէն գիտեց թէ արդեօք իր տիրոջ մարմնոյն վրայ սարսուռ մը չ'պիտի երևի։

Ո՛Չ ԻՆՉ. երկիւղը զինքը հմանկեց. բոլորովին ոտք ելաւ և նոյն պահուն՝ սանդղին վրայ քալուածքի ձայն լսեց. սրէ զարնուած մարակներու աղմուկ մը, որ մարտական ձայն մ'էր իր ականջին ընտանի, կայ ,աւաւ, երբ Կրիմօ Աթոսի անկողնոյն մօտենալու վրայ էր:

Պղնձէն և պողովատէն աւելի հնչուն ձայն մ'իրմէ երեք քայլ հեռի հնչեց:

— Աթո՛ս, Աթո՛ս, բարեկամդ իմ — կ'պոռար այս արտասուալի ձայնը:

— Տ'Արդանեան ատպէ՞տը — մրմնջեց Կրիմօ:

— Ո՞ւր է — շարունակեց հրայանակիրը:

Կրիմօ իր ոսկրուտ ձեռօք տ'Արդանեանի թեւը բռնեց և անոր ցոյց անկողնը, որու վերմակներուն ներքև արդէն դիակին կապոյտ գոյնը կ'երևէր:

Ոգեսպառ ընչաւութիւն մը, որ սուր ձայնի չէր նմաներ, տ'Արդանեանի կոկորդը փքացուց:

Մատերուն վրայ յառաջացաւ, կ'դողդողար, իր քայլերուն դեմնը հանած աղմկէն կ'զարհուրէր և անբացատրելի անձկութեամբ սիրտը կ'խորտակէր: Ականջն Աթոսին լանջին մօտեցուց, և դէմքն անոր բերնին: Ո՛Չ ձայն կար և ոչ շունչ: Տ'Արդանեան ընկրկեց:

Կրիմօ՝ որ աչօք անոր կ'հետևէր և որու համար անոր մէն մի շարժումը յայտնութիւն մ'եղած էր, վեհերոտութեամբ անկողնոյն ոտքն եկաւ նստելու, և իր շրթունքը դրաշմեց վերմակին վրայ որ իր սիրոյ ձիտեալ ոտքերէն վեր կ'ելնէր:

Այն ատեն իր կարմրցած աչերէն մեծ մեծ արտասուքներ վազելու սկսան:

Այս ծերունին յուսահատ, որ առանց բառ մ'արտաբերելու կ'արտասուէր, ամենասրտաշարժ տեսարան մը կ'ընծայէր, որու նմանը, տ'Արդանեան իր այլայլութեամբ լի կեանքի մէջ անգամ չէր տեսած:

Հրայանակիրը կանգուն ընդ երկար նկատեց այս գեղաշիծաղ մեռելը, որ կարծես թէ իր յետին մտածութիւնը պահեր էր որպէս զի իր լաւագոյն բարեկամին, Ռաուլէն եաք ամենէն աւելի սիրած մարդուն՝ շնորհալի ընդունելութիւն մ'ընէ, մինչև անդը քան կեանքն, և տ'Արդանեան ալ՝ այս հիւրընկալութեան գերապոյն գոհանաց պատասխանելու մտօք՝ գնաց Աթոսին Ճակատն համբուրեց, և իր գոգահար մատերով անոր աչերը գոցեց:

Ապա անկողնոյն մնարին մօտ նստաւ առանց այս մեռելէն վախնալու, որ իրեն համար այնքան բարեհամբոյր և բարեսէր եղած էր երսուն հինգ տարի շարունակ. անձկանօք վայելեց կոմսին աղնիւ կերպարանքն իր յուշն ածած անհամար յիշատակները, ոմանք այս ժպտին պէս ծաղիկուած և չքնաղ, ոմանք տխուր, մթին և այս դէմքին պէս սառնապին, որ աչերը յաւիտենականութեան համար փակուած էին:

Յանկարծ՝ փոքր առ փոքր վեր ելնող դառն կոհակն իր սիրտը բռնեց և կուրծքը խորտակեց: Իր այլայլութիւնը զսպելու անկարող, ոտքի վրայ ելաւ, և այս սենեկէն բռնապէս դուրս նետուելով, ինքն որ մեռած կ'պտնէր այն անձն որու Բորթոսի մահուան լուրը կ'բերէր, այնպիսի աղէխարշ հեծկլտանք արձակեց, որ սպասաւորները, իբր թէ գովասանքի մը սպասելով, անոր պատասխանեցին ողջ ու կոծ արձակելով և տան տիրոջ շունչերն իրենց ողբալի զօրանջներով:

Կրիմօ միայն ձայնը չարձրացուց: Նոյն իսկ իր ծայրալիր յուզոց մէջ, չէր համարձակեր մահը սրբապղծել կամ առաջին անգամ իր տիրոջ քունը վրդովել: Իրաւ է որ Աթոս զանի վարժեցուցեր էր երբէք չխօսելու:

Առաւօտեան դէմ՝ տ'Արդանեան՝ որ սաորին սրահը կ'թափառէր՝ բուռները խածնելով՝ որպէս զի հառաչները խեղդէ, տ'Արդանեան վերսին սանդղէն վեր ելաւ, և սպասելով որ Կրիմօ գլուխն իր կողմը դարձնէ, նշան ըրաւ անոր իրեն գալու, և հատատրիմ սպասաւորն այս նշանին պատասխանեց ատուերի պէս աղմուկ չհանելով:

Տ'Արդանեան վար իջաւ վերսին, և Կրիմօ եաւէն գնաց:

Երբ գտիթը հասաւ՝ ծերունւոյն ձեռները բռնելով.

— Կրիմօ — ըսաւ — տեսայ թէ ինչպէս հայրը մեռաւ, հիմակ ըսէ ինձ թէ ինչպէս մեռաւ որդին:

Կրիմ՝ իր ծոյէն մեծ նամակ մը հանեց, որու պահարանին վրայ Աթոսի հասցէն գրուած էր։ Պ. Պօֆօրի դիրը ճանչցաւ, կնիքը քակեց և կապուտակ այգուն առաջին նշոյլներով կարդալու սկսաւ երթևեկելով՝ հին թմբլիներու մթին ծառուղւոյն մէջ որոյ վրայ դեռ ևս տեսանելի էին նոր մեռնող կոմսին քայլափոխները։

Ի

ԼՐԱԹԵՐԹ

Պօֆօր դուքսն Աթոսին կ՚գրէր։ Մարդուն ուղղեալ դիրը մուռելին կ՚հասնէր։ Աստուած հասցէն կ՚փոխէր։

«Սիրելի կոմտ իմ — կ՚ըսէր իշխանն անճարակ աշակերտի մը խոշոր տառերով — մեծ աղէտ մը մեզ կ՚համակէ մեծ յաղթանակի մը մէջ։ Թագաւորը քաջարի զինուոր մը կ՚կորուսէ. ես բարեկամ մը կ՚կորուսեմ. դուք Պ. Պրաժլօնը կ՚կորուսէք։

«Փառաւորապէս մեռաւ նա, այնչափ փառաւորութեամբ որ ուզածիս պէս զանի ողբալու կարողութիւն չունիմ։

«Ընդունեցէք իմ ամուր շնորհաւորութիւններս, սիրելիդ իմ կոմս։ Երկին մեր սրտին մեծութեան համեմատ մեզի փորձանքներ կ՚առաքէ։ Այս աղէտքն անհուն է, բայց ձեր արիական սրտէն զերազոյն չէ։

«Ձեր լաւ բարեկամը,

«ՊՕՖՕՐ ԴՈՒՔՍ»

Այս նամակը՝ իշխանին մէկ քարտուղարին ձեռքը գրուած՝ նկարագիր մը կ՚պարունակէր։ Ամենէն սրտաշարժ, ճշմարիտ և ողբալի պատմութիւն մ՚էր պատահարի մ՚որ երկու կեանք կ՚զրաւէր։

Տ՚Արդանեան ճակատամարտի յուզմանց վարժ՝ և սիրտն այլայլութեանց դէմ զրահաւորած թէև, Ռաուլի անունը կարդալուն չկրցաւ դող մը զսպել, այն սիրելեալ զաւակին անունը, որ իր հօրը պէս ստուեր զարձեր էր։

«Առտու մը — կ՚ըսէր իշխանին քարտուղարը — դուքսը յարձակման հրամանը տուաւ։ Նորմանտացի և Բիգարտացի գունդեր իրենց դիրքը բռնած էին սպիտակ ժայռերու մէջ որու վրայ կը նայէր լեռան դարը, և սոյն դարակին վրայ ճիկէլլիի մարտկոցները կ՚բարձրանային։

«Թնդանօթին որոտալ սկսիլը, պայքարին նշանն եղաւ. գունդերն անվեհեր յառաջ խաղացին. նիզակակիրներն իրենց զէնքը կազմ ունէին, հրացանակիրներն իրենց զէնքը թևի վրայ ունէին։ Իշխանն ուշադրութեամբ կ՚դիտէր զօրաց ընթացքն ու շարժումը, և պատրաստ էր անոնց օգնութեան հասնիլ պահեստի հզօր դնդով մը։

«Իշխանին մօտ կ՚գտնուէին ամենէն հին զօրականներն և թիկնապահները։ Պրաժլօն զերկոմսին հրաման տուեր էր որ իշխանին քովէն չհեռանայ։

«Սակայն թշնամւոյն թնդանօթն՝ որ 'ի սկզբան բոլոր զօրաց վրայ կ՚դուռաբ անխտիր, իր կրակին ուղղութիւն մը տուեր էր, և ռումբերը, աւելի լաւ նշան առնելով իշխանին բոլորտիքը գտնուող քանի մը մարդիկ սպաններ էր։ Գունդերն որ զանազան թևերու բաժնուած էին և ամրոցներուն դէմ կ՚քալէին, փոքր ինչ վնաս կրեցին։ Մեր զօրաց կողմէն վարանում կ՚տեսնուէր, վասն զի թնդանօթաձիգ գունդն իրենց սէտք եղածին պէս չէին օգներ։ Իրօք, առջի օրը հաստատուած մարտկոցները շատ տկար և անորոշ կերպով նշան կ՚առնուին, իրենց դրիչ պատճառաւ։ Վաբէն վեր նշան առնելը դժուարին էր և գնդակները նպատակին չէին հասներ։

«Իշխանը դիտելով պաշարման թնդանօթներուն այս վատ դիրքը, փոքր նաւահանգստին մէջ գումարուած նաւատորմին հրամայեց բերդին դէմ կանոնաւոր կրակ մ՚արձակել։

«Այս հրամանը տանելու համար Պ. Պրաժլօն ամենէն առաջ ներկայացաւ. բայց իշխանը զերկոմսին խնդրոյն հաւանելու մերժեց։

«Իշխանն իրաւունք ունէր, վասն զի կ՚սիրէր և խնայել կ՚ուզէր այս պատանին. շատ իրաւունք ունէր, և դէպքն իր գուշակութիւնն ու մերժումն արդարացուց. վասն զի՝ հազիւ թէ պատգա-

մաքեր յիսնապետն իշխանին հրամանով, զոր Պրաժլօն կոմը տա-
նել կ'ուզէր, ծովուն եզերքը հասաւ որ երկու գնդակ թշնամւոյն
բանակէն եկնելով եկան և զանի տասպատ գետինը փուեցին։

«Յիսնապետը թրջած տաղին վրայ ընկաւ որ իր արիւնը խմեց։

«Այս տեսնելով Պ. Պրաժլօն իշխանին նայելով ժպտեցաւ,
և իշխանն անոր ըսաւ.

«— Կ'տեսնես, դերկոմս, կեանքդ ազատեցի։ Վերջէն Լա
Գէր կոմսին տար այդ կեանքդ, որպէս զի այս կէտը քեզնէ ի-
մանալով իմ ընթացքէս գոհ լինի։

«Երիտասարդը ժպտեցաւ տրտմագին և դքսին պատասխանեց.

«— Ճշմարիտ է, տէր իմ, որ տուանց ձեր բարեսրտութեան,
վարը պիտի մեռնէի այդ խեղճ յիսնապետին ընկած տեղն և շատ
մեծ հանգստութեամբ։

«Պ. Պրաժլօն այս պատասխանս տուաւ այնպիսի գէմքով մ'որ
դուքսն աշխուժիւ պատասխանեց.

«— Ճշմարիտ վկայ, դու պատանի, կարծես թէ բերնիդ ջրե-
ը կ'վազի այս մահուան վրայ. բայց Հանրի Դի հոգւոյն վրայ
կ'երդնում, խօսք տուի հօրդ որ քեզ կենդանի վերադարձնեմ և
եթէ Աստուած կամենայ, իմ խօսքս պիտի պահեմ։

«Պ. Պրաժլօն կարմրեցաւ, և աւելի ցած ձայնով մը.

«— Տէր իմ, ըսաւ, ներեցէք ինձ, կ'աղաչեմ, իրաւ է որ
միշտ վանդաւոր պայքարներու դիմել իմ փափաքս եղած է, և
քաղաքը բան է զլնուորի մ'իր զօրապետին առջև երևելի հանդի-
սանալը, մանաւանդ երբ այս զօրապետը Պօֆօր դուքսն է։

«Դուքսը փոքր ինչ կակուղցաւ, և իր բոլորտիքն առնող սպա-
յից կողմը դառնալով, այլ և այլ հրամաններ տուաւ։

«Երկու գնդայ ռմբաձիգ զօրականք փոսերուն և խրամներուն
բաւական մօտենալով իրենց ռումբերն արձակեցին՝ որ մեծ ար-
դիւնք մը չունեցան։

«Սակայն՝ Պ. Էսքրէ, որ նաւատորմին կ'հրամայէր, նաւերուն
մօտենալու համար յիսնապետին փորձը տեսնելով հասկըցաւ որ
պէտք էր տուանց հրամանի քաշել և հետևապէս կրակը բացաւ։

Այն ատեն Արաբները տեսնելով որ նաւատորմին ռումբերն և

իրենց պարիսպներուն տերումներն ու փլատակները զերբենք կը
ձգեն՝ ահռելի աղաղակներ արձակելին։

«Իրենց ձիաւորներն արշաւակի լեռնէն իջան, իրենց թամբե-
րուն վրայ ծռած և ուժգնութեամբ հետևակ սիւներուն վրայ սրա-
յան, որ իրենց տէկերը խաչաձև բռնելով՝ այս բուռն յարձակ-
ման դիմադրեցին։ Գաղղիական զումարտակին այս ամրապինդ դրից
առջև անզօր մնալով, Արաբները կատաղօրէն աւազասպային վրայ
ընկան, որ նոյն պահուն անսպասելոյն կ'մնար։

«Վտանգը մեծ եղաւ, դուքսն իր սուրը քաշեց, իր քարտու-
ղարներն ու սպաները նոյնն ըրին, և անմիջապէս զայրալիր պայ-
քար մը սկսաւ։

«Ահա այն ատեն Պ. Պրաժլօն կարող եղաւ՝ մարտին սկիզբէն
'ի վեր յայտնած փափաքը գոհ ընել։ Հռոմայեցիի զօրութեամբ
կռուեցաւ Պ. Պօֆօր իշխանին մօտ և իր փոքրիկ սրով երեք Ա-
րաբ սպաննեց։

«Բայց յայտնի էր որ իր արիութիւնը գոռոզութեան արդիւնք
մը չէր, գոռոզութիւն որ մարտնչողներու բնական է։ Բուռն,
կեղծ, մինչև անպամ բռնազբօսիկ էր. կոտորածով և աղմկով
արբենալ կ'ջանար։

«Այնքան գլուխը տաքցաւ որ իշխանն անոր պուաց որ կայ
առնու։

«Նորին Բարձրութեան ձայնը լսած պիտի լինէր, քանի որ
մենք կ'լսէինք, մենք որ անոր բոլորտիքն էինք։ Սակայն չկեցաւ
Պրաժլօն և սկսաւ դէպ 'ի պատնէշները վազել։

«Որովհետև Պ. Պրաժլօն շատ հնազանդ սպայ մ'էր, իշխա-
նին դէմ այս անհնազանդութիւնը չափազանց զարմացուց մեզ, և
Պ. Պօֆօր թախանձանքը կրկնեց պուալով.

«— Կեցիր, Պրաժլօն, ուր կ'երթաս, կեցիր, վրայ բերաւ
իշխանը, քեզի կ'հրամայեմ։

«Մենք ամենքիս՝ դքսին ընթացքին հետևելով, մեր ձեռքը
վեր վերցուցեր էինք։ Կ'սպասէինք որ ձիաւորը ձիուն գլուխը
դարձնէ. բայց Պ. Պրաժլօն շարունակ պատնէշներու կողմը կը
գիմէր։

«— Կեցիր, Պրաժլօն, կրկնեց իշխանը շատ ուժգին ձայնով մը, կեցիր, յանուն հօրդ։

«Այս խօսքին վրայ՝ Պ. Պրաժլօն դլուխը դարձուց, իր դէմքը բուռն վիշտ մը կ'յայտնէր, բայց կանգ չէր առնուր. այն ատեն մտածեցինք որ ձին զինքը կ'մղէր կ'տանէր։

«Երբ դուքսը դուշակեց որ դերկոմսը չէ կարող իր ձին զսպել, և տեսաւ որ առաջին ումբաձիգ զինուորներէն անդին անցաւ, Նորին Բարձրութիւնը պոռաց.

«— Հրացանակիրներ, սպաննեցէք իր ձին։ Ցիսուն ոսկի կայ ձին սպաննողին։

«Բայց ձիուն դլխին զարնել առանց ձիաւորին դպելու միթէ յուսալի՞ էր։ Ոչ ոք չէր իշխեր։ Վերջապէս զինուոր մը ներկայացաւ, Բիդարտիացի գնդէն Ճարտար հրացանաձիգ մ'էր, Լուչէրն անուամբ, որ երիվարին նշան առաւ, քաշեց և անոր դաւակին զարկաւ, վասն զի ձիուն սպիտակ մաղերը յանկարծ արիւնեցան։ Սակայն փոխանակ վար ընկնելու, անիծեալ երիվարն աւելի կատաղութեամբ սկսաւ սրանալ։

«Բոլոր Բիդարտացի զօրագունդն որ այս դժբաղդ երիտասարդին մահուան դիմելը կ'դիտէր, մեծաձայն կ'պոռար. «Պ. դերկոմս, վար նետուէ, վա՛ր, վա՛ր, վար նետուէ՛»։

«Պ. Պրաժլօն բոլոր բանակին շատ սիրելի էր։

«Արդէն դերկոմսը բերդին մօտեցեր էր հրացանընկեցի չափ, երբ հրացաններ արձակուելով զինքը կրակի և մուխի մէջ ամփոփեցին։ Պրաժլօն անհերևոյթ եղաւ մեր աչքէն, երբ մուխը փարատեցաւ, ոտքի վրայ կանգուն տեսնուեցաւ, իր ձին սպաննուեր էր։

«Դերկոմսը հրաւէր ընդունեց Արաբներէն որ անձնատուր լինի. բայց դլխով բացասական նշմայը մ'ըրաւ և պատնէշներուն կոյս քալելը շարունակեց։

«Մահաբեր անխոհեմութիւն մ'էր այս։ Սակայն բոլոր բանակը շատ գոհ եղաւ որ Պրաժլօն չընկրկեց, քանի որ դժբաղդօրէն շատ մօտեցեր էր։ Քանի մը քայլ ևս առաւ, և երկու գնդերը սկսան ծափ զարնել։

«Ահա նոյն միջոցին էր որ երկրորդ հրաձգութիւնը պարիսպները դղրդեց, և Պրաժլօն դերկոմսը նոյն մրրկին մէջ անհետացաւ. բայց այս անգամ մուխը ցրուելով դերկոմսը կանգուն չտեսանք։ Տապաստ ընկեր էր դլուխն աւելի ցած քան ոտքը՝ հաւամրդիներուն վրայ, և Արաբներն իրենց պատնէշներէն ելնելով դալ դերկոմսին դլուխը կարելու կ'պատրաստուէին, ինչպէս որ Տաճկաց սովորութիւնն էր։

«Բայց Նորին Բարձրութիւնը Պոֆոր դուքսն այս անցած բաները հեռուէն դիտեր էր, և այս տխուր տեսարանին՝ վշտալի և դառն հառաչներ հաներ էր։ Ուստի սկսաւ պոռալ, Արաբները տեսնելով որ սպիտակ ուրուականներու պէս կ'վազէին հերձիներուն մէջ։

«— Ումբաձիգ, նիզակաւոր զօրականնե՛ր, միթէ թողո՞ւք պիտի որ այս աղնիւ մարմինն առնուն։

«Այս խօսքն ըսելով և սուրը շարժելով՝ ինքն անձամբ վազեց թշնամւոյն դէմ։ Գունդերը՝ անոր հետոյ վրայ սրանալով՝ այնչափ տհաղին աղաղակներ արձակեցին որչափ որ Արաբներուն աղաղակներն էին վայրենի։

«Կռիւը սկսաւ Պրաժլօնի մարմնոյն վրայ և այնքան կատաղի եղաւ որ հարիւր վեթսուն Արաբ նոյն վայրը մեռած մնացին, մերիններէն ալ յիսուն հոգի ընկնելով։

«Նորմանտացի տեղակալ մ'էր որ դերկոմսին մարմինն ուսերուն վրայ առաւ, և մեր բանակատեղին բերաւ։

«Սակայն այս յաղթութիւնը շարունակելով՝ գունդերը պահունի զօրքն ալ միասին առին և թշնամեաց պատնէշները սասպալեցին։

«Ժամն երեքին Արաբներուն կրակը դադրեցաւ, որով պայքարն երկու ժամ տևեց. սոսկալի ջարդ մ'եղաւ։

«Ժամը հինգին ամէն կողմէն յաղթական ելանք. թշնամին իր գիրքը ձդեր խոյս տուեր էր, և Պոֆոր դուքսը բլրակին բարձրադոյն կողմը սպիտակ դրօշակը կանգնել տուեր էր։

«Այնուհետև Պ. Պրաժլօնի հոդը տանելու սկսան, որուն մարմնոյն վրայ ութ մեծ հարուածներ կային և որուն արիւնը լիովին սպառեր էր։

« Սակայն դեռ ևս շունչ կ'առնուր, և այս բանս անպատում ուրախութիւն պատճառեց դքսին, որ ինքն ալ ուզեց ներկայ գըտնուիլ վիրաբուժներուն խորհրդին և դերկոմսին դարմանին։

« Վիրաբոյժներէն երկուքը յայտարարեցին թէ Պ. Պրաժլօն պիտի ապրէր։ Դուքսը զանոնք գրկեց և հազար ոսկի խոստացաւ իւրաքանչիւրին եթէ Պրաժլօնի կեանքն աղատէին։

« Դերկոմսն այս ուրախութեան եւանդագին աղաղակները լսեց, և սեպէ թէ յուսահատ էր, սեպէ թէ իր վէրքը ղինքը կ'տառապէր, իր կերպարանին վրայ այնպիսի դժկամակութիւն յուցուց որ մեծ մտածմունքի տարաւ, մանաւանդ քարտուղարներէն մին, երբոր մեր յետագայ պատմելիքը լսեց։

« Երրորդ վիրաբոյժն էր եղբայր Սիլվէն Սէն-Գօզմի, մերիններուն մէջ ամենէն գիտունը։ Ինքն ալ վէրքը զննեց և բան մը չըսաւ։

« Պ. Պրաժլօն անթարթ աչունքը կ'բանար, և կարծես թէ գիտուն վիրաբուժին ամէն շարժումը կ'քննէր, ամէն խորհուրդը թափանցել կ'ուզէր։

« Երբ դուքսը հարցուփորձ ըրաւ, Սիլվէն պատասխանեց թէ ութ վէրքէն երեքը մահացու կ'գտնէ իրաւ, բայց վիրաւորին կազմուածքն այնքան զօրաւոր էր, այնքան արդասաւոր էր երիտասարդութիւնը, այնքան մեծ Աստուծոյ ողորմութիւնը, որ թերևս Պ. Պրաժլօն բժշկուէր, եթէ միայն թեթև շարժում մ'անդամ չընէր։

« Եղբայր Սիլվէն յարեց իր օգնականներուն դառնալով.

« — Նա մանաւանդ՝ մատով անդամ մի՛ շարժէք զանի թէ ոչ պիտի սպաննէք։

« Եւ ամենքնիս ալ վրանէն դուրս ելանք քիչ մը յուսով։

« Այս քարտուղարը, դուրս ելնելու ատեն՝ դերկոմսին շրթերուն վրայ կարծեց տեսնել ժպտոյն և տխուր ժպիտ մը, երբոր դուքսն անոր ըսաւ դդուելի ձայնով մը։

« — Ո՛հ, դերկոմս, քեզ պիտի բուժենք։

« Բայց իրկունն երբ ամէն ոք կարծէր թէ հիւանդը հանգիստ անցուցեր էր, օգնականներէն մին վիրաւորին վրանը մտաւ, և դուրս ելաւ մեծ աղաղակներ արձակելով։

« Ամենքնիս ալ խառն 'ի խուռն վազեցինք, դուքսն ալ միասին, և օգնականը մեզի ցցուց անկողնէն վար, իր մնայեալ արեան մէջ թաթաւեալ Պրաժլօնի մարմինը։

« Կ'երևի թէ նոքին ջլաձիգ շարժումներ ունեցած պիտի լինէր որ վար ընկեր էր. թէ այս անկումէն իր վախճանը փութացուցեր էր եղբայր Սիլվէնի դուշակութեան համեմատ։

« Դերկոմսը վերցուցին, պաղ էր և մեռած։ Աջ ձեռքը դեղձան մաղերու գանգուր մը բռներ էր և այս ձեռքն իր սրտին վրայ կարկամած բռնած էր »։

Այս նկարագրէն ետև արշաւանին և Արաբացւոյ վրայ տարուած յաղթութեան պարագաները պատմուած էին։

Տ'Արգանեան խեղճ Ռաուլի մահուան նկարագիրը կարդալէն ետև՝ ընթերցումը չշարունակեց։

— Ո՛հ — մրմնաց նա — անբարդ զաւակ, ինքնասպանութիւն մը։

Եւ աչքը դարձնելով դղեկին այն սենեակն ուր Աթոս յաւիտենական քունը կ'քնանար.

— Երկուքն ալ իրարու խօսք բռնեցին — ըսաւ նա մեղմիկ։ — Այժմ զիրենք երջանիկ կ'գտնեմ. անշուշտ միացած պիտի լինին։

Եւ ծանրաքայլ պարտիզին դաւթին ճամբան բռնեց։

Բոլոր փողոցը, բոլոր շրջակայքն ողբաղին դրացիներով արդէն կ'լեցուէին, որ իրարու կ'պատմէին կրկնապատիկ աղէտքն և յուզարկաւորութեան կ'պատրաստուէին։

ԻԱ.

ԴԻՒՑԱԶՆԱԿԱՆ ՔԵՐԹՈՒԱԾՈՒՆ ՎԵՐՋԻՆ ԵՐԳԸ

Հետևեալ օրը շրջակայ տեղերու և դաւառին բոլոր ազնուականները, նոյնպէս անոնք որ այս սև լուրն ընդուներ էին, սկսան գալ

Տ՝Արգանեան փակուած էր սենեակ մը և չէր կրնար ուրիշի հետ խօսիլ։ Բորթոսի մահուանէ ետք՝ երկու մահ այսպէս հրամանատարին գլխուն վրայ ընկնելով՝ այս մինչև յարդ անխոնջ միտքն երկար ժամանակի համար խորտակեր էր։

Կրիմօէն զատ՝ որ իր սենեակը մի անգամ մտաւ, հրացանակիրն ոչ սպասաւոր տեսաւ և ոչ հիւր։

Տան մէջ եղած աղմկէն, երթևեկութենէ զուշակեց որ կոմսին յուղարկաւորութեան համար ամէն բան կ՝պատրաստէին։ Թագաւորին գրեց որ իր արձակուրդն աւելի երկարաձգելու հրաման խնդրէ։

Ինչպէս որ ըսինք՝ Կրիմօ տ՝Արգանեանի սենեակը մտեր, աթոռակի մը վրայ նստեր էր, դրան մօտ, խորունկ մտածող մարդու մը պէս. ապա ոտք ելնելով, նշան ըրեր էր տ՝Արգանեանի որ իրեն հետևի։

Տ՝Արգանեան լռութեամբ հնազանդեցաւ։ Կրիմօ կոմսին ննջարանն իջաւ, հրամանատարին ցոյց տուաւ պարապ անկողնոյն տեղը, և աչքը դէպ 'ի երկին վերցուց Ճարտասանութեամբ լի։

— Այո՛ — վրայ բերաւ տ՝Արգանեան — այո՛, բարի Կրիմօ, իր որդւոյն միացաւ, զոր այնքան կ՝սիրէր։

Կրիմօ դուրս ելաւ սենեկէն և սրահը հասաւ, ուր, դաւաւին սովորութեան համեմատ, հարկ եղեր էր Աթոսին մարմինը հանդիսապէս զարդարել զայն թաղելէն առաջ։

Տ՝Արգանեան այս սրահին մէջ երկու բաց դագաղ տեսնելով զարմացաւ, Կրիմօէն, անձայն հրաւէրին վրայ՝ մօտեցաւ, և անոնց միոյն մէջ տեսաւ Աթոսը, որ մահուան մէջ անգամ դեղեցիկ էր, և միւսին մէջ, Ռաուլը, զոյ աչօք, Վիրգիլիոսի Պալլասին պէս մոմի նման այտերով, և ժպիտն իր մանիշակագոյն շրթերուն վրայ։

Դո՞ղ ելաւ տեսնելով հայրն ու որդին, այս երկու հոգիներն որ թուեր էին, որ երկու տխուր դիակներ կ՝ներկայացնէին, որ թէև իրարու այնքան մօտ էին, բայց մօտենալու անկարող։

— Ա՞ստ է Ռաուլ — մրմնաց նա։ — Ո՛հ, Կրիմօ, այդ չըսեր էիր ինձ։

Կրիմօ գլուխն օրեց և պատասխան չտուաւ. բայց տ՝Արգանեանի ձեռքէն բռնելով՝ դագաղին մօտ տարաւ և բարակ պատանքին ներքև ցցուց անոր այն սև վէրքն ուսկից կեանքը խոյս տուած պիտի լինէր։

Հրամանատարը գլուխը մեկուսի դարձուց, և աւելորդ համարելով Կրիմօն հարցուփորձ ընել քանի որ պատասխան չպիտի տար, յիշեց որ Պ. Պոֆօրի քարտուղարն աւելի բան գրած էր քան ինչ որ ինք տ՝Արգանեան կարդալու արիութիւնն ունեցեր էր։

Ուստի մարտին տեղեկագիրը վերստին աչքէ անցընելով, ուր Ռաուլ իր կեանքը կորուսեր էր, այս խօսքերը գտաւ որ նամակին վերջին պարբերութիւնը կ՝յօրինէին.

«Պ. Պոֆօր հրամայեց որ դերկոմսին մարմինը զմուսեն, ինչպէս որ Արաբները սովոր են ընելու երբոր իրենց մարմինը հայրենիք փոխադրելու կամք յայտնեն, և դուքսը յատուկ ձիեր սահմանեց որպէս զի հաւատարիմ սպասաւոր մը, որ պատանին մեծցուցեր էր, կարող լինի Լա Ֆէր կոմսին տանիլ դագաղը»։

— Այսպէս — մտածեց տ՝Արգանեան — քու յուղարկաւորութեանդ ներկայ պիտի գտնուիմ, իմ սիրական զաւակս, ես, որ արդէն ծեր եմ, որ երկրիս վրայ արժէք մը չունիմ, և հոգ պիտի թափեմ այս Ճակտին վրայ զոր դեռ երկու ամիս առաջ կը համբուրէի։ Աստուած այսպէս կամեցաւ։ Դու ևս այսպէս կամեցար։ Հիմակ իրաւունք անգամ չունիմ լալու. դու ընտրեցիր մահը, կեանքէն նախագաս երեցաւ քեզ։

Վերջապէս հասաւ այն վայրկեանն երբ այս երկու աղատորդիներուն սառ դիակները սև հողը պիտի դրուէին։

Այնքան բազմաթիւ էին զօրականներ և ժողովրդեան մարդիկ, որ մինչև դերեզմանատունը, որ դաշտավայրին վրայ մատուռ մ՝էր, քաղքին Ճամբաները ձիաւորներով և հետևակներով լցան, բոլորն ալ սուգի զգեստներով։

Աթոս իբրև յետին բնակարան՝ սոյն մատրան փոքրիկ ցանկն ընտրեր էր, և մատուռն ալ ինք շիներ էր իր հողերուն սահմանին մօտ։ Քարեր բերել տուեր էր Պէրիի մէջ գտնուած հին կոթողական շէնքէ մը, ուր իր պատանեկութիւնն անցուցեր էր։

Մատուռն այսպէս նորոգուելով և փոխադրուելով սօսիներու և մոլաթզենիներու անտառակի մը ներքև դեղեցիկ ծաղ կ'երևէր։ Ամէն կիրակի օր, մօտակայ գիւղին երէցը պատարագ ընելու կը դար անդ, և Ամոս այս նպատակաւ երկու հարիւր ֆրանք հասոյթ սահմաններ էր անոր, և իր կալուածին բոլոր հպատակները, որոյ թիւը քառասունի կ'հասնէր, մշակներն ու ագարակատներն իրենց ընտանեօք պատարագ տեսնելու կ'գիմէին նոյն մատուռը, քաղաքն երթալու պէտք չունենալով։

Մատռան ետևի կողմը կ'տարածուէր, կաղնիներու, շամբուկներու և գժնիկներու երկու խոշոր ցանկապատի մէջ ամփոփուած և բոլորտիքը խորունկ փոսով մը շրջապատուած՝ փոքրիկ որմածն անմշակ՝ այլ իր ամլութեան մէջ գեղաշուարձ, վառն զի լօտերը բարձր էին անդ, վասն զի վայրի արևադէմներն և կոկոռներն իրենց անուշահոտ բուրմունքը կ'սփռէին, վասն զի շաղանակենիներու ներքև՝ մարմարէ ջրամբարէ մը մեծ աղբիւր մը կ'հոսէր, և թռչիւններու վրայ հաղարաւոր մեղուներ կ'դագարէին շուրջանակի, մօտակայ դաշտերէն գալով, մինչդեռ սարեկիներն և կարմրալանջները ցանկին ծաղիկներուն վրայ խանդաղին կ'երգէին։

Ահա այս տեղ բերին երկու դագաղները՝ լուն և երկիւղած ամբոխի մը մէջ։

Թաղման արարողութիւնը կատարուելէն ետև, ամէնքը վերջին բարև տուին այս ազնիւ մեռելներուն, և ապա բոլոր յուղարկաւորներն անհետ եղան, Ճամբուն վրայ խօսելով հօրն առաքինութեանց և քաղցր մահուան վրայ և որդւոյն յուսադիր ապագային և Ափրիկէի ծովափին վրայ ունեցած տխուր վախճանին վրայ։

Փոքր առ փոքր շշուկները մարեցան՝ անշուք խորանին մոմերուն պէս։ Քահանայն վերջին անգամ մ'ալ խորանն ու թարմ դերեզմանները ողջունեց, ապա իր օգնականին ընկերակցութեամբ, որ խոպոպ զանգակ մը կ'զարնէր, ծանր ծանր երիցատունը հասաւ։

Տ'Արգանեան մինակ մնալով տեսաւ որ գիշերը կ'մօտենար։ Ժամը մուտքեր էր մեռելներուն վրայ մտածելով։

Կաղնի նստարանէն ելաւ, որու վրայ նստեր էր մատռան մէջ, և քահանային պէս՝ ուզեց երթալ իր վերջին ողջոյնը տալու իր կորուսեալ բարեկամներու պարտնական երկու դերեզմաններուն։

Կին մ'այս խոնաւ հողին վրայ ծունր դրած կ'աղօթէր։

Տ'Արգանեան մատռան սեմին վրայ կայ առաւ որպէս զի այս կինը չվրդովէ, և միանգամայն տեսնելու ջանաց թէ ով էր այն բարեպաշտ բարեկամուհին որ այնչափ եռանդով և յարատևութեամբ այս նուիրական պարտաւորութիւնը կատարելու եկեր էր։

Անծանօթն իր ձեռաց մէջ կ'պահէր գէմքը, ձիւնի պէս սպիտակ ձեռքեր։ Իր հագուստին ազնիւ պարզութենէ գիւրին էր գուշակել որ բարձրագիր կին մ'էր։ Դուրսը՝ շատ մը ձիեր որոց վրայ սպասաւորներ հեծեր էին և կառք մը սոյն կնկան կ'սպասէին։ Տ'Արգանեան տեսածը գուշակելու ընդունայն կ'ջանար։

Կինը շարունակ կ'աղօթէր, սակայն իր թաշկինակն աչացը վրայ կ'գնէր։ Տ'Արգանեան հասկըցաւ որ նա կ'արտասուէր։

Տեսաւ որ քրիստոնեայ կնկան անպութ կրօնասիրութեամբ իր կուրծքը կ'ծեծէր. քանի մ'անգամ լսեց սա խօսքն որ կարեվէր սրտի մը խորէն կ'բղխէր. «Ներողութիւն, ներողութիւն»։

Եւ որովհետև բոլորովին իր վշտով համակուած կ'երևէր, որովհետև՝ կէս մը նուաղած կռնակի վրայ կ'ծռէր արտունջներ և աղօթք արտասանելով, տ'Արգանեան՝ իր այսչափ ողբոց արժանի բարեկամներուն վրայ սիրտը շարժելով՝ քանի մը քայլ առաւ դէպ 'ի գերեզմանը, որպէս զի ապաշխարող կնկան մեռելոց հետ ըրած չարագոյժ մենախօսութիւնը վրդովէ։

Բայց հաղիւ թէ ոտքն աւազին վրայ ձայն հանեց որ անծանօթ կինը գլուխը վերցուց և տ'Արգանեանի ցցուց արտասուաթոր դէմք մը, ծանօթ դէմք մը։

Այս էր օրիորդ Լա Վալիէր։

— Պ. տ'Արգանեան — մրմռաց նա։

— Գո՛ւ — պատասխանեց հրայանակիրը տխուր ձայնով մը — գո՛ւ ասա գտնուիս։ Ո՛հ, տիկին, լաւ ևս ունէի տեսնել քեզ Լա Ֆէր կոմսին գրկին մէջ ծաղիկներով զարդարուած։ Այն ատեն այդչափ չսիրէի լայիր, նոյնպէս անոնք, և ես։

— Պարո՛ն — ըսաւ նա հեծկլտալով։

— Վասն զի դու — յարեց մեռելոյ անողորմ բարեկամը՝ — դու այս երկու մարդիկը սև հողն իջեցուցիր։

— Ո՛հ, խնայէ զիս։

— Աստուած չընէ, օրիորդ, որ կին մը թշնամանելու և ընդունայն արտասուել տալու միտք ունենամ, բայց պարտաւոր եմ ըսել որ մարդասպանին տեղը զոհերուն դերեզմանին վրայ չէ։

Նա պատասխանել ուզեց։

— Այս ըսածս — յարեց նա պաղութեամբ — թաղաւորին կ'ըսէի։

Օրիորդն իր ձեռներն իրարու միացուց։

— Գիտեմ — ըսաւ — որ Պրաժլօն դերկոմին մահուան պատճառ եղայ։

— Ա՛հ, գիտես։

— Այս լուրն երէկ արքունիքը հասաւ։ Այս իրկուն ժամն երկուքին քառասուն մղոն տեղ առի որպէս զի դամ կոմսէն ներողութիւն խնդրեմ, ես որ կարծէի թէ դեռ ողջ է, և աղաչելու զԱստուած՝ Ռաուլի դերեզմանին վրայ՝ որ ինձ արժանի եղած ամէն աղէտքը հասցնէ զլխուս, բայց 'ի մէկէն։ Այժմ, գիտեմ, պարոն, որ որդւոյն մահը հայրը սպաննեց, երկու մեղք ունիմ քաւելու, Աստուծմէ երկու պատիժ ունիմ սպասելու։

— Օրիորդ, նորէն պիտի կրկնեմ — ըսաւ ս'Արգանեան — ինչ. որ Յանգիսլ Պ. Պրաժլօն քեզի համար ըսաւ, երբ արդէն իր մահը կ'մտածէր.

«Եթէ գոռոզութիւնն ու պչրանքը զինքը մոլորեցուցին, արհամարհելով կ'ներեմ անոր։ Եթէ սէրը զինքը նուաձեց, կ'ներեմ անոր երդմնելով որ երբէք ինձի չափ ոչ ոք պիտի սիրէ զանի»։

— Գիտես — ընդմիջեց Լուիզ — որ սիրոյս համար, ես ինքս պիտի զոհուէի. գիտես թէ որչափ տառապեցայ երբ զիս կորուսեալ, մեռած և ընկերիկ եկաք գտնելու։ Լա՛ւ, այսօրուան պէս երբէք տառապանք չեմ կրած. վասն զի այն տեսն կ'յուսայի, կ'փափաքէի, վասն զի այս մեռելն իմ բոլոր ուրախութիւնս դերեզմանին մէջ կ'թաղէ, վասն զի առանց սրտի տաղնապի չեմ համարձակիր սիրել, և թէ կ'զդամ որ իմ սիրած անձն, ո՜հ,

այս է օրէնքը, ուրիշներուն պատճառած տանջանքս ինձի պիտի հատուցանէ։

Ս'Արգանեան բան մը չպատասխանեց. քաջ կ'զդար որ չէր սխալեր նա։

— Լաւ ուրեմն — յարեց նա — սիրելի ս'Արգանեան, այսօր զիս մի՛ սատեր, կ'պաղատիմ քեզ։ Բունէն Լորդուած Ճիւղին կը նմանիմ, աշխարհիս վրայ կապուելու բան մը չունիմ այլ ևս, և հոսանք մը կ'տանի զիս չգիտեմ ուր։ Ցիմարաբար կ'սիրեմ, կ'սիրեմ այն ատենն որ այս տեղ այս մեռելին առջևն վրայ կ'ըսեմ ես, և քանի՛ ամբարիշտ եմ, և չեմ պատկառ, և չունիմ սրտի խայթ։ Այս սէրս կրօն մ'է։ Մի՛այն թէ՝ քանի որ վերջէն զիս միայնակ, մոռցուած և արհամարհեալ պիտի տեսնես, քանի որ պիտի տեսնես որ պիտի պատժուիմ այն բանին համար զոր դու պատժելու մտադիր ես, խնայէ զիս իմ վաղամուկիկ երջանկութեանս մէջ, թող ինձ այդ երջանկութիւնը քանի մ'օր, քանի մը վայրկեան վայելեմ, թերևս այս խօսած վայրկենէս այդ երջանկութիւնը ջնջուած է։ Աստուա՛ծ իմ, թերևս այս կրկնապատիկ սպանութիւնն արդէն քաւուած է։

Տակաւին կ'խօսէր նա, երբ ձայնի և քայլափոխի աղմուկ մը լսելով հրայանակիրն ականջը տնկեց։

Թաղաւորին մէկ սպայն, Պ. Սէնդ-Էնյան, թաղաւորին կողմէ Լա Վալիէրը փնտռելու եկեր էր, թաղաւորն որ նախանձէն և մտատանջութենէ կ'մաշէր, ըսաւ նա։

Սէնդ-Էնյան չտեսաւ ս'Արգանեանը, վասն զի կիսովին ծածկուած էր շաղանակենի մը ստուերէն որ երկու դերեզմաններուն վրայ կ'տարածուէր։

Լուիզ Սէնդ-Էնյանի բարև տուաւ և զանի ճամբեց նշմարով մը։ Սէնդ-Էնյան որմածէն դուրս եկաւ։

— Կ'տեսնեն — ըսաւ հրամանատարը նորատի կնկան — կ'նային որ երջանկութիւնդ դեռ ևս կ'տևէ։

Նորատի կինը հանդիսաւոր կերպով մը կանգնեցաւ։

— Օր մը պիտի ղղջաս — ըսաւ նա — զիս այսպէս յանիրաւի զատելուդ վրայ։ Այն օրը, պարոն, ես պիտի աղաչեմ Աստու-

ծոյ որ ինձի դէմ անիրաւութեամբ վարուելդ մոռնայ։ Ասկէ զատ՝ այնքան պիտի տառապիմ որ դու ամենէն առաջ պիտի ցաւիս իմ տառապանացս վրայ։ Պ. տ'Արդանեան, այս երջանկութիւն ինձի մեղք մի՛ համարիր. սուղ եկաւ ինձ, և դեռ բոլոր պարտքս չվճարեցի։

Այս խօսքն ըսելով նորէն ծունր դրաւ մեղմիկ և սիրալին։

— Ներէ՛ ինձ, վերջին անգամ ևս կ'ըսեմ, իմ Ռաուլ նշանածս — ըսաւ նա։ — Մեր կապը կոտրեցի. երկուքնիս ալ վշտէ մեռնելու սահմանուած ենք։ Դու ամենէն առաջ մեկնեցար, մի՛ երկնչիր, ես քեզի պիտի հետևիմ։ Միայն նկատէ որ վատօրէն չվարուեցայ, և այս յետին ողջոյնը քեզի տալու եկայ։ Ատուած վկայ է ինձ, Ռաուլ, որ եթէ կեանքս պէտք լինէր քու կիրքդ փրկելու համար, առանց վարանելու այս կեանքս պիտի տայի։ Իմ սէրս կարող չպիտի լինէի տալու։ Վերստին կ'ըսեմ, ներողութիւն։

Ոտ մը քաղեց և հողին մէջ մղեց, ապա իր արտասուալից աչքերը սրբեց, տ'Արդանեանն ողջունեց և մեկնեցաւ։

Հրամանատարը տեսաւ որ ձի, ձիաւոր և կառք մեկնեցան. ապա թեերը յուզեալ կուրծքին վրայ ծալլելով.

— Ե՞րբ իմ կարգս պիտի գայ մեկնելու համար — ըսաւ նա այլայլուն ձայնով մը։ — Ի՞նչ կ'մնայ մարդուս երիտասարդութենէ, սէրէ, փառքէ, բարեկամութենէ, ուժէ, հարստութենէ ետք . . . : Այս ժայռը, որու ներքև կ'ննջէ Բորթոս, որ բոլոր այս ըսածներուս տիրացաւ, այս մամուռն որու ներքև Աթոս ու Ռաուլ կ'հանգչին, որ շատ աւելի բաներու տիրացան։

Պահ մը վարանեցաւ, անշարժ աչքք, ապա գլուխը վեր առնելով.

— Քալենք միշտ — ըսաւ։ — Երբ ժամանակը գայ, Ատուած պիտի ըսէ ինձ ինչպէս որ ըսաւ միւսներուն։

Մատերուն ծայրովը՝ երեկոյեան ցօղէն թրջած հողին դպաւ, խաչ հանեց որպէս թէ եկեղեցւոյ մը մատնքի առջև կ'գտնուէր, և միայնակ, ընդ միշտ միայնակ Բարիզի ճամբան բռնեց։

ՎԵՐՋԱԲԱՆ

Այս մեր նկարագրած տեսարանէն չորս տարի ետք, երկու քաջավարժ ձիաւորներ այգուն Պլուայէն անցան և եկան ամէն ինչ պատրաստել տալու հաւորստութեան մը համար։ Թագաւորը կ'ուզէր այդ որսն ընել այն անհարթ դաշտավայրին մէջ որ Լուարը դեռն երկուքի կ'բաժնէ, և որ մէկ կողմը Մէօն կ'յանգի, միւս կողմն Անպուաշ։

Ասոնք էին թագաւորին որսական բարակին հրամանատարն և բաղէից վերատեսուչը, այնպէս անձինք որ Լուի ԺԳի օրով շատ մեծ յարգ ունէին, բայց իր յաջորդին կողմէն այնքան անուն չունէին։

Այս երկու ձիաւորները, հողը հեռադիտելէն և իրենց դիտողութիւններն ընելէն ետև՝ կ'վերադառնային, երբ մանր մունր զինուորայ խմբեր տեսան զոր յիսնապետներ հեռուանց հեռու կը դասէին, շքջապատներու բերանը։ Այս զինուորները թագաւորին հրացանակիրներն էին։

Ասոնց ետևէն՝ լաւ ձիու մը վրայ հեծած կ'գար հրամանատարը, որ իր ոսկեճամուկ զգեստէն կ'ճանչցուէր։ Սպիտակ մազեր ունէր և ալէգարդ մօրուք մը։ Փոքր ինչ քամակը կորած կ'երևէր, թէև գիւրութեամբ իր ձին կ'վարէր, և իր բոլորտիքը կը նայէր հսկելու համար։

— Պ. տ'Արդանեան չծերանար — ըսաւ երէի գլխաւորն իր բաղէից վերատեսուչ պաշտօնակցին — թէև մեզնէ տասն տարու մեծ է, բայց դարձեալ ձիու վրայ առոյգ զինուոր մը կ'երևի։

— Իրաւ է — պատասխանեց բաղէից գլխաւորը — քսան տարիէ 'ի վեր մի և նոյնը կ'գտնեմ զինքը։

Այս սպան կ'սխալէր. տ'Արդանեան չորս տարուան մէջ տասն երկու տարուան կեանքը մաշեցուցեր էր։ Տարիքն իր անողորմ ճանկերը կ'գրոշմէր իր աչքերուն մէն մի անկեան վրայ. իր ճակատը

փոքր ինչ խորշոմեր էր, իր ձեռներն որ երբեմն թուխ էին և ջլուտ, կ'ձերմկնային որպէս թէ արիւնը սկսած էր պաղելու։

Տ'Արդանեան երկու սպայից մօտեցաւ դերապոյն մարդկան ազնուութիւնն երևան հանող քաղցրաբարոյ ընթացքով։ Իր մարդավարութեան փոխարէն երկու յարգալից ողջոյն ընդունեց։

— Ա՛հ, ինչ բարեբաղդութիւն է ձեզ այս տեղ տեսնել, Պ. տ'Արդանեան — դոչեց բաղէամարդը։

— Պարոններ, աւելի ինձի կ'իյնայ այդ խօսքն ըսելու — պատասխանեց հրամանատարը։ — Վասն զի մեր օրերն թագաւորը ստէպ իր հրացանակիրները չդործածեր ինչպէս չդործածեր իր թուչունները։

— Ա՛ռ ջի աղոր ժամանակները չենք — հառաչեց բաղէամարդը։ — Կ'յիշէք, Պ. տ'Արդանեան, երբոր հանդուցեալ թագաւորը Պօժանսիէն անդին այդ ինտերուն մէջ անցեալ կ'թուցնէր. ա՛հ, Ճշմարիտը, հրացանակրաց հրամանատար չէիք այն ատեն, Պ. տ'Արդանեան։

— Վարուժաններու մարդիչ էի միայն — վրայ բերաւ տ'Արդանեան զուարթութեամբ մը։ — Բայց ի՞նչ փոյթ, աղոր ժամանակն էր, վասն զի երբ մարդ դեռահաս է, միշտ աղոր ժամանակն է . . . ։ Բարի լոյս, որսորդապե՛տ։

— Պատիւ կ'ընէք ինձ, կոմս — ըսաւ այս վերջինը։

Տ'Արդանեան պատասխան մը չտուաւ։ Այս կոմսի սիտղսն իրեն զարմանք չէր պատճառած, տ'Արդանեան չորս տարիէ 'ի վեր կոմս եղած էր։

— Միթէ ձեր ըրած երկար ճամբէն չյոգնեցա՞ք, հրամանատար — շարունակեց բաղէամարդը։ — Կարծեմ թէ երկու հարիւր մղոն է ասկից 'ի Բինյերոյ։

— Երկու հարիւր վաթսուն մղոն գնալու և նոյնչափ վերադառնալու համար — ըսաւ տ'Արդանեան հանդարտօրէն։

— Եւ — ըսաւ հաւրսը մեղմաձայն — միթէ լա՞ւ վիճակի մէջ է նա։

— Ո՞վ — հարցուց տ'Արդանեան։

— Այն խեղճ Գուքէն — շարունակեց մեղմաձայն բաղէամարդը։

Որսորդապետն առ խոհեմութիւն մէկդի քաշուեր էր։

— Ո՛չ — պատասխանեց տ'Արդանեան — խեղճ մարդն իրօք կը վշտանայ. չկրնար ըմբռնել որ բանտը շնորհ մը լինի. կ'ըսէ թէ Բարլմէնդն իրեն ներեր էր աքսորելով, և թէ աքսորն աղատութիւն է։ Չկրնար երևակայել որ իր մահն երդմեր էին, և թէ՝ Բարլմէնդի ճիրաններէն կեանքն աղատելը, Աստուծոյ չափազանց շնորհապարտ լինիլ է։

— Ա՛հ, այո՛, խեղճ մարդը կառափնաւէն անցաւ — պատասխանեց բաղէամարդը. — կ'ըսեն թէ Պ. Գօլպէր արդէն հրամաններ տուեր էր Պաստիլի կառավարչին, և թէ դլխատութիւնն արդէն հրամայած էր։

— Վերջապէս — ըսաւ տ'Արդանեան խոհուն դէմքով մը և որպէս թէ խօսակցութիւնը կարճ կապել կ'ուզէր։

— Վերջապէս — կրկնեց որսական բարակներու վերատեսուչը մօտենալով — ահա Պ. Գուքէն 'ի Բինյերոյ, արժանի է այդ պատժոյն, ձեր կողմէն այն տեղ առաջնորդուելու բարեբաղդութիւնն ունեցաւ. բաւական կողոպտեր էր։

Տ'Արդանեան շուներու դլխաւորին իր դաժան ակնարկներէն մին նետեց, և անոր ըսաւ.

— Պարոն, եթէ դային ինձ ըսէին որ շանցդ հային կեղևները կերած ես, ոչ միայն չպիտի հաւատայի, այլ նաև, եթէ այդ պատճառաւ բանտի դատապարտուէիր, չպիտի հանդուրժէի որ քեզ բանբասեն։ Սակայն, պարոն, որչափ որ բարեկիր մարդ ես, կը հաւաստեմ որ այլ ևս չես այնչափ որչափ էր Պ. Գուքէ։

Այս ծանր կշտամբանքը կրելէն ետև՝ Նորին Վեհափառութեան որսականաց դլխաւորը քիթը կախեց և թոյլ տուաւ որ բաղէամարդը տ'Արդանեանի մօտ գնայ իրմէ առաջ երկու քայլ անցնելով։

— Գոհ է — ըսաւ կամացուկ մը բաղէամարդը հրացանակրին — կ'երևի թէ բարակներն այսօր նորաձևութիւն է, եթէ բաղէամարդ լինէր, այսպէս չպիտի խօսէր։

Տ'Արդանեան մելամաղձութեամբ ժպտեցաւ տեսնելով որ այս քաղաքական մեծ խնդիրն այսպիսի դձուռ շահու մը դժգոհութ-

թեամբ կ'լուծուէր. պահ մ'ևս մնածեց վերատեսչին վարած այն փառաւոր կենաց վրայ, իր հարստութեան կործանման վրայ, իրեն սահմանուած ողբալի մահուան վրայ, և վերջացնելու համար իր մտածութիւնը,

— Գուրէ — ըսաւ նա — թռչնարանները կ'սիրէր։

— Ո՛հ, պարոն, խանդագին կ'սիրէր — վրայ բերաւ բաղէամարդն այնպիսի դառն և վշտալի ձայնով և հառաչով որ Գուրէի դամբանական ճառն եղաւ։

Տ'Արդանեան թողուց որ միոյն սրանեղութիւնն ու միւսին տրրտմութիւնն անցնին, և դաշտավայրին մէջ իր ընթացքը շարունակեց։

Արդէն անտառին բացուածքներէն սրսորդներուն դալը կ'տեսնէր, նոյնպէս ձիաւոր կանանց դարդմանակներն ասուպներու պէս՝ բացատներուն մէջ, և սպիտակ ձիերը, որ իրենց լուսաւոր երեւոյթով թաւուտներուն մթին շաւիղներուն մէջ կ'նկարուէին։

— Բայց — ըսաւ տ'Արդանեան — երկարատև պիտի լինի՞ որսը։ Պիտի ազաչեմ որ շուտով թռչունը բռնէք. շատ յոգնած եմ։ Արդեօք ճա՞յ է թէ ոչ կարապ։

— Երկուքն ալ, Պ. տ'Արդանեան — ըսաւ բաղէամարդը. — բայց մի՛ անհանդիստ լինիք, թագաւորն որսի մէջ ճարպիկ չէ. իրեն զուարճութեան համար որսի չելներ, այլ միայն տիկնանց համար։

Այս դիպուածը բառն այնպէս շեշտով արտասանեց նա որ տ'Արդանեան իր ականջը տնկեց։

— Ա՛հ — ըսաւ նա բաղէամարդին նայելով զարմացած դէմքով մը։

Բարակներու դլխաւորը կ'ժպտէր, անտարակոյս հրամանակրին հետ հաշտուելու համար։

— Ո՛հ, ծիծաղէ — ըսաւ տ'Արդանեան — ես ալ տեղեկութիւններէ զուրկ եմ. երէկ հասայ ամիս մը բացակայ գտնուելէն ետև։ Աբբունիքը սուդի մէջ ձգեցի մայր թագուհւոյն մահուան վրայ։ Թագաւորը չէր ուզեր զուարճանալ Աննա թագուհւոյն յետին հառաչն ընդունելէն 'ի վեր. բայց՝ այս աշխարհիս մէջ ամէն բան վերջ ունի։ Լաւ, հիմակ ալ ախուր չէ թագաւորը, լաւ ևս։

— Եւ ամէն բան ալ կ'սկսի — ըսաւ բարակայ դլխաւորը խոշոր ծիծաղով մը։

— Ա՛հ — ըրաւ երկրորդ անդամ տ'Արդանեան որ սաստիկ կը տենչար նոր բաներ իմանալու, բայց իր արժանապատուութիւնը չէր ներեր որ ստորակարգեալի մը հարցուփորձ ընէ — ըստ երևոյթին նոր սկսուած բան մը կայ։

Որսական բարակներու դլխաւորն ակնթարթ մ'ըրաւ նշանակական։ Բայց տ'Արդանեան այս մարդէն բան մը չէր ուզեր իմանալ։

— Մինթէ թագաւորը կանուխ պիտի տեսնուի՞ — հարցուց բաղէամարդին։

— Անտարակոյս, ժամն եօթին, պարոն. թռչունները պիտի արձակեմ։

— Ո՞վ կայ թագաւորին հետ. ի՞նչպէս է իշխանուհին, ի՞նչպէս է թագուհին։

— Աւելի աղէկ է, պարոն։

— Ուրեմն հիւանդ էր։

— Պարոն, իր կրած վերջին ցաւէն 'ի վեր՝ նորին Վեհափառութիւնը կ'տառապի։

— Ի՞նչ վիշտ։ Սիրելի պարոն, մի՛ վախնար, ամէն բան ըսէ ինձ։ Դեռ նոր հասայ։

— Կ'երևի թէ թագուհին, իր ղբանչին մահուանէն 'ի վեր փոքր ինչ երեսի վրայ մնալուն՝ թագաւորին դանդատեցաւ, և թագաւորն ալ այս պատասխանը տուած լինի. «— Մինթէ ամէն դիշեր քեզի հետ չեմ պառկիր, տիկին, ուրիշ ի՞նչ կ'ուզես»։

— Ա՛հ — ըսաւ տ'Արդանեան — խե՜ղճ կին. անտարակոյս շատ պէտք է ատէ օրիորդ Լա Վալիէրը։

— Ո՛հ, ո՛չ. օրիորդ Լա Վալիէրը չէ այժմ պատճառը — պատասխանեց բաղէամարդը։

— Ուրեմն ո՞վ է։

Փողին ձայնն այս խօսակցութիւնն ընդհատեց։ Անով շուներն ու թռչունները կ'կոչէին։ Բաղէամարդն և իր ընկերը շուտ մը մտրակեցին իրենց երիվարներն և տ'Արդանեանը միայնակ թողուցին խօսքը կիսկատար մնալով։

Թագաւորը հեռուէն կ'երևէր տիկիններով ու ձիաւորներով շրջապատեալ։

Բոլոր այս խումբը ծանրաքայլ կ'յառաջանար, և կարդաս, փողերն ու շեփորները կ'գրգռէին շուներն ու ձիերը։

Այնպիսի շարժում, դղրդիւն և լուսերու շող մ'էր երևցածն որուն նման բան մ'այժմ չտեսնուիր, եթէ ոչ թատերական խաղերու սուտ ու պատիր ճոխութիւնն ու շքեղութիւնը։

Տ'Արդանեան փոքր ինչ տկարացած աչօքը խմբին ետև երեք կառք նշմարեց, առաջինը թագուհւոյն սահմանուածն էր և պարապ։

Տ'Արդանեան՝ որ օրիորդ Լա Վալիէրը չտեսաւ թագաւորին մօտ, զանի փնտռեց և երկրորդ կառքին մէջ տեսաւ։

Միայնակ էր նա երկու կանանց հետ որ կարծես թէ իրենց ալրուհւոյն պէս կ'տաղտկանային։

Թագաւորին ձախ ոլին՝ վառվռուն ձիու մը վրայ, զոր իր ճարպիկ ձեռօք կ'վարէր, գեղահրաշ գեղեցկութեամբ կին մը կ'փայլէր։

Թագաւորն անոր կ'ժպտէր, և նա ևս թագաւորին կ'ժպտէր։

Ամէն մարդ քահ քահ կ'խնդար երբ նա խօսէր։

— Այս կինը կ'ճանչեմ— մտածեց հրայանակիրը։ — Ուրեմն ոմ է։

Եւ տ'Արդանեան իր բաղեամարդ բարեկամին կողմը դարձաւ, որու այս հարցումն ուղղեց։

Ընկերակիցը պատասխան պիտի տար, երբ թագաւորը տ'Արդանեանը տեսնելով,

— Ա՛հ, կոմս — ըսաւ — ահա ուրեմն վերադարձար։ Ինչու համար քեզ առաջ չտեսայ։

— Վեհափառ — պատասխանեց հրամանատարը — վասն զի երբ հասայ դուք տակաւին կ'քնանայիք, և երբ այս առտու ծառայութիւնս սկսայ դեռ ևս արթնցած չէիք։

— Միշտ նոյնն ես — ըսաւ բարձրաձայն Լուի գոհունակ։ — Կոմս, հանդիսատ նայէ, քեզի կ'պատուիրեմ որ հանդչիս։ Այս օր ինձի հետ պիտի ճաշես։

Զարմացման մրմունջ մ'իրրև ահագին գոլտանք մը տ'Արդանեանը շրջապատեց։ Ամէն ոք անոր չորս ոլին առնելու կ'փութար։ Թագաւորին հետ ճաշել՝ պատիւ մ'էր զոր թագաւորը Հանրի Դի պէս չէր շռայլեր։ Թագաւորը քանի մը քայլ ընդ առաջ անցաւ, և տ'Արդանեան սահմանեցաւ նոր խմբի մը մէջ կայ առնուլ, որու մէջ Գօլտէր կ'փայլէր։

— Բարի լոյս, Պ. տ'Արդանեան — ըսաւ անոր պաշտօնեայն սիրալիր քաղաքավարութեամբ մը — միթէ լաւ ճամբայ ըրիք։

— Այո՛, պարոն — ըսաւ տ'Արդանեան իր ձիուն վրայ ողջունելով։

— Լսեցի որ թագաւորը ձեզ այս իրիկուն իր սեղանին հրաւիրեց — շարունակեց պաշտօնեայն — և անդ ձեր հին բարեկամներէն մին պիտի գտնէք։

— Իմ հին բարեկամներէս մի՞ն — հարցուց տ'Արդանեան, տրամադրին ընկղմելով անցեալին մթին յիշատակներուն մէջ, որ իրեն համար այնքան բարեկամութիւններ և ատելութիւններ ընկլուղեր էին։

— Ալամէտա դուքսը, որ այս առտու Սպանիայէն հասաւ — պատասխանեց Գօլտէր։

— Ալամէտա դո՞ւքսը — ըսաւ տ'Արդանեան փնտռելով։

— Ե՛ս — ըսաւ ձիւնի պէս ալեւոր ծերունի մ'որ կառքին մէջ ծռեր էր, և զայն բանալ կ'տար որ ելնէ հրայանակիրը դիմաւորէ։

— Արամի՛ս — պոռաց տ'Արդանեան՝ ապուշ կրթած։

Եւ անշարժ կեցած՝ թողուց որ ծերունի բարեկամին նիհարցած թևը գողգողալով իր վզէն փաթթուի։

Գօլտէր՝ ըրութեամբ պահ մը դիտեցէն ետև՝ իր ձին քշեց և երկու բարեկամներն առանձին թողուց։

— Այսպէս — ըսաւ հրայանակիրն Արամիսի թևը բռնելով — ահա դո՞ւ, դու որ տարագիր էիր և ապստամբ, 'ի Գրանսա։

— Եւ ես քեզի հետ թագաւորին սեղանակից պիտի լինիմ — ըսաւ եպիսկոպոսը ժպտելով։ — Այո՛, կ'հարցնես ինքնավին թէ ինչի՞ կ'ծառայէ հաւատարմութիւնն այս աշխարհիս մէջ։ Ահա,

թողունք որ անցնի այս խեղճ Լա Վալիէրի կառքը։ Նայէ՛, ինչպէս մոայոյզ է, ինչպէս իր արտասուքով նուաղած աչքը թաղաւորին կ՚հետևի որ վարը կ՚ընթանայ։

— Որո՞ւ հետ։

— Օրիորդ Դ՚Օնէյ–Շարանդին հետ, որ այժմ տիկին Մօնդէսպան եղաւ — պատասխանեց Արամիս։

— Նա կ՚նախանձի, նա խաբուած է։

— Տ՚Արդանեան, ոչ տակաւին. բայց այդ բանը չպիտի ուշանայ։

Այսպէս որսորդութեան հետևեցան, իրարու հետ խօսելով անցուցին, և Արամիսի կառապանն այնպէս ճարպիկութեամբ առաջնորդեց զանոնք, որ հասաւ այն միջոցին որ բաղէն՝ թռչունը կեղեքելով՝ կ՚ստիպէր զայն իջնելու և անոր վրայ կ՚ընկնէր։

Թաղաւորը ձիէն վար իջաւ, տիկին Մօնդէսպան նոյնն ըրաւ։ Առանձին մատրան մ՚առջև հասեր էին, որ խոշոր ծառերով ծածկուած էր, և որոյ տերևներն աշնան առաջին հովերէն թափեր էին։ Այս մատրան ետևը շրջապատ մը կար ձողակերտ դռնով զոյգուած։

Բաղէն ստիպեր էր որ իր որսն այս փոքրիկ մատրան կից որմածին մէջ ընկնի, և թաղաւորն ուզեց ներս մտնել որպէս զի՝ ըստ սովորութեան՝ առաջին փետուրն առնու։

Ամէն մարդ շէնքին և ցանկին բոլորը կեցաւ, շէնք մ՚որ շատ փոքր լինելուն չէր կրնար ամենքը պարունակել։

Տ՚Արդանեան Արամիսը չթողուց, որ մուսներուն պէս կառքէն իջնել ուզեց, և սուղ ձայնով մը.

— Գիտե՞ս արդեօք, Արամիս — ըսաւ — թէ դիպուածն ուր քերաւ մեզ։

— Ո՛չ — պատասխանեց դուքսը։

— Այս տեղ կ՚հանդչէին իմ ճանչցած մարդիկս — ըսաւ նա տխուր յիշատակով մ՚այլայլած։

Արամիս առանց բան մը դուշակելու՝ և դողդոջ քայլով մը, մատուռը մտաւ փոքրիկ դռնէ մը զոր տ՚Արդանեան անոր բացաւ։

— Ո՞ւր թաղուած են — ըսաւ նա։

— Վարը, որմածին մէջ. կ՚տեսնես որ խաչ մը կայ այս փոքր նոճիին ներքև։ Փոքրիկ նոճին իրենց գերեզմանին վրայ անկուած. մի՛ երթար, թաղաւորն այս պահուս անդ կ՚երթայ, ճայն անդ ընկաւ։

Արամիս կայ առաւ և ստուերին մէջ պահուըտեցաւ։ Այն ատեն առանց տեսնուելու՝ տեսան՝ Լա Վալիէրի դունատ դէմքը, որ իր կառքին մէջ մոռցուած՝ նախ իր դունակին նայեր էր տխրագին. ապա նախանձէն զրդռեալ, մատրան մէջ յառաջացեր էր, ուր սիւնակի մը կռթնած՝ նա կ՚դիտէր որմածին մէջ թաղաւորն որ կ՚ժպտէր և տիկին Մօնդէսպանի նշան կ՚ընէր մօտենալու և չվախնալու։

Տիկին Մօնդէսպան մօտեցաւ. թաղաւորին ընծայած ձեռքը բռնեց, և թաղաւորն ալ բաղէին խղդած ճային առաջին փետուրը փետելով՝ իր գեղանի ընկերուհւոյն դդակին վրայ դրաւ։

Այն ատեն՝ ըստ կարգի ժպտելով՝ տիկին Մօնդէսպան այս ընծան ընող ձեռքը դորովագին համբուրեց։

Թաղաւորը խնդութենէ կարմրեցաւ. տիկին Մօնդէսպանի նայեցաւ, ցանկութեան և սիրոյ եռանդով,

— Փոխարէն ի՞նչ պիտի տաս ինձի — ըսաւ նա։

Նոճիին մէկ ոստը կտրեց և թաղաւորին ընծայեց՝ յուսով արքշիւ։

— Բայց — ըսաւ մեղմիկ Արամիս տ՚Արդանեանի — ներկայն տխուր է, վասն զի այս նոճին շիրիմ կ՚հովանաւորէ։

— Այո՛, և այս շիրիմը Ռաուլ Պրաժլօնինն է — ըսաւ տ՚Արդանեան բարձր ձայնով — Ռաուլինն է, որ այս խաչին ներքև կը ննջէ իր հօրն Ատոսին մօտ։

Հեծեծանք մը լսելի եղաւ յետուստ։ Կին մը տեսան որ նուաղեալ վար ընկաւ։ Օրիորդ Լա Վալիէր ամէն ինչ տեսեր էր, և ամէն ինչ լսեր։

— Խե՛ղճ կին — մրմնաց տ՚Արդանեան, որ անոր կանանց օգնեց որ կառքը փոխադրեն զանի — հիմա իր տառապելու կարգն է։

Արդարև՝ երկունը տ՚Արդանեան թաղաւորին սեղանը կ՚նստէր պ. Գօլպէրի և Ալամէտա դքսին մօտ։

Թագաւորը շատ զուարթ էր։ Թագուհւոյն շատ մը քաղաքավարութիւններ ըրաւ, իշխանուհւոյն շատ մը զգուանք, որ իր ձախ գին նստեր էր և շատ ախուր էր։ Կարծես թէ այն հանդարտ ժամանակներն էին, երբ Թագաւորն իր մօրն աչայ մէջ կը փնտռէր իր ըսածին հաւանութիւնը կամ հաճութիւնը։

Սեղանին վրայ բնաւ խօսք չեղաւ սիրուհիներու մասին։ Թագաւորն երկու երեք անգամ Արամիսին ուղղեց խօսքը Պ. դեսպան անուանելով, և այս բանս տ՝Արդանեանի արդէն զգայած զարմանքն աւելցուց տեսնելով որ իր ապստամբ բարեկամն այնչափ մեծ շնորհ ստացած էր արքունիքը։

Թագաւորը՝ սեղանէն ելնելով՝ Թագուհւոյն տուաւ ձեռքը, և Գօլպէրին նշմայը մ՝ըրաւ, որու աչքն իր սիրոջ աչքը կ՝լրտեսէր։

Գօլպէր Պ. տ՝Արդանեանն ու Արամիսն առանձին առաւ։ Թագաւորն սկսաւ իր քրոջ հետ խօսիլ, մինչդեռ Թագաւորին եղբայրը՝ անհանգիստ, մտահոգ կերպով Թագուհւոյն հետ կ՝խօսակցէր, միշտ աչքին ծայրով իր կնկան և եղբօրը նայելով։

Արամիսի, տ՝Արդանեանի և Գօլպէրի մէջ եղած խօսակցութիւնն անտարբեր իրերու վրայ դարձաւ։ Դախորդ պաշտօնէից վրայ խօսեցան. Գօլպէր Մազարէնի վրայ այլ և այլ բաներ պատմեց և Ռիշլիէօի վրայ ալ անոնց շատ բաներ պատմել տուաւ։

Տ՝Արդանեան շարունակ կ՝զարմանար տեսնելով այս մարդը՝ թանձր ունքով, ցած ճակտով, որ այնքան շատ ծանօթութիւններ և զուարթուն բնաւորութիւն ունենար։ Արամիս կ՝զարմանար մտքի այս թեթեւութեան վրայ որ ծանրագլուխ մարդու մը կ՝ներէր ճարպիկութեամբ աւելի ծանր խօսակցութեան մը ժամանակն ուշացնել, որու ոչ ոք չէր ակնարկեր, թէև երեք խօսակիցներն անոր կարևորութիւնը կ՝զգային։

Թագաւորին եղբօրը դէմքէն կ՝երևէր թէ Թագաւորին և իշխանուհւոյն խօսակցութիւնն որչափ զինքը կ՝նեղէր։ Իշխանուհւոյն աչքը գրեթէ կարմիր էին. միթէ պիտի գանգատէր, միթէ բուլոր արքունեայց փոքրիկ դայթակղութիւն մը պիտի պատճառեր։

Թագաւորը մէկդի քաշեց իշխանուհին, և այնպիսի անուշ ձայնով մ՝որ հարկաւ յիշեցուց անոր այն օրերն երբ ինք կ՝սիրուէր,

— Քոյր իմ — ըսաւ անոր — ինչու համար այդ աղուոր աչերդ լացեր են։

— Բայց Վեհափառ . . . — ըսաւ նա։

— Ամուսինդ նախանձոտ է, այնպէս չէ՞, քոյր իմ։

Այս խօսքին վրայ՝ իշխանուհին իր ամուսնոյն կողմը նայեցաւ, և այս անվրէպ նշան մ՝էր որով իշխանը հասկըցաւ թէ իրեն վրայ կ՝խօսին։

— Այո՛ . . . — ըսաւ նա։

— Մտիկ ըրէ ինձ — վրայ բերաւ Թագաւորը — եթէ բարեկամներդ պատիւդ վտանգի կ՝դնեն, յանցանքն իշխանինը չէ։

Այս խօսքն այնպէս անուշութեամբ ըսաւ, որ իշխանուհին քաջալերուելով՝ թէև այնքան ցաւեր ունէր երկար ժամանակէ 'ի վեր, քիչ մնաց որ լացը պիտի ձգէր, այնքան յուզուած էր իր սիրտը։

— Հանդարտէ, հանդարտէ, սիրելի քոյր իմ — ըսաւ Թագաւորը — պատմէ ինձ քու վիշտերդ. հաւատա, որ իբրև եղբայր, քեզ կարեկից կ՝գտնուիմ, իբրև Թագաւոր խօսք կ՝տամ՝ անոնց վախճան մը տալու։

Իշխանուհին իր աղուոր աչունքը վեր առաւ, և թախծութեամբ մը.

— Իմ բարեկամներս չեն պատիւս վտանգողները — ըսաւ նա — անոնք տարակայ են կամ պահուած. Ձեր Վեհափառութեան աչքէն ձգելու ամէն ճիգ թափեցին, թէև այնքան անձնուէր, այնքան բարի, այնքան անկեղծ են։

— Այդ խօսքը Պ. Կիշլին համար կ՝ըսես, զոր իշխանին խընդրոյն վրայ աքսորեր էի։

— Եւ որ այս անիրաւ տարագրութեան վրայ, օրն անգամ մը ինքզինքը սպաննելու փորձ կ՝փորձէ։

— Անիրաւ կ՝ըսես, քոյր իմ։

— Այնքան անիրաւ է, որ եթէ առ Ձեր Վեհափառութեան իմ միշտ ունեցած բարեկամական յարգանքս չունենայի . . . ։

— Լաւ ուրեմն։

— Լաւ, իմ Շարլ եղբօրմէս պիտի խնդրէի, եղբայրս որ իմ խօսքէս չելներ . . .։

Թագաւորը գոռ ղոռայ։

— Ի՞նչ պիտի խնդրէիր ուրեմն։

— Պիտի խնդրէի որ ձեզի յայտարարել տայ որ իշխանն ու իր մտերիմը, Լօրէն ասպետը, անպատիժ պէտք չէ մնան իմ պատուոյս և երջանկութեանս դահիճները դառնալով։

— Լօրէ՞ն ասպետը — ըսաւ թագաւորը — այն տխուր դէմքը։

— Իմ անհաշտ թշնամիս է։ Որչափ ատեն որ այս մարդն իմ տան մէջ մնայ, ուր՝ ձեր եղբայրը զանի կ'պահէ և անոր մեծ իշխանութիւն կ'տայ, ես այս տէրութեան մէջ յետին կինը պիտի լինիմ։

— Այսպէս — ըսաւ թագաւորը ծանրօրէն — քու Անկլիոյ եղբայրդ քան զիս լաւագոյն բարեկամ կ'անուանես։

— Գործերը կ'խօսին, Վեհափառ։

— Եւ լաւագոյն պիտի համարէիր երթալ օգնութիւն խնդրել . . .։

— Ի՛մ հայրենիքէս — ըսաւ նա հպարտութեամբ — այո՛, Վեհափառ։

Թագաւորն անոր պատասխանեց.

— Դու ալ ինձի պէս Հանրի Դի Թոռն ես, բարեկամուհիս։ Քու տոհմիկդ ու ազնուականդ լինելովս միթէ եղբօրմը տիտղոս ստացած չե՞մ լինիր։

— Ուրեմն — ըսաւ Հանրիէդ — գործէ։

— Դաշնադրութիւն մ'ընենք։

— Դու սկսիր։

— Ըսիր որ Կիշն յանիրաւի աքսորեցի։

— Ո՛հ, այո՛ — ըսաւ նա կարմրելով։

— Կիշ պիտի վերադառնայ։

— Լաւ։

— Դարձեալ կ'ըսես թէ իրաւունք չունիմ Լօրէն ասպետը տանդ մէջ պահել, որ քեզի դէմ չար խորհուրդներ կ'տայ եղբօրս։

— Լաւ միտ դիր ըսածիս, Վեհափառ. Լօրէն ասպետն օր մը . . .։ Ահա կ'յայտնեմ որ եթէ երբէք դէշ վախճան ունենամ, յիշէ որ Լօրէն ասպետը կանխաւ կ'ամբաստանեմ. . . ամէն յանցանք գործելու կարող մարդ մ'է։

— Լօրէն ասպետը քեզ չպիտի նեղէ այսուհետև, ահա ես կ'ապահովեմ քեզ։

— Այն ատեն դաշնադրութեան ճշմարիտ նախադիր մ'ըրած կ'լինիս, Վեհափառ. այդ դաշնադրութիւնը կ'ստորագրեմ. . .։ Բայց որովհետև դու պայմանդ յայտնեցիր, ըսէ ինձ թէ ի՞նչ պիտի լինի իմս։

— Փոխանակ Շարլ եղբօրդ հետ զիս աւրելու, պէտք է որ զիս խիստ սրտակից բարեկամն ընելու աշխատիս։

— Դիւրին բան է։

— Ո՛հ, ոչ կարծածիդ չափ. վասն զի սովորական բարեկամութեան մէջ մարդիկ զիրար կ'համբուրեն, կ'շնորհաւորեն, և այս ամենը լոկ համբոյրով կամ ընդունելութեամբ կ'լինայ, դիւրին միջոցներ. բայց քաղաքական բարեկամութեան մէջ. . .։

— Ա՛հ, քաղաքական բարեկամութիւն մ'է։

— Այո՛, քոյր իմ, ուստի, փոխանակ դրկախառնութեան և հանդէսներու, պէտք է ողջ ողջ և կազմ զինուորներ մեծարել բարեկամի. նաւեր պէտք է ընծայել բոլորովին զինեալ թնդանօթներով և պաշարով։ Հետևապէս միշտ արկղները լեցուն չեն լինիր այսպիսի բարեկամութիւններ ընելու։

— Ա՛հ, իրաւունք ունիս — ըսաւ իշխանուհին . . . — Անկլիոյ թագաւորին արկղները փոքր ինչ դատարկ են բաւական ժամանակէ 'ի վեր։

— Բայց դու, քոյր իմ, թերևս զեսպանի մ'երբէք ձեռք ձգելու չկրցածը դու պիտի կարենաս ստանալ։

— Այս բանիս համար պէտք պիտի լինի ինձ Լոնտօն երթալ, սիրելի եղբայր իմ։

— Ես ալ այդ մտածեցի — պատասխանեց թագաւորն աշխուժութեամբ — և ինքնիրենս ըսեր էի որ այսպիսի ուղևորութիւն մը կրնայ քեզ քիչ մը սիրուում պատճառել։

— Միայն — ընդմիջեց իշխանուհին — կարելի է որ չյաջողիմ։ Անկլիոյ թագաւորը վատնդաւոր խորհրդականներ ունի։

— Խորհրդականուհիներ ըսել կ'ուզես։

— Ճիշտ այդպէս։ Եթէ երբեք, Ձեր Վեհափառութիւնը միտք ունենար, միայն ենթադրութիւն մ'է ըրածս, Շարլ Բին հետ պատերազմի մը համար դաշնադրել։

— Պատերազմի մը համար։

— Այո։ Լաւ, այն ատենը, թագաւորին խորհրդականուհիներն որ եօթն հոգի են, օրիորդ Սդըվարա, օրիորդ Վէլս, օրիորդ Կոլին, օրիորդ Օրբէյ, օրիորդ Զանկա, օրիորդ Տավս և Գասսէլմէն կոմսուհին պիտի յայտարարեն թագաւորին թէ պատերազմի համար շատ դրամ պէտք է, թէ լաւ ևս է պարահանդէսներ և խնջոյքներ տալ 'ի Համբրդէն–Քըրդ քան թէ Բօրդոմուրթի և Կրենիչի մէջ նաւեր կազմել։

— Եւ այն ատեն քու բանակցութիւնդ պիտի անարդիւն մնայ։

— Ո՛հ, այս կիներն ապարդիւն կ'հանեն իրենց ձեռօք չեղած ամէն բանակցութիւնները։

— Դիտէս արդեօք ինչ խորհուրդ ունիմ, քոյր իմ։

— Ո՛չ, ըսէ։

— Այսինքն քու բոլորտիքդ լաւ մը քննելով կարելի է թագաւորին յարմար խորհրդականուհի մը կրնաս ասնիլ, այնպէսուր անոր ճարտասանութիւնը միւս եօթնից չարակամութիւնը կարենայ փարատել։

— Արդարև լաւ խորհուրդ մ'է այդ, Վեհափառ, և ես կը փնտռեմ այդպիսի անձ մը։

— Պիտի գտնես։

— Կ'յուսամ։

— Սիրուն անձ մը պէտք է. լաւ ևս է ախորժելի քան տգեղ դէմք մը, այնպէս չէ։

— Ի հարկէ։

— Վառվռուն, զուարթ, յանդուգն միտք մը։

— Անշուշտ։

— Աղնութիւն... որչափ որ պէտք է աւանդ անձարակուսթեան թագաւորին մօտենալու համար։ Եւ ոչ այնչափ որչափ որ իր յեղական արժանապատուութենէ շփոթի։

— Շատ ճիշտ է։

— Եւ... փոքր ինչ անկլիարէն գիտնայ։

— Ատոուած իմ, բայց մէկը — դուշեց Հանրիկ աշխուժիւ — Բէրուալ օրիորդին նման, օրինակի համար։

— Է՛հ, այո, այո — ըսաւ Լուի ԺԳ — ահա դատար... դու դատար, քոյր իմ։

— Այդ անձը հետս պիտի տանիմ։ Կարծեմ թէ դանդատելու բան մը չպիտի ունենայ։

— Բայց, բնաւ, հրապուրիչ լիազօր դեսպանուհի պիտի անուանեմ զանի, և ասոր պիտի աւելցնեմ տիտղոսական հասերն։

— Լաւ։

— Քեզ արդէն Համբրայ եղած կ'տեսնեմ, սիրելի փոքրիկ քոյր իմ, և բոլոր վիշտերդ սփոփած կ'տեսնեմ։

— Երկու պայմանաւ պիտի մնկնիմ. առաջինն այս է որ կ'ուզեմ գիտնալ մէ ինչ բանի վրայ պիտի բանակցիմ։

— Ասասիկ. գիտես որ Հոլանտացիք՝ ամէն օր իրենց լրագիրներուն մէջ և իրենց հասարակապետական գիրքով զիս կ'նախատեն։ Ես չեմ սիրեր հասարակապետութիւնները։

— Այլ գիւրին է ըմբռնել, Վեհափառ։

— Ցաւօք կ'տեսնեմ որ ծովու այս թագաւորները, այսպէս կը կոչուին, Հնդկաստանի մէջ Գրանսայի առուտուրը բռնած են և իրենց նաւերը քիչ ատենէն բոլոր Եւրոպայի նաւահանգիստները պիտի գրաւեն, այսպիսի զօրութիւն մ'ինձի շատ մօտ կ'թուի, քոյր իմ։

— Սակայն դաշնակիցներդ չէ՞ն։

— Ահա այդ պատճառաւ մեղանչեցին այն գիտցած միտալդ կոխելնուն, որ Յեսուին պէս Հոլանտան կ'ներկայացնէ արևը կէսցընող, այս արձանագրով. Աբեն իմ ատ-ՔԼ-ս կէցատ։ Այս շատ եղբայրական չէ, այսպէս չեն գտներ։

— Կարծէի թէ այս մնոտի խնդիրը մոռցած ես։

— Ես երբեք բան մը չեմ մոռնար, քոյր իմ։ Եւ եթէ իմ

ՀՀՇՄարիտ բարեկամներս, ինչպէս Շարլ եղբայրդ ինձ օգնել կ'ուզեն . . . :

Իշխանուհին խորհելու սկսաւ :

— Մանիկ ըրէ. ծովերու տիրապետութիւնը կրնանք բաժնել — ըսաւ Լուի ԺԴ : — Անկլիոյ կրած այս բաժանման համար, միթէ երկրորդ մասն հոլանտացւոց չափ չե՞մ կրնար ներկայացնել :

— Քէրուալ օրիորդն ունինք այս նիւթին վրայ բանակցելու համար — պատասխանեց իշխանուհին :

— Ի՞նչ է երկրորդ պայմանդ մեկնելու համար, քոյր իմ :

— Իմ ամուսնոյս, իշխանին հաւանութիւնը :

— Հիմակ պիտի ստանաս :

— Ուրեմն մեկնելու պատրաստ եմ, եղբայր իմ :

Այս խօսքն ըսելով Լուի ԺԴ՝ սրահին անկիւնը դարձաւ ուր Գօլպէր ու Արամիս տ'Արդանեանի հետ կ'զտնուէին, և իր պաշտօնէին հաստատական նշմայր մ'ըրաւ :

Այն ատեն Գօլպէր խօսակցութեան գտնուած տեղը կտրեց, և Արամիսին ըսաւ.

— Պարոն դեսպան, կ'ուզե՞ս որ գործի վրայ խօսինք :

Տ'Արդանեան անմիջապէս խոհեմութեամբ քաշուեցաւ :

Եւ դէպ 'ի վառարանը գիմեց, Թագաւորին առ իշխանն ըսելիքը լսելու չափ հեռու կենալով, մինչդեռ իշխանը մտատանջութեամբ լի, զինքը գիմաւորելու կ'գար :

Թագաւորին դէմքը կարմրցած էր : Իր ճակտին վրայ կ'տեսնուէր կամք մ'որու ահարկու արտայայտութիւնը Գրանսայի մէջ այլ ևս ընդդիմութիւն մը չէր գտներ, և քիչ ատենէն Եւրոպայի մէջ ալ չպիտե գտներ :

— Պարոն — ըսաւ Թագաւորն իր եղբօրը — գոհ չեմ Լօրէն ասպետէն : Դու որ զինքը պաշտպանելու պատիւը կ'ընես, յորդորէ զինքն որ ատեն մը ճամբորդութիւն ընելու երթայ :

Այս խօսքերը հիւսի մը կերպով ընկան իշխանին վրայ, որ այս մտերիմը կ'պաշտէր և իր բոլոր զրգանքն անոր վրայ կեդրոներ էր :

Նա գոչեց.

— Ասպետն ի՞նչ կերպով անհաճոյ եղաւ Ձեր Վեհափառութեան :

Հանրիէդին վրայ զայրացին ակնարկ մը նետեց :

— Պիտի ըսեմ՝ քեզի այս բանս երբոր մեկնի — պատասխանեց Թագաւորն անդրդուելի կերպով — նոյնպէս, երբ իշխանուհին՝ Անկլիա անցնի :

— Իշխանուհի՞ն Անկլիա — մրմնաց իշխանն ապուշ կրթած :

— Ուրի՞ օրէն պիտի մեկնի, եղբայր իմ — շարունակեց Թագաւորը — մինչդեռ մենք երկուքնիս՝ ըսելիք տեղս պիտի երթանք :

Եւ Թագաւորն իր կռնակը դարձուց իր եղբօրը ժպտելով որպէս զի այս երկու լուրերուն դառնութիւնն ամրքէ :

Նոյն միջոցին՝ Գօլպէր շարունակ Աւամէտա դքսին հետ կը խօսակցէր :

— Պարոն — ըսաւ Գօլպէր Արամիսին — ահա իրարու միաք հասկընալու ժամը հասաւ : Ես քեզ Թագաւորին հետ հաշտեցուցի, և այս բանս պարտաւոր էի ընել քու արժանիքդ ունեցող մարդու մը համար. բայց՝ որովհետև երբեմն ինձ բարեկամութիւն ցոյց տուած ես, աւիթը կ'ընծայի ինձ փորձ մը տալու : Արդարև դու աւելի գաղղիացի ես քան թէ սպանիացի, ինձ անկեղծօրէն պատասխան տուր, միթէ Սպանիոյ չէզոքութիւնը պիտի ունենա՞նք եթէ Միացեալ-Գաւառաց դէմ պատերազմ բանանք :

— Պարոն — ըսաւ Արամիս — Սպանիոյ շահը շատ բայայայտ է : Եւրոպան Միացեալ-Գաւառաց հետ աւրել որոց դէմ իրենց ձեռք ձգած ազատութեան ոսը դեռ կ'տեսէ, մեր քաղաքականութիւնն է. բայց Գրանսայի Թագաւորը Միացեալ-Գաւառաց դաշնակիցն է : Ասկէ զատ՝ քաջ գիտես որ նաւային պատերազմ պիտի բացուի, և կարծեմ թէ Գրանսան այդպիսի պատերազմ մը ընելու նպաստաւոր վիճակի մէջ չգտնուիր :

Գօլպէր՝ գլուխը դարձնելով նոյն պահուն՝ տ'Արդանեանը տեսաւ որ խօսակից մը կ'փնտուէր Թագաւորին և եղբօրը գաղտնի խօսակցութեան ժամանակ :

Զանի կոչեց :

Եւ ցած ձայնով Արամիսին ըսաւ.

— Կարող ենք Պ. տ՝Արղանեանի հետ խօսակցիլ։

— Ո՛Հ, անտարակոյս — պատասխանեց դեսպանը։

— Պ. Ալամէտային հետ կ՝ըսէինք թէ — ըսաւ Գօլպէր — Միացեալ-Գաւառաց հետ պատերազմը նաւային կրնայ լինիլ։

— Այդ ակներև է — պատասխանեց հրացանակիրը։

— Եւ զու ի՞նչ կ՝խորհիս, Պ. տ՝Արղանեան։

— Կ՝մտածեմ որ այս նաւային պատերազմն ընելու համար ցամաքային մեծ բանակ մը պէտք է մեզի։

— Ի՞նչ հրամայեցիր — ըսաւ Գօլպէր, որ կարծեց թէ լաւ չլսեց ըսածը։

— Ինչո՞ւ համար ցամաքային բանակ մը պէտք է — հարցուց Արամիս։

— Վասն զի Թագաւորը ծովու վրայ նկուն պիտի մնայ եթէ անկլիացիքն իրեն գործակից չունենայ, և երբ ծովու վրայ յաղթահարի, իսկոյն կամ հոլանդացիք նաւահանգիստները, կամ սպանիացիք մեր երկիրը պիտի ասպատակեն։

— Սպանիային չէզոք — ըսաւ Արամիս։

— Չէզոք որչափ ատեն որ Թագաւորն ամենէն ուժով մնայ — պատասխանեց տ՝Արղանեան։

Գօլպէր հրացանակրին այս խորագիտութեան վրայ զմայլեցաւ, որ երբ խնլրոյ մը վրայ խօսէր հիմնովին կ՝լուսաւորէր զայն։

Արամիս ժպտեցաւ։ Քաջ գիտէր որ՝ գիւանագիտութեան կողմէ՝ տ՝Արղանեան գերազանցող մը չունէր։

Գօլպէր՝ որ, ամէն զուռոշ մարդերու պէս՝ յաջողութեան հաստատ յուսով իր խորհուրդը կ՝որոճար, շարունակեց.

— Պ. տ՝Արղանեան, ոմ՞ ըսաւ քեզի որ Թագաւորը նաւային զօրութիւն չունի։

— Ո՛Հ, այդ պարագաները չեմ քննած — պատասխանեց հրամանատարը։

— Ես միջակ մարդ մ՝եմ ծովային խնդիրներու մասին։ Ամէն չլսած մարդոց պէս՝ ծովը կ՝ատեմ, սակայն՝ այս կարծիքն ունիմ որ Ֆրանսա՝ երկու հարիւր գլխով նաւահանգիստ մը լինելով՝ եթէ նաւեր ունենայ՝ նաւատորմիղ ալ կրնայ պահել։

Գօլպէր իր դրպանէն երկայն տետր մը հանեց երկու սիւն բաժնուած։ Առաջնոյն վրայ նաւերու անունները կային, երկրորդին վրայ սոյն նաւերը կազմող թնդանօթներուն և նաւազին համբարները։

— Ես ալ քու կարծիքդ ունեցայ — ըսաւ նա տ՝Արղանեանի — և նաւերուն ցուցակը շինել տուի, որոյ վրայ ուրիշ նաւեր ալ աւելցուցի։ Երսուն հինգ նաւ։

— Երսուն հինգ նաւ. անկարելի է — գոչեց տ՝Արղանեան։

— Երկու հազար թնդանօթի մօտ ունինք — ըսաւ Գօլպէր։

— Այս է Թագաւորին ունեցածն այս միջոցիս։ Երսունը հինգ նաւով երեք նաւատորմ կ՝շինուի, և ես հինգ հատ կ՝ուզեմ։

— Հինգ — գոչեց Արամիս։

— Տարուան վերջը չհասած ծովը պիտի դանուին, պարոններ. Թագաւորը յիսուն հատ պատերազմիկ նաւ պիտի ունենայ։ Ասով կարելի է կռուիլ, այնպէս չէ՞։

— Նաւեր շինել — ըսաւ տ՝Արղանեան — դժուարին գործ է, բայց կարելի։ Սակայն զանոնք գինելու համար ի՞նչ ընելու է։ Ֆրանսայի մէջ ո՛չ ճուլարան կայ և ո՛չ նաւարան...։

— Բա՛ — պատասխանեց Գօլպէր խնդալին դէմքով մը — մէկ ու կէս տարիէ՝ի վեր, այդ ամէն բաները հաստատեցի, միթէ չգիտեն։ Միթէ Պ. տ՝Էնֆիրվիլը կ՝ճանչնա՞ս։

— Տ՝Էնֆիրվիլ — պատասխանեց տ՝Արղանեան — ո՛չ։

— Այս մարդն ես պտայ. յատուկ մասնագէտ մ՝է. գիտէ գործաւորներն աշխատել տալ։ Այս է որ՝ի Թուլօն՝ թնդանօթներ ճուլել և Պորիկոյի փայտեր կտրել տուաւ։ Ասկէ զատ՝ թերևս չհաստատ ըսելիքս, պարոն դեսպան, ուրիշ միտք մ՝ալ ունեցայ։

— Ո՛Հ, պարոն — ըսաւ Արամիս մարդավարութեամբ — միշտ կ՝հաստատ քեզի։

— Երևակայէ որ՝ միշտ մեր դաշնակից հոլանդացւոց բնաւորութիւնն՝ի համար առնելով, իրարի ըսի. ասոնք վաճառականներն են, Թագաւորին հետ բարեկամ՝ են, շատ յօժարակամ պիտի ծախեն Նորին Վեհափառութեան իրենց համար շինած բաները։

Ուրեմն որչափ գնենք . . . : Ա՛Հ, պէտք է նաև ըսեմ. Ֆօրանն ունիմ. . . : Միթէ Ֆօրանը կ՚Ճանչէս, տ՚Արդանեան :

Գօլպէր լեզուները կ՚մոռնար : Հրայանակերին պարզապէս տ՚Արդանեան կ՚ըսէր, թագաւորին պէս : Բայց հրամանատարը ժպտեցաւ :

— Ո՛չ — պատասխանեց նա — չեմ Ճանչեր զանի :

— Այս մարդն ալ ես գտայ, ծախու առնելու յատուկ դիտութիւն մ՚ունի : Այս Ֆօրանն ինձի գնեց 350,000 լիպրէ երկաթ գնդակներ, 200,000 լիպրէ վառօդ, հիւսիսային փայտ տասն երկու նաւու բեռ, պատրոյդներ, ռումբեր, կուպր, և ուրիշ ինչ գիտնամ ես, հարիւրին եօթ խնայողութեամբ, այնպէս որ եթէ այս ամէն բաները Ֆրանսա շինել տայի նոյնչափ վնաս պիտի ընէի :

— Այդ աղօր խորհուրդ մ՚է — պատասխանեց տ՚Արդանեան — հոլանտական ռումբեր ձուլել տալն որ հոլանտացւոյ պիտի դառնան :

— Այնպէս չէ՞, կորուստով :

Եւ Գօլպէր սկսաւ ծիծաղել շոր ու մեծ ծիծաղով մը : Իր կատակին վրայ կ՚զմայլէր :

— Ասկէ զատ — յարեց նա — նոյն իսկ այս հոլանտացիք վեց հատ նաւ կ՚շինեն թագաւորին համար իրենց լաւագոյն նաւերուն օրինակին վրայ : Տէսդուշ. . . : Ա՛Հ, կարելի է որ Տէսդուշը չես Ճանչեր :

— Ո՛չ, պարոն :

— Այո՛, մարդ մ՚որ իսկոյն կ՚դատէ՝ երբ նաւ մը ծով իջեցրնեն, թէ սոյն նաւուն պակսութիւններն ու յատկութիւններն ի՞նչ են : Այս թանկագին բան մ՚է, գիտէ՞ք : Ճշմարիտը, բնութիւնն այլանդակ է : Լաւ, այս Տէսդուշ նաւահանգստի մը մէջ շատ օգտակար մարդ մ՚երևցաւ ինձ, և այժմ 48 թնդանօթ կրող վեց հատ նաւու շինութեան վրայ կ՚հսկէ Հոլանտայի մէջ : Այս ըսածներէս կ՚հետևի որ՝ սիրելիդ իմ պ. տ՚Արդանեան, թագաւորն եթէ Հոլանտայի հետ աւրուիլ ուզէ, պատուական նաւատորմիղ մը պիտի ունենայ : Արդ՝ դու ամենէն լաւ պիտի գիտնաս թէ մեր ցամաքային բանակը պատուա՞ն է թէ ոչ :

Տ՚Արդանեան ու Արամիս իրարու երեսայեցան, զմայլելով այն թագուն աշխատութեան վրայ որով այս մարդն անբաւ գործեր տեսեր էր քիչ ժամանակի մէջ :

Գօլպէր խնայաւ սնոնց միտքը, և այս շողոքորթութենէ ախորժեցաւ, որ ամենէն լաւագոյնն էր :

— Եթէ մենք Ֆրանսայի մէջ անտեղեակ ենք այս բաներուն — ըսաւ տ՚Արդանեան — Ֆրանսայէն դուրս աւելի ևս տգէտ են այս մասին :

— Ահա ասոր համար կ՚ըսէի պ. դեսպանին — ըսաւ Գօլպէր — որ Սպանիա չէզոքութիւնը խոստանալով, Անկլիա մեզի օգնելով. . . :

— Եթէ Անկլիա ձեզ օգնէ — ըսաւ Արամիս — Սպանիոյ չէզոքութեան համար խօսք կ՚տամ :

— Ձեռքդ տուր — փութայ ըսելու Գօլպէր իր խրոխտ բարեմտութեամբը : — Իսկ՝ Սպանիոյ գալով Ռսկեղեղմը չունիս, պ. Ալամէտա : Անցածն օր թագաւորը կ՚ըսէր որ կ՚փափաքի քեզ տեսնել Սէն-Միշէլի շքանշանով զարդարուած :

Արամիս խոնարհութիւն ըրաւ :

— Ո՛հ — մտածեց տ՚Արդանեան — հապա Բորթոս որ ասա չէ՞ : Այս առատաձեռնութեանց ժամանակ քանի՛ քանի կանգուն ժապաւէններ պիտի ստանար : Բարի՛ Բորթոս :

— Պարոն տ՚Արդանեան — վրայ բերաւ Գօլպէր — քիչ մ՚ալ միասին խօսինք : Հաւատի եմ որ հրայանակիրները Հոլանտա տանելու կ՚փափաքիս : Միթէ լողալ գիտես :

Եւ սկսաւ զուարթութեամբ վառուած մարդու մը պէս ծիծաղիլ :

— Օձաձկան պէս — պատասխանեց տ՚Արդանեան :

— Ա՛Հ, պէտք է գիտնաս որ այն տեղ այնպիսի ջրանցքներ և ճահիճներ կան որոնցմէ անցնիլը դժուարին է, պ. տ՚Արդանեան, և ամենէն քաջ լողակները կրնան խզդուիլ :

— Այդ իմ արհեստս է — պատասխանեց հրայանակիրը — նորին Վեհափառութեան համար մեռնիլ : Միայն թէ՝ ըստ որում քիչ անգամ պատերազմի ատեն շատ ջուր գտնուի առանց գոյդն ինչ կրակի, կանխաւ կ՚յայտնեմ քեզ որ ձեռքէս եկածը

պիտի ընեմ կրակը դանելու։ Երթալով կ'ծերանամ, ջուրը ղնա կ'սառեցնէ, կրակը կ'տաքցնէ, Պ. Գօլպէր։

Տ'Արգանեան այս խօսքերն արտասանելու ատեն՝ այնպէս երիտասարդական կայտառութիւն և հպարտութիւն ցոյց տուաւ որ Գօլպէր՝ ըստ կարգի՝ չկրցաւ համբերել և անոր վրայ աքանչացաւ։

Տ'Արգանեան իր ըրած ներգործութիւնը դիտեց։ Ցիշեց որ լաւ վաճառականն այն է որ իր վաճառքին բարձր արժէք մը տալու կ'յաջողի երբոր իրօք դին ունի։ Ուստի այս դինը կանխաւ պատրաստեց։

— Այսպէս — ըսաւ Գօլպէր — Հոլանտա պիտի երթանք։

— Այո՛ — պատասխանեց տ'Արգանեան — միայն . . .։

— Միայն . . . — հարցուց Գօլպէր։

— Միայն — կրկնեց տ'Արգանեան — ամէն բանի մէջ շահու և ինքնասիրութեան խնդիրը կայ։ Իրաւի հրայանակրայ հրամանատարինը գեղեցիկ թոշակ մ'է. այժմ թագաւորին պահակներն և թագաւորին տան զօրականներն ունինք։ Հրայանակրայ հրամանատար մը պարտաւոր է, կամ այս զօրականայ հրամայել, և այն ատեն հարիւր հազար ֆրանք պիտի սպառէ ընդունելութեան և սեղանի համար . . .։

— Մինթէ այնպէս կ'երևակայեն որ թագաւորը քեզի հետ սակարկութիւն պիտի ընէ — ըսաւ Գօլպէր։

— Է՛հ, պարոն, միտքս չհասկըցար — պատասխանեց տ'Արգանեան, շահու խնդիրն ըստ հաճոյս կատարած լինելուն ստոյգ լինելով — կ'ըսէի քեզ թէ ես, հին հրամանատար մը, երբեմն թագաւորին պահակացը դլխաւորը, Ֆրանսայի մարաջախտներէն մեծ պատիւ ունենալով, պաշարման օր մը տեսայ որ երեք համաղօր պաշտօնակիցներ ունէի, պահակայ հրամանատարն և հելվետիացի զօրականայ հրամանատար դնդապետը։ Արդ՝ ես այսպիսի քանի մ'երբէք չպիտի հանդուրժեմ։ Հին սովորութիւններ ունիմ, և զանոնք կ'պահեմ։

Գօլպէր այս հարուածը զգայ։ Իրաւ է որ արդէն պատրաստուած էր այս բանիս։

— Քիչ մ'առաջ ըսածիդ վրայ մնածեցի — պատասխանեց նա։

— Ի՞նչ բանի վրայ, պարոն։

— Ջրանցքի և ճահիճներու վրայ կ'խօսէինք որոց մէջ մարդ կրնայ խղդուիլ։

— Լաւ, ուրեմն։

— Լաւ, եթէ մարդ կ'խղդուի, պատճառն այն է որ նաւակ մը, տախտակ մը, ցուպ մը չունենար։

— Ցուպ մը, թոզ որչափ կ'ուզես կարճ լինի — ըսաւ տ'Արգանեան։

— Ճիշտ այդպէս — ըսաւ Գօլպէր։ — Ուստի չեմ յիշեր բնաւ որ Ֆրանսայի մարաջախտ մը ծովամոյն եղած լինի։

Տ'Արգանեան խնդութենէ դունատեցաւ, և դողդոջ ձայնով մը.

— Իմ հայրենեաց մէջ իրմով շատ պիտի պարծին — ըսաւ նա — եթէ Ֆրանսայի մարաջախտ լինէի. բայց պէտք է իբրև ընդհանուր հրամանատար արշաւող բանակի մը դլուխն անցնելով գործ մ'ըրած լինիմ ցուպը շահելու համար։

— Պարոն — ըսաւ անոր Գօլպէր — ահա այս թղթակալիս մէջ պատերազմի յատակագիծ մը կայ որու վրայ պիտի խորհիս և ըստ այնմ յաջորդ դարնան թագաւորին յանձնելիք զօրաբանակը պիտի վարես։

Տ'Արգանեան դողդողալով առաւ թղթակալը, և իր մատերը Գօլպէրի մատերուն հանդիպելով՝ պաշտօնեայն հրայանակրին ձեռքն անկեղծութեամբ սեղմեց։

— Պարոն — ըսաւ անոր — իրարմէ վրէժ մ'առնլու պէտք ունէինք։ Ես սկսայ, հիմակ քու կարգդ է։

— Ես փոխարէնը պիտի հատուցանեմ, պարոն — պատասխանեց տ'Արգանեան — և կ'աղաչեմ քեզ ըսել թագաւորին որ առաջին առթիւ կրնայ յուսալ յաղթութեան մը կամ մահուանս։

— Այժմէն բանել կ'տամ — ըսաւ Գօլպէր — ոսկի շուշանն որ քու մարաջախտի դաւազանդ պիտի զարդարէ։

Այս օրուան հետևեալ օրը՝ Արամիս՝ որ Մատրիտ դնալու ճամբայ կ'ելնէր որպէս զի Սպանիոյ չէղոքութեան վրայ բանակցի՝ տ'Արգանեանը տեսնելու և դրկելու համար անոր պանդոկը դիմեց։

— Զորս հոգւոյ համար սիրենք — ըսաւ տ՚Արդանեան — այժմ միայն երկու հոգի ենք։

— Եւ թերեւս նորէն չպիտի տեսնես զիս, սիրելի տ՚Արդանեան — ըսաւ Արամիս — եթէ գիտնայիր ո՛րչափ սիրեցի քեզ։ Այժմ ծեր, մաշած, մեռած մարդ մ՚եմ։

— Բարեկամդ իմ — ըսաւ տ՚Արդանեան — դու իսկ աւելի պիտի ապրիս, գիւանագիտութիւնը քեզ կ՚հրամայէ ապրելու, բայց զիս մահուան կ՚դատապարտէ պատիւը։

— Բա՛, մեղի պէս մարդիկ, պարոն մարաջախտ — ըսաւ Արամիս — միայն փառքով և ուրախութեամբ կշտացած կ՚մեռնին։

— Ա՛հ — պատասխանեց տ՚Արդանեան տխուր ժպիտով մը — այժմ ախորժակ չունիմ այդպիսի բաներու, պարոն դուքս։

Եւ վերստին զիրար համբուրեցին, և երկու ժամ ետքն իրարմէ բաժնուեցան։

Պ. Տ՚ԱՐԴԱՆԵԱՆԻ ՄԱՀԸ

Ամէն ոք իր խոստմունքը պահեց և պատուաւոր կերպով կատարեց՝ թէև ոչ միայն քաղաքականութեան այլ և բարոյականի մասին՝ շատ անգամ այս խոստմնապահութեան հակառակը կ՚տեսնուի։

Թագաւորը վերակոչեց Պ. Կիշն և Պ. Լօրէն ասպետը վերնտեց, այնպէս որ իր եղբայրն այս բանին վրայ հիւանդացաւ։

Իշխանուհին Լոնտոն գնաց, ուր այնչափ աշխատեցաւ իր եղբօրը վրայ ներգործել տալու Քէրուալ օրիորդին քաղաքական խորհուրդներն որ Ֆրանսայի և Անկլիոյ մէջ դաշնաւորութիւնը ստորագրուեցաւ, և անկլիական նաւերը ֆրանսական քանի մը միլիոն ֆրանքով կազմ ու պատրաստ լինելով, ոսկեալ պատերազմ մը մղելին Միայեալ-Գաւառաց նաւատորմիղներուն դէմ։

Շարլ Բ Քէրուալ օրիորդին փոքր ինչ երախտապէտ լինիլ խոստացեր էր իր լաւ խորհրդոյը համար, ուստի զանի Բօրդամութի կոմսուհի ըրաւ։

Գօլպէր թագաւորին նաւեր, պաշարներ և յաղթութիւններ խոստացեր էր։ Ինչպէս յայտնի է, իր խոստումը պահեց։

Վերջապէս Արամիս, այն որու խոստմանց վրայ այնչափ շատ վստահիլ կարելի չէր, հետևեալ գիրը գրեց Գօլպէրին, այն բանակցութեանց մասին զոր Մատրիտի մէջ՝ ի գործ դնելու պաշտօնը ստանձնած էր.

« Պարոն Գօլպէր,

« Պատիւ ունիմ ձեզի առաքելու Վ. Հ. Օլիվան, յիսուսեան միաբանութեան ընդմիջական զօրապետը, իմ ժամանակաւոր յաջորդս։

« Վերապատուելի հայրը ձեզի պիտի բացատրէ, Պ. Գօլպէր, որ Ուխտին այն ամէն գործերուն տեսչութիւնն որ Ֆրանսայի և Սպանիոյ կ՚վերաբերին ես կ՚վարեմ, բայց չեմ ուզեր զօրապետի տիտղոսը պահել, որ շատ մեծ ցաւ կրնայ սփռել բանակցութեանց ընթացքին վրայ որոյ հոգը Նորին Կաթոլիկ Վեհափառութիւնն ինձ յանձնելու շնորհ ըրած է։ Այս տիտղոսը Նորին Վեհափառութեան հրամանաւ պիտի առնում երբ իմ ձեռնարկած գործերս, ձեզի հետ, յաջող վախճան մը ստանան Աստուծոյ և իր եկեղեցւոյն ամենամեծ փառացը համար։

« Վ. Հ. Օլիվան պիտի յայտնէ նաև ձեզի, պարոն, Նորին Կաթոլիկ Վեհափառութեան տուած հաւանութիւնը դաշնադրութեան մը ստորագրութեան համար որով Սպանիոյ էզերբութիւնը կ՚ապահովի, Ֆրանսայի և Միայեալ-Գաւառաց մէջ պատերազմ ծագելու պարագային մէջ։

« Այս հաւանութիւնը պիտի յարատևէ նոյն իսկ՝ եթէ Անկլիա, փոխանակ գործնապէս շարժելու, չէզոք դիրք մը բռնելու լինի։

« Իսկ Փորթուկալի գալով՝ որու վրայ ձեզի հետ խօսեր էի, կարող եմ հաւատալ ձեզ՝ որ իր բոլոր միջոցներով Ամենաքրիստոնեայ թագաւորին պիտի օգնէ պատերազմի ժամանակ։

« Կ՚աղաչեմ, Պ. Գօլպէր, ձեր բարեկամութիւնն առ իս պահել, նոյնպէս հաւատալ իմ խորին հաւատարմութեան և իմ յարգանքս հաստատել Նորին Ամենաքրիստոնեայ Վեհափառութեան գահոյիցը։

« Ստորագրեալ. ԱԼԱՄԻՏԱ ԴՈՒՔՍ »

Ուրեմն Արամիս խօսք առաջէն աւելի բան կատարեր էր. կը մնար իմանալ թէ ինչպէս թագաւորը, Պ. Գօլպէր և Պ. տ'Արգանեան իրարու հաւասարիմ պիտի մնային։

Ինչպէս Գօլպէր գուշակեր էր, պարնան ցամաքային զօրքը պատերազմի ելաւ։

Փառաւոր կարգով Լուի ԺԳ-ի արքունեաց առջևէն կ'երթար, Լուի ԺԴ որ՝ ձիով մեկնելով, տիկիններով և պալատականներով լի կառքեր իր բոլորտիքն առած, իր թագաւորութեան ընտրեալ մարդիկն այս արիւնալի հանդիսին կ'առաջնորդէր։

Իրաւ է որ բանակին սպաներն ուրիշ երաժշտութիւն չունեցան այլ միայն հոլանտացւոց ամրոցներուն թնդանօթները. բայց այս բանս բաւական եղաւ շատերուն համար որ այս պատերազմին մէջ պատիւ, պաշտօն, հարստութիւն կամ մահ գտան։

Պ. տ'Արգանեան, տասն երկու հազար զօրաց գլուխն անցած Ճամբայ ելաւ, որոյմով իրեն հրաման տրուեցաւ այլ և այլ ամրութիւններ առնուլ, որ Գրիվ կոչուած ռազմական ցանցին հանգոյցներն են։

Երբէք բանակ մ'այսպէս արիութեամբ պատերազմի մը չէր առաջնորդուած։ Սպաները դիտէին որ զօրապետը՝ որ որչափ խոհեմ, նոյնչափ և նենգամիտ ու քաջասիրտ էր, չպիտի զոհէր՝ առանց ստիպողական հարկի, ոչ մարդ մը և ոչ բթամատ հող մը։

Պատերազմական հին սովորութիւնները պահեր էր տ'Արգանեան. երկրին միջոցներով ապրիլ, զինուորը միշտ զուարթ պահել և թշնամին ոդի՞ մէջ։

Հրայանակրաց հրամանատարն իր բոլոր ջանքը կ'գործածէր ցոյց տալու որ արհեստէն կ'հասկընար։ Երբէք մէկն անոր չափ պարապաներն ընտրել, յանկարծական յարձակումներն աւելի լաւ առաջնորդել և պաշարեալ թշնամին նեղի տակ ձգել չգիտէր։ Տ'Արգանեանի բանակը մէկ ամիսուան մէջ տասն երկու պզտիկ ամրութիւններ առաւ։

Տասն երրորդ ամրոցի մը պաշարման կ'զբաղէր և այս ամրոցը հինգ օրէ 'ի վեր կ'դիմակալէր։ Տ'Արգանեան խրատը բանալ տուաւ առանց ցոյց տալու որ բերդականները յանձնառու լինելու պիտի ընդունին։

Այս մարդուն բանակին մէջ ռահանորդներն ու գործաւորները նախանձայուզութեամբ, գաղափարներով և եռանդով լի մարմին մ'էին, վասն զի անոնց հետ իրրև զինուոր կ'վարուէր, դիտէր ամէն գործէ փառք հանել անոնց, և երբէք չէր թողուր որ սպանուին այլ միայն անհրաժեշտ պարապայի մէջ։

Ուստի զարմանալի էր թէ ինչ բուռն եռանդով կ'բաւնային Հոլանտայի Ճախճախուտ աւազները։ Այս մօրուտներն ու կաւերը կ'հալէին՝ զինուորներուն խօսքին նայելով՝ Գրիվզն տանտիրուհեաց ահագին կրակարաններու վրայ շինած կարապին նման։

Պ. տ'Արգանեան թագաւորին սուրհանդակ մը յուղարկեց վերջին յաջողութեանց վրայ լուրեր տալու համար. ասով Նորին Վեհափառութեան զուարթութիւնն աւելցաւ, նոյնպէս տիկնայքը մեծարելու համար տրամադրութիւնը։

Տ'Արգանեանի յաղթութիւններն այնքան փառք կ'բերէին Նորին Վեհափառութեան որ տիկին Մօնդէսպան զանի այնուհետև Անյաղթելին Լուի կ'անուանէր։

Հետևապէս՝ օրիորդ Լա Վալիէր՝ որ Յաղթական Լուի կ'անուանէր թագաւորը, շատ կորսնցուց Նորին Վեհափառութեան շնորհը։ Ասկէ զատ՝ շատ անգամ՝ աչերը կարմրցած էին, և անյաղթելի թագաւորի մը համար շատ ծանր են լալկան աչերը, մինչդեռ ամէն ինչ իր բոլորտիքը կ'ժպտի։ Օրիորդ Լա Վալիէրի աստղը կ'ընկղմէր հորիզոնին վրայ ամպերու և արտասուաց մէջ։

Բայց տիկին Մօնդէսպանի զուարթութիւնը թագաւորին յաջողութեանց հետ կ'սաստկանար և ուրիշ ձախորդութեանց վրայ դինքը կ'մխիթարէր։ Թագաւորը տ'Արգանեանի պարտաւոր էր այս բանս։

Նորին Վեհափառութիւնն ուզեց վարձատրել անոր ծառայութիւնները. Պ. Գօլպէրին գրեց.

« Պ. Գօլպէր, խոստում մ'ունինք կատարելու տ'Արգանեանի համար որ իր խոստումները կ'պահէ։ Քեզի իմաց կ'տամ որ այս խոստումն 'ի գործ դնելու ժամը հասած է։ Այս մասին ամէն միջոցներն -'ի դէպ ժամանակին քեզի պիտի տրուին։

« ԼՈՒԻ »

Հետևապէս Գօլպէր՝ որ տ՝Արդանեանի պատգամաւորն իր քովը կ՝պահէր, սոյն սպային իր կողմէ գրուած նամակ մը յանձնեց առ տ՝Արդանեան և ոսկի գրուակ եպենոսէ արկղիկ մ՝որ շատ ստուար չէր ըստ երևոյթին, բայց շատ ծանր էր անշուշտ, քանի որ պատգամաբերին հինգ պահանորդ տուին որպէս զի զայն կրելու իրեն օգնեն։

Այս մարդիկ տ՝Արդանեանի պաշարած բերդին առջևն եկան առաւօտեան դէմ, և զօրապետին բնակարանը դիմեցին։

Պատասխան տուին իրենց որ Պ. տ՝Արդանեան՝ առջի բերդին կառավարչին՝ ծածկախորհուրդ մարդ մը, ըրած յարձակման վերայ, որով պատնէշներն աւերեր, եօթնսունը եօթ զինուոր սպաններ և խրամատ մը նորոգելու սկսեր էր, գուրս ելեր էր տասն երկու վաշտ իրեն հետ առնլով որպէս զի աւերեալ պատնէշները շինել տայ։

Պ. Գօլպէրի պատգամաբերը հրաման ունէր տ՝Արդանեանն ուր որ գտնուէր երթայ գտնէ, ցերեկուան կամ գիշերուան ուր ժամուն որ լինէր։ Հետևապէս խրամներուն կողմը դիմեց՝ իրեն հետ առնլով ձիաւոր ուղեկից զօրքը։

Բայց դաշտավայրի վրայ տեսան Պ. տ՝Արդանեանն ոսկեձամուկ գլխարկովը, իր երկայն ցուպովն և իրեն երկայն ոսկեզօծ ծոպերով։ Իր սպիտակ պեխը կծամէր, և իր ձախ ձեռնով մարբելու զբաղած էր փոշին զոր ռումբերն անցնելու ատեն գետնէն կը ցատկեցնէին։

Ուստի այս սոսկալի կրակին ժամանակ որ օդը սուլումներով կ՝լեցնէր՝ կ՝տեսնուէին սպաներ որ բահ կ՝գործածէին, զինուորները սայլակները կ՝քշէին, և մեծ խուրձն որ կ՝բարձրանար տասնէն մինչև քսան մարդու ձեռօք մղուելով կամ՝ ընդ քարշ ածուելով, որպէս զի խրամին ճակատը ծածկէ, որ մինչև ներքնագոյն կողմը բացուած էր իր զինուորները խրախուսող զօրապետին կատաղի ճչանց շնորհիւ։

Երեք ժամու մէջ ամէն ինչ կարգի դրուեր էր։ Տ՝Արդանեան սկսեր էր աւելի անուշութեամբ խօսիլ։ Բոլորովին հանդարտեցաւ երբ ռահահորդներու հրամանատարը՝ գլխարկ 'ի ձեռին եկաւ յայտնելու թէ խրամատը ընակելի է։

Հապա թէ այս մարդն իր խօսքն աւարտեց որ ռումբ մը գալով անոր ոտքը կտրեց և տ՝Արդանեանի գրկաց մէջ ընկաւ։

Տ՝Արդանեան իր զինուորը վերցուց, և հանդարտօրէն՝ ամէն կերպ դդուանօք՝ խրամատին մէջ իջեցուց զանի՝ մինչդեռ զօրապունդները խանդաղին կ՝ծափահարէին։

Այն ատեն եռանդը չէր զօրքը մղող այլ խանդը. երկու վաշտեր ընդ առաջ անցան մինչև յառաջապահ մարտկոցներու մօտ, զոր անմիջապէս տապալեցին։ Երբ իրենց զինակիցները տեսան որ մարտկոցները գրաւեր են, տ՝Արդանեան չկրցաւ զանոնք զսպել այնպէս որ իրենք ալ սրացան, և խիզոյն անհնարին յարձակմամբ վազեցին խրամին դարափին դէմ, ուսկից կախում ունէր բերդին աղատումը։

Տ՝Արդանեան տեսաւ որ իր բանակը կեցնելու միջոց մը միայն կար, այս է զանոնք բերդին տիրացնել։ Բոլոր զօրքն երկու խրամատի վրայ քշեց զոր պաշարեալները վերանորոգելու զբաղած էին, սոսկալի եղաւ բախումը։ Տասն ութ վաշտ այս յարձակման աջակից գտնուեցան և տ՝Արդանեան մնացած զօրքը կարգ շարելով կէս թնդանօթի հեռաւորութեամբ օգնութեան հասաւ։

Բացորոշ կ՝լսուէին հոլանտացւոց աղաղակները՝ որոնք տ՝Արդանեանի ռմբաձիգ զինուորաց միջոցաւ իրենց թնդանօթներու վրայ կ՝սպանուէին. կառավարչին կատղութեամբը պայքարն ալ աւելի կ՝սաստկանար, վասն զի ոտն առ ոտն իր գիրքը պաշտպանելու կը ճգնէր։

Տ՝Արդանեան՝ գործին վերջ տալու և կրակը դադրեցնելու համար որ կ՝շարունակէր, նոր վաշտակ մը յուղարկեց՝ որ ամուր դռները դայլիկոնի պէս ծակեց, և քիչ ատենէն՝ պարիսպներուն վրայ՝ կրակին մէջ տեսնուեցաւ պաշարողներու կողմէ հալածեալ բերդականներուն շուտ ընդ փոյթ փախուստը։

Ահա այս միջոցին էր որ զօրապետը՝ շունչ առնլով և զուարթութեամբ լի՝ իր մօտ ձայն մը լսեց որ իրեն կ՝ըսէր.

— Պարոն, Պ. Գօլպէրի կողմէ բերած այս գիրս ընդունելու հաճեցէք։

Տ՝Արդանեան նամակին կնիքը խորտակեց, որ այս խօսքերը կը պարունակէին.

« Պ. տ՝Արդանեան, Թագաւորը հրամայեց ինձ խնայնելու որ ձեզ Գրանսայի մարաջախտ անուանեց՝ 'ի վարձատրութիւն ընտիր ծառայութեանցդ և իր զինուց բերած պատուոյդ։

« Թագաւորը սասպիկ գոհ է, պարոն, ըրած յաղթութեանցդ համար. յատկապէս կ՝հրամայէ ձեզ սկսեալ պաշարումդ ուարտել, ձեզի պատիւ և իրեն յաջողութիւն բերելու կերպով »։

Տ՝Արդանեան ոտքի վրայ էր, դէմքը վառուած, նայուածքը շողշողուն։ Աչքը բարձրացուց որպէս զի տեսնէ զօրացն ընթացքը պարիսպներուն վրայ, որ նոյն պահուն կարմիր և սև ամպերով ծածկուած էին։

— Լմնցուցի — պատասխանեց նա պատգամաբերին — քառորդէ մը քաղաքն անձնատուր պիտի լինի։

Եւ իր ընթերցումը շարունակեց.

« Արկղիկն իմ կողմէս պարգև մ՝է, Պ. տ՝Արդանեան։ Զպիտի դժարիք տեսնելով որ, մինչդեռ դուք պատերազմող մարդիկ՝ Թագաւորը պաշտպանելու համար սուրը կ՝քաշէք, ես խաղաղասիրական արուեստները կ՝քաջալերեմ որպէս զի ձեզի արժանի վարձքեր յարդարեմ։

« Ձեր բարեկամութեան ապաւինելով, պարոն մարաջախտ, կ՝աղերսեմ ձեզ իմ բարեկամութեանս վրայ վստահ լինիլ։

« ԳՕԼՊԷՐ »

Տ՝Արդանեան ուրախութեամբ արբշիռ՝ նշան մ՝ըրաւ պատգամաբերին որ մօտեցաւ՝ արկղիկը ձեռքը բռնած։ Բայց այն միջոցին որ մարաջախտը կ՝պատրաստուէր զայն քննելու՝ ահագին պայթում մը հնչեց պարիսպներուն վրայ և իր ուշադրութիւնը քաղքին կողմը դարձուց։

— Զարմանալի է — ըսաւ տ՝Արդանեան — որ տակաւին Թագաւորին գրոշակը չեմ տեսներ պարիսպներուն վրայ և ոչ անձնատուութեան փողը։

Իսկոյն երեք հարիւր նոր զինուորներ արձակեց եռանդոտ սպայի մը հրամանատարութեան տակ, և հրամայեց որ ուրիշ խրամատ մ՝ևս բանան։

Ասպա հանդարտութեամբ դարձաւ Գօլպէրի պատգամաբերին կողմն որ անոր կ՝մատուցանէր արկղիկը։ Այս իրեն ինչքն էր, զայն շահեր էր։

Տ՝Արդանեան արկղիկը բանալու համար թեւը կ՝կարկառէր, երբ ռումբ մը, քաղքէն արձակուելով՝ եկաւ սպային ձեռքը դտնուած արկղիկը փշրեց, տ՝Արդանեանի լանջին զարկաւ և զանի ծառի մը կոճղին վրայ տապալեց, մինչդեռ շուշանազարդ գաւազանն արկղկին բեկեալ կողերէն դուրս ելնելով՝ մարաջախտին թաշկացեալ ձեռքին ներքև գլորելով կ՝ընկնէր։

Տ՝Արդանեան փորձ փորձեց կանգնելու։ Կարծեր էին թէ առանց վերք մ՝առնելու ընկեր էր։ Սոսկալի աղաղակ մը բրդաւ ահաբեկ սպայից խմբէն. մարաջախտն արիւնով ծածկուած էր. մահուան դեղնութիւնը ծանր ծանր երեսին կ՝ելնէր։

Տ՝Արդանեան՝ չորս կողմէն կարկառեալ բազուկներու վրայ կռթնած՝ կարող եղաւ իր նայուածքը մի անգամ ևս բերդին կողմը դարձնել և գլխաւոր մարտկոցին կատարին վրայ տեսնել սպիտակ դրոշակը. իր ականջներն որ կենաց ձայնին արդէն զոցուեր էին՝ հաղիւ ուրեմն լսեցին թմբուկներու դրնդիւնն որ յաղթութիւն կ՝աւետէր։

Այն ատեն իր կարկամ ձեռաք ոսկի շուշանով բանուած գաւազանը սեղմելով՝ իր աչերը վար առաւ, որոնք երկինքը նայելու ոյժ չունէին, այս տարօրինակ բառերը հնչելով ընկաւ, որոնք զարմանահար զինուորներուն կապալական բառեր երևցան, բառեր որ երբեմն այնքան բաներ ներկայացուցեր էին աշխարհիս վրայ, և զորս՝ ոչ ոք՝ բաց 'ի հողեվարէն՝ չէր կարող հասկընալ.

— Աթոս, Բորթոս, 'ի կրկին տեսութիւն։ — Արամիս, ընդ միշտ մնաս բարեաւ։

Զորս արիական մարդոցմէ, որոց պատմութիւնը պատմեցինք, մարմին մը միայն կ՝մնար. Աստուած հոգիներն առեր էր։

ՎԵՐՋ

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

		Երես
Ա.	Սպիտակ ձին և սև ձին	3
Բ.	Սկիւռը կ'ընկնի, օձը կ'թռի	12
Գ.	Պէլ–Իսլ–ան–Մէր	24
Դ.	Արամիսի բացատրութիւնները	36
Ե.	Թագաւորին և տ'Արզանեանի դաղափարները շարունակութիւնը	49
Զ.	Բորթոսի նախնիքը	53
Է.	Պիսկարայի որդին	58
Ը.	Լոկմարիայի քարայրը	65
Թ.	Քարայր	73
Ժ.	Հոմերի մի երգը	84
ԺԱ.	Տիտանի մը մահը	91
ԺԲ.	Բորթոսի տապանաղիրը	98
ԺԳ.	Պ. Կէվրի պահնորդութիւնը	107
ԺԴ.	Լուի ԺԴ թագաւորը	114
ԺԵ.	Պ. Գուբէի բարեկամները	124
ԺԶ.	Բորթոսի կտակը	132
ԺԷ.	Ամիոսի ծերութիւնը	139
ԺԸ.	Ամիոսի տեսիլը	145
ԺԹ.	Մահուան հրեշտակը	152
Ի.	Լրաթերթ	158
ԻԱ.	Դիւցազնական քերթուածին վերջին երգը	165
	Վերջաբան	173
	Պ. տ'Արզանեանի մահը	190

1913
1914
1915
1916

2013